Арм 1/51
ХИМИИ

Арм 1/51

2015148489

Варфоломей Блаженный,
Петр Аррагонский
Назидательные и
душеполезные проповеди
— Венеция, 1784

ԽՐԱՏԱԿԱՆՔ
ԵՒ
ՀՈԳԵՇԱՀՔ
ՔԱՐՈԶՔ

Շարադրեալ յերկոցունց Սրբազա-
նից և յոգնահանճարից Վարդա-
պետաց ի կարգէ քարոզողաց,
այսինքն, երանեցելոյն Բար-
թուղիմէոսի, և Պետրո-
սի Արագոնացւոյ,

Տպեցեալ ծախիւք Ամենապայծառ
Շէհրիմանեանց, բարեպաշտ և
Սրբասէր Պարոն Մուրատխանորդի,
Պարոն Սահրատին, առ ի
հոգևոր շահաբերութիւն
մերոց Հայկազուն
Քրիստոնէից:

Յամի փրկչին. 1704. փետր. Ի.

Ի ՎԵՆԵՏԻԿ:
Մեծաւորաց Հրամանաւ:

Всесоюзная
БИБЛИОТЕКА
имени
В.И. ЛЕНИНА

63,937 ч.5

ԱՄԵՆԱՍՐԲՈՒՀԻ
Մայր ԱԾ միշտ Կոյս.
ՄԱՐԻԱՄ.

[stamp]

Ամենայն խոնարհութեամբ և ամենայն սրտի ջերմեռանդութբ քեզ նուիրեմ ո՜վ երիցս երանեալ Ամենամաքուր Մայր Աստուծոյ միշտ Կոյս՝ ամենասրբուհի զայս Հոգևորական և խրատական զաւետարանական բանս ոգւոյ քո՛ Միածնի, զորս բացայայտեալս և պարզաբանեալս ունիմք յօգուտ անձանց մերոց ՚ի հաւատարմագրութեանց և յուխտաւորագրութեանց ծառայից քոց ՚ի Սբ Թովմայէ Ակուինացւոյ, ՚յերանեցելոյ Վար-

դուղեմէոսէ , և ՚յայլոց Սբ̃ց և Ա̃ծա-
բանից Վարդապետաց։ Եւ թէպէտ է
սա սակաւ աւանդեմ և նուաստական նո-
ւէր ամենամեծ արժանաւորութե̃ քո,
սակայն բանք սորին յոյժ հաճոյք են քեզ`
և ընդունելիք , քանզի առողջարարք են
հոգւոց մարդկան, և ազդեցուցիչք, զգաս-
տացուցիչք և զարթուցիչք , որք ննջեանն ՚ի
քուն մահու, մահու չափ մեղացն, սատու-
ցանելով զպատուիրանսն Ա̃յ, և զյաւի-
տենական օրէնսն նորին ամենասուրբս։
Արդ` ընկալ զսա վեհագունեղ տիրուհի,
և ամենաբարձր Թագուհի, և ընդ հո-
վանեաւ ամենամաքրութեանց քոց ամրա-
փակեալ , պահպանեալ թևարկելով
զբարեսէր ընթերցողս սորա և զհոգե-
շահ և զառողջարար խօսս և զխրատս
սորա զօրացո` և ներշնչեա ՚ի ներքին
լսելիս հաւատացելոց , զի զմարմնական
և զԱ̃ծական արդիւնսն ՚ի գործ ածե-
լով ամենայն սբ̃ց պատուիրանաց պահ-
պանողութբ̃ք պատրաստք լիցին յաւի-
տենական կենացն , և բարեխօսաւ միջ-
նորդութբ̃ քով ամենաքեբեանցս արժանա-
ւորք լիցուք լսել զձայնն երանական յօր-
հնեալ ՚յանմահ Թագաւորէն , Ք̃Է
Յ̃Է , զոր ընդ Հօր և Հոգւոյն սրբոյ և
զերջանկուհի զՄայր Ա̃յ բարեբանես-
ցուք

ցուք հանդերձ ամենայն Սրբովք յաւի-
տեանս յաւիտենից, Ամէն:

Ամենասուրբ Մայրութիւն քո, և Ամենա-
մաքուր կուսութիւն:

Նուաստագունեղ և Ջերմե-
ռանդագունեղ ծառայ Սահ-
րատ Շահրիմանեան:

Առ բարեսէր ընթերցողս։

Ի ժամանակս Գողթանտան Գէորգ իշխանին, որոյ էր եղբայր հարազատ Յովհաննէս Եպիսկոպոս Քռնեցի, այր իմաստութեան քաջ ընտիր, և ամենայն առաքինութեամբ զարդարեալ, և վս̃ ուղղափառ հաւատոյ հանգոյն հարցն Սրբոց ամենամեծ ջատագով։ Հանդիպելով սորայ Ամենաքարի, և քաղցրուսոյց վարդապետին Բարդուղիմէոսի Եպիսկոպոսի, որ այժմս ասի Երանեցեալ, և ընդ նմա զամենայն աշխատանս յանձին կալեալ. և արիաքար ջան եդեալ զամենիմաստ Վարդապետս ժողովելով Հայոց և Լաթինացւոց, վն̃ դարձուցանելոյ ՚ի հայկական բարբառ զԱ.ծաբանական և զՃշմարտաբան Սատեանան Լաթինացւոց։ Որոց վերակացու էր ժրաջան և յոգնահանճար մեծ Վարդապետն Պետրոս Արագօնացին։ Որք և բազմապէ՛ս և երջանկաքար ամենայնիւ ճարտարութեամբ ըստուգապէ՛ս թարգմանեցին զայսոսիկ զհետևեցեալ գրեանս, այսինքն՝ Աղբերթ, Աքու-ինու-

քննութեց, Մոլութեանց, Մեծօրէից, Քարոզ գիրք քաղուածք, և այլք քաղուածք Ճառընտրականք և փիլիսոփայականք, որք ՚ի տեղիս տեղիս քաղուած մինչև ցարդ գտանին ՚ի մէջ Հայոց, և մանաւանդ ՚ի գաւառն Նախիջևանու ՚ի Վանս Ամենայն Սրբոց : Իսկ ՚յառաջանէ գրեանցս զքարոզ գիրքն միայն զօրինակն առեալ Ամենապայծառ Քէհրիմանեանց, գերապայծառ Պարոն, Պարոն Պասքալին, որ ունի ՚ի Սպահան դշորեսին մատուռնան նորին, և զայլ չորսան առատ ընդ ինքեան ՚ի վայելուչ քաղաքին Վենետիկ, որոց մի՛ մասն այս է՛ որ տպեցաւ ՚ի հոգևոր զուարճութի և ՚յօգտութի Հայկազունեաց ճշմարտասիրաց : Արդ՝ որք հանդիպիք սմա, ընթեռնլով և կամ լսանալով զշահաւէտ գիրս, և կամ ՚ի սմանէ օգտելով, յիշեսջիք ՚ի մաքրափայլ ՚յաղօթս ձեր զամենաբարերար պատճառ ՚ի լոյս ածողին սորին, և զայլ արդիւնաւոր երախտաւորսն, և դուք արժանիք լիջիք յիշմանն սմին՝ յորժամ գայցէ Արքայութեն իւրով և փառօք, ընդ ամենայն հրեշտակաց և Սրբոց, որ կենդանի է՛ և թագաւորէ ՚ի յաւիտեանս յաւիտենից : Ամէն :

I.N.R.I.
V.F.

ՔԱՐՈԶ. ԽՈՍՏՈՎԱ-ՆՈՒԹԵԱՆ

Առաջի չորեքշաբթի։ Աղուհացիցն։

ԱՐԻ ՚Ի ԽՈՍՏՈՎԱ-
նութիւն ՚ի սկիզբն և ՚ի գլուխ
պահոց քո՝ և հեղ
զախտս քո երկու
գձուր ՚յերկիր՚ յաղ-
թոցն .դ. Ասէ՛ Երանելին Հերոնիմոս,
նախահայրն մեր Ադամ էջ կերակրոյ
ծառոյն գիտութե՛, ուտելովն ՚ի հնա-
զանդութենէն ընդդէմ հրամանացն այ. դ. ապա պա-
կասութիւն և անկումն ՚երեր իւրն և
ծննդոց իւրոց։ Առաջին անկումն՝ յան-
մե-

մեղութ՟էն ՚ի մեղս զի ՚ի սկիզբն ստեղ-
ծմանն՝ մարդկայինն բնութիւնս ան մեղ
ստեղծաւ ՚յո՟յ որպէս ասէ՛ ՚յառակացն,
արար Տ՟ր Ա՟Ծ զմարդն ուղիղ, այսինքն,
առանց ամենայն թիւրութ՟է և ծուռու-
թ՟է և արատոյ. բ՟. անկումն էր ՚ի մահ,
զի յառաջ քան զմեղանչելն ո՛չ էր պար-
տաւորեալ մահու, զի ո՛չ այլ ինչ է՛ մահուն՟
եթէ ո՛չ պատիժ մեղաց, վ՟նզի ասէ՛ ա-
ռաքեալն թագաւորեաց մա՛հ ՚յԱ՟դամայ
մինչև ՚ի Մովսէս, այսինքն, մեղքն ՚յորմէ
յառաջ եկն մահն, վասնայնորիկ ասաց
Ա՟Ծ Ա՟դամայ, ՚յորում աւուր ուտի-
ցէք ՚ի նմանէ մահու մեռանիջիք, այ-
սինքն, անկանիջիք ՚ի մահ մեղաց և պա-
տժոց. գ՟. անկումն էր ՚ի շնորհացն, զի
զնախնիսն իւր Ա՟Ծ լի՛ և կատարեալ ըս-
տեղծ, որպէս զհրեշտակս լի՛ շնորհօք
ստեղծեաց, զարեգակն, և զլուսինն և
զաստեղս լի՛ լուսով և պայծառութ՟բ,
ըզթռչունս երկնից զչորքոտանիս, և
զծառս լի՛ պտղով հասուն, այսպէս և
զմարդն առաջին լի՛ և կատարեալ շնոր-
հօք, զորս կորոյս պատուիրանօքն սատա-
նայի, վ՟նզի ասէ՛ ծննդոցն փչեաց ՚յե-
րեսս ն՟ր շունչ կենդանի. դ՟. անկումն էր ՚ի
փառացն զի յայնժամ մերձէր առ փառ-
քն քան այժմ, վ՟նզի ասէ՛ բնաբանս արի՛
՚ի

՚ի խոստովանութիւն ։ Ընկուզենիս այս օրի_
նակեցաւ ՚յայնմ՝ որ գրի ՚յաւետարանն
ղուկասու ասելով՝ այր մի՝ իջանէր
յԵրմէ ՚յերիքով և անկաւ ՚ի ձեռս աւա_
զակաց որք մերկացուցին զնա, և վէրս ՚ի
վր եդեալ թողին կիսամահ և գնացին, Այլ
Թարգմանի աւեսութեան խոստովանութէ և
նշանակէր զդրախտն ՚յորում կայր միշտ
խաղաղութեան հոգևոր և մարմնաւոր,
մարմնաւոր խաղաղութի կայր ՚ի դրախտն
զի ոչ էր անդ փոփոխմունք օդոց և ջեր_
մունք ամպոց կամ կարկուտ ։ Իսկ
հոգևոր խաղաղութի կայր ՚ի դրախտն,
զի անդ՝ մարմինն առաւելին մարդոյն հնա_
զանդէր հոգւոյն, և հոգին այ, և ամե_
նայն ստեղծուածք հնազանդէին մար_
դոյն, որպէս ասէ՝ Սղս զամենայն ինչ
հնազանդ արարեր ՚ի ներքոյ ոտից նր զխաշինս
և զարջառս և զամենայն ինչ ևս և զգե_
րեվայրի ։ Իսկ կարգս այս փոխեցաւ, զի
հոգին անհնազանդ եղաւ այ՝ մարմինն
անհնազանդ եղև հոգւոյն, նա և ամե_
նայն ստեղծուածք ոչ մնային անհնա_
զանդք եղեն մարդոյն, այլ և վնասեն
նմա, զի օձն խածանէ, կարիճք խայթեն,
գայլք պատառեն, լուք և ճանճք նեղա_
ցուցանեն, և այսոցիկ ամենեցունց պատճա_
ռն էր՝ մեղքն և անհնազանդութիւնն Ադա_
մայ ։

մայ ։ Իսկ Գրիգորոյ Թարգմանին լուսինն և
նշանակէ զաշխարհս, զի որպէս լուսինն է՝
փոփոխական և ոչ մնայ 'ի նոյն կայուածի,
այլ երբեմն նուազ՝ և երբեմն հնանայ, այսպէս
և աշխարհս ժամանակ մի՝ ամառն և ձմե-
ռն, գարուն և աշուն, հիւանդութիւն և ա-
ռողջութիւն, հարստութիւն և աղքատութի̄ւն,
խաղաղութիւն և պատերազմ, յայս
ամենայն պակասութիւնս անկեալ մարդ-
կային բնութիւն, վասն որոյ ասէ՝ արի ։ Արդ՝
ո՞վ է՝ յարուցանող սորա, եթէ ոչ սա-
մարացին, որ նշանակէր զՔ̄ս, որ արար
զողորմութիւն անկելոյն 'ի ձեռս աւազա-
կաց ․ ա̄․ է՝ յարուցումն որ ասէ՝ գթա-
ցաւ 'ի նա, գթութիւն Ք̄ի՝ նշանակէ ո-
ղորմութե̄ իջանելն յաշխարհս, զի ասէ՝
առաքելոյն ոչ ըստ արդարութեանց զոր
արարաք մեք, այլ ըստ իւրում ողոր-
մութեանն ապրեցոյց զմեզ, զի վասնի էջ
յերկնից, զի զմեզ յարուսցէ և բար-
ձրացուսցէ ․ բ̄․ յարուցանելն է՝ պատել
զվէր նորա, որպէս ասէ՝ մատուցեալ
պատեաց զվէրսն, պատատանք վիրացն են
բանք մխիթարականք և յուսադրութիւնք
զորս Ք̄ս աւանդէ յաւետարանին, ա-
ռանձինն՝ այն, որ ասէ՝ ցնծացէ՛ք և ու-
րախ լերուք, զի անուանք ձեր գրեալք
են յերկինս, յերկինս գրեցին մեծ խնդ-

դու-

դուԹի է', զի է' անջնջելի, զի անա_
պականէ' զհին և որ գրէ զնա, այսինքն,
իմաստուԹիւն այ · Ը· պատասխանիք մխիԹա_
րականն է', որ ասէ' եկայք օրհնեալք հօր
իմոյ ժառանգեցէք պատրաստեալ ձեզ
զարքայուԹիւն երկնից։ եկայք ասէ' ընդ_
դէմ այնմ՝ որ ասէ' գնացէք յինէն։ օրհնեալք
ասէ', ընդդէմ անիծելոցն։ հօր ասէ',
ցուցանելով զանկզբնական իշխանուԹիւն
ծնանելով զորդի և բխելով զհոգին սբ։
Դ· յարուցումն է' որ ասէ' եդ 'ի մերայ
գրաստու իւրոյ, գրաստ է' խաչն Քի
'յոր Քս բարձրանալովն և բևեռելովն
բարձրացոյց զմեզ · Ե· յայտուցանելն'
ածելովն 'ի բարձրագոյն մակայրս, այսինքն,
յեկեղեցի որ է' շինեալ 'ի վր բարձրա_
գոյն լերին, այսինքն, 'ի վր վիմին Պե_
տրոսի որպէս ասաց Քս դու ես վէմ և
'ի վր այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ ·
և վասն զի ասէ' մարգարէն Եսայի ել 'ի վր
լերինն բարձու աւետարանիչդ սիոնի, վասն
ասէ' արի 'ի խոստովանուԹի։ Երկրորդ_
բա՛ն բնաբանանս է', որ ասէ', 'ի խոստովա_
նուԹի։ յորմէ · Է· իրս տեսանելի է' ·
նախ Թէ ու՞մ պարտ է խոստովանիլ · Բ·
զի՞նչ իրս խոստովանիլ · Գ· Թէ քանի՞ են
պարագայք մեղացն · Դ· Թէ զի՞նչ է' խոստո_
վանուԹիւն · Ե· Թէ զի՞նչ է' ձև խոստո_
տովա_

տեղականութեն, վասն առաւաջնոյն գիտելի է՛ թէ ո՛չ է՛ պարզ ամենայնի խոստովանել, այլ արժանէ խոստովանել ուղղափառ քահանայն ունելով զքահանայական զայն որ ասէ՛ տամ քեզ զփականս արքայութեան երկնից և զոր կապեսցես ՚յերկրի եղիցի կապեալ ՚յերկինս, և զոր արձակեսցես ՚յերկրի եղիցի արձակեալ ՚յերկինս ։ Դ.րդ՝ քահանայիս այս կրկնակէ՛, այսինքն, քահանայի իշխանութէ, և քահանայի գիտութէ, քահանայի իշխանութէ է՛ զի քահանայն ո՛չ լինիցի ձեռնադրեալ և կամ հերձուածող, զի յայնժամ զքահանայիս զայս ունի կապեալ յինքեան, զի ժողովուրդն որ է՛ դուռն բարձածէ ՚ի նմանէ և ո՛չ կարէ ՚ի գործ ածել զքահանայիս զայս ·Բ· քահանայի է՛ գիտութեն, զի քահանայն պարտէ որ գիտուն լինի, զի կարասցէ ճանաչել ՚ի մէջ գոյութեն և ո՛չ գոյութեն, զի ասէ՛ Մաղաքեայ շրթունք քահանային զգուշասցեն գիտութէ, և օրէնք խնդրեսցեն, ՚ի նմանէ, զի հրեշտակ տն ամենակալի է՛ և Պետրոս ասէ՛ պատրաստ լինիջիք տալ պատասխանի ամենայնի որ խնդրէ զբանն որ է՛ վս հաւատոյ և յուսոյն ձերոյ, վս երկուցն գիտելի է՛ թէ հասարակաբար պարտէ խոստովանել զմեղս

մահու

մահու չափս որք են գլխաւորքն այսո_
քիկ . ա. հպարտութիւն . բ. նախանձն
գ. բարկութիւն . դ. ծուլութիւն , և
անբան տրտմութիւն . ե. ագահութիւն
զ. որկորամոլութիւն . է. պոռնկութիւն
կարգաւ_զի ուրաքանչիւրն ասասցէ , նա և
զմեղսն ներքոյս որք են դատապարտականու_
թիւն, անյարմար ծիծաղելն չարծել զայլս
՚ի ծածուկ , անհամեստութիւնն, անջերմե_
ռանդութիւն ՚յաղօթս և ՚ի բարի գործս.
խօսել զանօգուտս , ըշտապօք ուտել ՚ի
սեղանն, զանց առնել զկարգեալ աղօթսն,
նա և զծամածանսն և այլք սոցին նմանք ։
դարձեալ պարտէ զգուշանալ խոստովա_
նահայրն , և խոստովանողն , խոստովա_
նահայրն՝ զի մանրամասնաբար որոնես_
ցէ զհոգին և զմարմին մեղաւորին և
ճանաչեսցէ զանցեալ մեղսն զներկայն և
զապառնի պատճառսն նոցին , և այ_
սու օրինակաւ արտաքս բարձէ ՚ի հո_
գոյ մեղաւորին զթիւնակից օձն, և ոչ
ուսուսցէ զմեղս զորս նա ոչ գիտէ , նա
և մի՛ բարձեսցէ ՚ի մեղս , և ոչ յայտ_
նեսցէ բանիւ և կամ նշանաւ զմեղս
ուրուք, զի սա է՛ յաւակաց խոստովանու_
թե՟ ծանր զերեսս խաչանց քոց , խաչին_
քեն ժողովուրդք հաւատացելոցն որք
յանձնեալքեն քահանայից որպէս հօգւ,

որ_

որպէս ասաց տրն՟ ցՊետրոս . մինչեւ զետ՝ արտածեա՛ զոչխարանոցն, իսկ երեսք ոչխարացս այսոցիկ են միտք նց՟, որ կարի՛ խոր է, վասնայնորիկ ասէ՛ յառաջն Ջրհոր խորէ՛ միտս առն, եւ այր իմաստուն քամեսցէ զնա՛, այր իմաստուն է՛ քահանայն զի պարտանայ երկար քննուԹեն ՚ի հոգւոյ մեղաւորին արտաքս քարշեսցէ զՋուր փորձուԹեցն եւ զհեշտախտուԹեցն, իսկ խոստովանողն պարտի զգուշանալ, զի մի՛ ծածկեսցէ զմեղսն, զի ասէ՛ գիր՝ ասա՛ դու նախ զանօրէնուԹիս քո, զի արդարասցիս, եւ ՚յառաջագն ասէ՛, արդարն իսկզբանէ խոսիցն ամբաստանօղ է՛ ինքեան, նա՛ եւ զգուշասցի՝ զի մի՛ պատառոտեսցէ զմեղս, զմի՛ մասն ասասցէ միոյ քահանայի, եւ զմիւս մասն այլոյ քահանայի, այլ զբոլորն ասասցէ միոյ քահանայի, նա՛ եւ զմեղս իւրս ասասցէ եւ ո՛չ զայլոց ։ Մն՟ երկրորդին գիտելի է՛ զի պարագայք մեղացն քաւուԹեան առաջին ծանրացուցանող պարագայ է՛ անձն գործողին զոր օրինակ եԹէ ոք խոստովանեսցի զպոռնկական մեղս, արդ՝ պոռնկուԹիս այս ծանրագոյն է՛ ՚ի պատուեալ անձինս քան ՚ի գռեհիկս, այսինքն, ՚ի քահանայսն եւ ՚յուխտաւորսն քան ՚ի փողոցեցի մարդ մի՛, եւս եւ ծան-

րագոյն

բարգոյն է՛ 'ի գիտութեան քան 'յանգէտսն: որպէս ասէ՛ տէրն՝ որ գիտէ և ոչ գործէ արբցէ գան առաւել: Դարձեալ ծանրագոյն է՛ 'ի ծերան քան 'յերիտասարդսն, որքան 'յարբուն մանկութե, զի ասէ՛ յառակաց, ասէ՛ Տ̅ր զծեր պոռնիկ և զատախօս հարուստն: Բ̅. ծանրացուցանող պարագայ է՛ տեղիքն, զի ծանրագոյնէր մեղք դիւացն որք 'յերկինքն հպարտացան, որք ունէին զբաղումս պատճառս խոնարհութե, ևս և ծանրէր մեղքն Ադամայ զի էր 'ի դրախտն՝ և էր սկիզբն մարդկային բնութես, զի ամենեքեան 'ի նմա մեղանչեցին ըստ առաքելոյն: Նմա և ծանրագոյնէր մեղք խաչահանուացն և քահանայապետիցն, զի 'յԵ̅մ խաչեցին զտ̅րն Ք̅ս, որէր տեղիք խաղաղութե: Դարձեալ ծանրագոյն է՛ մեղանչել 'յեկեղեցին քան արտաքոյ եկեղեցոյ, զի եկեղեցին է՛ նուիրեալ և սրբեալ տաճար ա̅յ, զի ասէ՛ 'յԳ̅. Թագ̅ւթեց զտունս զայս սրբեցի ինձ լինել անուան իմոյ անդ՝ յաւիտեան: և տ̅րն ասէ՛ տուն իմ տուն աղօթից կոչեսցի, և դուք արարէք զդա այրս աւազակաց: Գ̅. ծանրացուցանող պարագայ է՛ ժամանակն, զի ասէ՛ ժողովողն ամենայն իրաց ժամէ և ժամանակ 'ի վ̅ր երկնի, այսինքն, պարապէ

պահել զսբ̅ ժամանակն՝ որպէս ասէ՛ ՚յԳ̅·
օրէնքն։ յիշեա՛ զի սրբեսցես զօր շբ̅թուն՝
որ զամենայն աօնս քրիստոնէից նշանա-
կէր, այսինքն, զաօնս տէրունականս
զծննդեանն, զյարութեան, զհոգեգալս-
տեանն, զԱ̅ծածնին։ Եւս և զաօնս առաքե-
լականս, և զմարտիրոսականս, այսպ̅ հար-
կէ սբ̅ պահել ՚ի մեղաց և ՚ի գլխաւ-
որ քրէականաց։ Ա̅ռ չորրորդն գիտելի
է՛ զի սահման խոստովանութեան է՛ այս՝
խոստովանութի՛ է՛ որ յուսով թողութեան
յայտնեսցեն ծածկեալ բիծք սրտին։ Խնդրի
թէ խոստովանութեան քանիքեն մասունք։
Ա̅սելի է՛ թէ .գ. են մասունք խոստովանու-
թեան, այսինքն, զղջումն, խոստովանութի՛,
և ապաշխարութի՛, զի մարդն .գ. կերպիւ
մեղանչէ, այսինքն, խորհրդով, բանիւ և
գործով։ ընդդէմ խորհրդոյ մեղացն՝ է՛
զղջումն, ընդդէմ բանիւ մեղանչելոյն՝
խոստովանութիւն, ընդդէմ գործոյ մե-
ղացն՝ է՛ ապաշխարութիւն։ սորա են երեք
օրեա՛ Ճանապարհքն, որոց ասացին Ի̅էլ-
ացիքն ՚յելքն։ երթիցուք երից աւուրց Ճա-
նապարհս առ Ա̅Ծ, և զոհեսցուք տն̅ մե-
րոյ ՚յանապատի անդ։ Ա̅րդ՝ առաջին աւուր
Ճանապարհն է՛ զղջումն .բ̅. աւուր Ճանա-
պարհ է՛ խոստովանութիւն .գ. աւուր Ճա-
նապարհ է՛ ապաշխարութիւն։ ՚յաւուրս այս

բա-

բարերարական զանձն զՔ՟ս, զի ասէ՛ ղու֊
կաս : զանձն զխնամուէին Յ՟ս ՚ի մէջ առա֊
ջարկն յետ երից ա՛ւուրց, որ նշանակէ զե֊
րիս բարութիւնս զայս, այսինքն, զղջումն
զխոստովանութի, և զապաշխարութի :
վասնզի ասէ՛ արի ՚ի խոստովանութե՟ն ՚ի սկիզբն
և ՚ի գլուխ պահոց քո : Նաւաքեալն ասէ՛
եթէ բուռնն և արմատն մե՟ղ, այսպէս և ու֊
տքն, որ նշանակէ զսկիզբն բազմանորդաց
պահոցս, զի ՚յսկզբեանն առաջ հարկէ
սրբել զմեզ բազում ճգնութե՟ք և ա֊
պաշխարութե՟ք որպէս ասէ՛ մարգարէն : սրբե֊
ցէք պահս բարոզեցէք պաղատանս, և
այս յայտ է ՚ի Նինուէացոցն, զի ընդ բարո֊
զելն Յովնանու, ահա . գ . աւուրք և Նի֊
նուէ կործանեսցի : յայնժամ ՚ի փոքունց
մինչև ցմեծամեծս ընդգեցան զքուրձ և սր֊
բեցին պահս և ցանեցին հող ՚ի գլուխս իւ֊
րեանց և լուաւ ն՟ց Տ՟ր և անցոյց ՚ի նոցանէ
զբարկութի կործանմանն, սոյն ասէ՛ մե՟ն
Օգոստինոս մեծ է՛ զօրութի ապաշխա֊
րութեան և անհուն է՛ գթութի ողորմու֊
թեան այ՟ ՝ որ զհատեալ վճիռ բարկութեան
այ՟ դարձոյց ՚յ անտեսականութի : նոյնս
յայտ է և ՚ի Պամ՛իթ ՚յ ե՟ . թագաւութեց, զի
յորժամ մեղաւ նա՛ ՚ի կնոջն ուրիայի բեթսա֊
բեոյ ՝ եկն. առ նա՛ Նաթան մարգարէ
ատեալ . ճ . ոչխարացն և ասաց

դուես յանցաւորն այն, և ասէ՛ Դա-
ւիթ մեղա՛յ Տն, և Նա՛թան ասէ՛ և
Տր անցոյց զքև զմեղս քո, այսպէս և
հարկէ և մեզ մեղաւորացս ՚ի սկիզբն պա-
հոցս սգենալ քուրձս ՚ի վե՛ր մարմնոց մե-
րոց, և զամենայն փափկութիւն եթէ ՚ի կե-
րակուրս և եթէ ՚ի հանդերձս և եթէ
՚յայլ նիւթս, որք պատճառեն զմեղս ՚ի
բաց ընկենուլ ՚ի մեզանէ, և բուռն հար-
կանել զխոնարհութե՛ որ է՛ զարդ և կա-
տարումն ամենայն առաքինութեց, զի ասէ՛
երանելին Գրիգորիոս: ամենայն առաքի-
նութի առանց խոնարհութե՝ է՛ իբրև
զյարդ առանց ցորենոյ, որ ՚ի հողմոյ
հպարտութեն բարձրացեալ լինի՝ և
ցրուեալ ընդ ամենայն խոշս ՚յերկրի: այս-
պէս և մարդ որ է՛ առանց խոնարհութե
՚ի սկիզբն պահոցս՝ ցրուեալ լինի ՚ի խորս
տանջանաց: Պարծեալ այսու երևի մարդն
խոնարհն՝ որ ճանաչէ զինքն, և թէ ուստի է՛
և յի՞նչ դառնալոց է՛, և այսու օրինակաւ
հո՛ղ դնեմք այսօր ՚ի գլուխս մեր՝ ասելով
քահանայիւն զբանն՝ զոր ասաց Ած Ա-
դամա, հողեր և ՚ի հող դարձցիս: և Ա-
բրահամ ասաց, այլ ես հող եմ և մոխիր և
սկսա՛յ խօսել ընդ Տն: և Երեմիա՛ ասէ՛.
դուստր ժողովրդեան իմոյ զգեցիր քուրձ,
և ցանեա՛ մոխիր և շրջեա՛ զքաղաքա-:

մո-

մոխիրս այս ունին լուացողական զօրութիւն,
եթէ սակաւ ինչ ջուր դնիցի ընդ նմա,
և լինի օճառ լուանալեաց, ջուր խառ-
նեալ մոխրոյս այս՝ է՛ ջերմ արտասուքն
որով հոգին սրբի ՚ի մեղաց, վասն զի առնէ՛
Երեմիայ, լալով ելաց ՚ի գիշերի և ար-
տասուք իւր ՚ի վերծնօտից իւրոց։ Յարտա-
սուօքս այս ընկղմին դևքն որպէս ընկղ-
մեցան եգիպտացիքն և փարաւոն ՚ի ծովն
կարմիր։ սա՛ բարձրացուցանէ զայր ար-
դար ՚յ երկնայինն փառսն, որպ̄ առնէ՛ ծնն-
դոց բարձրացեալ ջուրն և վերացոյց զտա-
պանն։ և հեղ զսիրտ քո իբրև զջուր ՚յ եր-
կիր։ բնական է՛ զի ամենայն հեղուկ նիւթ
յորժամ ՚յ ամանէ ինչ դատարկի՝ ՚ի հոտոյն
մնացորդ ինչ դեռ ևս մնայ ՚յամանն,
իսկ ՚ի ջրոյն ոչինչ մնայ, այլ ամենևին թա-
փի։ զոր օրինակ եթէ ձէթ, կամ նօթ,
կամ մեղր, կամ իւղ, թափես ՚յ ամանէ
ինչ հոտն զայս դեռևս, իսկ ՚ի ջրոյն ո՛չ
ինչ հոտգայ։ այսպ̄ պարտ է՛ թափել ՚ի մե-
ղաց ՚ի սկիզբն պահոցս, և զսիրտս
լուանալ, զի կատարելապէս մաքրի-
ցի և ո՛չ պահեսցէ ՚յինքն մնացորդ ինչ
մեղաց և անօրէնութեց, վասն զի առնէ՛
հեղ ըզսիրտ քո իբրև զջուր ՚յ երկիր։ և
Ք̄ի փառք։

Ք Ա Ր Ո Զ.

Խոստովանութե Տր̄ թող զմեղս իմ:

ԱՊՐ՛ եթէ խոստովան լինիմք զմեղս մեր հաւատարիմ նա է և արդար սա ՚ի թողուլ զմեղս մեր: ՚Յհւ. ա̄. ոմն կամեցաւ որսալ աղաւնի, և նախ սնոյց ընտանի աղաւնի մի՛ մեղրով եփած ցորենով, և յոր_ժամ սնոյց և սովորեցաւ ՚ի տունն աղաւ_նին այն՝ յայնժամ թուոյց զնա տան տէրն, և երթեալ աղաւնին այն տեսեալ զե_րամս վայրի աղաւնեաց՝ նստաւ ՚ի մէջ նոց և շրջէր ընդ նոս, և վայրի աղաւնիքն յորժամ ուտէին զգեղեցիկ հատս ՚ի նմանէ՛, այլ ոչ բաժանեցան ՚ի նմանէ՛ այլ երթային ընդհետ նոց, և յորժամ դարձաւ աղաւ_նին ՚ի տուն տն իւրոյ, գնացին ընդ նմա և ջոկք աղաւնեացն և մտացին անդ՝ և ՚յայն անուշ կերակրոյն որոյ զհատն առեալ էին յա՛մք կերան: Տանուտէրն Ք̄Ս̄ է՛, և վայ_րի աղաւնիքն մարդիք, որք էին օտարա_ցեալք յա̄յ, և յորժամ եկեալ Ք̄Ս̄ թէ եր_կինքն դատարկէ ՚ի մարդկանէ, և սա_

տա_

տանեայ զբաղմամբ որսով և տանին ՚ի
դժոխս, վասնզի մաքուր աղաւնի մի՛ որ է՛
սբ̄հի Ա̄ծածինն ընտրեց ՚ի մարդկանէ և
սնոյց զնա՛ ՚ի տան նուիրեալ, այսինքն,
՚յերկինքն, զի թէպէտ սբ̄հի կոյսն մարմնով
՚յաշխարհումէր՝ այլ հոգւովն խոկմամբ՝ յեր-
կինքնէր։ և նման է՛ սբ̄հի կոյսն աղաւնոյ, վս̄
զի է՛ կերպմի աղաւնի որ յորժամ արեգական
՚ի վեր ծագէ՝ փետուր պայծառանայցի նորա՝ գոյն
զգոյն երևի, այսպէս սբ̄հի կոյսն թէպէտ
զարդարեալէր գեղեցիկ փետրով, այսինքն,
զանազան առ̄քինուե̄ յառ̄ջ քան զա̄ենայն
հրեշտակապետսն, այլ յորժամ ծագեաց
՚ի վեր նր̄ շնորհք հոգոյն սրբոյ և յղացաւ
զբանն այ̄՝ յայնժամ երևեցաւ զանազան
առ̄քինութի նր̄։ զի իմաստութիւն յայտնե-
ցաւ, յորժամ ասաց՝ երբ լինիցի ինձ այս
քանզի զայր ո՛չ գիտեմ, և կուսութիւն եմ
ուխտեալ ։ և խոնարհութիւն երևեցաւ
յորժամ ասաց ահա՛ւասիկ կամ աղախին
տն̄, և այս աղաւնիս սնաւ ՚ի գիրկս այ̄
հատով ցորենո՛յ, այսինքն, առաքինու-
թբ̄, պահօք, և աղօթի՛ւք, և խառնեալ
էր մեղրով շնորհաց հոգոյն սբ̄յ, և յոր-
ժամ եկն սբ̄հի կոյսն ՚ի մէջ մարդկան՝ բու-
րեաց ՚ի նման է՛ հոտ Ա̄ծային, զի ծնաւ
զորդին այ̄, և բովանդական ամենայն վարք
և բանք նր̄ բուրէր զհոտ առաքինութեն ։

զմանէ վայրի աղաւնիքն , այսինքն , դասք
առաքելոց , կուսանաց , և այլոց սրբոց , յոր-
ժամ առնին զանուշ հոտ նոր , այլ ոչ մեկ-
նեցան ՚ի նմանէ ,և յորժամ դարձաւ սրբուհի
Աստուածածինն յերկինս՝ գնացին զհետ նորա
քաղցրումբ ՚ի մարդկանէ և լցին զերկինս,
և ՚ի կերպակերպ հրեշտակացն որոյ սաստ
զհոտն առին՝ գնացեալ յերկինս կերպան
յանգ : Նա և պարտ է հետևել զկնի այս
անուշահոտ աղաւնոյս՝ և արժանի լինել
կերպակերպ հրեշտակացն յերկինս, զմինէ ող-
ջոյն առաջուք կենսաբեր սրբուհի Աստուածածնին :
Այս եթէ խոստովան լինիմք զմեղս մեր:
Յհ. ա. Ա արդարանայեմք առնեն եթէ այլ դա-
տաստանն քաղցրագոյն է՝ քան զաշխարհիս
դատաստանն , նա և դատաստան նոր օ-
րինացս քաղցր և դիւրին է , քան ըզդա-
տաստան հին օրինացն : Ի դատաստանն
աշխարհիս որ առաւել ծածկէ զմեղս իւր՝
առաւել արդարանայ , և որ յայտնէ զմեղս
իւր՝ առաւել դատապարտի , որպէս գողք
և մարդասպանք , որք խոստովանին զմեղս իւ-
րեանց՝ չարաչար մեռանին , և այսպիսի
խոստովանութիւն դժուար է և դառն :
որպիսի էր հին օրէնքն և խոստովանու-
թիւն իւր , որ գրեալ է ՚ի գիրս Յեսուայ.
Է. գլուխ մը Աքարում որ գողացաւ ՚յա-
նեծիցն երկրօղի և եկն բարկութիւն այլ
՚ի մէջ

՚ի վեր ժողովրդեանն, և կացուցել զԱքար
՚ի մէջ ատենին ասէ՛ ցնա Յեսու, Աքար՝
տուր փառս այ՝ և խոստովան լեր զմեղս
քո՛ և մի՛ ծածկեր, և նմա խոստովանե֊
ցաւ զմեղս իւր՝ և փոխանակ Թողութեն
քարկոծեցաւ ՚ի ժողովրդեանն։ բայց
այ դատաստանն որ ՚ի նոր օրէնքս է՛, այլ
աղէ, քանզի որ Թագուցանէ զմեղս իւր
առաջի խոստովանահօրն, որ ՚ի տեղի այ
է՛ ոչ գտանէ այնպիսին զԹողութի ՚յ այ, այլ
յայտնելոց է՛ մեղք նր ՚յ ահաւորն դատաս֊
տանի առաջի ամենայն արարածոց, իսկ
որք ճշմարտութբ և խոնարհութբ խոս֊
տովանին զմեղս իւրեանց՝ Թողութի լի֊
նի, և ծածկէ Ած զմեղս նց, և այսպիսի
խոստովանութիս երանելի է՛ որպէս ասէ՛
Դաւիթ։ երանի ում Թողութի եղև մե֊
ղաց՝ և ծածկեցան ամենայն յանցանք
նորա։ վասնզի ՚Յնս ասէ՛ զայսպիսի խոստո֊
վանութիս, ասաց եԹէ խոստովան լինիք։
Իսկ արդ՝ վասն խոստովանութեան խոր֊
հրդոյս բազում ինչ գիտելի է՛։ Նախ
գիտելի է՛ զի ·ըժ ան· ինչ պիտոյ է՛ որ խոս֊
տովանութին կատարեալ լինի։ քան զի
Վարդապետք ասեն՝ Թէ բազում ինչ
է՛ ՚ի հարկաւորութէ խոստովանութե։
Առաջինն՝ պիտոյ է՛ զի խոստովանու֊
Թին խոնարհութբ և ճշմարտութբ լի֊
նիցի,

նիցի, և այս իմաստութիւն խոստովանու_
թեան ·գ· ազգէ՛ ։ ա· զի զիւրաքանչիւր
մահու չափ մեղս առանձինն՝ և որոշ
որոշ խոստովանեսցի, որպէս ասէ՛ Դա_
ւիթ ։ լուացից զամենայն գիշեր զմա_
հիճս իմ, և արտասուօք իմովք զան_
կողինս իմ թացից ։ զայս կամի ցուցանել
թէ լուացից զամենայն մահու չափ մեղս
որ է՛ գիշեր, ՚յանկողինս խղձի մտաց իմոց
ջրով արտասուաց, և ոչ միայն բաւա_
կան է՛ մն հասարակ խոստովանիլ զմեղս,
կամ ասել՝ թէ բազում մեղք եմ գործել,
և առանձինն ոչ ասել զմեղաց անուանսն ։
բ· զի ընտրեսցէ զխոստովանահայրն՝ որ
գիտիցէ ճանաչել զմեղս, և ունիցի զիշ_
խանութի կապելոյ՝ և արձակելոյ ։ և թէ
ոք կամաւ երթա՛ առ օտարեր քահա_
նայ՝ և խոստովանի ասելով ՚ի միտս՝
թէ սա՛ զիմ մեղքն չճանաչէ և ինձ սա_
կաւ ապաշխարանք դնէ՝ անօգուտ է՛ այն_
պիսոյն խոստովանութիւն ։ գ· զի զմահու
չափ մեղսն ծանր, և առաւել զղջմամբ
խոստովանեսցի՝ և որ ծանրագոյն է՛ ՚ի մէջ
մահու չափ մեղացն՝ նախ ծանրագոյն զղջ_
մամբ խոստովանեսցի ։ Երկրորդ պիտոյ է՛, որ
խոստովանութիւն կամաւ լինի և ոչ բռնու_
թեամբ, որպէս ասէ՛ Սաղմոս ։ ես կամօք իմօք
խոստովան եղէց նմա, զի թէ բռնութեամբ

խոս_

խոստովանին ոմն գործն, որ յորժամ ՚ի չան_
կայն ձգեն զնա՛, յայնժամ խոստովանին
զմեղս իւր առաջին դատաստապարտողին, այսոքիկ
են որք ոչ խոստովանին՝ մինչև առքէ ՚ի
նոսա ԱԾ հիւանդութիւն մահու, և
յայնժամ խոստովանին վասն ահի՛ դժո_
խոցն, և ոչ վասն սիրոյն այ, այսպիսի՛
խոստովանութիւն ոչ փրկէ, զի պարտ է՛
որկամաւ լինի և ոչ ակամայ, և վս սի_
րոյն ԱԾոյ։ Երրորդ պիտոյ է՛, զի խոս_
տովանութիւն ամբ լինի, այսինքն, վս իւր
հոգւոյն փրկութեան՝ և ոչ վս երևելոյ մար_
դկան։ Չորրորդ զի համարձակ լինի ՚ի խոս_
տովանելն, և ոչ ծածկէ վասն ամօթոյ
զմեղս իւր, և թէ .ա. փոքրագոյն մեղք
ծածկէ վս ամօթոյ՝ և ոչ ասէ՛, նման է՛,
որ ՚ի կալ մի՝ կրակ անկանի և վառի՝ յերբ
իմանան՝ շիջուցանեն զնա՛, բայց մնայ
՚ի մէջ կալին պէծ մի՛ կրակի՝ և անհոգա_
նան վս փոքր կրակին այն՝ և ոչ շիջու_
ցանեն, այլ յետոյ սակաւ սակաւ զօրա_
նայ, և շուրջ պատէ զկալն՝ և այրի։ Նյսպ
լինի նոց՝ որք զմեղս իւրեանց ծածկեն և ոչ
ասեն, և ոչ բառնան ՚ի միջոյ հոգւոյն։
Դարձն մի՛ պատահեալ մեղքն ՚ի սիրտ՝
բարձէ զմարդն՝ յայլ մեղս և ՚ի կորուստ
մատնէ զինքն։ Հինգերորդ պարտ է՛,
զի ամօթխածութեամբ խոստովանի զմեղս
իւր,

նոր , և ո՛չ պարծենալով առաջին մարդկան թէ զայսպիսի մեղս գործեցեմ ես։ Վեցերորդ պիտոյ է՛ զի հոգորանօք, և արտասուօք և ցաւագին սրտիւ խոստովանի, և մորմոքանօք ևս թէ կարող է՛ արտասուեսցէ կատարեալ խոստովանութեամբ և զղջմամբ, զի արտասուօքն՝ հիւանդութի հոգոյն արագապէս բժշկեսցի , զի յորժամ հիւանդին քրտնի , և քրտունքն ՚յ ոտից մինչև ցգլուխն լինի՝ և. տաք լինի և յոյժ հոտած՝ այն բարի նշան է՛ հիւանդին , զի այնպիսի քրտունքն հանէ զցաւն ։ այսպէս՝ յորժամ ո՛ք արտասուօք հատուածէ վասն ամենայն մեղաց իւրոց , և ջերմեռանդն սրտիւ խոստովանի և իւր մեղքն իւրեանն հոտած և գարշելի երևի՝ այս բարի նշան է՛ զի առողջանալ կամի ՚ի հոգևոր հիւանդութենէն։ բայց հի՛ւանդին միոյ, որոյ ծանր է՛ ցաւն՝ և ինքն սկսանի ծիծաղել , և ո՛չ կարէ ճանաչել զցաւս իւր՝ վատ նշան է՛։ այսպէս որ ծանր մեղք է՛ գործել, և ծիծաղի ՚ի ժամ խոստովանութեան ո՛չ է՛ բարի նշան։ Եօթներորդ պիտոյ է՛ զի խոստովանութիւն խոնարհութեամբ լինի, որ զինքն ակար, հի՛ւանդ և ողորմելի ճանաչէ , և լինի հնազանդ խոստովանահօրն , որ զինչ կանոն ՚ի վե՛ր դնէ՛ խոնարհութեամբ ՚յանձն

առնու

տանուն և կատար է ։ Ութներորդ պիտոյ է,
զի խոստովանութիւն՝ համառօտաբանութբ
լինի, և ․Դ․ ինչ պիտոյ է ։ Ա․ զի խոստո-
վանողն և խոստովանահայրն ճշմարիտ
ուղղափառ և կաթուղիկէ համաւատք
լինիցին՝ և ուսմամբ մի եկեղեցւոյ, և ոչ
ըստ մոլորութեան հերձուածողաց ։ Բ․ զի
մի՛ թողութե յուսայնիցէ խոստովանութիւն,
և ոչ որպէս յուդա մատնողն որ խոս-
տովանեցաւ ասելով մեղայ՝ զի մատնե-
ցի զարիւն արդար, բայց անյոյս լեալ
խեղդեցաւ, անօգուտ է՝ այսպիսի խոստո-
վանութիւն ։ Գ․ զի ՚ի խոստովանութեան
սուտ չասէ՝ այլ զճշմարիտն, քանզի խոստո-
վանութիւն առաջի այ լինի՝ սուտ ասելն
ծանր մեղք է՝ և յոյժ պատժոց արժա-
նի, քանզի մեղաց պատճառն սուտն է՝ և
սատանայ, որ ամենևին սուտ է՝ և ստու-
թբ ձգէ զմարդիկ ՚ի մեղս, որ զխաւսս
աշխարհիս և զհեշտութիւս քաղցր ցու-
ցանէ՝ և անանց, որ դառն է՝ քան-
զլեղի, և անցանէ որպէս զծուխ ։ այլ
պարտ է՝ որ խոստովանութիւն ճշմարտու-
թբ լինի՝ և ոչ երբէք ստութբ, քան-
զի ասէ՝ Մովս ։ ատեցեր Տր դու զամենե-
սին, որք գործեն զանօրէնութիւն, և կո-
րուսանես զամենեսեան, որք խօսին սուտ ։
և այս սուտ խօսելն մանաւանդ թէ լի-
նի

նէ 'ի խոստովանութեան, զի կորնչելն մեծ պատիժ է՝ քան զաւելի լինելն, այսպա-րեմն սուտ ասելն 'ի խոստովանութեան մեծ մեղք է՝ քան զմեղք գործելն: Պարծէ ոչ կայ այնպիսի մեղք որ զխարդ կորուսան է՝ թէ ստոյգ խոստովանի, այլ վ͞ս սուտ ասելոյն 'ի խոստովանութեան կորնչի մարդ, յոր-ժամ ծանր մեղք է՝ գործեալ և ուրանայ առաջի խոստովանահօրն: Պարծեալ ոչ է՝ արժանի 'ի խոստովանութեան սուտ ա-սել վ͞ս խոնարհութ͞ե, զի կարէ ասել հաստատակութեամբ թէ մեղաւորեմ, և ոչ ասել զայն մեղքն թէ արարեալեմ որ չի-նի արարեալ, և կամ արարեալն թաքու-ցանէ: Եւ աստ գիտելի է՝, զի որ խոս-տովանի զամենայն մեղս իւր՝ և թէ ունի կամս այլ գործելոյ զայն մեղքն՝ այն-պիսոյն խոստովանութիւն ոչ է՝ ընդու-նելի, և ոչ է՝ պարտ զայնպիսին արձա-կել, վ͞ս զի արմատ մեղացն մնացեալ է՝ 'ի սիրտ ն͞ր: Քանզի նման է՝ որ քաղէ զփուշն կտրելով և ոչ արմատաքի խլէ, և որ զմազն ածելէ յետոյ առաւել բու-սանի, այսպէս թէպէտ խոստովանի ոք՝ և զկամս մեղացն ունի 'ի սիրտս իւր՝ 'յայն չար արմատէն բազում այլ մեղք բուսանին, որպ͞ ասէ՝ Բ͞ն Մ͞ինս .Է. Օի 'ի ներքուստ 'ի սրտէ մարդկան՝ խորհուր-

դք չա-

դք չարութե՟ ելանեն։ շնութիւնք։ պոռնկութիւնք ։ սպանութիւնք ։ գողութիւնք ։ ագահութիւնք ։ չարութիւնք , նենգութիւնք ։ գիջութի՟ չարակնութի՟ ։ հայհոյութի՟ ։ ամբարտաւանութի՟ ։ անզգամութի՟։] Այս ամենայն չարիք ՚ի ներքուստ ելանեն , և պղծեն զմարդն ։ և որք ունին զկամս յետ պահոցն դառնալ ՚ի նոյն մեղս , այսպէս խոստովանութիւն սուտ է՛ և ընդունայն , զի սոքայ զտուտն դժոխոց օձին միայն հատանեն՝ և ո՛չ կատարելապէս սպանանեն զգլուխ և զմարմին , այլ այն թիւնաւորք օձին մնան ինչ ՚ի գլխոյ կողմանէ թողուն ՚ի հոգիս և ՚ի սիրտս խորհեանց ։ և այս յատկութի՟ օձին է՛, զի թէ գլուխ օձին մնայ .բ. մասն կամ .գ. ընդ մարմնոյն կարէ ապրիլ ։ և գլուխ օձին է՛ չար խորհուրդն հեշտութե՟, և մարմին օձին է՛ հաճանիլ մեղացն , և տուտն է՛ ՚ի գործ ածելն ։ այսպիսիքս կտրեն զտուտն օձին՝ որ ժամանակ մի՛ ՚ի բաց կան ՚ի մեղացն գործելոյ , այլ գլուխ և մարմինն անդ է՛ , այսինքն , չարխորհուրդն , և հաճանելն ։ և սոքա ո՛չ թողուն զմեղքն՝ այլ մեղքն զնոսա թողու , զի ո՛չ ունին զկարողութի՟ կատարել զմեղս , կամ վ՟ս ծերութե՟ կամ վ՟ս տկարութե՟ ։ այլ ունին զկամս մեղացն , զի թէ

կա_

կարէին առնել՝ յօժարապէս առնէին
զմեղսն: այսպիսի խոստովանութիւնս ՚ի զու-
րէ՛ , ընդ վայրէ՛ , ոչինչ է՛ : Մանաւանդ ապ-
տայէ՛ , զի կատարեալ լինի խոստովանու-
թիւն որպէս ասէ՛ Սղս : խոստովան եղէց
քեզ Տր բոլորով սրտիւ իմով : և ոչ է
պարտ կիսակատար խոստովանիլ , զի ոչ
է՛ պարտ զմեղաց կէսն ասել՝ և զկէսն
պահել , կամ զկէսն միոյ քահանայի խոս-
տովանիլ՝ և զկէսն միւս այլ քահանայի ,
և որ զայս առնէ՛ կամաւ վասն ամօթոյ՝
և ոչ թէ մոռանալով , այնպիսոյն սու-
տ է խոստովանութիւն : այլ որքան մեղք
՚ի միտն է՛, պարտ է՛ որ ՚ի մասունս և կա-
տարեալ ուղղամտ̄ կաթուղիկէ և ըն-
տրեալ քահանայի ասէ՛ : և որ բաժա-
նէ և կիսատէ զմեղս իւր , ոչ առնու
զթողութիւն յայ̄ , զի Ած̄ կատարեալէ ճշ-
մարիտ և արդար : կամ բոլորովին թո-
ղու զմեղս՝ կամ բնաւ ոչ թողու : և
այնպիսոյն պարտ է՛ նոր սկզբն առնել
և խոստովանիլ զամենայն մեղս իւր , այլ
թէ մոռացեալ է՛ զմեղ ինչ՝ զմոռացեալն
միայն պարտ է՛ խոստովանիլ : և որ
խոստովանի զամենայն մեղս իւր՝ բայց
զմի՛ մահու չափ մեղս թագուցանէ վս̄
ամօթոյ՝ նմանէ՛ նաւ̄ի ՚ի վր̄ ծովու՝
որ ունիցի զհարիւր ծակ՝ զիննսուն և
ինն

Յնն կալնու և զմինն ոչ՝ և Թողու
զայն բաց, ընդ որ մտանէ Ջուրն և
ընկղմէ զնաւն ։ կամ որ ունիցի .Ճ.
նետս ցրցեալ ՚ի մարմինն իւր՝ զամենն
քարշէ՝ և զմինն Թողու, մի նետն այն
մնեալ ՚ի ներքս՝ կարէ սպանանել զնա ։
Նու դարձեալեն սմանք, որք ոչ Թա֊
գուցանեն զմեղս դարշելիս և ծանունս,
բայց պատրուակաւ խոստովանին, այսի֊
նքն, գաղտագողի, այսր անդր փախչելով,
զի խոստովանահայրն ոչ գիտասցէ, այս֊
պիսի խոստովանութիւն ևս սուտ է՛ ։ այլ
պարտ է՛ այնպէս խոստովանիլ զմեղսն
յայտնի և պարզ և իրաւ ողջ և զղջեալ
է՛, Թէպէտ և յոյժ ամաչի, սակայն
այնչափ առաւել Թողութիւն գտանէ, և
Թէ վս ամօթոյ զծանր մեղքն Թաքու֊
ցանէ լինի նման՝ որպէս եղև կնոջ միոյ
այլոյ, որ յոյժ մեծ անուն ունէր, և ունէր
երեք որդի, և սատանայ ընկեց զկինն
՚ի մեղս և ծընաւ .Բ. որդի ՚ի պոռնկու֊
թէ՝ և զերկուսինն էսպան՝ և զայս մե֊
ղս ամենևին ոչ խոստովանէր վս ամօ֊
Թոյ՝ զի մի՛ պատկառեսցի հարկէք իւր ։ մե֊
ռաւ կինն, այս մեղօքս և իջաւ ՚ի դժոխս ։
և երեք որդին նր՝ աղօթք և պատարագ
մատուցանէր և խընդրէր՝ Թէ Տր ցոյց ինձ
զմայրնիմ, Թէ ՚յ որ դասս հրեշտակաց կար֊

գետաղ կայ , և 'ի վերջն պատարագին է_
ընթեցաւ մայրենիւր՝ յոյժ անհարկու տես_
լեամբ և .Բ. վիշապք պատառոտեալ զնո_
րա , և բերանք վիշապացն՝ մինն 'ի մէ_
ծծէն և միւսն 'ի միւսէն , որոշմեցաւ
նմա որդեն և ասէ՛ , ո՞վ ես դու՝ և նա
ասէ՛ , ես եմ մայրն քո՛ , եհարց զի՞նչ եղև
քեզ՝ պատասխանի ետ նմին , թէ իջայ
'ի դժոխս , ասէ՛ որդեն՝ ես գիտէի թէ 'ի
հրեշտակաց դասն կարգեալ ես , զի բա_
զում բարութիւս արարեր : այսքան պա_
հք , աղօթք , ողորմութի , արդ՝ զի՞նչ
եղև պատճառ՝ և այդ վիշապքդ զի՞նչ
նշանակեն : ասէ՛ մայրն զի զծածուկ մեղս
իմ թաքուցի 'ի խոստովանութեն վ՜ս ամօ_
թոյ , և զամենայն բարիս վն՜ց առնեի՝ որ
իմ հարկիքս չկորչէր , վն՜ց այժմ յոյժ ա_
մօթ և նախատինք եղէ : յա՛ւէտ և զայս
.Բ. վիշապս , որք .Բ. սատանայքեն , որ_
կու ծըծեն զծիծս իմ .Բ. որդւոց տեղն ,
զոր ծնայ , և սպանի զնոսա և ո՛չ կերան
զկաթն իմ , սակս այն՝ տանջեն զիս :
զայս ասաց և դարձաւ 'ի դժոխս : ա_
պաշխարեա ո՛չ է՛ պարտ թաքուցանել
զմեղս վ՜ս ամօթոյ : քանզի խոցոտ մար_
դն և աղքատն նստի 'ի դուռն եկեղեցոյ
և ողորմութի խնդրէ՝ զայն անդամն որ
առողջ է՛ ո՛չ ցուցանէ՝ այլ ծածկէ և
խո_

խոցոտեալն ցուցանէ , իսկ՝ որ ծածկէ զխոցոտեալն՝ և զողջն ցուցանէ՝ տգէտ է և ոչ առնու ողջութիւն : այսպէս և խոստովանութիւն դուռն է երկնային ե-կեղեցոյն , որ է ՚ի մահու չափ մեղս՝ խոց-ուածս ՚ի հոգին , վասն զի պարտ է որ զխստա ծանր մեղքն յայտնէ առաջի խոստովա-նահօրն որ է դուռն երկնից , զի առցէ ողջութիւն ՚յ այ և ՚ի հրեշտակաց : իսկ որք զխոցս ծածկեն , այսինքն , զմահու չափ մեղսն և զողջ տեղն ցուցանեն՝ որ-պէս թէ բարիք երևեին կեղծաւորելով՝ այնպիսիքն ոչ առնուն զողջութիւն ՚յ այ, այլ դատանձանս յաւիտենականս : Տա-նելոյ պիտոյ է , զի խոստովանութիւն յառաջ վասն ինքեան լինի , և մեղա-ւորքն զիւր մեղքն խոստովանի՝ և ոչ զայ-լոց , զի չէ պարտ որ կինն դատաւորի ՚յառնէն՝ և զնր մեղքն յայտնէ , և ոչ այրն զկնոջ մեղքն յայտնէ , և ոչ որք զմե-ղս թշնամոյ իւրոյ , նա և ոչ պարտի որ իւր մեղացն թէեր լինի և ՚յ այլոց վր ձգէ , այլ պարտ է որ զինքն մեղանէ , և ոչ զգործակցին անունն յիշէ ՚ի խոստո-վանութեան , թէ կայ հնար որ առանց գործակցին զքո մեղքն միայն յայտնել կարասցես : Նաև այս գիտելի է զի որ խոստովանի և խօսէ հետ այլոց՝ և ոչ

կամի հաշտիլ՝ ո՛չ է՛ պարտ զնոյն արձակել մինչև հաշտիցի, զի Տ͞րն ասէ՛ յաւետարանն , եթէ դուք ո՛չ թողուցուք՝ և ո՛չ հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր ։ Ս՝եստասաներ͞որդ պիտոյ է՛ , զի խոստովանութիւն ՚ի ծածուկ լինի թէ ՚ի կողմանէ խոստովանողացն՝ և թէ ՚ի կողմանէ խոստովանահօրն , զի ո՛չ է՛ պարտ խոստովանողին յայտնի ասել զմեղս իւր առաջի մարդկան , զի բազումք գայթակղին ՚յայնմանէ և պատճառ չարեաց ունուն՝ և անկանին ՚ի մեղս , ասելով թէ նա՛ այսպիսի ծանր մեղս գործեաց՝ և թողութ͞ն կու գտանէ , ես այլ ժամանակ մի՛ հեշտացայց ՚ի փառս աշխարհի՝ և յետոյ կու խոստովանիմ ։ Դ՝այլ և պարտ է՛ խոստովանահօրն ծածկել զմեղս խոստովանողին, և ո՛չ ումեք յայտնել զն͞ո՝ թէ և մասն մասն արասցեն զնա՛, և թէ խիստ նեղեն՝ կարէ երդնուլ թէ ես ո՛չ գիտեմ զն͞ր մեղքն , և այս երդումն ճշմարիտ է՛, զի ո՛չ գիտէ ՚յայն կողմանէն որ մարդ է՛, այլ գիտէ ՚յայն կողմանէն որ ա͞յ երեսփոխան է՛ , զի մեղաւորն ո՛չ խոստովանի քահանայինն ՚յայն կողմանէն որ մարդ է՛, այլ ՚յայն կողմանէն որ ա͞յ տեղն է՛ ։ ո͞րպ Օգոստինոս ասէ՛, թէ զո՛չ ինչ այնպէս պահեաս գիտեմ , ո͞րպ զայն որ

խոս-

խոստովանութեամբ գիտեմ: այլ և զոր ինչ
գիտեմ՝ ա՛ւելի գիտեմ, զի զայն ինչ որ
չգիտեմ՝ կարեմ ուսանիլ՝ և այլ յետ ասել,
այլ զոր խոստովանութեամբ գիտեմ՝ ոչ կա-
րեմ գիտել՝ և կամ յետ ասել: և խոստո-
վանութիւն այնպիսի ամուր փակէ և կո-
պղպայք՝ որ զմիտ քննմանն կու փակէ, զի
զայն մեղքն որ Ճշմարիտ խոստովանեալ
է՛ Ած ոչ յայտնէ՛, և այնպէս ամուր
փակէ զբերան քահանայից, որ նման ոչ
է՛, արժան բնաւ յետ ասել՝ Թէպէտ սպա-
նանեն զնա՛: և քահանայն որ սատանայութիւն
առնէ և զխոստովանութիւն յայտնէ՝ ՚ի
կարգէն լուծանեն զնա՛ և դնեն ՚ի զնդան
մինչև ՚ի մահ, զի այլ ոչ առնիցէ զայն,
քանզի յոյժ ծանր մեղք է՛ յայտնել զխոս-
տովանութիւն՝ և քակումն է՛ եկեղեցւոյ, և ոչ
է՛ պարտ խոստովանիլ այնպիսի քահանայից
որ զխոստովանութիւն յայտնէ և մեռ՛
ինքն առանց խոստովանութեան, այլ ըն-
տրել պարտաւոր է՛ զխոստովանահայրն որ
զխոստովանութեան խորհուրդն մինչ ՚ի մահ
պահէ: Եւ այս գիտելի է՛, զի խոս-
տովանութեան խորհուրդն ՚ի սկզբքն քրիստո-
նէութեան ընդ հանուր էր յամենայն քրիս-
տոնեայս, այլ վասն վատութեան խոստովա-
նահայից որք յայտնեալ էին զմեղս՝ ՚ի բա-
զմաց խափանեցաւ օրէնս ՚յաշխարհքն ա-

 րեւ-

ընծեղից ազգն նեստորեանց և յակոբկեանց որք
քնեաւ ոչ խոստովանին, և այլոց ազգաց,
որք խոստովանին յոյժ ահիւ և դողութք,
և դարձեալ երկնչին ՚ի չար քահանայից
խոստովանիլ թէ յայտնեն զմեղս նո-
րեանց ։ Երկոտասաներրդ զի պիտոյ
է՛ խոստովանութիւն բազում անգամ լի-
նի, և այս ․բ․ ազգ իմանի՝ մինն զի
թէ ՚ի մին մահու չափ մեղքն բազում
անգամ անկանի, պարտ է՛ բազում ան-
գամ խոստովանիլ և այս հրամանք է՛ և ոչ
խրատ ։ ․բ․ զի մահու չափ մեղքն որ մի-
անգամ խոստովանեալ է՛, թէ բազում
անգամ խոստովանի՝ օգտակար է՛, զի
քանի մարդն բազում անգամ խոստովա-
նի զխոստովանած մեղքն՝ տանջանք քա-
ւարանին թեթևանան, և ողորմու-
թին այ իջանէ առատապէս ՚ի վր նր,
և այս ոչ է՛ հրամանք՝ այլ խրատ ։ զի
թէ ոք զմին մահու չափ մեղքն ըստոյգ
խոստովանի մին անգամ՝ բաւական է՛ առ
՚ի փրկութի ։ բայց թէ բազում անգամ
խոստովանի զնոյն մեղքն, բազում լինի պսակ
նր ։ Եւ աստ ․գ․ ինչ պիտելի է՛ ․ա․ զի
յոյժ պատշաճ է՛, որ յառաջ քան զխոս-
տովանիլն խոկայ զամենայն զմեղս իւր՝
և ՚ի միտ ածէ, որ առաջի խոստովանա-
հօրն կրկման ասէ՛, քանզի բազումք գան

յան-

յանկարծակի ՚ի խոստովանութի, և մո_ ռանան և ո՛չ ինչ կարեն խոստովանիլ և այս ո՛չ է՛ բարի, զի հիւանդին յառաջ քան զդեղն շարապաթ տան ըմպելոյ որ կակ_ ղացնէ զցաւսն և պատրաստէ, և ա_ պա տանուն զծանր դեղն և զդառն որ զբոլոր ցաւսն հանէ ։ Նոյնպէս յառաջ քան զխոստովանութիւն որ դառն դեղ է՛, պարտ է՛ որ շարապաթ խմէ, այսինքն, զի խոկայ և ՚ի միտ ածէ զամենայն մեղս իւր, զի ՚ի ժամ խոստովանութեան զամէն ՚ի վայր լնու ։ Բ. գիտելի է՛, զի ՚ի խոս_ տովանութեան ո՛չ է՛ պարտ խառնել պատ_ մութի և խօսք, որ ո՛չ ունի զդիտաւո_ րութի ՚ի խոստովանութիւն, այլ միայն զմեղքն պարտ է՛ ասել՝ և չէ պարտ ՚ի խոստովանութիւն զբարի գործքն ասել, այլ միայն զչարն, զի խոստովանութիւն նման է՛ երակ առնելոյ, յորժամ ո՛չ երակ առնու՝ յայնժամ է՛ օգուտ որ վատ ա_ րիւնն ՚ի դուրս ելանէ և առողջն ՚ի տեղն մնայ և սնուցանէ զմարմինն, այլ այն երակ առնուլն վնաս է՛, որ առողջ ա_ րիւնն ՚ի դուրս ելանէ, և վատ արիւնն ՚ի տեղն մնայ ։ բարի գործքն նման է՛ առողջ արեան, և չար գործքն վատ արեան, որ ՚ի խոստովանիլն զբարի գոր_ ծքն թագուցանէ՝ այն բարի խոստովա_

նու_

նութիւն է՛ և յայտնէ զչար գործս նոր,
այլ որք յայտնեն զբարի գործս նորեց ՚ի
խոստովանութիւն և ծածկեն զչար գոր-
ծս, այնպիսի խոստովանութիւն փառաւո-
րարէ, խոստովանահայրն նման է՛ եր-
ակահարի, և լեզուն նման է՛ նշտարի,
որ հարկանէ զխոցս մեղաւորին, այ-
սինքն, որ իմաստութբ հարցանէ զգաղտնա-
գաւն մեղսն։ իսկ յորժամ երեւի առնողին
աչքն փառասիրս լինի՝ և ձեռքն դողա՛, եր-
կնչող կայ, զի յորժամ հարկանէ զերակն՝
զջիլն հարու և բազում փոսս առնէ,
այսպէս խոստովանահայրն որ տգէտ է՛
կոյրէ, որ ոչ գիտէ թէ որ է՛ մեղքն և որ ա-
ռաքինութիւն։ և որ է՛ մահու չափ մե-
ղք և ծանր՝ զայն մեղք ոչ համարի, և
որ ոչ է՛ մեղք՝ զայն մեղք համարի և զայն
հարկանէ, և կու դողա՛ այն խոստովա-
նահօր ձեռն՝ որ ոչ առնէ ստոյգ դա-
տաստան մեղաւորին, այլ կ՚ո կաշառե-
ուղղոր դատաստանէն շարժի՝ և թոյլ
տայ մեղաւորին մնալ ՚ի մահու չափ
մեղքն, երկնչող կայ խոստովանիլ այնպի-
սեացն։ Գ. դիտանելի է՛, զի խոցեն որ ծայրն
՚ի դուրս է՛ և քանց դերուն բժշկի, այլ
յորժամ ՚ի ներքոյկոյսն լինի խոցուածն՝
ոչ բժշկի, այլ զմարմինն սպանանէ, այս-
պէս յորժամ քրիստոնեային վերք մահու

չափ մեղացն խոստովանութե՟ յայտնելն` նմա առաջ բժշկին , այլ յորժամ Թագուցանէ զմեղքն 'ի նմանէ և ոչ խոստովանի` նորա հոգին մեռանի : այլ լինի երբեմն որ խոցն ծայր առնէ և բացուի , այլ ծածկին նեղ լինի և ամէն Թարախն 'ի դուրս ոչ գայ , վասնզի Ջառահն նշտարովն արձակացնէ , որ բովանդակ Թարախն 'ի վայր Թափի և շուտով բժշկի : այսպէս մեղաւորն որ յայտնէ զմեղս մեղաց իւրոց առաջի քահանային , այլ զծածկ խոցին նեղ առնէ , զի ոչ յայտնէ զչափ մեղաց իւրոց , վասնայնորիկ պարտ է` որ խոստովանահայրն որ է` հոգևոր բժիշկ արձակացնէ զծածկ խոցին մեղաց հարցանելովն : զոր օրինակ եկն ոմն առ խոստովանահայրն և ասէ`, հարի զոմն կղերիկոս , և նա եհարց փայտօվ հարեր և Թէ Թրօվ` նա ասաց Թրօվ , դարձեալ եհարց , Թրին բերանօվն հարեր և Թէ կողօվն` ասաց բերանօվն , դարձեալ եհարց , խոցեցեր զնա` Թէ սպաներ , ասաց Թէ սպանի : Ասաց խոստովանահայրն ո՛վ Թշուառական սպանեալես և ասես Թէ հարի զկղերիկոսն , և որ չափ ծանր է` սպանմանելն քան ըզհարկանելն :Բ՟. գիտելի է`, զի պարտ է` մեղաւորին առաջ խոստովանելոյ և ոչ յապաղել , զի բաղում

БИБЛИОТЕКА имени В.И. ЛЕНИНА

զուամ պատճառի ·ա̅· զի թէ կրակ ան-
կանի ՚ի տուն ումեք ոչ յապաղի տանու-
տէրն , այլ շտապով անցուցանէ զկրակն
Ջրով և բացախով , այսպէս մահու չափ
մեղքն դժոխային հուրէ և այրէ զհոգին,
վասն զի պարտ է՝ փութով շիջուցանել զնա
Ջրով արտասուաց և խոստովանութ̅ե, կամ
բացախով չարչարանացն Ք̅ի, և թէ ոչ
յաւիտեան այրի ։բ̅· է՝ զի մահն հանա-
պազ սպանէ մարդոյն , և ոչ գիտեմք
զժամանակն զտեղի մահուանն թէ երբ
կամ ուր մեռանիմք , վասն զի պարտ է՝ հա-
նապազ պատրաստել զմեզ խոստովա-
նութ̅բ, քանզի բազումք որք ծուլանան ՚ի
խոստովանութիւն , և յանկարծակի մե-
ռանին և իջանեն յատակս դժոխոցն ։գ̅·
Թէ ո՛ք զԹշնամին իւր՝ որ բազում վնաս
տանէ՝ բազում ժամանակս արգելէ ՚ի
տունն իւր՝ այնպիսին յիմարէ , այսպէս
սատանայ է՝ Թշնամի մեր՝ և բազում վնաս
տանէ՝ ՚ի տունս մեր՝ որ է՝ հոգիս մեր ,
և որք ծուլանան ՚ի խոստովանել զմեղս
իւրեանց բազում ժամանակս՝ զսատանայ
պահեն ՚ի տունս իւրեանց՝ և այս յոյժ
սոսկալի է՝ , զի ոչ միայն մեր Թշնամի է՝
այլ և ա̅յ ։ և Թէ ո՛ք զԹշնամի Թա-
գաւորին Թաքուցանէ ՚ի տուն իւր, Թա-
գաւորն գիտացեալ զայն՝ չար մահու-
ամբ

այլք կորուսանէ՛ զԹագուցանողն իւ-
րոյ Թշնամոյն , վասնզի փութով պիտի
գտանել ա՛ռ խոստովանահայրն որ է՛ 'ի տե-
ղի այ , և մատնել զսատանայ՝ որ է՛ Թշ-
նամի այ : Դ. զի որ է՛ 'ի մահու չափ
մեղս՝ է՛ 'ի բերան սատանայի , և որք
ծուլանան 'ի խոստովանութիւն և ո՛չ կա-
մին զերծանել 'ի սատանայի բերանէն յի-
մարագոյնք են այսպիսիքս քան զանա-
սուն , զի անասունն յորժամ անկանի 'ի
բերան պատառող գայլին՝ անդ աղա-
ղակէ և հնար փրկութե խնդրէ , իսկ
անզգամ մեղաւորն բազում ամ է՝ որ 'ի
բերան սատանայի է՛ , և ո՛չ երբէք աղա-
ղակէ կամ խնդրէ հնար փրկութե .
վասնզի սատանայ զբազումս կլանէ և ի-
ջուցանէ 'ի դժոխս որ է՛ փոր սատանայի:
Ե. զի որ ծանր հի՛ւանդութի ունի՝ փու-
Թով երԹայ ա՛ռ բժիշկն՝ և ցուցանէ նմա՛ ,
զի յետ մահուն՝ բժիշկն այլ ո՛չ կարէ
օգնել: իսկ հոգևոր հի՛ւանդութին ծան-
րագոյն է՛ քան զմարմնաւորն , վասնայ-
նորիկ պարտ է՛ փութով երԹալ ա՛ռ հո-
գևոր բժիշկն և խոստովանիլ , զի յետ
մահուանն ո՛չ կարէ օգնել խոստովա-
նութին , քանզի դժոխայինքն յայտնա-
պէս խոստովանին զմեղս իւրեց , բայց
ո՛չ օգտեն : Զ. զի եԹէ ո՛ք եղեալ է՛ 'ի

բա-

բանտին՝ զոր տարեալ սպանիցեն, Թէ դուռն ամրագոյն փակեալ լինի՝ չէ՛ զարմանք Թէ ոչ փախչի բանտարգեալն այն, այսպէս որ ՚ի մահու չափ մեղս է՛ ՚ի սատանայի բանտն է՛ և մահապարտ է՛, դուռն բանտին բերան մեղաւորին է՛ և այս դուռս փակ ոչ ունի բնաւ, և յորժամ բանայ մեղաւորն զբերանն առաջի խոստովանահօրն ՚ի նմին ժամու ելանէ ՚ի բանտէն սատանայի, վասնզի յիմարքեն այնոքիկ, որք ծուլանան ՚ի խոստովանուԹեն և ոչ ելանեն ՚ի բանտէն սատանայի ։

Է. Թէ դրամաճանաչ, այսինքն, սառաֆ, կամ վաճառական ո՛ք բանայ զգանձ իւր և աղաղակէ առ ամենեսեան, որ ո՛ք ունիցի ղալպ դրամ՝ բերիցէ առիս, որպէս մաքուր ոսկոյ հետ փոխեմ, և որք անմաքուր ոսկի ունէք՝ բերէք, որպէս պատուական ոսկի հետ փոխեմ, և յորժամ լսեն զայս մարդիկ, ո՛չ ո՛ք ծուլանայր՝ այլ փուԹով գային ։ վաճառականս այս խոստովանահայրն է՛ և վարդապետն, և գանձատուն նմա եկեղեցին է՛ որ լի է՛ բազում հոգևոր ականաւք և մարգարտով, յամէն օր կու կանչէ յորժամ քարոզ կուտայ, Թէ օ՛վ մեղաւորք բերէք զձեր մեղքն որ ղալպ փողէ, և տամ ձեզ զմաքուր ոսկի և զընտիր

այր

արծաթ , այսինքն , զմեղաց թողու-
թիւն , բերէք զմեղքդ և զխոստովանու-
թիւդ որ ծանր է՛ քան զքար , և պինդ-
նքրև զերկաթ , և առէք զխորհրդարկութ
և ականս պատուականս , այսինքն ,
զփառս հրեշտակաց , և մեղաւորք յոյժ
կու ծուլանան ՚յայս հոգևոր հաւա-
տութես և քստակես , և ներբեանցն դալալ
է՛ և ո՛չ փոխեն ։ և թէ այսպիսի դալալ
ստակս , այսինքն , զմահու չափ մեղս
դատանէ Ք՟Ծ ՚ի մահուան օրն ՚ի մտանել
մարդոյն , այսինքն , ՚ի հոգին՝ տանա-
լէ զնա ՚ի դժոխքն ։ որպէս թագաւոր
ումն թէ դատանէ զոք , որ կարեալ է՛ դալալ
ստակն՝ հրամայէ սպանանել զնա , վասնզի
ո՛չ է՛ պարտ պահել զմեղքն՝ այլ փու-
թով փոխել ընդ ոսկոյ , այսինքն , ընդ-
սրբութե հոգոյ ։ Բ․ զի որչափ մար-
դն ՚ի մահու չափ մեղքն է՛ բարկու-
թիւն այ ՚ի վր նր է՛ , և Ք՟Ծ ունի ՚ի
ձեռին զնետ և զաղեղն զի սպանցէ
զմեղաւորն , որպէս ասէ՛ Սղս ։ Թէ
զսուր իւր սրեալ է՛ և զաղեղն իւր լա-
րեալ , և որչափ մեղաւորն ՚ի մեղքն
յամէ՝ առաւել հեռանայ ՚յայ ։ Նետ ,
այսինքն , դատաստանն , որ առաւել
հրամանէ զմեղաւորն , և մեղաւորն ո՛չ
կարէ թաքչել կամ փախչել ՚ի նետէ

բար-

բարկութեան այ, զի նեղանս այ, հա-
տանէ յերկնից ՚ի դժոխս և յարևելից
յարևմուտս և ՚ի հիւսիսոյ ՚ի հարաւ,
որպէս ասէ մարգարէն: Թէ ելանեմ յեր-
կինս դու անդ ես, թէ իջանեմ ՚ի դժո-
խս անդի մօտես, թէ առնից զթևս իմ և
բնակեցայց յեզերս ծովու՝ և անդ ձեռն
քո հասանէ: ՚ի սոյն խորհուրդ սիրաք ասէ՛
.Ե. գլուխ: մի՛ յապաղեր դառնալ առ
Տր՝ և մի՛ ընկենուր ՚ի վաղիւն, զի յան-
կարծակի հասցէ բարկութի նր և կոր-
ուսցէ զքեզ յաւուր վրէժ խնդրութե
նր: վասնի փութով պիտի դառնալ ՚ի բար-
կութէն այ, և հաշտիլ ընդ նմա կա-
նուխ մինչ առողջ է՛, հաշտի ընդ նմա և
Յծ՝ խոստովանութբ առաջի խոստովա-
նահօրն, որ ՚ի տեղի այ է՛: իսկ՝ որք ոչ
խոստովանին մինչև ՚ի հիւանդութիւն
իւրեանց՝ յիմարքն այնպիսիքն: և այս
ցուցանի .Ե. պատճառօք .ա. զի եթէ
ոք ՚ի հիւանդութեան յայտնէ զմեղս իւր
առաջի հոգևոր բժշկին՝ յայնժամ զխ-
րատ նր ոչ կարէ կատարել, զի ՚ի հի-
ւանդութեան ոչ կարէ աղօթել կամ
պահք պահել, կամ այլ առաքինութի
առնել, այլ լինի բաղում անգամ որ ՚ի
հիւանդութեան լեզուն կապի՝ և ոչ կա-
րէ խոստովանել զմեղս, և թէ լեզուն ար-
ձակ

ձեւն լինի ՚ի հիւանդութեան, այլ մի՛ բա-
զում եւ խիստ ցաւոցն, եւ մի՛ ընտանեաց
բազում հոգոցն ոչ կարէ այնպէս յստակ
եւ մաքուր խոստովանել, որպէս ՚ի ժամա-
նակս առողջութեան, վասն պարտ է՛ յառաջ
քան զհիւանդութիւն խոստովանել ։ Է․ զի
որ յապաղէ եւ ոչ խոստովանի մինչ ՚ի
մահուան օրն՝ յայնժամ ծանր հիւանդ-
լինի, եւ թէ խոստովանի յայնժամ՝
խոստովանի մի՛ ահի մահուան, եւ խոս-
տովանութիւն այն՝ չէ գեղեցիկ առա-
ջի այ, զի բռնութբ լինի եւ յերկիւղէ ։ քան-
զի գիտուն ․է․ ազդէ ․ա․ այն է՛ որ ինքն
ըստ ինքեան ՚ի ծառէն եւրոյ գայ, եւ
երկրորդն այն է՛ որ բռնութբ գայ ծա-
ռէն ՚ի դուրս, յորժամ ծանծանեն
սուղ ։ այնոր ինքն յինքեան ելանէ՝ յոյժ
գեղեցիկ է՛ եւ անուշահոտ, այլ այն որ բռ-
նութբ ելանէ չէ՛ այնպէս գեղեցիկ, առդ-
զմուռս այս որ անուշահոտէ, բայց համեմ
դառնէ, վասն սպանանէ զորդունս եւ պա-
հէ անապականս զմարմինս ։ զխոստովանու-
թիւն ցուցանէ՝ որ գեղեցիկ հոտ ունի
առաջի այ, բայց համեմ դառնէ զի ա-
մաչէ խոստովանողն յայտնելով զաղտե-
ղութիւս, սպանանէ զորդունս, այսինքն,
զանցեալ գործած մեղսն, եւ պահէ զը-
մարմինն անապականս, այսինքն, ՚ի մե-
ղացն

ղացն որ գալոցէ, և այս հոգևոր զմուռս
որ է՛ խոստովանութիւն՝ յորժամ կամաւ
լինի յոյժ գեղեցիկ է՛ 'ի ժամանակս ա-
ռողջութեան ։ Գ. որ յապաղէ մինչ 'ի մա-
հու հիւանդութիւն և ապա խոստո-
վանի՝ ոչ է՛ այնպէս պատուական, վասնզի
ասէ՛ սիրաք . ԺԵ. գլուխ ։ յորժամ կեն-
դանի իցես և առողջ՝ խոստովանեա՛ և
տուր փառս այ, և ցնծասցես ողորմու-
թեան այ ։ Դ. զի որ յապաղէ զխոստո-
վանութիւն մինչև 'ի հիւանդութիւն կամ
'ի ծերութիւն՝ լինի որ մոռանայ զմեղսն ,
և թէպէտ մարդն չիցէ մոռացեալ զմե-
ղսն 'ի ծերութեան , այլ ամաչէ խոստո-
վանիլ զմեղսն որ 'ի տղայութեանն է՛ գոր-
ծեալ , վասնզի լաւ է յորժամ մեղք գործեն
շուտով խոստովանիլ ։ Ե. զի քահանայն
երթայ առ հիւանդն՝ վս . Բ. իրաց ,
այսինքն , խոստովանացուցանելոյ և հա-
ղորդելոյ , և յորժամ հիւանդն կամի
խոստովանիլ տունն լի՛ լինի մարդով ,
յայնժամ դժուարէ յերկարապէս խոս-
տովանիլ զի մարդիկն դժարապէս ե-
լանեն 'ի դուրս , և թէ ելանեն հիւա-
նդն ամաչի յերկար խոստովանիլ ։
վասնզի պատրաստել պարտ է՛ խոստովա-
նութիւն յառողջութեան , զի յորժամ հի-
ւանդանայ , քահանայն յառաջ երթայ
'ի տեսս

՚ի տես հիւանդին՝ և ՚ի չափն զխոստովա-
նութիւն լսէ , և ապա յետոյ տանի
զհաղորդն ։ Այլ որք յապաղեն ՚ի
խոստովանել ՚յաղուհացիցն մինչև ՚ի յե-
տին շաբաթն՝ խիստ յիմարութի առնեն
վս . ե . պատճառի ։ ա . պատճառն զի
որպէս պարտ է՛ նմա զձեռն լուանալ և
ապա՛ ուտել ըզմարմինն՝ որ կերակուրն
և անպատշաճ է՛ աղտոտ ձեռօք հաց
ուտել՝ այլ լուանալ ։ Այսպէս պահքն
և աղօթքն հոգևոր կերակուրքն պարտ
է՛ նմա լուանալ զհոգին խոստովանու-
թբ և ապա՛ ուտել զնոսա , վասն զի յի-
մարքն, որք նմա ուտեն զհոգևոր կերա-
կուրն՝ և ապա՛ լուանան զհոգին ,
այսինքն , որք պահեն զպահս՝ և մերձ ՚ի
զատիկն խոստովանին , զի պարտ է՛ նմա
զկարասն լուանալ և ապա՛ զինի ածել ՚ի
ներս ։ բ . զի . ե . շաբաթու աշխատանքն
կորուսանեն՝ վս մին պահու աշխա-
տանացն , զի մին օր պահք յետ խոս-
տովանութեն , որ մին պահ կու խոս-
տովանի լաւ է՛ քան . խ . աւուր պա-
հքն , որ մեղք ունէր և չէր խոստովա-
նեալ ։ գ . զի կերակուրն որ Ած յառաջ
կու խնդրէ՝ դու յետոյ կուտաս , այսինքն,
զխոստովանութիւն որ Ած յառաջն կու
խնդրէ քան զպահքն և զաղօթքն որպէս

 տանէ՛

ասէ՛ Սղմ։ կանխեսցուք առաջի նր խոս_
տովանութբ, և ապա՛ Սղմիւք աղաղա_
կեսցուք առ նմ։ Թէ զայս կարգս փո_
խես՝ քո՛ հոգևոր հայցներուան և պա_
տիւն ո՛չ թո՛ւի ըյ քաղցր և հեշտ ։
Դ․ զի որք յետ քան զպահքն խոստո_
վանին, նմանեն այնոցիկ ո՛ր նախ զպար_
տն հանեն և ապա՛ քաղհանեն կամ
որք զայգին կթեն, և ապա՛ բրեն և յա_
տեն, վս զի պահքն և աղօթքն և ողոր_
մութիւն հունձք են և կութք, իսկ խոս_
տովանելին՝ քաղհանել է՛ և յատել և
բրել ։ Ե․ զի որք յետոյ քան զպահքն
խոստովանին նմանեն այնոցիկ որ դեղ
դնեն ՚ի վր խոցին, բայց սլաք նետին
դեռ ՚ի ներս լինի, նախ պարտ է՛ զսլաք մա_
հու չարի մեղացն ՚ի բաց խլել խոստո_
վանութբ՝ և ապա՛ զդեղ պահոց և
աղօթից ՚ի վր դնել՝ որ փութով առող_
ջանամ ։ յայսմանէ երևի թէ ո՛չ է՛ պարտ
յապաղել ՚ի խոստովանութի, այլ պարտ
է՛ փութով խոստովանիլ, զի հի՛ւանդն
որ ջերմութբ վառեալ է՛, յորժամ ածե_
լեն զմաղձ գլխոյ նր՝ թեթևանամ ՚ի ցա_
ւոցն ։ այսպէս մեղաւորն որ այրի մա_
հու չարի մեղօք՝ յորժամ մաքրեն զհոգի
նր ածելեաւ խոստովանութբն ՚ի մահու_
չարի մեղացն թեթևանայ հոգի նորա ՚ի

ցաւ_

ծանրութե՜ մեղացն վասն .Ե. գլխն Եզեկի-
էլի հրամայէ ԱԾ : որդի մարդոյ առ
քեզ սուր յեսանաւոր , և ածիցես զայն
զգլխով քո և զմորուօք , և ածցես քեզ
կշիռս և կշռեսցես զնոսա , զչորրորդ-
մասն հրով այրեսցես, և զչորրորդ մասն
կոտորեսցես սրով, և զչորրորդ մասն հոս-
եսցես հողմոյ՝ և զսուրն արձակեսցես
զկնի նց , և առցես անտի սակաւ ինչ
թուոց և ծրարեսցես ՚ի տուտն հան-
դերձի քո : Իսկ հոգևորապէս մազ զմեղքն
ցուցանէ , և սուր ածելի զխոստովա-
նութիւն, և խոստովանահայրն է՝ ՚ի տեղի
սափրողին, այսինքն , դալլաքի , պարտ է որ
զհոգւո մեղաւորին մազքն ՚յամենայն մե-
ղաց որ մեղք չինա՛, զայս մասս պարտ է
դ. բաժինս առնել՝ վս զի մեղքն . դ.
բաժինս է : Առաջին մասն մեղացն աղ-
տեղութիւնն է , և զայս մասն պարտ է
հրով այրել , այսինքն, հրով հոգոյն, վս զի
հուր հոգոյն որ է ԱԾ այրէ սէրն՝ մաքրէ
զամենայն աղտեղութի մեղաց : Երկրոր-
մասն մեղացն է՝ գործ մեղացն , և զայս
մասն պարտ է՝ կոտորել սրով խոստո-
վանութե՜ն մանր , զի ո՛չ է՝ պարտ զխոց
մեղացն խոստովանել միայն՝ այլ և զա-
մենայն պարագայս մեղացն որ ծանրա-
ցոյն առնեն զմեղքն , զոր օրինակ զո-

դութեն մահու չափ մեղքէ՛, այլ բա-
ղում ունի պարագայք, թէ գործեցեալ է՛
յեկեղեցւոյ ծանրագոյն է՛, կամ յաւուր
պահոց և տօնից արարեալ է՛ գողութի,
կամ թէ շատ գործեցեալ է՛ թէ քիչ, և
թէ հարուստէ գործեցեալ է՛ և թէ յաղ-
քատէ, թէ բազում անգամ արարեալ է՛
համարով և թէ փոքր ։ այսպէս խոս-
տովանել մանր զամենայն ազգ մեղաց
պարագայսն ։ Երրորդ մասն մեղացն է՛
հեշտութի մեղացն պարտ է՛ զայն հոգւով
հոսել, այսինքն, հեռացուցանել ՚ի սր-
տէն զհեշտութի մեղացն, որ այլ բնաւ
չանկանի ՚ի սիրտն, և թէ դարձեալ
սատանայ ձգէ ՚ի սիրտն զհեշտութի
անցեալ մեղացն՝ պարտ է՛ զսուր խոստ-
վանութեան քարշել ընդդէմ մեղացն, և
փախուցանել զնա, և ասել ո՛չ կամիմ
գործել, զի միւսանգամ խոստովանեցայց ։
Եւ դարձեալ ամօթ և նախատինս կրե-
ցից յայ՟, և ՚ի խոստովանահօրէն ։ Դ.
մասն է՛ զարշելի հոտ մեղացն և զայս
մասն պարտ է՛ ՚ի հանդերձս ծրարել,
այսինքն, զզարշահոտութի մեղացն միշտ
՚ի միտ ածել զի խոնարհեսցուք առա-
ջի այ՟, և զմեզ խոտանս համարես-
ցուք ։ Իսկ զսուր խոստովանութեան
պարտ է՛ սրել յեսանաւ, այսինքն, եր-
կեղիւ

կերպիւ դատաստանին տ̃ն, վ̃ս զի որ խոս-տովանի և որ խոստովանութ̃ն ունէ՝ պար-տին երկոքինքն և ս երկնչիլ յ̃այ: և մի ծուլասցի խոստովանողն յասելոյն՝ և խոստովանահայրն ՚ի հարցանելոյն և Ք̃ի օրհնեցելոյն փառք յաւիտեանս: Ամէն:

Ք Ա Ր Ո Զ

Խոստովանութ̃ե:

ԱՐԴ՝ ԵՐԹԻՑՈՒՔ երից աւուրց ճանապարհ և զոհեսցուք տ̃ն աստուծոյ: ելք Ծն. գլուխ: Վարդապետք ասեն թէ սր̃հի Ա̃ծածինն նման է լերին վասն .ը. պատճառի: ա̃. պատճառն՝ զի լեառն հաստատ է՝ յոյժ, այսպէս սրբուհի Ա̃ծածինն անշարժ է՝ և հաստատ ՚ի յու-խտ կուսութ̃ե և ՚ի հաւատան Ք̃ի քան զամենայն մ̃րս, և անքին ՚ի վարս ա-ռաքինութ̃ե և ոչ երբէք շարժեցաւ: վ̃սնկ ասէ՝ Սաղմոսն: յուսամ ՚ի Տ̃ր որպէս լեառն սիոն, զի մի սասանեսցի յաւի-տեան: Առաքեալքն թէպէտ նմանեն լերին, այլ յառաջ քան զգալուստ հո-գոյն սրբոյ շարժեցան ՚ի հաւատոցն յաւուրս չարչարանացն Ք̃ի, որպէս ասէ՝ Ս̃ղմս: հիմունք լերանց սասանե-

ցան և խռովեցան ։ քանզի առաքեալքն
երկբայեցան ՚ի Քս, վասն Թովմա
զնա՛ և փախստեան, այլ մերն Ածածինն
իբրև զլեառն սիոն անշարժ մնաց, և ոչ
երբէք երկբայեցաւ ՚ի Քսի Ածու-
Թեն, զի յորժամ ծնաւ՝ ՚ի նմին ժամու
երկրպագեաց նմա, յորժամ ետես ՚ի խա-
չին բևեռեալ՝ ճշմարիտ Ած հաւատաց
զնա, վասն ոչ մեկնեցաւ ՚ի նմանէ ։ և այս
յոյժ պատշաճէր, զի Արիստոտել ասէ՛ Թէ
պարտ է՛ որ ամենայն գնացք և շար-
ժումն ՚ի վր հաստատ իրաց լինի, վասն ոչ
կարէ գնալ ոք ՚ի վր օդոյ և ջրոյ, զի ոչ
է՛ հաստատ, այլ և գնալով ՚ի վերայ ա-
ւազոյ՝ փութով վատանկի ոք, զի ոչ է՛
ծաւալեալ հաստատ, այլ ՚ի վր ցամաք
և հաստատ գետնի լաւ երթան, և զի
մեք երթամք յերկնից արքայութեն,
և մեր հիմն է՛ մերն Ածածինն յոր-
մէ ծնաւ Քս, վասն պարտ է՛, զի նմա
հաստատ և անշարժ լինիցի ։ Երկրորդ
պատճառ, զի լեառն բարձր է՛ քան զա-
մենայն երկիր, այսպէս մերն Ածածինն
բարձրագոյն մերն է՛ քան զամենայն
մեծ յայս կեանքս մեր վարուք, և ՚ի
հանդերձեալն փառօք և մեծութբ, որպ
ասէ Եսայի . Բ. գլխ ։ յայտնի լինի
լեառն տեառն ՚ի վերայ գլխոց լերանց և
բար-

բարձրացի ՚ի վերայ բլրոց ։ Եւ ՚ի բար-
ձրութէ այս խնամոյն լերինս որ է՛ ս̅բ̅հի
կոյս ․ բ̅․ ազգ օգտութի երևի ․ ա̅․
զի ՚ի գլուխ լերինն առողջարար լինի
օ՛դն՝ և որ անդ բնակի՛ առողջանայ ,
այլ ՚ի խոր ձորին օ՛դն պատառուողջ՝ և որ
անդ բնակի՛ բազում հի՛ւանդութի կրէ ,
այսպէս մարդիք , որք բնակեն ՚ի ձորս հե-
շտութե մեղացն ՚յաշխարհս՝ սոսի մօք
բազում ազգ հի՛ւանդութի կրեն բնա
հոգոյ ։ Այլ յորժամ բնակեն ՚ի լեառնս
խնամոյն որ է՛ ս̅բ̅հի Ծածկին՝ առողջա-
նան հոգով ։ բ̅․ օգտութի , զի այն-
պէս բարձր է՛ լեառնս այս որպէս լեառն
Ոլիմպոս՝ ուր ո՛չ լինի հողմ կամ ան-
ձրև և կամ ձիւն , ուր երթային իմաս-
տասէրքն և գրէին զգիր ՚ի վերայ գետնի՝
և այնպէս խաղաղէր ՚ի հողմոյ և ՚յան-
ձրևէ , որ ՚ի գալ տարին յորժամ երթային՝
դարձեալ անդր տեսանէին զնոյն գիրն
որ ո՛չ էր աւերեալ , այսպ̅ որ ինչ շնորհք
և առաքինութի , որք գրեցան ՚ի սիրտ
Ծածնեն ՚ի հոգոյն ս̅բ̅յ՝ ո՛չ երբէք ջն-
ջեցան , այսպէս բազում ինչ բարի գրեալ
լինի ՚ի սիրտ մարդոյս , այլ անձրև և գէջ
ցանկութե , և հողմն հպարտութե ջնջէ
զայն ։ վասն որ կամի ուսանել զԾային
խնամատութի՝ երթայցէ առ ս̅բ̅հի Ծա-

ծննդն որ է՛ վաղժամանակն Աստուածային , և
ուսցի զճշմարիտ գիտութի : Նմա և զա-
չափերոսաց աշխարհն սրբոյն Աստուածածնին ան-
նէ , զի սա է՛ լեառն [illegible]՝ որ թար-
գմանի սեղան , զի սեղան հոգևոր է՛ լց-
եալ ամենայն հոգևոր կերակրոք: Վասնզի
աղաչեսցուք զնմա , զի շնորհեսցէ մեզ խօ-
սել ինչ օգտակար: և վասնզի տեսաք ողջոյն
սրբոյ Աստուածածնին : Արդ երթիցուք երից
աւուրց Ճանապարհ , յորժամ կամիցի ոք
երթալ ՛ի Ճանապարհ ուրեք և Ճանա-
պարհն լցեալ լինի աւազակօք , այլ և ոչ
գիտիցէ զՃանապարհն այնպիսոյն . Բ. ինչ
պէտք են նմա պիտոյ է՛ , զի բազում ըն-
կերք ժողովին , զի թէ որինչ որինչ երթան՝
սպանանեալք լինին և կողոպտեալք ՛յաւա-
զակաց , այլ յորժամ բազումք Ճանա-
պարհորդակիցք զնոյն՝ երկնչին աւա-
զակքն և ոչ կարեն մնասել , զի իբրև-
զօրք երկու են : Գ. պիտոյ է՛ նմա այնպիսի ա-
ռաջնորդ որ զՃանապարհն գիտիցէ : Հո-
գևորապէս այսպէս է՛ , զի իւրաքանչիւր
ոք կամի երթալ ՛յերկնից արքայութիւն ,
այլ լցեալ է՛ Ճանապարհն դժոխային ա-
ւազակօք , որք սպանեն մարդոյն , վասնզի թէ
քրիստոնեայքս բաժանեալք լինին ՛ի մի-
մեանց և այնպէս երթան զՃանապարհն
զայս՝ երկիւղ կայ թէ անկանիցին ՛ի ձեռս
դժո-

դժողովոյն աւետարանացն , վասն պատուէ՛
որ ամենայն քրիստոնեայք ժողովին ՚ի
միաբանութի եւ գնան ընդ Ճանապա-
րհս արքայութե՛ եւ այսպէս էին ՚ի սկի-
զբն ՚յաւուրս առաքելոցն , վասն զի ասէ՛
Երգ . Զ . գլուխ : հիանամ ընդ միաբանու-
թեն եւ ընդ գեղեցկութեն սրբոյ եկեղեցւոյ
ասելով , ո՞վ է՛ սա որ ելանէ իբրեւ զա-
ռաւօտ գեղեցիկ , եւ իբրեւ զլուսին ըն-
տիր , եւ որպ զարեգակն լուսաւոր իբրեւ
զճնացուածս կարգեալ զօրաց : յորժամ ա-
մենայն քրիստոնեայք միաբանին եւ ընդ-
մի գնան զՃանապարհ երկնից արքայու-
թեն՝ յոյժ ահարկու երեւի դիւաց , այլ
այժմ որ բաժանեալքեն ՚ի միմեանց եւ
այնպէս գնան , կատարի ՚ի վերայ սոցա-
բանն որ ասէ յաւետարանն այր մի իջա-
նէր ՚յԵրղմէ ՚յԵրիքով՝ անկաւ ՚ի ձեռս ա-
ւազակաց : քանզի միայն ընթանայր , ապա-
րեմն պիտոյէ՛ , որ ո՛վ ոք ընթանայ ՚յերկնից
արքայութեն բազում ընկերս ունիցի , այլ
այս միայն ոչ է՛ բաւական , այլ երկրդ
պիտոյ է՛ , զի բարի առաջնորդ լինիցի ՚ի
Ճանապրհին եւ գիտուն , որ զբարի Ճա-
նապարհն գիտիցէ , զի ՚ի կեանս ՚յայս՝
Գ . Ճանապարհ երեւի , Ճանապարհ կե-
նաց՝ եւ Ճանապարհ մահու , որպէս ասէ՛
Երեմիաց . ԻԱ . գլխ : ահաւասիկ ես ե-

դի առաջի երեսաց քոց զճանապարհս կենաց և զճանապարհս մահու և սի֊րաք . ԺԵ . գլխ ։ առաջի մարդոյն կեանք և մա՛հ , բա՛րի և չա՛ր , և զորինչ կամի ՚ի յայնցանէ տուեալէ նմա ։ Առաջինն՝ բա֊րի ճանապարհ ՔՍ̅ է՛ , զի գրեալէ ՚ի յա֊ւետարանն՝ վարդապետ բարի գիտեմք , զի ճշմարիտես և զճանապարհն այ̅ ճշ֊մարտութբ̅ ուսուցանես ։ և դարձեալ ասէ՛ , Եսեմ ճանապարհ ճշմարտու֊թի̅ և կեա՛նք ։ Նա բարի առաջնորդն ևս ինքն ՔՍ̅ է՛ , որ խրատս տա՛ մեզ թողուլ զճանապարհն մահու՝ և գնալ ՚ի ճա֊նապարհ կենաց , վասն զի գրեալէ ՚ի գիրս ծննդոց . Իզ . գլխ ։ Երևեցաւ Տր̅ Իսա֊հակայ և ասէ՛ , մի՛ իջաներ ՚ի յԵգիպտոս՝ այլ բնակեա՛ ՚ի յերկրին , որում ասացի , քեզ , և պանդխտեաց ՚ի յերկրիս ՚ի յայսմիկ , և եղէց ընդ քեզ՝ և օրհնեցից զքեզ ։ Իսահակ զապաշխարողս ցուցանէ , զի Ի֊սահակ ծաղր թարգմանի , վասն զի ապաշխա֊րողն ուրախացուցանէ զվերինն Երուսա֊ղէմ , զի ուրախանան ԱԾ և հրեշտակք ընդ ապաշխարութի̅ միոյն , որպէս ասէ՛ աւետարանն , թէ եղիցի ուրախութի̅ ՚ի երկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխա֊րիցէ , այսպիսոյս բարի խրատ տայ ԱԾ չիջանել ՚ի Եգիպտոս , այսինքն , ՚ի մահու

չափ

չափ մեղս որ է՛ դուռն դժոխոց , այլ
պատճառելոյ ՚յ ապաշխարութիւն։ զի աստ ո՛չ
ունիմք զաւառ՝ այլ պատճառխօսիմք , քան-
զի աշխարհս այս ո՛չ է՛ մեր քաղաք , այլ
երկինքն ։ յոյժ յիմարք են այնոքիկ՝ որք
թողուն զերկինքն , այսինքն , արքայ-
ութիւն՝ և վազեն ՚ի դժոխս ։ և այն
որ մեր քաղաքէ՛ ՚ի մօտէ , զի աստէ՛ աւե-
տարանն ապաշխարեցէք , զի մերձեալ է՛
արքայութիւն երկնից , և այնպէս մեր-
ձեալ է՛ որ ·Գ· օրեամ ճանապարհաւ կա-
րեմք անդր հասանել ։ վասն այս է՛ ՚ի գիրս
ելիցն, թէ Ա͞Ծ եբրայեցւոցն կոչեաց զմեզ
ա՛ռ ինքն ։ արդ երթիցուք երից աւուրց
ճանապարհ յանապատն, և զոհեսցուք տ͞ն
ա͞յ մերոյ, գուցէ պատահիցէ մեզ ժանտ կամ
սպանումն ։ Եգիպտոս զմահու չափ մե-
ղքն ցուցանէ, կամ զդժոխքն, քանզի թար-
գմանի Եգիպտոս խաւար կամ նեղութիւն,
իսկ խաւարն և նեղութիւն է՛ ՚ի մահու
չափ մեղքն՝ ևս տանել ՚ի դժոխքն, ա-
պաուրեմն որ կամի հասանել ՚յ երկնից
արքայութիւն՝ հարկէ նմա ելանել ՚յ Եգիպ-
տոսէ, այսինքն, ՚ի մահու չափ մեղացն, որ
է՛ դուռն դժոխոց, և երթալ յանապատե-
րից աւուրց ճանապարհն՝ որք են ·Ա· զղջ-
ջումն ·Բ· խոստովանութիւն ·Գ· ապաշխա-
րութիւն ։ գուցէ պատահիցէ ՚ի վերայ նոցա
մահն

տանջանք քաւարանին որ է՛ ժամու , և սպառուածն որ է՛ տանջանք դժոխոցն և յաւիտենականն մահն ։ Այլ նախ տեսացուք այս երից աւուրց ճանապարհիս հասարակաբար , և յետոյ տեսցուք ՚ի յիւրաքանչիւրոցն առանձինն որիշ որիշ , նախ ՚ի զղջմանէն ․ բ․ ՚ի խոստովանութենէն ․ գ․ ՚յ ապաշխարութենէն։ Այլ վն երից աւուրց ճանապարհիս հասարակաբար ․ ա․ ինչ գիտելի է՛ ․ ա․ զի նոքին որք միմեանց հակառակք են առողջացուցանեն զերեարս ․ որպէս տաք դեղն զհօղ ցաւն հանէ ։ Իսկ մեղաւորին ․ գ․ ապգ պատերազմի ընդ Այ, նախ խորհրդով մեղօքն ։ բ․ բանիւ մեղօքն ։ գ․ գործով մեղօքն ։ վասն այնորիկ ․ դ․ կերպիւ՝ պարտ է՛ հաշտեցուցանել զԱծ ։ նախ զղջմամբ սրտին ։ բ․ բանիւ խոստովանութե ։ գ․ գործով ապաշխարութեն ։ Երկրորդ գիտելի է՛, զի այս երից աւուրց ճանապարհս ապաշխարութե , ցուցանէ զայն ․ գ․ աւուրքն , յորս Քս մեռեալէր և յարեաւ ։ այլ այն ․ գ․ աւուրցն Քի , առաջին օրն կարծէր , և ոչէր ՚ի լման , զի ուրբաթի օրն յետն ժամուն աւանդեաց զհոգին ։ Իսկ երկրորդ օրն ՚ի լմանէր և երկայն ։ բայց երրորդն կարծէր , զի ոչէր ՚ի լման , զի ՚յ առաւօտու միաշաբաթին յարեաւ ։ այսպիսի հոգոյ մեռելութե և

մեք

մեք յետերից աւուրց յառնեմք , այլ ա_
ռաջին օրն կարծէ , և ո՛չ է՛ ՚ի լման օր ,
այսինքն, զղջումն սրտին , զի սակաւ մարդ
պատահի որ կատարեալ ցաւ ունի՛ ՚ի սիրտն
չն իւր մեղացն , զի թէ ցաւ և հեծե_
ծումն սրտին ՚ի լման լինէր այնպէս՝ որ
սիրտ մարդոյն ձգէր ՚ի յոյժ տրտմու_
թիւն մեղացն , և մարդն մեռանէր՝ ՚ի
նոյն ժամայն թռչէր ՚յերկնից արքայու_
թիւն ։ Իսկ երկրորդ օրն երկայնէ , զի պատրաստ
է՛ որ խոստովանութիւն ՚ի լման լինի որ
կամաւ զմեղքն չծածկէ , զի եթէ զմին
մահու չափ մեղքն կամաւ ծածկէ՛ այն
խոստովանութիւն ոչինչ է՛ ։ Բայց երրորդ
օրն ևս կարծէ , վն զի ապաշխարութիւն
որ աստ կրեմք՝ ո՛չ լինի երբեմն ՚ի լման ,
քանն զի սակաւ մարդ կարէ կատարեալ
ապաշխարել ՚յայս կեանքս , այլ բա_
ժին մի՛ աստ , և բաժին մի՛ ՚ի քա_
ւարանն ։ Երրորդ գիտելի է՛ , զի երից ա_
ւուրց ձանապարհս այս ցուցանէ այն դ.
աւուր ձանապարհն , որ սէրհի Յծածնին
զիւր որդին կորուսեալ էր և գտաւ ։ և
այսպէս ամենայն ո՛ք որ կորուսանէ զոր_
դին այ մահու չափ մեղօք կարէ գտա_
նել զնա զղջմամբ , խոստովանութբ , և
ապաշխարութբ ։ Չորրորդ գիտելի է՛ , զի
մեղաւորն երթայ ՚ի դժոխս . դ. աւուրց
ձա_

Ճանապարհ . ա. խորհրդով մեղացն . բ.
հաւանելով մեղացն . գ. ՚ի գործելն զմե֊
ղքն . դ. հաւանիլ մեղաց իւրոց՝ և ան֊
զեղջ մնալ ՚ի մեղս մահու չափ մինչև ՚ի
մահ: Յերից աւուրց ճանապարհէն դար֊
ձուցանէ ԱԾ զմեղաւորն, այլ ՚ի չորրորդ
աւուր ճանապարհէն ոչ դարձուցանէ
զնա յետ, վսնզի ասէ առօրս . ա. գլուխ:
և ասէ Տր ՚ի վր երից ամբարշտութեանցն
Դամասկոսի, և ՚ի չորիցն ոչ դարձուցից
զնա: Հոգևորապէս զայս ցուցանէ քան
մարգարէիս թէ . գ. ազգ մեղացն որ է . դ.
աւուր ճանապարհ որ տանի ՚ի դժոխքն՝
զմեղաւորն դարձուցանել, այսինքն, ՚ի
չար խորհրդոցն, և ՚ի հաւանելոյն, և ՚ի
գործելոյն դարձուցանէ երից աւուրց
ճանապարհաւն՝ որ է զղջումն, խոս֊
տովանութի, և ապաշխարութեամբ:
այլ յորժամ մեղաւորն յաւելու զչորրորդ
աւուր ճանապարհն՝ որ է անզեղջ մնալն
՚ի մեղքն մինչ յօր մահուն՝ յայնժամ ոչ
դարձուցանէ ԱԾ զմեղաւորն, զի հա֊
սեալ է ՚ի նաւահանգիստ դժոխոց: Չորրորդ
գիտելի է զի գրեալ է յաւետա֊
րանն թէ . գ. մեռեալս յարոյց Քս ՚ի մե֊
ռելոց, բայց զանազանութի է ՚ի մէջ նց
բ. ազգ: ա. զի առաջին մեռեալն որ
աղջիկն էր՝ ՚ի տանն յարոյց, և զերկրորդ
մե֊

մեռեալն որ պատահեցեր որդին այրւոյն՝ ՚ի դրունսն քաղաքին յարոյց, զերրորդ-մեռեալն որ էր Ղազար՝ ՚ի գերեզմանէն յարոյց ։ Բ. զառաջադիմութիւն, զի զառաջին մեռեալն հեշտիւ յարոյց՝ բանիւ միայն ա-սելով՝ աղջիկ քեզ ասեմ արի ։ զերկրորդն՝ սակաւ մի աշխատութեամբ յարոյց, զի մեր-ձեցաւ ՚ի դագաղն և կոչեաց զնա և յարոյց ։ Այլ զերրորդն յոյժ աշխատա-նօք յարոյց, զի եկաց ՚ի վերայ Ղազարու՝ և աղօթեաց առ Հայր և ասէ՝ ցՄար-թա և ցՄարիամ ՚ի բաց առարէք զվէ-մն, և ինքն ՚ի ձայն մեծ և բարձր ա-ղաղակեաց և ասէ՝ Ղազարէ՛ արի՛ եկ արտաքս, և հրամայեաց առաքելոցն լու-ծանել զնա, և ՚ի վերայ երրորդ մեռելոյս ամենեքեան զբաղեալք էին ոչ թէ դժու-արին էր Քրիստոսի յարուցանել զմեռեալս, զի կատարեալ Աստուած էր և զօրութիւն նորա ան-չափ, այլ այսպէս արար, զի ծանուս-ցէ թէ մեղք քան զմեղք ծանրագոյնք են ։ զի այս . Գ. ազգ մեռեալքս՝ Գ. ազգ մեղքն ցուցանեն . Ա. մեռեալն որ աղջիկն էր ՚ի տանն՝ զխորհրդով մեղքն ցուցանէ, զի յոր-ժամ խորհրդովն հաւանին մեղացն մե-ռանին հոգին այլ ՚ի տանն, ոչ յայտնին ար-տաքոյ . Բ. մեռեալն որ պատահեցին էր ՚ի դրունսն քաղաքին, ցուցանէ զայն՝ որ մեղք է՝ գործ-

է՝ գործեալ մահու չափ ՚ի մեղքն , և
յայտնէ զմեղս նոր լեզուաւն խօսելով
զխնդրկատակուԹի , զոր ինչ խորհրդով
ունէր ՚ի սիրտն , և այս ծանր մեղք է՝ ։
Իսկ երրորդ մեռեալն որ Ղազարոս էր ,
ցուցանէ զայն՝ որ զմահու չափ մեղքն
գործով է՝ կատարեալ և այս յոյժ ծան-
րագոյնէ՝ , և ս առաւել յորժամ ՚ի մե-
ղքն սովորեալ է՝ , վասնայնորիկ գրեալէ
Թէ Ղազար չորեքօրեայն ՚ի գերեզմանի
հոտեալէ ։ Արդ այս .դ. մեռոյցս ,
առաջի օրն՝ չարխորհուրդն նշանակէ ։
բ. հաւանումն ։ գ. գործով կատարեալն ։ դ.
սովորիլ ՚ի մեղքն ։ այսպիսի մեղաւորս յոյժ
հոտեալէ՝ առաջի այ և հրեշտակաց ։ և
այս դ. ազգ մեռեալս յառնէ . դ. ազգ ա-
պաշխարուԹբ , առաջինն դժուար զղջ-
մամբ սրտիւ ։ բ. դժուարաւ խոստովանելով
լեզուաւն ։ գ. և ս ծանրագոյն գործով
ապաշխարուԹեն ։ Իսկ յորժամ ոք սո-
վորեալէ՝ ՚ի մեղս պիղծ է՝ , զի ամենեքեան
հոտան զնա , զի եկեղեցին արտաքսէ և
աղօԹէ վասն նր և զվէմն ՚ի բաց առնու ,
այսինքն , զամենայն արգելմունս որ ոչ Թո-
ղու դառնալ զնա , և Քս կենդանա-
ցուցանէ զնա , և քահանայքն որ են ՚ի
տեղի առաքելոցն արձակեն զնա , Մեցեր-
րորդ գխտելի է՝ , զի ապաշխարուԹիս նշա-
նակէ-

նմանեցաւ սանդուխքն Յակոբայ որ հաստատեալ կայր յերկրի, որոյ գլուխն հասանէր յերկինս, և հրեշտակք Այ ելանէին և իջանէին ընդ նմա, և Տր հաստատեալ կայր ի նմա։ Այս հոգևոր սանդուխս․ դ․ աստիճանս ունի։ առ․ զղջումն։ բ․ խոստովանութիւն։ գ․ գործով ապաշխարութիւն։ ընդ այս սանդուխս ի վեր ելանել յոյժ դժուարին է, զի առաջին աստիճանն որ է զղջումն՝ ցաւ բազում ունի։ բ․ խոստովանելն է՝ ամօթ բազում ունի։ գ․ որ ապաշխարելն է՝ նեղութիւնք և աշխատանք բազում ունի։ Իսկ բազում օգտութիւն առնէ սանդուխս այս, զի յերկինս հանէ զապաշխարօղն։ և ոչ կայ այլ հնար՝ որով մեղաւորն յարքայութիւն կարիցէ հասանել, եթէ ոչ այսու սանդղով։ Արդ՝ մի երկիցէ մեղաւորն ելանել ընդ այս սանդուխս ի վեր, վասն զի պատրաստեալ ԱԾ և հրեշտակք օգնել և մխիթարել զնա, զի հրեշտակքն իջանեն առ նա, որք յապաշխարութիւն են, պահեն և խրատեն զնա, և ելանեն ի նոցանէ յերկինս, զուրախ և զաւետիս նոցա տանին առաջի Այ։ այլ և Յս Քս ԱԾն մեր հաստատեալ յերկինս ի գլուխ սանդղոյս վասն․ դ․ պատճառի։ առ․ զի որ ընդ այս սանդուխս ի վեր ելանէ Քս

ընդունի

լինի նման պահապանն, զի մի՛ թեքեալ ան-
կցի ՚ի վայր, այսինքն ՚ի մեղս ։ Այլ պահէ
զնա՛ , այսինքն , հաւատով , յուսով ,
և սիրով ։ Բ. Ձեռնասուն լինի ապաշխա-
րողին, զի որ աշխատանօք եղանէ ընդ այս
սանդուխս ՚ի Ք.ս հայրն , և զամենայն
հոգս իւր ՚ի նմա ընկենու , զի հեշտու-
թբ̄ ելցէ ՚ի վեր ։ Եւ այս գիտելի է՛,
զի լինի երբեմն որ երթայ ո՛ք ուրեք և
լինի առաջի նր̄ Բ. ճանապարհ մինն շի-
տակ և ստոյգ , և միւսն կեռ և խաւար;
Թէ ստոյգ ճանապարհն երթայ՝ շուտով
հասանի ուր երթայցէ , եթէ ընդ ծուռ
ճանապարհն երթայ՝ յուշ հասանի ։ զոր
օրինակ Իսրայէլացիքն որք ՚յ անապատէն
կամէին երթալ ՚յ երկիրն աւետեաց , թէ
՚ի դիմաց և ստոյգ ճանապարհնէին
գնացեալ՝ շուտով էին հասեալ անդ , այլ
ծուռ ճանապարհաւն գնացին , մինչ զի
Խ. ամի զմի՛ լերամբքն ՚ի շուրջ եկին, և ՚ի
կատարածին այնպէս հեռիքէին ՚յ երկրէն
իւրեանց՝ որպ̄ ՚ի սկիզբն ։ այսպէս ՚յայս
կենացս ՚յ երկնից արքայութիւն ։ Բ. Ճա-
նապարհ կա՛յ, մինն ստոյգ և կարճ , և
միւսն կեռ և հեռի , նք̄ երթան զստոյգ
ճանապարհն՝ որք զկատարեալ ապաշխա-
րութիւն առատ կրեն , և ՚յ օր մահուն թռչին
՚յ երկնից արքայութիւն ։ նք̄ երթան կեռ

և

և ծուռ ճանապարհն, որք ՚յառաջ եր-
թան ՚ի քաղաքամամն` որ մօտէ ՚ի դժոխքն.
և ապա՛ ՚յերկնից արքայութենէն: և զայս
քան ՚յերկրաւորութիս քարոզեն և զբազում
տանջանս կրեն քան զնոսա` որք ընդ-
ստոյգ ճանապարհն գնան: Արդ առա-
ջաք ՚յերից աւուրց ճանապարհէս ՚յայս
հասարակաւքար, պարտ է' այժմ ասել ինչ
՚յեւրաքանչիւրումեքէ: Առաջին աւուր
ճանապարհ արքայութեն` է' դժուարին,
՚յայս դժուարանէս յիշէ Ղուկաս. ԺԳ. ԻԴ:
խօսի Եղեկիայ ընդ նղ և ասէ: Դա-
ձեայ խորհեցայց զամենայն ամս իմ ՚ի
դառնութի անձին իմոյ: զի պիտոյ է' որ
մեղաւորն զամենայն ամս իւր ՚ի տղայու-
թէ մինչև ՚ի ծերութին խորհեսցի, և
ողբասցէ զամենայն մեղս զոր գործել է'
զանցեալ ժամանակս. և զԴ. եղանակս
առաջոյն ողբասցէ, թէ զինչ մեղք գոր-
ծեալ է' ՚ի նմա: այլ դառնութբ պարտ
է' խոկալ զմեղսն: և այսէ' պատճառն,
զի ասեն բժիշկք` թէ ազգ մի հիւան-
դութի կայ, որ ոչ առողջանայ առանց
յետքերելոյ և փոխելոյ: այսպէս հոգևոր
հիւանդութին ոչ առողջանայ` մինչև
զամենայն մեղս իւր յետ բերէ և փոխէ
խոստովանութբ: բայց այն կերակուրն որ
անխորժ է' մարդոյն չառմ փոխել. այլ է' ինչ

որ անախորժ և դառն է՝ այն առայ փոխել: այսպէս որ անախորժ է՝ քաղցրութիւն ՚ի վր մեղաց նորոց՝ ոչ փոխէ խոստովանութիւն: այլ որ յոյժ դառնութիւն խորհի զմեղս նոր՝ այն է՝ որ փոխել տայ նմա և առող֊ջացուցանէ զհոգին , և այն դառնու֊թիւն ՚ի քաղցրութիւն կու փոխի : քանզի այս դառնութիւնս որ կրէ ապաշխարողն կատարեալ զղջմամբ՝ ՚ի քաղցրութիւն և ՚ի խաղաղութիւն դառնայ , որպէս ասէ Եզե֊կիայ յեսայ ՚ի նոյն գլխ: Թէ ահա ՚ի խա֊ղաղութիւն դարձաւ դառնութիւն իմ: Դար֊ձեալ ՚յ այսպիսի զղջմանէս ասէ՝ մար֊գարէն Յովէլ . բ . գլխ: դարձարուք առ Տր ՚յամենայն սրտէ ձերմէ , պահօք լա֊լով և կոծելով , պատառեցէք զսիրտս ձեր և մի՛ զհանդերձս,և դարձարուք առ Տր Ած ձեր , զի ողորմած է՝ և գթած, երկայնամիտ և բազում ողորմ, և զղջա֊նայ ՚ի վր չարեաց մարդկան : մարգա֊րէս այս բարիոք խրատէ դառնալ առ Տր ՚յամենայն սրտէ:զի ասեն բժիշկք թէ ուր ցաւն է՝ ,պարտ է՝ զդեղն դնել անդ:և արդ՝ հեշտանութիւն մեղացն ՚ի սրտին է՝, վս զի նմանէ թի՛ւնոյ, որ երբ ՚ի սիրտն հասանի՝ սպանանէ զմարդն : այսպէս յորժամ մահու չափ մեղքն՝ հասանի ՚ի սիրտն հա՛ւանելոյն , ՚ի նմին ժամու մե֊

ռանի

ծածանի հոգւոյն, վասնզի պատրաստ է՛ որ զդեղ մեղացն դնէ ՚ի սիրտն, այսինքն, սկսանի ցաւագինն զ զղջմամբ պատառոտել զսիրտն: Այլ կեղծաւորքն ոչ առնեն այսպէս, վս զի ան-դնեն զդեղն՝ ուր ոչ կայ հիւանդութի, զի պատառոտեն զհանդերձս և ոչ զսիրտս, և տրտմեցուցանեն զերեսս իւրեանց, զի երևեսցին մարդկան թէ պահեն: վասնզի մարգարէն աղաղակէ ընդդէմ նց: պատառեցէք զսիրտս ձեր և մի՛ զհանդերձս: դարձեալ բարիոք խրատ տայ մարգարէս, զի ասէ՛ դարձարուք առ Տր Ած, զի ողորմած է՛ և գթած: զամենայն սուտ պատճառ՝ որ պատճառէ մեղաւորն, և ոչ դառնայ առ Տր՝ բառնայ մարգարէս: Առաջին պատճառն զոր դնէ մեղաւորն այս է՛, զի ասէ՛ թէ ես ոչ կարեմ ելեալ եմ և երևէ անկեալ եմ զիս այլ ոչ ընդունի, այլ արտաքսէ զիս, և փակէ զդուռն ընդդէմ իմ, և այս պատճառս սուտ է՛, զի ասէ՛ Քս ՚յ աւետարանին թէ որ գայ առ իս՝ ոչ հանից զնա արտաքս: Երկր-պատճառ, զի ասէ՛ մեղաւորն թէ ես զԱծ վիրաւորեալ եմ, մինչ ՚ի մահ ոչ առնէ ինձ թողութի, այլ սպանանէ զիս, և այս պատճառս ևս սուտ է՛: զի ասէ՛ մարգարէն Եզեկիէլ . ԺԸ. գլխ: մի՛ թէ կամելով կամիմ զմահ մեղաւորին ասէ՛ Տր Տր

որպէս զդատաւորն նր̄ ՚ի չար ճանապար‿
հէն և զխեալն ։ Դ. պատճառ դնէ՛ մե‿
ղաւորն ասելով, Թէպէտ ո՛չ սպասանէ
զիս Ա̄Ծ, այլ քաղցր աչօք ո՛չ հայի յիս,
կամ դարձուցանէ զերեսս իւր յինէն, և այս
ես ոչինչ է՛ ։ զի ասէ՛ Սղմոն ՚յ առակաց ․ա̄.
գլխ ։ դարձարուք ՚ի խրատս իմ և ես տաց
ձեզ զհոգի ։ Ե. զի ասէ՛ մեղաւորն Թէ‿
պէտ զիս ընդունի Ա̄Ծ բայց իմ մեղքն յիշէ
և իմ երեսս տայ, և այս ես ոչինչ է՛, և
սուտ ։ զի Եզեկիէլ ․ ԺԸ. գլխ ասէ՛ ։ Թէ
անօրէնն դարձցի ՚յ ամենայն անօրէնութեց
իւրոց զոր արար, ամենայն անօրէնու‿
Թիւք նր̄ մի՛ յիշեսցին ։ Զ. պատճառ
դնէ մեղաւորն Թէ զլրկեցայ յիմ
ժառանգութենէն, այլ ո՛չ տայ յիս, և այս
պատճառս սուտ է՛, զի ասէ՛ Դաւիթ,
դու ես որ այսրէն դարձուցանես զժա‿
ռանգութիւն իմ ։ Է. պատճառ դնէ մե‿
ղաւորն Թէ ՚յ առաջին փառքն և պատիւն
ո՛չ հասուցանէ զիս և այս ես ո՛չ ինչ
է՛ և սուտ ։ զի ասէ՛ Երեմիայ ․ ԺԵ.
գլխ ։ Թէ դարձցիս այսրէն պատսպարե‿
ցից զքեզ, և առաջի երեսաց իմոց կաց‿
ցես ։ Ը. ո՛վ մեղաւոր ո՛չ ունիս նե‿
րումն չդառնալոյդ առ Տր̄, զի քաղ‿
ձեալքեն ամենայն պատճառք քո՛ ։ և
հասանելոցես ՚յ առաջին պատիւն քո՛ ։ և

ունիկք

ունիմք այսմ օրինակ զմատուռանն Փարաւոնի, որ վն մեղաց նորոց անկեալ էր 'ի պատուոյն, նոյն յետ երից աւուրց որպէս ասաց նմա Յովսէփ, հասաւ 'յառաջին պատիւն իւր : այսպէս որ մահու չափ մեղօք անկանի 'ի պատուաց իւրոց՝ յետ երից աւուրց, այսինքն, զղջմամբ, խոստովանութեամբ, և ապաշխարութեամբ հասանելոցէ 'յառաջին պատիւն իւր : Յայսմանէ երևի, թէ գեղեցիկ է՛ առաջին աւուր ճանապարհ արքայութեան, որ է զղջումն, և այս առաջին աւուր ճանապարհս, որ է՛ զղջումն՝ կարճ է՛, զի ·դ· մղէ՛, այսինքն, ·դ· ազգ ցաւ կայ 'յայս զղջումս, քանզի զղջումն վն մեղացն է՛ և մեղքն ·դ· ազգ պակասութի և չար բերէ 'ի վրա մեղաւորին : նախ զի զնա՛ դժոխոցն արժանի առնէ : ·բ· զի կորուսանէ զնա՛ 'յամենայն բարութէ շնորհացն, 'յամենայն առաքինութէ, ընկենու զնա՛ 'ի պատուաց՝ և 'ի մեծութէ արքայութեն : ·գ· զի բարկացուցանէ զԱծ : և պարտէ՛ որ մեղաւորն զղջանայ 'ի վրա մեղաց իւրոց, վն այս ·դ· պատճառին : ·ա· թէ դժոխոցն արժանի եղև : ·բ· թէ կորուսանեցաւ 'յամենայն բարութէ շնորհաց, և ընկեցաւ 'ի պատուաց արքայութեն : ·գ· զի զԱծ

բարկացոյց և կորոյս, և ո՛չ երբէք կա-
րէ անեստանել զնա և այսպիսի զղջումն
դժուարին է՛, զոր օրինակաւ հաստատեսցուք։
Որ ունի մարդ որ ծառայ մեղք էր գոր-
ծեալ, վասն բարկացոյց զԹագաւորն
և մատնեցաւ և անկաւ 'ի խռովութիւն նո-
սպասաւորք Թագաւորին մերկացուցին
զնա, կապեցին և տանէին որ 'ի չան-
կալն ձգէին։ Թագաւորն համբերեցաւ
նմա 'ի Ճանապարհին, եհարց զնա ո՛վ
մարդ ո՞ւր երթաս։ Ասէ նա Թէ 'ի
մահ երթամ։ ասաց Թագաւորն՝ Թէ ա-
րասցես, զոր հրամայեմ քեզ՝ ազատեցից
զքեզ ·Դ· ազգ չարութէ, որք հասանէին
'ի վ̃ր քո, և ծառայ ինչ ո՛չ հրամայեմ քեզ
այլ Թեթև։ ասաց մեղապարտն Տ̃ր իմ
զոր ինչ հրամայես փութով կատարե-
ցից։ ասաց Թագաւորն՝ այս է՛ իմ հրա-
մանն, որ տրտմիս վ̃ս մեղացն զոր գոր-
ծեցեր, և վ̃ս 'ի մահ երթաս, և ես ազա-
տեմ զքեզ 'ի մահուանէդ։ ասաց մե-
ղապարտն, յոյժ տրտում կամ։ Ասաց
Թագաւորն, դարձեալ հրամայեմ քեզ
տրտմիլ վ̃ս ամենայն բարեացն քոց՝ յո-
րոց մերկացար, և ես զգեցուցանեմ զքեզ։
Եւ 'ի վ̃ր այնմ հրամայեմ քեզ տրտմիլ զի
զիս բարկացուցեր, և ես հաշտիմ ընդ
քեզ՝ և եղիցիս իմ սիրելի։ յայնժամ յօժա-

րակէս

յանկէն մեղաւորին այն ընկալաւ արտասուել
և լալ ։ նոյն ժամայն թողութիւն ար-
ժանեաց զնա, և ազատեաց ՚ի մահուա-
նէն, և դարձոյց ՚ի նոյն զամենայն, զոր
ինչ յափշտակեալ էին ՚ի նմանէ, և հաշ-
տեցաւ ընդ նմա ։ այսպէս մարդս յու-
ցանէ զամենայն ոք, որ մահու չափ մե-
ղօք ծանրացուցանէ զթողութիւն Թա-
գաւորաց ԴԵ ։ Դ,րդ՝ Թագաւորին Զօր-
ատէր էին դևքն, որք մերկացուցանէին զմե-
ղաւորն յամենայն բարութէ, ՚ի շնոր-
հաց ; ՚ի մեծութէ և ՚ի փառաց հրեշ-
տակաց, և կապէին զնա տուեալք մե-
ղացն, և տանէին ՚ի դժոխս ՚ի չանկալին
ձգել ։ զի ՚ի նմին ժամու յորժամ ան-
կաւ ոք ՚ի մեղս մահու չափ՝ դատապար-
տեցաւ կախել ՚ի դժոխս, և տուտունք
կապեցան ՚ի պարանաց նը, որպէս ասէ՝
Սղմ: տուտունք մեղաց պատեցան զինև ։
և Սղմոն ասէ՝ յառակս ։ Ե։ գլխ ։ անօ-
րէնութիւնք որսան զայր, և ՚ի տուտունս մե-
ղաց կապի իւրաքանչիւր ոք ։ և այս մե-
ղաց տուտունքս՝ այնպիսի ամուր է, որ ոչ
ոք կարէ կտրել զնա, բայց յԱյ, որպէս
ասէ՝ Սղմ ։ հատեր զկապանս իմ՝ քեզ
մատուցից պատարագս օրհնութե ։ այս-
պիսի մեղապարտ մարդս որ կապեալ
է՝ ՚ի դժոխս երթայ։ Թագաւորաց Թագա-

ւորին

ւորն Տ՟Ն նմա հանդերձեալն, յորժամ զմեղս իւր և զվիշտս իւր ցուցանէ նմա, որպէս ասաց և առ Ադամ ո՞ւր ես։ և Երեմիայ Գ. գլխ ասէ՝ ։ ամբարձ զաչս քո՛ և տես ո՞ւր ոչ թաթաւեցար։ Դարձեալ ասէ՝ Տ՟Ն ՚ի սիրտս մեղաւորին, ահա՛ տամն զքեզ սատանայի ՚ի դժոխս, և փոխք իրոց մերկեմ զքեզ, այսինքն, զի տրտմեցիս վ՟ս զնորայ քո՛ ՚ի դժոխս, դիւրին է՝ մեղաւորին տրտմիլ, զի այս տրտմութիւն ոչ ինչ է՝ առ այն տրտմութիւն, որ ՚ի դժոխս պատահելոց է՝ ։ Դարձեալ մահուչափ մեղքն՝ մերկացուցանէ զմեղաւորն յամենայն հոգևոր բարութեց, և միբանորէ զնա, և անկարացուցանէ ՚յամենայն բնական բարութեցն ։ վ՟ս այս ասէ՝ ղուկաս . Ժ. գլխ ։ Թէ այր մի՝ իջանէր ՚յԵ՟ղմէ ՚յԵրիքով և անկաւ ՚ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա՛ և վէրս ՚ի վ՟ր եդին ։ այսպէսն մեղաւորն սիրան խօսի Տ՟Ն ։ ո՞վ մարդ մերկացար ՚յամենայն բարութեց քոց՝ և զրկեցար յինէն, արդ՝ եթէ տրտմիս ոչ միայն վ՟ս մերկանալոյդ, այլ և վ՟ս սիրոյ իմոյ, ես դարձեալ զգեցուցանեմ զքեզ, և ընդունեմ զքեզ, և այլն ։ Տ. Ա աստ հարցումն լինի թէ՝ առաքինութի՛ ինչ, որ ոչ է՝ հնար դարձեալ տալ ՚ի յայն, որ

կո-

կորոյս միանգամ ։ որպէս կոյսն , որ ապականէ զկուսութիւն իւր , ո՛չ կարէ դարձեալ կոյս լինել ։ պէտս տամ թէ ո՞ր կորուսանէ ․ Ե․ դեկան արծաթի և տայ նմա թագաւո՛րն ․ Ե․ դեկան ոսկի բարեոք գտաւ զկորուսան իւր , զի թէպէտ զնոյնն ո՛չ գտաւ՝ այլ գտաւ այնպիսի ինչ որ քան զիւրն ա՛ւելի էր ։ դարձեալ օրինակ, թէ ումեք լինի թաս, որ անկանի և բեկանի, ո՛չ է՛ հնար միա_ւորել զնա՛ որպէս զառաջինն, այլ ճար_տար արուեստաւո՛րն՝ կարէ կապել զնա՛ և զարդարել ոսկով և գեղեցիկ ակա_մբք, որ պատուա՛կանագոյն լինի քան զա_ռաջինն ։ այսպէս թէպէտ կուսութիւն բեկեալ այլ ո՛չ ողջանայ , և կուսութի՟ կորուսեալ այլ ո՛չ գտանի ։ այլ յորժամ կատարելապէս զղջանայ պոռընկեալն՝ Ա͞ծ ճարտարապետն է՛ , կարող է՛ զար_դարել զնա՛ ոսկով սիրոյն ա͞յ , և զանա_զան առաքինութե͞ք իբրև ակամբք , որ գեղեցկագոյն լինի քան զառաջինն ։ որ_պէս Մ՝արիամ մագդաղենացին, որ էր յոյժ մեղաւո՛ր՝ բայց կատարելապէս զղջացաւ, Ք͞ս այնպէս զարդարեաց զնա՛՝ որ յերկինս բարձրագոյն է՛ քան զբազում կուսանս ։ Դարձեալ մեղաւո՛րն մահու_չափի մեղօքն կորուսանէ զԱ͞ծ, և բարկա_

ցու_

ցուցանէ զնա ։ Այլ խօսի Տ՟ն ՚ի սիրտ մեղաւորին այսպէս, ասէ բարկացուցեր զիս և կորուսեր, եթէ տրտմիս վ՟ս բարկացուցանելոյն և կորուսանելոյն զիս, ես փրկեմ զքեզ՝ և լինիս իմ բարեկամ, և զիս քեզ բաշխեմ ։ և այսպէս տրտմիլ և զղջանալ մեղաւորին՝ յոյժ դիւրին է՛ վ՟ս զի բարկացոյց զՏ՟ն ։ Յայսմանէ երևի թէ առաջի ա՛ւուր ճանապարհն որ է՛ զղջումն .Գ. մղ[ոն] է՛ ։ Առաջին մղոն տրտմիլ վ՟ս զի ՚ի դժոխս իջանէ ։ Բ. տրտմիլ վ՟ս մերկանալոյն ՚յամենայն հոգևոր բարութեցն, և զրկելոյն ՚ի փառաց հրեշտակացն ։ այլ այս .Բ. մղ[ոն] ճանապարհս ո՛չ է՛ բաւական, պարտ է՛ ՚ի հարկէ զերրորդ մղոն երթալ, զի ո՛չ է՛ բաւական միայն մեղաւորին տրտմիլ վ՟ս իջանելոյն ՚ի դժոխս, և կորուսանելոյն զփառս արքայութեն, այլ ևս պարտ է՛ նմա տրտմիլ թէ կորոյս զՏ՟ն, և հեռացաւ ՚ի սիրոյն Ա՟յ, և բարկացոյց զՏ՟ն ։ և թէ ո՛չ առնու վարձս յԱ՟յ, զոր օրինակաւ հատուցանելոց է, եթէ ո՛չ զօրն ամենայն գործեալ իցէ ՚յայգւոջն Պողոսի, և երեկոյն երթիցէ ա՛ռ Պետրոս խնդրել զվարձս իւր, կարէ առնել ցնա Պետրոսն երթ առաւօտն, որոյ արարեր զմշակութի, և նա տայ քեզ զվարձս քո ։ այսպէս

եթէ

եԹէ մեղաւորն խորհի Թէ դժոխքն չար և անհարգ տուհնէ, և քնանիլ անդ յոյժ վնասէ՛, և արքայուԹիւն յոյժ գեղեցիկ դարբասէ՛։ և այսպէս մեղաւորն զղջանայ ՚ի մեղաց իւրոց միայն վս ահի դժոխոցն, կամ վասնզի զի ՚ի դժոխոցն զերծցի և մտցէ ՚յ արքայուԹիւն, և ոչ զուտօրէն միայն վս այ սիրոյն ոչ ունի վարձս։ և Թէ այսպիսի մարդս ՚յ աւուրն դատաստանի ասէ՛ ցԱԾ, բազում աշխատուԹիւս կրեալ եմ և բազում առաքինուԹիւս առարեալ եմ տուր զվարձս իմ։ Պէնի տայ նմա ԱԾ, Թէ վս իմ սիրոյս ոչ գործեցեր զայդ՝ այլ վս ահի դժոխոցն, երԹ ՚ի դժոխոքն և տայ զվարձս քո։ և կամ Թէ վս արքայուԹեան միայն աշխատեցար, աստ արքայուԹեն, որ զայ քեզ ՚ի խնդիր՝ և տայ զվարձս քո։ աստուածաբանն յայտնի է՛ Թէ այս .Բ. մեղ Ճանապարհս չէ՛ բաւական, այլ և պարտ է՛ զերկուսն ևս գնալ, զի պարտ է՛ որ մեղաւորն տրտմի՛ վս այ սիրոյն, այսինքն, Թէ զԱԾ բարկացուցեալ է՛, և պարտ է՛ որ մեղաւորն ասէ՛ ՚ի սրտի իւրում, ո՛վ բարցր ՅՍ, Թէպէտ դժոխք ոչ լինէր ևս քո սիրոյդ զղջանամ ՚ի մեղաց իմոց և ծառայէի քեզ, վս զի դու ստեղծող իմ ես և հայր, ըստեղծուածն պատուէ զստեղծո-

զծնողն ։ և որդին պատուէ զհայրն, ոչ միայն երկնաւորն առանձնական, և ոչ միայն ժառանգելոյ զհայրենիսն, այլ միայն բնականն սիրոյն զոր ունի առերկրաւորն ըստ զօրէ֊զծնողն ։ և որդին ըստ հայրն ։ այսպէս պարտ է՛ զղջանալ ՚ի մեղաց, և գործել զամենայն բարիս մ՟ն ա՟յ սիրոյն ։ որպէս ասէ՛ Պօղոս ։ Այդ՝ եթէ ուտիցէք և եթէ ըմպիցէք եթէ զի՛նչ և գործիցէք, զամենայն ինչ ՚ի փառս ա՟յ արասջիք ։ առաջին ա՛ւուր Տեառնապատուիրէն որ է՛ զղջումն այս չորսի ասացաք ։ այժմ ասացուք ՚յերկրորդ ա՛ւուր Տեառնապատուիրէն որ է՛ խոստովանութիւն ։ և Ք՟ի ա՟յ մերոյ փառք Յաւիտեանս ։ Ամէն ։

Մ՟Է Խոստովանութէ ։

ԵՒ ՚Ի ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵՆ այս ինչ ասելի է՛, նախ ասելի է՛ թէ զի՛նչ օգուտ խոստովանելն ։ Գիտեմ և ասեմ թէ բազում օգտութի ունի ։ Առաջին օգտութիւն, զի փակէ զդուռն դժոխոց որպէս ասէ՛ Մ՟ր՟ մերձեցան մինչև ՚ի դրունս մահու, այսինքն, ՚ի դժոխոյն որ է՛ յաւիտենական մահն և մեղաւորքն յոյժ մօտեն ՚ի դժոխոցն,

խոցն, զի որ է՛ ՚ի մեղսս մահու չափ ․բ․ մա-տին չափ հեռի չէ ՚ի դժոխոցն, զի Թէ ․բ․ մատին չափ կտրեն զխաչակն նոյն ժա-մայն ելեալ հոգին իջանէ ՚ի դժոխսն, որպէս ասէ՛ Յոբ ․իա․ կատարեցին ՚ի բարութեան զկեանս իւրեանց, և ՚ի վայր-կեան ժամանակի իջցեն ՚ի դժոխս ․ ա-պաուրեմն մեղաւորք խիստ մօտ են ՚ի դժոխս, և դեւք շուրջ պատեալ պատ-րաստեն զնա ընկենուլ ՚ի դժոխս որպէս ասէ՛ Սղմ ․ շուրջանակի ամբարիշտք շրջին և Թէ անկանին ՚ի դժոխս, այլ հնար չկայ ՚ի դուրս գալոյ ․ և որպէս որք ելեալ ՚ի բարձր տեղիս և նուրբ ՚ի վայր հայե-ցեալ տեսանէ զանհուն խորութիւն որ առաջի իւր կայ, և խոնկալով ՚ի վիշտս իւր, յանկարծակի ՚ի բազում երկիւղէն անկանի ՚ի վայր ․ այսպէս մեղաւորն բա-զում մահու չափ մերձ բարձեալ և կան-գնեալ ՚ի դրան դժոխոց, և յորժամ ՚ի միտս ածէ զանհուն խորութիւն դժոխոցն զարմանայ է՛ որ ՚ի բազում յերկիւղէն ոչ յիմարի և խելացայ ․ և ստամբակեալ զի կա-պուեցեալ է՛ ՚ի մէջ հնոտածոյ սարդոս-տայնի, այսինքն, կեանք մարդոյս որ տկարէ քան զոստայն սարդի ․ արդ այս-պիսի մեղաւորս յորժամ բանայ զբե-րան իւր առաջի խոստովանահօրն, և

ասէ՛

ասէ՛ Խոստովանիմ առաջի Ա՟յ, և որ_
դւոյ Ա՟ծածնին, և առաջի ամենայն
ս՟րբց, և առաջի քո հայր՝ զամենայն մե_
ղս զոր գործեալ եմ, քանզի մեղայ, և
այլն։ Նոյնժամայն այնպէս փակի դու_
ռն դժոխոցն ընդդէմ նր՟, զի ամե_
նայն դևքն ոչ կարեն զնա՛ տանել ՚ի
դժոխքն։ վասնզի ո՛վ մեղաւոր զղջա՛
յանկողնի քում, այսինքն, որ քան ՚ի
մարմնի ես զմահու չափ մեղս քո, և ՚ի
միտ ած զբազում վիշտս հոգւոյ քո և
խոստովանեա լե՛ր կանոնաւ, զի մի՛ իջցես
՚ի դժոխս փութով։ ասա՛ ընդ միտս
քո՛ գոչելով ընդ մաքսաւորին Ղուկ. Ժը։
Ասացի թէ խոստովանեցայց ընդդէմ իմ
զմեղս իմ, և դու թողցես զամենայն ամ_
բարշտութիւնս մեղաց իմոց։ տե՛ս որ քան
օգտութի սուրբ խոստովանութին և որ_
պէս փակէ զդրունս դժոխոց։ Եր՟կրդ
օգտութի խոստովանութեն է՛ զի զդրունս
երկնից արքայութեն բանայ, որ այն_
պէս փակեալ է՛ ընդդէմ մեղաւորին
որ է՛ ՚ի մահու չափ մեղս՝ զի եթէ ա_
մենայն սրբքն ջանան բանալ նմա՛ զդրունս
արքայութեն՝ ոչ կարեն, որ քանի է՛ ՚ի մեղս
մահու չափ։ վասնզի ասէ՛ ՚ի գիրս Ծննդոց
Ը. գլուխ թէ յորժամ մահու չափ մեղօք
մեռա՛ Ադամ՝ եհան արձակեաց զնա՛
՚ի դր_

՚ի դպրատանն փառաւորութե՟ ; և հրամայեաց
քերովբէից և բոցեղէն սրոյ պահել զճա-
նապարհ ծառոյն կենաց ։ և որով հե-
տև այս այսպէս է՛ յորժամ ասէ՛ մե-
ղաւորն առաջի խոստովանահօրն , Խոս-
տովանիմ առաջի այ , և սրբոյ ԱԾ-
ածնին ; և առաջի ամենայն սրբոց ։ և
այլն ։ ՚ի նմին ժամու բա՛ց լինի նմա՛ դուռն
երկնից արքայութե՟ , ապաւորեմն օրհ-
նեալ է՛ բանալի խոստովանութեն որ
փակէ զդուռն դժոխոց , և բանա՛յ զդուռն
արքայութե՟ ։ և փակէ զբերանն այ մինչ
զի ո՛չ կարէ դատապարտել զխոստովանող
մեղաւորն , և խնու նա զբերանս դե-
ւաց զի ո՛չ կարեն չարախօսել զնմա-
նէ ։ և այնպէս փակէ զբերան ճշմա-
րիտ քահանային՝ որպէս թէ սնդուկն
կղպին և կղպղայքն ո՛չ բացցի ։ քանզի
բաղդում անգամ ճշմարիտ քահանայքն
սպանանեալք լինին , և ո՛չ յայտնեն զխոս-
տովանութիւն ։ քանզի գրեալ է՛ թէ ոմն
եսպան զմարդ մի՛ որ հայր էր քահա-
նայի , և ապա՛ զղջացեալ գնաց խոս-
տովանեցաւ յոյժ լալով այն քահանային՝
որ որդին էր սպանելոյն , և յորժամ ետես
քահանայն թէ ճշմարիտ խոստովանեցաւ
առաւել սիրեաց զնա՛ , և թաքոյց զմե-
ղս նրա ։ այլ կինն սպանողին բարկացեալ

ընդ առն իւրում, երթեալ մատնեաց
զայր իւր ա՛ռ վերակացուս տեղոյն, թէ
այրն իմ եսպան զհայր քահանայն։ Եւ
յորժամ կամեցան սպանանել զնա՛ քա-
հանայն Ջատատգօմ լեալ, եւ քարեխօսէր
վս նր, եւ ասէր առ ինէ՛ խոստովանեալ՝
եւ ՚ի սպանութենէդ այդ՝ ես ինքն ո՛չ գիտեմ,
եւ երդմամբ ասեմ թէ քան զայս մարդս
ոք մարդ չկա՛ ՚յայս քաղաքս։ Իսկ Թշնա-
մին առն բարկացեալ՝ սպանին զքահա-
նայն։ Եւ նա՛ վս խորհրդոյ խոստովանու-
թեն մարտիրոս եղեւ եւ ո՛չ յայտնեաց
զխոստովանութիւն։ Երկրորդ օգտութի
խոստովանութենն է՛, զի Ած հաշտի ընդ
մեղաւորին, քանզի այնպէս խաղաղութի
է՛ ՚ի մէջ այ, եւ մեղաւորին որ մահու
չափ մեղս գործեալ է՛, զի ամենայն
հրեշտակք եւ սբք ո՛չ կարեն հաշտեցու-
ցանել զմեղաւորն ընդ Այ, եւ կամ
դարձուցանել զբարկութիւն այ ՚ի մեղա-
ւորէն, որ քանէ՛ ՚ի մեղքն մահացու։
Այլ յորժամ քանայ զբերանն իւր առա-
ջի քահանային, եւ ասէ՛ խոստովանիմ
առաջի Այ։ Եւ այլն։ ՚ի նմին ժամու
՚ի հաշտութի դառնայ Ած ՚ի վերայ նր,
եւ ընդունի զնա՛ սիրով։ Եւ այս հաստա-
տի բանիւն Քի, որ ասէ՛ առակաւ
Ղուկաս. ԺԵ. վս անառակն որդոյն,

որ

որ վատնեաց զամենայն ինչս իւր ։
'յ այս անառակ որդւոյս . Դ. իրք ցու-
ցանէ անձնատուրանն , նախ թէ որպէս 'ի
հօրէն բաժանեցաւ ։ Բ. ցուցանէ թէ
որպէս զղջացաւ և եկն առ հայրն , և
խոստովանեցաւ զմեղս իւր ։ Գ. ցուցա-
նէ թէ որպէս հայրն ուրախութբ ընկա-
լաւ զնա ։ Ռուբէնն 'ի . Դ. մասն բա-
ժանի , զի այս անառակ որդիս՝ զմեղա-
ւոր մարդն ցուցանէ , և հայրն՝ զՔս ։
Մեղաւորն բաժանի 'յ Այ մեղօք , և յոր-
ժամ զղջանայ՝ Քս մեծ ողորմութբ
ընդունի զնա ։ Այս անառակ որդի-
էառ 'ի հօրէն զբաժինն իւր՝ և ոչ կամե-
ցաւ կալ ընդ հրամանաւ հօրն , այլ խն-
դրեաց ազատ կալ ։ և 'յ այն հպարտու-
թեն և 'յ ազատութեն . Ե. ցեղ վնաս ե-
զև նմա ։ այսպէս մեղաւորն առեալ է՛
'յ Այ զբաժինս իւր , այսինքն , զբնական
բարութիս , և զհոգևոր բարիս ։ և
զանձնիշխան կամս , զի կամօք իւրովք
բարոյն հետևեսցի , և զբարի գործեսցէ ,
և բան զի կամօք իւրովք գնաց զհետ
չարին , և զչար գործեաց , այսինքն , զմե-
ղս մահացուս արար վնէն . Զ. ազգ պա-
կասութի պատահեաց նմա ։ Է. զի հե-
ռացաւ 'յ Այ , վնէն առ՝ թէ գնաց 'յ աշ-
խարհ հեռի ։ և յորժամ հեռանայ մե-

 ղա-

ղաւորն ՚յայս կորընչի ։ վէս ասէ՛ Դաւ-
իթ , ՚ի Սղմ. հբ. Ահաւասիկ , որք
հեռի առնեն զանձինս իւրեանց ՚ի քէն՝
կորիցեն ։ և այլն ։ և Ճժը. Սաղմոսն
ասէ՛ հեռի է ՚ի մեղաւորաց փրկութին ։
իսկ՝ սբն Օգոստինոս ասէ՛ ով Տր՝
մեղաւորն յորժամ հեռանայ ՚ի քէն ուր
երթայ , ոչ կարէ՛ փախչիլ ՚ի քէն , այլ ՚ի
քէն հեռանայ և առ քեզ գայ , այսինքն ,
՚ի քաղցր տնէդ հեռանայ և գայ առա-
ջի բարկացեալ դատաւորին ։ բ. Վնասն է՛
վատնել զամենայն բարութիւնս , վասնզի ասէ՛
Թէ վատնեաց զամենայն ինչս իւր ։ զի
որ անկանի ՚ի մահու չարի մեղս՝ վատնէ
զամենայն հոգևոր բարութիւնս , այսինքն ,
զշնորհս այ՝ և զանազան առաքինութիւնս ։
գ. Վնասն է՛ սատակիլ սովս հոգևոր կե-
րակրոյն , վասնզի ասէ՛ Եղև սով սաստիկ
՚յաշխարհին ՚յայնմիկ , և սկսաւ ինքն չքա-
ւորիլ ։ քանզի որ ՚ի մահու չարի մեղս է՛
սովեալ է՛ ՚յամենայն հոգևոր բարու-
թեաց , զի յոյժ փառաւոր է՛ հոգևոր բա-
րութին առ Այ ։ և որ հեշտացեալ է՛
մարմնական բարուք՝ ոչ տայ նմա Այ
զհոգևորն , վասնզի սովորական լինի հոգւոյն ։
դ. Վնասն է՛ , որ ասէ՛ Թէ և ցանկացեալ
յարեցաւ ՚ի միոջմէ քաղաքացւոց աշխար-
հին այնորիկ , այսինքն , առ սատանայ՝ որ

քա-

քաղաքացի է՛ դժոխոցն և մեղաւորն յա-
րենայ ծառայէ նմա, որպէս ասէ՛ յաւետա-
րանն Յհու. ը. գլխ: որ առնէ զմե-
ղս ծառայէ մեղացն: Է. Վասն զոր ա-
ռնէ մեղքն է՛ արհամարհանքն ; զի քա-
ղաքացին այն՝ յոյժ արհամարհեաց զնա,
և յղեաց արտածել զնոսա: յարհամար-
հութենէս այս խօսի Երեմիաս. Ը. Թէ
արհամարհեցար յոյժ կործանել զԱստուա-
պաշտս քո: յայնժամ արտածէ մեղաւորն
զնոսա՝ յորժամ ի պատուականութե և յար-
քայութենէ, վս զի դևքն որք նմանեն
խոզի յարբեցութեան և ի պատուականութեան
և յաղտեղութեան յոյժ հեշտանան: և Որ-
պէս խոզն հանգչի՝ յորժամ թաւալի ի
տիղմն: Նյնպս մեղաւորն որպէս խոզ
թաւալի ի տիղմն մեղաց պատուականութե,
և զմարմին իւր որ է՛ նման խոզի՝ արտա-
ծէ յամենայն աղտեղի մեղս, վասն ասէ՛
Պետրոս երկր. թղթոյ. Բ. գլխ: որպէս
շուն դառնայ անդրէն ի փսխած իւր,
և խոզ լուացեալ ընդ տիղմն թաւա-
լի: որ խոստովանի զմեղս յաւուրս ա-
ղուհացիցն, և յետոյ դառնայ ի թո-
ղեալ մեղսն՝ նման է՛ շան՝ որ փսխէ և
դառնայ ի փսխած իւր, այլ և նման է՛
խոզի լուացելոյ, որ ի տիղմն թաւալի:
զի եթէ խոզն կարէր խօսիլ՝ սոյնպէս ա-

 սէր,

ներ , Թէ ՚ի հաստատ տեղւոջն առնուլ
գեղեցիկ է՛ և բարձր Թռչելն , քան
Թէ ննջել ՚ի բուրաստանս : Նմանապէս եւս
բղձախոհք ասեն՝ Թէ հեշտուԹիւն և պո_
ռնկուԹիւն , որ է՛ հաստեալ տեղւոջն՝ քա_
ղցրագոյն է՛ քան զամենայն հոգևոր քա_
րուԹիս : վասնզի ասէ՛ սբն Օգոստինոս :
որպէս հպարտուԹե մեղքն զհրեշտակքն
դևս փոխեաց , այնպէս պոռընկուԹե
մեղքն զմարդն խոզ կերպարանէ : և որ_
պէս ասէ՛ Սողոմոն ՚յառակաց . Ժ . գլխ :
որպէս գինդ ոսկի ՚ի քիԹ խոզի՝ նոյնպէս
կնոջ չարի՛ գեղեցկուԹի : զի Թէ ոսկի
ո՛չ արկանես ՚ի քիԹ խոզին՝ ո՛չ գիտէ
զնորա յարգն , և ո՛չ պահէ զնա սբ , այլ
Թաւալէ զնա ՚ի մէջ տղմոյ : այնպէս
Ած տուեալ է՛ մարդոյն ոսկի ոգի՝ որ է՛
բանական հոգին , որ ստեղծեալ է՛ ՚ի
պատկեր այ : Իսկ բղձախոհն ո՛չ գիտէ
զպատիւ հոգւոյն , այլ չարաչար զնոսին ՚ի
տեղւոջն պոռնկուԹեն : վասնզի անառակն որ_
դին որ վատնեաց զամենայն ինչս իւր
՚ի հեշտուԹի մեղացն՝ այնպիսի արածէ
զխոզսն : քանզի պոռնկին զամենայն ան_
դամս իւր , որ է՛ երամակ խոզից՝ պոռ_
նկուԹբ և ամենայն մեղօք արածէ : Դ .
Երրորդ վնասէ՛ անյագ ցանկուԹիւն , վասնզի
ասէ՛ Թէ ցանկայր ընուլ զորովայնն ՚յե_

ղջեր_

դժերէն՝ զոր խոզքն ուտէին ։ վ̅ս զի մե֊
ղաւորն յարբեցութեն և ՚ի պոռնկու֊
թեն որ է՛ կերակուր սատանայի՝ ոչ եր֊
բեք յագենայ , այլ որ չափ չատ ուտէ՝
առաւել սովի և ծարաւի ։ Երկր. ցու֊
ցանէ աւետարանն անառակ որդոյն ,
թէ որպէս զղջացաւ ասելով՝ որ ասէ՛ ։
թէ եկեալ ՚ի միտս իւր ասէ՛ , քանի
վարձկանք են ՚ի տան հօր իմոյ հացա֊
լիցք , և ես աստ սովամահ կորնչիմ ։
Գ. ինչ ցուցանէ որ պէտք է՛ մեղաւորին
յորժամ կամի դառնալ առ Այ ։ Նախ
պիտոյ է՛ զի մեղաւորն գայ ՚ի միտս իւր
և խորհի թէ յո՛ւր և յորպիսի ինչ հա֊
սեալ եմ ։ և աստ , Դ. ինչ պարտ է՛ առ֊
նել , նախ խորհի թէ ուստի ՚ի վայր ան֊
կեալ եմ , այսինքն , ՚յ Այ ։ և ուր գնացի ,
այսինքն , առ սատանայ ։ վսնկ ասէ՛ թէ
եկն ՚ի միտս իւր ։ Ե. խորհի թէ զի՞նչ էր
նախ քան զմեղանչելն՝ և զի՞նչ եղև նմա
վ̅ս մեղացն ։ քանզի նախ քան զմեղանչելն
Այ որդի էր , և յետ մեղանչելոյն եղև
որդի սատանայի , վսնկ ասէ՛ թէ անառակ
որդի ։ Զ. խորհի թէ զի՞նչ է՛ կորուսեալ,
կամ զի՞նչ գտեալ ։ զի կորուսեալ է՛ զա֊
ռատ ողորմութիւն Այ , և գտեալ զատանեկ
և զդառն տանջանս դժոխոցն և զսօինս ։
վսնկ ասէ՛ և ես աստ սովամահ կորն֊

չիմ , և Թէ քանի՞ վարձկանք են 'ի տան
հօր իմոյ հացալիցք ։ Հայր՝ Ա՟Ծ , և տուն
հօր՝ եկեղեցի , որ տուն է՛ Ա՟Յ ։ վարձ-
կանքեն , որք ծառայեն ա՟յ , և առնուն
'ի նմանէ վարձ զարքայուԹին ա՟յ , այ-
սոքիկ առաւտ ունին զհաց բանին ա՟յ ,
և զմարմինն Ք՟Ի ։ դ՟ ․ պիտոյ է՛ զի մե-
ղաւորն հաստատէ՛ զմիտսիւր դառ-
նալ առ Ա՟Ծ , և այս ․ դ՟ ․ ազգ լինի ։
ա՟ ․ զղջմամբ , վասնզայնորիկ ասէ՛ յարե-
աց ։ բ՟ ․ ամաչխարուԹբ , վասնի ասէ՛ գնա-
ցից առ հայրն իմ , այսինքն , պահօք և
աղօԹիւք ։ դ՟ ․ խոստովանուԹբ , վասնզի
ասէ՛ , և ասացից ցնա , Հայր՝ մեղայ
'յերկինս և առաջի քո , և աստ ․ դ՟ ․ նոյն
խոստովանի , նախ զիւր մեղքն՝ ասելով Հայր
մեղայ ։ բ՟ ․ խոստովանի զինքն անարժան՝
ասելով չեմ արժանի կոչել որդի քո ։ գ՟ ․
զի զԱ՟Ծ ողորմած խոստովանի ասելովն՝
արա զիս իբրև զմի 'ի վարձկանաց քոց ։
Բայց այս երկուս միայն ոչ է՛ բա-
ւական , այսինքն , Թէ մեղաւորն զայ
'ի միտս իւր , և ճանաչէ զմեղս իւր , և
հաստատէ զմիտս իւր դառնալ առ Ա՟Ծ ։
Այլ և զերրորդն ևս պարտ է՛ առնել , այ-
սինքն , 'ի գործ ածել զբարի խորհուրդն ։
վասնի ասէ՛ յարուցեալ գնացից առ հայր
իմ , և ասացից ցնա ։ Հայր՝ մեղայ 'յեր-

կինս

կենաց և առաջին քո ։ Եւ ոչ ևս եմ ար-
ժանի կոչել որդի քո ։ արա զիս իբրև
զմի ՚ի վարձկանաց քոց ։ և այլն ։ Եր-
կրորդ ցուցանէ աւետարանն , թէ ըն-
դունի ողորմածն Տ͞ր զզղջացեալ մեղա-
ւորն և երևի նմա , և այս ։ դ͞. կերպիւ
ցուցանի ․ ա͞. մեծ ողորմութ͞ե ընդունի
զնա , վասնզի ասէ՛ ետես զնա հայրն և
գթացաւ ։ բ͞. ընդունի փութով , վասնզի
ասէ՛ և ընթացաւ ընդ յառաջ որդւոյն ,
գ͞. ընդունի զնա սիրով , զի ասէ՛ ան-
կաւ զպարանոցաւ նորա և համբուր
եաց զնա , որ է՛ նշան սիրոյ , և խաղա-
ղութ͞ե , և ուրախութ͞ե ։ և այս երա-
նի , զի եթէ հրեշտակք ՚յերկինս ուրա-
խանան ՚ի վ͞ր միոյ մեղաւորի որ ապաշ-
խարեցէ՝ ևս առաւել պարտի ուրախա-
նալ Տ͞ր որ հայր է՛ , ծ͞հ թէ որպիսի
գթած է՛ երկնաւոր հայրն , զի փարէ ընդ-
առաջ մեղաւորին՝ որ ապաշխարէ , և
ոչ միայն , թէ մեղաւորն գայ առ ինքն ։ և
ոչ յանդիմանէ զնա , և կամ ՚յերեսս
տայ զմեղս իւր ։ այլ քաղցրութ͞ե և
սիրով համբուրէ զնա ։ և այլն ։ Այս-
պէս պարտ է՛ լինել խոստովանահօրն , զի
քաղցրութ͞ե ընդունիցի զճշմարիտս զզղ-
ջացեալսն՝ որ գայ ՚ի խոստովանութ͞ի ։ և
թէ խոստովանահայրն անողորմ սիրտ ու-
նիցի

նոցին ևս մեղուցելոյն , և 'ի ժամ խոս_
տովանութեան նախատէ զմեղաւորն չար
տանէ ։ և անպարտաշաճէ՛ , որ այսպիսի
խոստովանահայրս դժնդակս լինին երկ_
նից Արքայութեան ։ քանզի ոչ զոք թողու_
գնալ անդր , այլ փակէ զդուռն արքայ_
ութեան ընդդէմ մեղաւորաց ։ Այլ պատ_
շաճէ՛ նոքա լինել դժնդակս դժոխոցն ,
զի ոչ զոք թողուցու երթալ անդր մտա_
նել ։ Զորս ընդունին Ա̅ծ զմեղաւորն
մեծ պատուով, զի ասէ՛ թէ հրամայեաց
հայրն ծառայս իւր՝ փութապէս հանէք
զպատմուճանն առաջին , և զգեցուցէք
դմա ։ Դ· կերակուր պատուէ զորդւոյն ։
Նման զի զգեցուցանէ զնա գեղեցիկ
հանդերձիւ՝ վասնզի ասէ՛ փութապէս հանէք
զպատմուճանն առաջին և ագուցէք
նմա ։ Ե· զի զարդարէ զնա ։ վասնզի ասէ՛ ,
և տուք՝ զմատանին 'ի ձեռս նր̅ ։ Զ· զի
տայ նմա զօրութի̅ և առաքինութի̅, վասնզի
ասէ՛ , և տուք զկօշիկս 'յ ոտս նր̅ ։ Է·
զի պատրաստէ նմա զանուշահամ կե_
րակուր ։ վասնզի ասէ՛ և ածէք զեզն պա_
րարակ , և զենէք ։ կերիցուք և ուրախ
լիցուք ։ Այս արդ՝ ծառայք ա̅յ հրեշ_
տակք են , որոց տեղի են քահանայք կամ
վարդապետք , և ասէ՛ ցնոսա Ա̅ծ՝ բե_
րէք զպատմուճանն առաջին և զգեցու_

ցէք

ցեք զորդի իմ ։ առաջին պատմուճան՝
զանմեղութիւն ցուցանէ ։ զայս պատ-
մուճանս նախ Ադամ զգեցաւ ՚ի դրախ-
տին, այլ մեղօքն մերկացոյց զինքն և
զմեզ ։ բայց խոստովանութիւն այնպիսի
զօրութիւն ունի, որ յորժամ կատարեալ և
ճշմարիտ լինի՝ զառաջին պատմուճանն,
որ է՛ անմեղութիւն՝ դարձեալ զգեցու-
ցանէ նմա ։ քանզի ՚ի նմին ժամու, յոր-
ժամ խոստովանի մեղաւորն՝ և արձակի
՚ի խոստովանահօրէն, այնպէս անմեղ է՛,
որպէս Ադամ ՚ի դրախտին, վասնի ասէ՛
Սղմ. ճԳ. խոստովանութիւն և մեծ-
վայելչութիւն զգեցար, և արկեր զլոյս
որպէս զօդոց ։ նաև մատանին ցուցանէ
զճշմարիտ հաւատսն և զԱստուծոյն Սէրն ։
և ձեռքն ցուցանէ զգործքն ։ Այս՝ ճշ-
մարիտ հաւատն, Աստուծոյն սիրոյն, և
բարի գործօքն զարդարէ զհոգին ։ բայց
հաւատն առանց գործոց մեռեալ է՛,
վասն որոյ հարկ է՛ բարի գործօք կենդանա-
ցուցանել զհաւատսն ։ Կօշիկ, որ ՚ի մե-
ռեալ մորթոյ լինի կազմեալ՝ ցուցանէ
զօրինակ Մարտիրոսացն, որք մեռան վասն ճշմա-
րտութեան, զայս կօշիկս հագանի, որ
զմեղս իւր կատարեալ զղջմամբ և ճշ-
մարտութեամբ խոստովանի, և հետևի սրբոց
հարցն հետոց՝ մեռելութեամբ մեղացն և

գոր-

գործելով զբարին ։ Նոյն պատարագն ցու֊
ցանէ զորդին Տն զՔսի , որ ՚ի շնոր֊
հաց Հոգւոյն սրբոյ պատարագեալ է՛ , և վսն փր֊
կութե աշխարհի զենեալ ։ ՚յ այսմանէ
եղև պատարագին ուտէ ոք , յորժամ յետ
խոստովանութեն ճաշակէ ՚ի մարմնոյ և
՚յ արենէ Քի ։ և ՚յ այսմանէ յայտնի է՛ ,
զի որ զանարժանութե հանդերձն ոչ է՛ զգե֊
ցեալ խոստովանութբ՝ նմ ՚ի ձեռին իւ֊
րում զմատանին ճշմարտութ և կենդանի
հաւատոյն՝ հանդերձ բարի գործօքն՝ ոչ
ունի ։ և զկօշիկս ևս ՚յ ոտս ոչ ունի ,
քանզի ոչ երթայ զհետ վարուց սրբոց ։
վսյ և այնպիսին՝ ոչ է՛ արժանի ուտել
՚ի զենեալ պատարագէն ՅԻ ՔԻ ։ և այս֊
պիսիքս են՝ այնոքիկ մեղաւորքն , որք
անզեղջք են ՚ի մեղս իւրեանց ։ և Հայրն
երկնաւոր ոչ ուրախանայ ընդ նոսա
և ոչ առնէ տօն՝ այլ սուգ ։ իսկ որք զղ֊
ջանան ճշմարտապէս , և խոստովանին
զմեղս իւրեանց՝ Հայրն երկնաւոր ուրա֊
խութի առնէ ընդ նոսա , և տօն ։ և
տօնս այս՝ յոյժ փառաւոր է՛ , վսն զի
տօն է՛ Ծննդեան ։ քանզի մեղաւորն որ֊
դի սատանայի է՛ , և յորժամ զղջանայ
խոստովանի՝ նոր ծնանի Տն ։ և տօն է՛
Զատկութե՝ զի մեղաւորն յառնէ ՚ի մե֊
ռելութե մեղաց՝ , յորժամ ճշմարտա֊

պէս

ամէն մեղս ասէ՛ առաջի խոստովանա-
հօրն՝, և առնու զնոյն արձակումն ։ և
նմա արժանի լինի ուտելոյ ՚ի կենարար
մարմնոյն Քրիստոսի և ՚ի պատուականն՝ յարենէն
վասնի ասէ՛ Հայրն երկնաւոր՝ ածէք զեզն
պարարակ՝ և զենէք ։ կերիցուք և ուրախ
լիցուք ։ Զի այս որդի իմ մեռեալ էր՝
և եկեաց, կորուսեալ էր և գտաւ ։ Այլ
և է՛ առն Սրբոյ վարդապետաց, զի որ ճշ-
մարիտ խոստովանի ընդունի զՍուրբն մէջ ։ և
որպէս Թագաւոր մի յորժամ որսայ եղն
վայրի՝ այնու առաւել ուրախանայ՝ քան
զԺ. եղն ընտանոյ ։ այսպէս Թագաւորն
Թագաւորաց Քս, և ամ հրեշտակքն
առաւել ուրախանան ընդ միոյ մեղա-
ւորի՝ որ ընդունի որպէս խոստովանու-
թեամբ, քան Ժ. արդարոցն, որք բնա-
կեալ են ՚ի տանն Այ ։ Ապա ուրեմն
երեւի թէ խոստովանութիւն մեծ զօրու-
թիւն ունի, զի հաշտութիւն առնէ ընդ
Քս, և ընդ մեղաւորն, զոր ամ հրեշ-
տակք և ամ սուրբքն ոչ կարեն առնել՝,
այսինքն, հաշտեցուցանել զՔս ընդ
մեղաւորին ։ Չորրորդ օգտութիւն խոս-
տովանութեանն է՛, զի խոստովանութիւն
զթիւնս մեղացն փոխէ ՚ի Թիւս շնոր-
հացն Այ ։ վասն ասէ՛ Պօղոս հռոմեց․
Ե. գլխ ։ Թէ ուր առաւել եղեն մեղքն,

տուանել ևս յանձնելման շնորհքն ։ վասնզի ոչ է՝ պարտ՝ Թէպէտ և կարի մեղաւոր լինի, յուսահատել ։ քանզի տուանել մեղուցելոյն, յորժամ զղջանայ՝ տուանել շնորհաց հանդերձելոց ։ բայց ոչ վս այսորիկ պարտ է՝ յանձնել ՚ի մեղս, զի շնորհքն բազմասցին՝ քան լինի ։ քանզի որ մեղանչէ՝ յուսով ողորմութեն Տն՝ մեղանչէ ընդդէմ Հոգւոյն սբյ, և խիստ դարձուցելի է՝ բանս այս ։ քանզի Մատթէի ․ ԺԲ․ գլխ ասէ՝ ։ որ մեղանչէ ընդդէմ Հոգւոյն սբյ՝ ոչ՝ Թողցի նմա, ոչ՝ յայսմ աշխարհի, և ոչ՝ ՚ի հանդերձելումն, այսինքն, ՚ի կողմանէ մեղացն, որ այն քան չարագունեղ է՝ ։ Զոր օրինակ, եթէ ոք արտաքոյ Եկեղեցւոյն զմեղս ինչ գործեալ իցէ, սպանութի կամ գողութի՝ և փախիցէ ՚յ Եկեղեցին՝ Եկեղեցին փրկէ զնա ։ իսկ եթէ ՚ի ներս Եկեղեցւոյն գործեալ իցէ մեղս սպանութի, կամ գողութի՝ Եկեղեցին ոչ փրկէ զնա, վս զի արհամարհեաց զԵկեղեցին ։ Նոյնպէս եթէ ոք վս անկարութե և անգիտութե մեղանչէ՝ ողորմութի Սբ Հոգւոյն փրկէ զնա, իսկ որ մեղանչէ՝ ընդդէմ ողորմութե Սբ Հոգւոյն՝ ողորմութի Սբ Հոգւոյն ոչ փրկէ զնա ։ Հինգ երրորդ օգտութի խոստովանութեն է՝,

է՛, զի ՚յորում ժամու մարդ մահու չափ
մեղս գործէ՝ ՚ի նմին ժամու ջնջի ՚ի դպ-
րութենէ կենաց ։ որպէս ասէ՛ Մովս ։ Ջն-
ջեցից նոքայ ՚ի դպրութենէ կենաց՝ և
ընդ արդարս քո՛ մի՛ գրեսցին ։ այլ յոր-
ժամ ճշմարիտ խոստովանի, ՚ի նմին ժա-
մու դարձեալ գրի ՚ի դպրութեն կենաց ։
որպէս ասէ՛ Ղուկ. Ժ. գլխ ։ այլ խնդ-
ացէք, զի անուանք ձեր գրեալ են
՚յերկինս ։ քանզի գրեալ է՛ թէ հայր
ոմն տեսանէր ՚ի տեսլեան զհրեշտակ մի՛,
որ ունէր ՚ի ձեռին իւրում գիրք մի՛ փո-
քրիկ, զանուանս գրէր անդ ոսկի գրով՝
և զանուանս ո՛չ գրէր ՚ի ժողովրդենէն ։
Իսկ մե՟ հայրն ճշգրտիւ եհարց և քննեաց
զժողովրդեանն և գիտաց, զի որ խոստո-
վանեալ էր զմեղս իւր՝ գրեալ լինէր ՚ի
գիրսն յայն ։ և որ ո՛չ էր խոստովանեալ՝
ո՛չ լինէր գրեալ ։ Ապւմն ՚յասացանէ ա-
սացելոցս մինչև ցայս յայտնի լինի,
թէ այս երկրորդ ա՛ւուր ճանապարհս
որ է՛ խոստովանիլն զմեղս իւր բերանով
աւագի խոստովանահօրն՝ յոյժ օգտա-
կար է՛, և գիտել զո՛ճ խոստովանու-
թեն, այսինքն, գիտենալ լա՛ւ խոստո-
վանիլն՝ բարձրագոյն է՛ քան զայլ գիտու-
թի ։ Վս պարտ է՛ զի վարդապետք և
խոստովանահարք քաջապէս և ստուգա-
պէս

պէս գիտ ասացեն զգիտութի խոստովա-
նութեան՝ և զայլսն ուսուցեն ։ միւս զի
այս գիտութիւն առաւել այլոց գիտու-
թեանց փրկութի գործէ ։ իսկ այլք գիտու-
թիւք առաւել սորա ոչ առնեն օգտու-
թի ինչ, կամ շատ՝ այլ փոքր ։ Ո՜ ինչ
օգուտ է՝ գիտել զբժշկականութիւն Հի-
պոկրատեայ և Գաղիանոսի, և զբնական
գիրս Արիստոտելի, և զաստղաբաշխու-
թիւն Պտղոմէի, և զայլ գիրս իմաստա-
սիրաց ուսանիլ, և ոչ գիտել զգիրս ըն-
թեռնուլ խղճմտացն, և ջնջել անուն
զգիր մահու, այսինքն, զմեղացն, զդժ-
մանէ, և խոստովանութբ ։ յԱհեղն
դատաստանին ոչ հարցանէ Ած զոր ՚ի
գիտութէ և ՚ի գրոց փիլիսոփայիցն ։ այլ
հարցանէ ՚ի գրոց խղճմտացն, և ՚ի գի-
տութէ խոստովանութեան ։ վասն այն ասէ՛
մեծն Պերնարդոս, թէ լաւ է՝ որ զքեզ
գիտասցես և ճանիցես, և ՚ի գիր խղճ-
մտաց ընթեռնուլ գիտասցես զմեղս քո,
քան զայն, որ գիտասցես զընթացս Աս-
տեղաց, և զհիմունս Երկրի, և զյատ-
կութիւս բուսոց և տնկոց, և զբնութիւս
մարդկան, և քան զամենայն գիտութիւս
Երկնաւորաց և Երկրաւորաց և սանդարա-
մետականաց ։ Նա որպէս ոչ կարէ նա՛ վար-
դապետ լինիլ որ ՚ի տարրեն մի՛ անգամ

Երթայ

երթայ 'ի դատաստանն , այսպէս որ 'ի տարին միանգամ խոստովանի, և զայն ևս շտապով, ոչ կարէ հասանել 'ի վ՟ր գի- տութե՟ խոստովանութեան ։ վ՟սն բազում անգամ պարտէ՛ խոստովանիլ , որպէս ասէ՛ Դաւիթ 'ի Սղմ ։ այլ ևս խոստո- վան եղէց առ Տ՟ր յոյժ բերանով իմով ։ և որպէս ծիր գրոց աշակերտն 'ի մէջ գի- շերի յառնէ , և ընթեռնու զգիրս յա- ռաջ քան զդաս ասել վարդապետին ։ այս- պէս 'ի մէջ գիշերի պարտէ՛ ընթեռնուլ խղճմտանացն զմեղս իւր , զի յորժամ է- կեսցէ առ խոստովանահայրն գիտասցէ կարգաւ խոստովանել ։ 'յայսմանէ երևի թէ երկու աւուր ճանապարհս , այ- սինքն , խոստովանութիւն բազում օգ- տութիւն ունի , և այնոցիկ որք շուտով և յօժարութ՟բ խոստովանին , բազում օգ- տութիւն լինի ։ Ա՟. զի խոստովանողն մե- ղաց թողութիւն առնու 'յ Այ ։ Բ՟. շնոր- հքն Այ դարձեալ պարգևի նմա ։ Գ՟. 'ի տանջանաց դժոխոցն ազատի ։ Դ՟. զի 'ի ծառայութե՟ սատանայի ազատի ։ Ե՟. զի հաղորդի ամենայն բարութե՟ եկե- ղեցւոյ , և առնու մասն և բաժին 'ի չար- չարանացն Քի և սրբոց ։ Զ՟. զի ամե- նայն բարի գործք , որ վ՟ս մահու չափի մեղացն մեռեալէր՝ դարձեալ կենդանա-

նայ , և զխղճմտանս մեղաւորին ուրա_
խացուցանէ , զի նման ծանրէր երբև
զլեառն և յոյժ երկնչէր , իսկ յորժամ
խոստովանեցաւ՝ Թեթևացաւ և խաղա_
ղացաւ , Թէ մեռանի՝ այլ ոչ երկնչի ։
Է. զի դարձեալ դառնայ ՚ի քաղաքն իւր ,
այսինքն , ՚յարքայութիւն ։ Ը. զի զսատա_
նայ տրտմեցուցանէ և աւաղէ , և որ_
պէս գողք ոչ բնակին անդ՝ ուր ճանա_
չէին գործք նոցա և ՚յայտնէին ծածուկք նոցա ։
այսպէս դևքն ոչ բնակեն մերձ առ այն
մարդն , որ ՚յայտնէ խոստովանութբ
զմեղս իւր ։ Թ. զի բառնում ամօթոյն
որ ՚ի խոստովանութենն կրէ՝ ատելի դառ_
նայ իւրեանն մեղքն և այլ ոչ գործէ ։
Ժ. զի այնչափ կարէ խոստովանել զմինն
մեղքն՝ որ քաւարանի տանջանքն խա_
փանի , վս ամօթոյն որ կրէ , և վս զօ_
րութե արձակմանն՝ զոր ունի եկեղե_
ցի ։ ԺԱ. զի ՚յամենայն հոգևոր հի_
ւանդութէ և ՚ի գողութէ առողջա_
նայ ։ յիմար լինի այն հիւանդն և գո_
դին՝ որ բանիւն միայն , այսինքն , Թէ
բանայ զբերան իւր և ասէ՝ զցաւս իւր
բժշկի , իսկ նա՛ ծուլանայ բանալ զբե_
րանն իւր՝ արդարև յիմար է՝ այնպի_
սին ։ այսպէս մեղաւորն լցեալ է՝ գո_
ղութբ , և յորժամ բանայ զբերան իւր

և

եւ խոստովանին զմեղս իւր , 'ի նմին ժա_
մու բժշկի հոգւոյն , որպէս ասէ Լե_
ւոն . Խոզ . ասա՛ դու նախ զանօրէնու_
թիւս քո՛ եւ արդարասցիս : յայս . Ժա.
օգտութէս կու զրկի որ ո՛չ խոստովանի :
նա՛ եւ զրկի 'յայլ ամենայն օգտութեց ,
որ լինին 'ի խոստովանութէն , զի զի խոս_
տովանութիւն ընդ դէմ փորձութեց եւ
ընդ դէմ յուսահատութե եւ տրտմութե
բազում օգտութի առնէ , որպէս ասէ
Սղմ : արդ՝ ընդէ՞ր տրտմես անձ_
նիմ կամ ընդէ՞ր խռովես զիս՝ յուսա՛
ա՛ռ Ա.Ծ , եւ խոստովանեսցի՛ նմա՛ փրկիչ
երեսաց իմոց Ա.Ծ է՛ : ո՛չ կայ հնար
թէ կորընչի այն մեղաւորն որ ճշմա_
րիտ խոստովանի զմեղս իւր եւ ո՛չ դար_
ձեալ դառնայ 'ի նոյն մեղս , այսինքն ,
այլ ո՛չ գործէ զնոյն մեղս եւ ո՛չ անկանի
'յայլ մեղս , անհնարէ՛ թէ կորընչի , ո՛չ
կորընչի նաւ՝ այլ փրկի : զի զի ասէ Սղմ :
մի՛ մատներ գազանաց զանձն որ խոս_
տովան առնի ա՛ռ քեզ՝ եւ զանձինս տնա_
կաց քոց մի՛ մոռանար իսպառ : եւ դար_
ձեալ ասէ Սղմ : խոստովանութի եւ մեծ_
վայելչութի է՛ առաջի նորա : 'ի խոստո_
վանութին . Զ . ինչ պատրաստեալ կայ ,
այսինքն , գեղեցկութի հոգոյ , եւ սէրու_
թի վարուց , եւ մեծութի հրեշտակաց ,

որ ՚ի կատարածին առնու խոստովանողն ։ Երկրորդ ասելն է՝ , Թէ երկրորդ մասն ուր ճանապարհն՝ որ է՝ խոստովանութիւն . գ. մեզ ճանապարհ է՝ ։ Առաջին մեղն այս խոստովանութեան ճանապարհիս այն է՝ որ խոստովանութիւն ողջ և ՚ի լման լինի և կատարեալ , զի թէ պարիսպ քաղաքին ՚յամենայն կողմանց ողջ լինի , բայց ՚ի մի՛ կողմանէ խոռ՝ թշնամիքն ընդ այն մտանեն և առնուն զքաղաքն , այսպէս խոստովանութիւն որ է՝ պարիսպ հոգւոյն , թէ ՚ի մին կողմանէ խոռ ունենա , այսինքն , զմի՛ մահու չա՛փ մեղս կամաւ պահես և ո՛չ խոստովանիս , սատանայ ընդ այն մտեալ զերէ զհոգին քո՛ , վասն Եսայի ․Իգ․ գլխ ասէ՝ ։ Ա՛ռ քնար շրջեա՛ ընդ քաղաք պոռնիկ մոռացեալ՝ քա՛ղ հա՛ր յաճախեա՛ երգել , զի քո՛ յիշատակ մնասցէ ։ բանս այս , հոգեւորապէս զայս կամի ասել ։ ո՛վ մեղաւոր հոգի որ բաժանեցար ՚յիս, ՚յարդար փեսայէ քումմէ և գնացեր ա՛ռ սիրեկանս քո՛ , և մոռացեալ եղեր ՚յիս , ա՛ռ զքնար զղջման և ածեալ շրջեա՛ ընդ քաղաք , այսինքն , որոնեա զամենայն կեանս քո՛ ՚ի մանկութէ մինչև ՚ի ծերութիւ , և ՚ի միտ ա՛ծ զամենայն մեղս քո՛, և խոստովանութբ քա՛ղ հա՛ր զքնարս քո՛

և յա_

և յաճախեալ յերկուս գեղեցիկս առաքինի
խոստովանահօրն և մնասցէ յիշատակ քո
առաքինի ոգւոյ։ և ԻԶ պայմանս արարեալ է
ընդ մեղաւորին, զի թէ աղբ և ցեղ
տարցէ ի վաճառն ոգւոյ՝ ի կարմիր ոսկի
փոխի, այլ այս պայմանաւս որ ի ցխէն և
յաղբէն մի ինքն պահէ ոչ, եթէ ի
ցխէն կամ յաղբէն պահէ ինչ՝ յոսկոյն
ամենևին ոչ ինչ առնու, այլ իւր հա-
տուած ցեխին կրկնապատիկ դառնայ։ ցեխ
և աղբ մահու չափ մեղքն է՝, և վաճառ
ոգւոյ խոստովանութիւն, կարմիր ոսկի ոգւոյ
շնորհքն է՝, թէ զամենայն մեղս խոս-
տովանիս ճշմարիտ՝ կատարեալ թողու-
թիւն առնուս, և արժանաւորիս շնորհացն
ոգւոյ, այլ թէ պահես ի մեղացն մի քեզ՝
ոչ առնուս թողութիւն, այլ մեղքն կր-
կնապատիկ լինի։ վասն պարտ է՝ որ խոս-
տովանութիւն ողջ լինի և լման։ Հինգերորդ-
մին այս խոստովանութեան ճանապարհս
այս է՝, զի պարտ է՝ որ խոստովանութիւն
կամաւոր լինի։ քանզի թէ զպատուղն բռ-
նութեամբ կորզես ի ծառէն՝ խակ լինի և թը-
թու, այլ յորժամ ինքն ի վայր կաթէ՝
հասուն լինի և քաղցր։ այսպէս խոս-
տովանութիւն որ բռնութեամբ է՝, խակ է՝ և
թթու առաքինի ոգւոյ, այլ որ կամաւ լինի
յոյժ քաղցր է՝ և հասուն։ վասն այսր ասէ՝ Սղմ՟

՚ի նմա յուսացաւ սիրտիմ , օգնեցաւ և զուարճացաւ մարմին իմ · և ես կամօք իմովք խոստովան եղէց նմա ։ ՚յայտնանէ երևի թէ պարտ է՛ որ խոստովանութիւն կամաւոր լինի ։ Երրորդ միտն այս խոստովանութե ճանապարհիս այն է՛ որ խոստովանողի յուսով ողորմութեն այ , վս զի մեծն Օգոստինոս ասէ՛ թէ ԱԾ այնպէս ողորմած է՛ , որ առաւել կամի՛ ողորմութի առնել մեղաւորին , քան զայն՝ որ մեղաւորն կամի ողորմութի առնուլ ՚յ այ , քան զի ԱԾ , ամենակարող է՛ և ողորմութի նր անչափ ։ վսնվ ոչ է՛ պարտ որ մեղաւորն անյոյս լինի թէպէտ բազում մեղք լինի գործեալ , բայց թէ ոչ երթայ · Բ· առաջին միտն , և թողու զայս երրորդ միտն՝ ոչ հասանէ ՚ի նաւահանգիստն երկնից արքայութեն ։ զի թէ ոչ ՚ի լման խոստովանի , և կամաւորութբ խոստովանի , բայց անյոյս լինի ՚յ ողորմութեն այ՝ ոչ կարէ անցանել զերեսս այ , որպէս և յուդա մատնողն որ ՚ի լման խոստովանեցաւ զմեղս իւր , յորժամ ասաց մեղայ զի մատնեցի զարիւն արդար ։ այլ և կամաւորութբ խոստովանեցաւ , զի իւր կամաւն գնաց առ քահանայսն , և ընկեց անդ՝ զարծաթն որ էառ գինն ՔԻ ։ բայց զեր_

յուղղ միջն ոչ գնայց, զի անդորրս եղև 'ի յո_
ղորմութեան այ, և խնդրեաց զինքն եհաս
'ի նմա՛ ահամանդրեալս դժոխոցն ։ Նոյնպէս ա_
սելի է՛ վսն խոստովանութեան զի սատա_
նայ ջանայ զանազան խափանութիւն ածել,
զի նմանէ՛ սատանայ գայլի, զի յորժամ
գայլն ոչխար բռնէ և տանի 'ի մայրին
զի կերիցէ զնա, ոչ բռնէ զոտն ոչխա_
րին և կամ զականջն այլ զբկողն որ զձայն
չածէ, որ հովիւքն և շներն լսեն և զան
Թափեն, նոյնպէս յափշտակող գայլն սա_
տանայ յորժամ բռնէ զմեղաւորն, և կա_
մի տանել 'ի մայրիս դժոխոց զի անդ
պատառեսցէ ոչ բռնէ զոտն մեղաւորին,
զի Թողու զնա երԹալ, և ոչ զականջն,
զի Թոյլ տայ որ լսէ, այլ զբկողն
կալնու, որ ոչ աղաղակէ 'ի խոստովանա_
հօրն առաջի, և փրկի 'ի բերանոյ սատա_
նայի ։ Նաւ սոս դիտելի է՛ զի սատանայ
որ Թշնամի մեր է՛ ոչ իշխէ, ուր կարո_
ղութի չունի մերձենալ 'ի մեզ, եԹէ ոչ
Թոյլ տուեալ լինի 'ի այ, և Թէ ունէր
իշխանութի 'ի վր մարդոյն, 'ի նմին ժա_
մու յորժամ անկանէր 'ի մահու չափ մե_
ղքն՝ նոյն ժամայն սպանանէր զնա, և զհո_
գին տանէր 'ի դժոխսն, վսն զի գրեալ է՛,
Յոբ․ ա․ գլխ ։ Թէ յորժամ կամեցաւ
սատանայ ձեռն հարուցանել Յոբ՝ 'ի այ

խնդրելոյ թոյլ տալ, և ՄԾ թոյլ ետ
սատանայի պայմանաւ ձգել զձեռն յամե-
նայն ինչս նր, և ոչ յաղեցաւ այսու,
դարձեալ թոյլ ետ նմա արկանել զձեռն
ի մարմին նր, այլ ոչ ի հոգին, և ի նմին
ժամու եհար զնա սատանայ ծանր հի-
ւանդութբ ի գլխոյն մինչև ցմատունս
ոտիցն, յայսմանէ երևի թէ սատանայ
ոչ կարէ ձեռն արկանել յոք՝ առանց թոյլ
տալոյն այ ։ Վսն սատանայ յորժամ կա-
մի զձեռն արկանել ի մեղաւորսն՝ նախ
երթայ յայ դիւանն ։ բայց յերկինքն ․ բ․
ցեղ դիւան կայ, առաջինն է՝ Ողորմու-
թեն դիւանն՝ և անդ ոչ երթայ, վսն զի
ողորմութեն ատեանն յոյժ քաղցր է ․ բ․
դիւանն է՝ ատեանն դատաստանին Ար-
դարութե, անդ երթայ սատանայ զի
խիստ է՝ քննող՝ և ահաւորին, և անդ ունի
անդ՝ կատարել զկամս իւր ։ առաջին ար-
դարութեն այ ապաշաւրեմս մասանէ զմե-
ղաւորս, և ասէ՝ թէ այս այրս մահու
չափ մեղք է՝ գործեալ՝ հրամ վճիռ և
թոյլ տուր տանել ի դժոխքն ։ Արդա-
րութիւն պէտի տայ դիւէին թէ դու ճշ-
մարիտ ասես թէ ի մահու չափ մեղք
է՝ անկեալ, ճշմարիտ է՝ և խնդրեալ քո ։
վսն զի պողոս ասէ՝ ի հռմց ։ զ․ գլխ ։ թէ
թոշակ մեղացն մահ է՝ ։ այլ դու սա-

տա-

սատանայ վասն անուան ուխտին , զի անուն քո՛
սուրբ և սրբութիւն հայր է՛ զորած յաւե-
տարանն , երկիթ և վերա քեր և ամենայն հա-
ւատամ : դ-և-ն ասէ՛ մեծ վերայ ուխտիմ , և
ոչ ոք կարէ խօսել ընդ դէմ նր : ասէ՛
Արդարութիւն օրէ՛ , ասէ՛ սատանայ , մբ
Խորհրդութիւն , որպէս ասէ՛ Յոհնէ .
ա. կթղկց . ե. գլխ . դ. են որք վկայեն
յերկինս , Հայր , Բանն , և Հոգին սբ ,
և սոքայ երեքեանն մինն : Հայր և Որ-
դի և Հոգին սբ աեսին յորժամ այլս այս
գործեաց զմահու չափ մեղքն : և ասէ՛
սատանայ . ա. վերա յերկնից քերի . ա.
վերա այլ յերկրէ քերել , այսինքն ,
խորշ մարդն մեղաւորին , որ վկաէ՛ զի
խնքեան , որպէս ասէ՛ պօղոս հռմց .
ը. գլխ : վկայէ խղճմտանք խորշ մտաց խ-
րեանց , մինչ ասէ Արդարութիւն մեղա-
ւորին և ասէ՛ , թէ սատանայ . ը. վերա
երեքր քեզ , և երկուքն այլ Ճշմարիտք , և
երեքս սուտ ոչ խօսին , վասն վճիռ հա-
տանել զի դու զարքայութիւն կորուսեալ
ես , և արժանաւոր ես դժոխոցն : սա-
տանայ յոյժ ուրախացաւ և մեղաւորն
յոյժ տրտմեցաւ և աղաղակեաց թէ ես
կու երթամ յողորմութեն դ-ի-ւանն , որ
այլ մեծ է՛ և անդ՝ կամիմ խնձ դատաս-
տանն լինի և արժանն է՛ խնձ փրկելով յ ար-

դա

դարութեան ատենէս և երթալ ՚յողոր-
մութեան դիւանն որ բարձրագոյն է՝ քան
զամենայն արդարութիւն ։ վասնզի Յակո-
բոս ՚ի կթղկց ·Բ· գլխ ասէ՝, բարձրա-
գլխ պարծի ողորմութիւն առ դատաս-
տանաւն ։ արդարութիւն կու հաւա-
նի մեղաւորին երթալ առ ողորմու-
թիւն, զի գիտէ որ նա՛ բարձրագոյն է ։
Իսկ ողորմութեան դիւանն խոստովանու-
թիւն է՝ վս զի ողորմութիւն այ՝ այլ ու-
րեք ո՛չ ՚յայտնի այնպէս, որպէս ՚ի
խոստովանութիւն, քանզի յորժամ խոս-
տովանի ճշմարտութեամբ և առնու զարձա-
կումն ՚ի նմին ժամու արձակի և ազատի
՚յամենայն մեղաց իւրոց թէպէտ և բա-
զում իցէ, վասնզի ասէ՝ մեղաւորն,
Ես կու երթամ ՚ի խոստովանութիւն զի
անդ՝ դատեցայց ։ և յոյժ դժո՛ւար
թուի այս սատանայի, զի գիտէ՝ թէ
մեղաւորն ճշմարիտ խոստովանի փրկի ՚ի
ձեռաց իւրոց, և խափանի դատախազու-
թիւն սատանայի ։ յայնժամ այլ հնարս
իմացաւ սատանայ, և առնէ այնպէս,
որպէս առնեն նենգաւորք ՚ի դատաս-
տանս աշխարհիս, զի յորժամ տեսանէ
թէ ո՛չ կարէ յաղթել զթշնամիս իւր՝
առաքէ առ նա՛ ոմն սուտ բարեկամ,
որ երթեալ խօսի ՚ի կողմանէ նրա, և ապա՛

չար խրատով խաբէ զնա, այնպէս սա-
տանայ առաքէ առ մեղաւորն . Է. սուտ
բարեկամս, որք երթեալ խաբեն զնա և
խրատ տան նմա ոչ խոստովանիլ . Ը.
սուտ բարեկամ է՛ ամօթն, ամօթս այս
խօսի ընդ մեղաւորին՝ ես քո բարեկամ
եմ, և զքո հարկերդ կուզեմ, թէ խոս-
տովանիս՝ քո հարկերդ կորընչի, և խիստ
ամօթօվ մնաս, թէ յաղբանոցն և՛ յայլ
գարշելի տեղ էիր անկեալ մին պահ ոչ
կարէիր յայտնել զայն ծնօղաց քոց, և
արդ՝ այժմ անկեալ ես 'ի պոռընկութեն
յաղբոցն բազում ժամանակս, որ աղտե-
ղի է՛ քան զամենայն աղբոցն և զտիղմն,
և այժմ կամիս առաքել և բացուել ա-
ռաջի քահանային : յանժամ 'ի տարա-
կոյս անկանի մեղաւորն, և ասէ՛ խոս-
տովանիմ, թէ չխոստովանիմ : վայ թէ
խելք ունի հնարք առնէ և ասէ՛ ինձ մին
Ճշմարիտ և սիրելի բարեկամ պիտոյ է՛ որ
ինձ խրատ տայ : և այս է՛ խրատիչ մեր
Ոգին, որ անյապաղ և առանց վարձու
գայ առ մարդն, որ խնդրի է՛ զնա, որ-
պէս ասէ՛ Ած : զեկեռանիմ բացի և առի
զՈգի : վայն հարկ է՛, որ այնպիսի պա-
հու, յորում մեղաւորն կարծէք ունի՝
աղաչեսցէ զմեր Ոգին ասելով՝ ո՛վ մեր
Ոգի դու որ Ճշմարիտ բարեկամ ես,

խրա-

խրատեմ զքեզ որպէս արարից , մի՛ ամօ_
թոյս՝ թողուլ զխոստովանելն , թէ ոչ :
յայնժամ Ոգին սբ ասէ՛ ՚ի սիրտ մեղաւո_
րին քեզ պատշաճէ՛ որ փութով խոս_
տովանիս և այդ ամօթդ որ ունս քեզ է_
կեալ է՛ սուտ բարեկամ է՛ քո և ոչ կամի
զքո հաւրեն և շահն : այլ կամի զքեզ խայ_
տառակել , զի թէ այժմ ոչ խոստովա_
նիս՝ ՚յաւուրն դատաստանին առաջի ամց ,
և հրեշտակաց և մարդ և ամենայն արա_
րածոց նախատեսալ խայտառակիս : և
գիտեմ զի Քս ոչ է՛ եղեալ խոստովանա_
հայր զհրեշտակն՝ որ անմեղ է՛, թէ պար_
տէր ամաչել քեզ և ոչ խոստովանել ա_
ռաջի նր : այլ եղեալ է՛ Քս խոստովա_
նահայր զմարդն՝ իբրև զքեզ յանցաւոր,
որ ոչ զարմանայ ընդ մեղս քո , և այն_
չափ մեծամեծ մեղքէ լսել՝ որ քոյդ ոչ
ինչ երևի : և ասա գիտեսցի է՛ զի այս
սուտ բարեկամս որ է՛ ամօթն զբանսդուս
արգելու ՚ի խոստովանութէ և ընկենու
՚ի դժոխս : վսն գրեալ է՛ թէ այր ոմն
սբ քարոզէր ժողովրդեան իւրոյ ՚յաւու_
հացին , պաշ ՚ի խոստովանութեն և ոչ
զայլին , և նա յոյժ զարմանայր , որմէ
տեսանէ զսատանայ ՚յեկեղեցին , և հար_
ցանէր զնա զինչ խնդրես աստ , ասէ՛
սատանայս ՚ի քո ժողովրդեն գողութեամ
արար_

արարիր, այժմ դարձեալ զղջացեալ եմ, և յետուեմ բերել զոր գողացայ ։ ասէ՛ զի՞նչ էր գողացեր, ասէ՛ սատանայ յորժամ կամէին մեղք գործել՝ առնի զամօթն ՚ի նոցանէ, որ համարձակ գործեցին զմեղքն ։ այժմ որք կամին խոստովանել՝ դարձեալ տամ ՚ի նոսա զամօթն զի մի՛ խոստովանեսցին ։ յայնժամ գիտաց սրբ հայրն որ ՚ի սատանայէ է՛ անամօթ գործել զմեղքն, և ՚ի խոստովանելն ամաչել, և պատմեց զսոսին ժողովրդեանն, և ամենեքեանն խոստովանեցան ։ և յորժամ այս սուտ բարեկամս, որ է՛ ամօթն ոչ կարէ խաբել զմարդն, յայնժամ գայ երկրորդ սուտ բարեկամն և անուն նորա յոյս երկայնենաց ։ այս սուտ բարեկամս ասէ՛ ՚ի սիրտ մեղաւորին դեռ կորիճ ես և մատղաշ, բազում ժամանակ պիտի ապրիս, այժմ ոչ է՛ ժամանակ խոստովանելոյ, կամ ապաշխարելոյ, յորժամ ծերանաս մերձ ՚ի մահ՝ յայնժամ խոստովանիս ։ Այլ Ոգին սբ, որ ճշմարիտ բարեկամ է՛ ասէ՛ ՚ի սիրտ մեղաւորին, շուտով խոստովանեա՛ զի այդ սուտ բարեկամ է՛ և կամի խաբել զքեզ, և ՚ի կողմանէ սատանայի սա քեզ եկեալ է՛ և կամի սակաւ մի՛ հանգուցանել զքեզ՝

և ՚ի

և ՚ի դժոխսն ՚ի ջուցանել և անվախ-
ճան տանջել չար տանջանօք և չարչա-
րել ։ մի՛ ունենար զյոյս վ̃ս փաղո՛ւեանն,
Թողթէ չէս բաղդում ժամանակաց ։ զի
ո՛չ գիտես , թէ փառին ինչ պատասխանի ։
քան զի բաղդումք անձն ունէին ծերանա-
լոյ՝ յանկարծամահ եղեն ։ մարդ մեղա-
՚ւոր որ յոյս ունի ապրել բաղդում ժա-
մանակս՝ յիմար է՛ , քանզի ո՛չ գիտէ մահն,
որ անկեալ է՛ զինքն , և հանապազ ՚ի մէջ
մահու է՛ , այսինքն , որ է՛ ՚ի մէջ մահու
չափ մեղաց՝ մեռեալ է՛ ։ քանզի թէ մե-
ծատուն ո՛ք տայ ոսկի աղքատ ոմն , և
ասէ՛ երթ՝ և արա՛ վաճառականութիւն ,
և զոր ինչ շահիս ՚ի կէս լինի , իսկ նա՛
զնացեալ զշահն և զգլուխն կորոյս ։
այսպէս առնէ աղքատն երկրորդ և եր-
րորդ անգամն ։ իսկ եթէ ՚ի մեծատանէ
՚յայնմանէ՝ դարձեալ ոսկի և կամ այլ
ինչ կամի առնուլ այս աղքատ մարդս , և
յոյս ունի շահի՝ այնպիսին յիմար է՛ ։ զի
թէ յառաջն զգլուխն ՚ի տեղնէր պահեալ,
ու շահ այլ յաւելեալ՝ իրաւ էր թէ յու-
սայր դարձեալ շահիլ ։ մեծատունս այս
Ա̃Ծ է՛ , և աղքատ՝ մարդս ։ Ա̃Ծ զգլուխք
կու տայ մարդոյն , յորժամ ժամանակ
և կենդանութիւն կու տայ մարդոյն որ
շահեսցնէ , և բաղդում բարի գործք կա-

տա-

տարէ ։ իսկ նմա́ զշահն և զշնորհսն կորու-
սանէ, զի զամենայն ժամանակս իւր
անցուցանէ ՚ի մեղս ; այսինքն, Տղայու-
թիւն, Մանկութիւն, Երիտասարդու-
թիւն, և Ծերութիւն, զի զայս քան ժա-
մանակս առնու ՚յա̃յ և զայսոսիկ ևս
կորուսանէ, վ̃սն թէ յոյս ունի առ-
նուլ ՚յա̃յ զայլ ժամանակն՝ յիմար է՛, զի որ
չափ եւս կորոյս ։ այլ պարտ է՛ երկն-
չել, դուցէ մեռանիցի յանկարծակի, և
անկանիցի ՚ի դժոխքն որպէս ասէ Սղմ։
ա̃րք արիւնահեղք մի՛ հասարակեսցեն զա-
ւուրս իւրեանց ։ յորժամ այս երկրորդ-
սուտ քարոզեալս ո՛չ կարէ խաբել զմար-
դն մեղաւոր ։ Գայ երրորդն որ է՛,
երկնչելն ՚ի ծանր ապաշխարութենէն,
և ասէ՛ ՚ի սիրտ մեղաւորին, դու տկար
մարդես ու բազում մեղքես գործել,
թէ խոստովանիս՝ ծանր ապաշխարանք
դնեն ՚ի վ̃ր քո, և չկարես դիմանալ,
վ̃սն անօգուտ քեզ խոստովանիլն ։ այլ
Ոգին ս̃բ ասէ՛ ՚ի սիրտ մեղաւորին,
շուտով խոստովանեա՛, զի այս երկիւղս
սուտ քարոզեալ է՛ քո, և կամի զքեզ խա-
բել և ՚ի վեր առնուլ ՚ի քեզանէ զթեթև-
բեռն ապաշխարութեան, և բառնալ ՚ի վ̃ր
քո՛ զծանր տանջանք դժոխոցն, այս եր-
կիւղս նման է՛ ։ երկիւղալից ձիոյ կամ ջո-

րոյ

րոյ որ 'ի շքոյն նորոյ , կամ 'յայլ փուչ_
քանն երկնչի և դողդողի , և զձևաւորն 'ի
վայր ձգէ , վսն պարտ է' հարկանել ուժ_
գին զպայմանաւ ձեռն տաձկենականն որ
'ի սատուերէն յանց կենայ : զամենայն ա_
պաշխարութե բեռն զոր խոստովանա_
հայրն դնէ՝ սատուերէ', և ոչ ինչէ' մա_
ահաւորին տանջանս դժոխոցն , որք ներև_
զչերինս են : վասնզի թէ մարմին քո՛ որ
նման է' ձիոյ , կու երկնչի 'յայս սատուե_
րէս՝ ուժգին հա՛ր տաձկենակաւ , այս
ինքն , յիշատակաւ մահուն , որ հեշտու_
թե անցանի : երբէք տեսեալ ես որ խոս_
տովանահայրն վս մեղաց՝ խոստովանո_
ղին զձեռն կամ զատն կտրեալ լինի , այլ
դնէ 'ի վր պահք , և աղօթք , և ողոր_
մութի որ չա՛փ կարէ տանել : ապաու_
րեմն վս երկիւղի ծանրութե ապաշխա_
րութեն ոչէ' պարտ փախչել 'ի խոստո_
վանութէն : յորժամ այս երրորդ սուտ
քարոզկամս ոչ կարէ զմեղաւորն խաբել :
Չորրորդն գայ , այսինքն , երկիւղ մե_
անգամ անկանելոյ 'ի մեղս , և ասէ' 'ի
միւս մեղաւորին , դու սովորեալ ես 'ի
մեղք գործելն , թէ խոստովանիս ոչ կա_
րես պահել զխոստովանութին , այլ դա_
ձեալ անկանիս , 'ի մեղք , և յորժամ յետ
խոստովանութեն այլ մեղք գործես ծան_

րա_

րագոյն լինի քո մեղքն վասնզի լսէ քեզ չխոստովանիլ ։ Ըստ Ոսկին սբ ասէ՛ ՚ի նորա մեղաւորին, թէ այս երկիւղս սուտ քարոզեալ է՛ քո, և կամի խաբել զքեզ դու մի՛ երկնչիր զի խոստովանութիւն հաստատէ զսիրտ մարդոյն ընդ դէմ սատանայական փորձութեանցն, վասնզի ասէ՛ Սղմ ես կամօք իմօք խոստովան եղէց նմա, Տր զօրութի ժողովրդեան իւրոյ տացէ ։ զայս ցուցանէ, թէ ՚ի կամաւոր խոստովանութեն ՚յայ զօրութի առնու ժողովուրդ քրիստոնէից կալ ընդ դէմ փորձութեանց սատանայի ։ Յուդա՛ մակաբայեցի յոյժ յաղթող և զօրաւորէր ընդ դէմ թշնամեաց ։ Յուդա՛ խոստովանութի թարգմանի, յայտնանէ երևի թէ խոստովանութիւն մեծ պատերազմող է՛ և յաղթող ընդ դէմ դիւաց, յորժամ այս սուտ քարոզեալս ոչ կարէ խաբել զմեղաւորս ։ Հինգերորդն զայ, այսինքն, թեթևութի մեղացն, և ասէ՛ ՚ի նորա մեղաւորին, թէ քո մեղքդ է՛ ներելի և թեթև առանց խոստովանութե դու կարես սրբել ։ Ըստ Ոսկին սբ ասէ՛ ՚ի նորա մեղաւորին, մի՛ հաւատալ այդ նենգաւոր խրատու սուտողիդ, այժմ թեթևացուցանէ զմեղս քո, այլ ՚յօր մահուն յոյժ ծանրացուցանէ և մատնէ

զքեզ ։ զի թէ ոք փոքր մահու չափ մե-
ղօք յերկնիս լինի՝ այնպէս ծանր է՛, որ
բովանդակ ամենայն երկինքն ոչ կարեն
զնա՛ բառնալ այլ անկանի ՚ի վայր որպէս
և սատանայ անկաւ ։ և թէ ա̄յ ողորմու-
թին ոչ խնայէր՝ յորժամ ոք գործէր զմա-
հու չափ մեղս՝ պատառէր երկիրս և կլ-
նոյր զնա՛, և ամենևին ոչ կայ փրկութի̄
առանց խոստովանութե̄՝ յորժամ հնար
է՛ խոստովանել ։ վասնզի գրեալ է թէ պա-
տառ կին մի մահու չափ մեղք էր գոր-
ծեալ, և ոչ կամէր խոստովանել, այլ
երթայր ՚յ եկեղեցին և լայր դառնա-
պէս, զի սրբեսցի մեղքն իւր, և դիւա-
հար մի՛ էր անդ՝ յոյժ ծիծաղէր, և զնա
եհարց պատճա՛ռն թէ զինչ ծիծաղիս,
ասէ՛ զքեզ ծիծաղիմ որ առանց խոս-
տովանութե̄ կամիս սրբիլ ՚ի մեղացդ,
զի եթէ ծովու չափ Ջուր արտասուք
հանես չե̄ս քո՛ մեղացն և ոչ խոստովա-
նիս՝ ոչ առնուս թողութի̄ ։ զայս դևն
ասաց բերանով դիւահարին ։ Իսկ վար-
դապետք ասեն, թէ յորժամ դնէ ՚ի միտս
իւր մեղաւորն զխոստովանելն, ՚ի նմին
ժամու թողութի̄ լինի մեղաց իւրոց ։
վասնզի գրեալ է՛ ՚Ղուկասու . ԺԵ. գլխն ։
թէ Ք̄ս ցտասն բորոտսն ասաց, եր-
թայք ցուցէք զանձինս քահանայիցն և ե
ղև

զի ներքին զհնացեն առժամայն սրբեցան։ այսպէս որոյ հոգին զօդեցեալ է և բո-րոտեալ մահու չափ մեղօք՝ յորժամ զղ-ջանայ և ՚ի մտի դնէ զխոստովանիլն յայնժամ սրբի մեղք նր։ վասն զի ասէ՛ Դա-՚ւիթ ։ ասացի , այսինքն , ՚ի մտի եդի , թէ խոստովանեցայց ըստ դէմ իմ զմեղս իմ և դու թողցես զամենայն ամբա-րշտութիւս մեղաց իմոց ։ և թէպէտ մա-հու չափ մեղքն մեղաւորին սրբի , ունե-լով ՚ի միտս զկամս խոստովանութէ , այլ դեռ ևս պարտական է՛ երթալ խոստո-վանիլ քահանայեն , քանզի Գիր ՚ի Մ՝ատթէ . ը. գլխ ։ և Մ՝րկս . ա. գլ. և Ղ՝ւկս . է. գլ. որ սրբեաց զայր ոմն բո-րոտ հրամայեաց երթալ առ քահանայն և ցուցանել զինքն ասելով այսպէս՝ երթ-ցոյց զանձն քո՛ քահանայեն , այսինքն , թէ երթ և խոստովանս լեր զմեղս քո՛ ։ Նու յորժամ այս . է. սուտ բարեկամքս ո՛չ կարեն խաբել զմարդն՝ նա երթա՛ և խոստովանի զմեղս իւր , յայնժամ սատանայ յոյժ տրտմի՛ և բարկանայ , և վասն ՚յ ողորմութէ ատեանն և ասէ՛ այս մարդս ՚ի մահու չափ մեղս է՛ դատա-պարտեա՛ զսա , զի ՚յ արդարութէ ա-տեանն դատապարտեցին զդա՛ երթալ ՚ի դժոխքն ։ Ողորմութին ասէ՛ ցատա-

նայ ստուգիւ հաստատեալ և վկայ քեզ
Թէ է՛ ՚ի մահու չափ մեղս ։ սատանայ
ա͞կխն տայ վկայէ՛ Տ͞Ր ։ յայնժամ Ողոր-
մութիւն նուաճ առնէ զսատանայ ասելով
Թէ զայս մարդոյս մեղքն որ խոստովա-
նեալ է՝ ես չեմ գիտացեալ յայն կողմանէն
որ դատապարտեմ զդա՛, վ͞ս զի կամնոք
եմ եդեալ ձեռամբ Եզեկիէլի մարգարէին
ԺԸ. գլխն որ ասէ՛ Թէ անօրէնն դար-
ձցի ՚յ ամենայն անօրէնութեանց իւրոց զոր
արար՝ կեցով կեցցէ, և ամենայն անի-
րաւութիւնք իւր մի՛ յիշեսցին ։ և ո՛չ ո՛ք ՚ի
հրեշտակաց և ՚ի սրբոց իշխէ վկայել այն
մեղացն, որ ճշմարտութ͞ե խոստովանեալ
է՛ ։ և այսպէս մեծ է՛ խոստովանութե͞ն
խորհուրդս առաջի ա͞յ, որ Թէ գլխաւոր
հրեշտակն վկայութե͞ն տայր վ͞ս ճշմա-
րիտ խոստովանեալ մեղացն, արտաքսէր
զհրեշտակն զայն ՚յ արքայութե͞ն ։ և
յորժամ սատանայ ո՛չ գտանէ վկայ և
յամօթ լինի՝ յայնժամ հրաման տայ ողոր-
մութիւնն՝ խոստովանահօրն որ է՛ երես-
փոխան իւր զի ազատեսցէ զմեղաւորն,
և խոստովանահայրն ազատէ զմեղաւորն
՚ի սատանայի դատէն ասելով Ողորմեսցի
քեզ հզօրն և մարդասէրն Տ͞Ր, և Թո-
ղութի շնորհեսցէ ա͞մ յանցանաց քոց,
խոստովանեցելոցն և մոռացելոցն ։ և ես
՚ի կար-

՚ի կարգէս քահանայութեան եւ իշխանու-
թեան Ածային հրամանացն, թէ զոր ար-
ձակիցէք ՚յերկրի՝ եղիցի արձակեցեալ
՚յերկինս ։ Նոյն բանիւն՝ ես արձա-
կեմ ✝ զքեզ ՚յամ մասնակցութենէ մեղաց
քոց, ՚ի խորհրդոց, ՚ի բանից, եւ ՚ի գոր-
ծոց, Յանուն, ✝ Հօր, եւ Որդւոյ,
եւ Հոգւոյն սրբոյ ։ Ամէն ։ Եւ դարձեալ
տամ զքեզ ՚ի խորհուրդ մեր Եկեղեցւոյ՝
զորինչ գործեսցես, եղիցի քեզ ՚ի բարե-
գործութիւն, եւ ՚ի փառս հանդերձեալ
կենացն ։ Ամէն ։ Եւ այսպէս ազատի մե-
ղաւորն ՚ի մեղաց եւ ՚ի սատանայէ՛, եւ
արժանաւոր լինի արքայութեանն ։ Դեւքն
տրտմին, եւ հրեշտակքն ուրախանան
՚ի վր այսպիսի մեղաւորի որ ապաշխա-
րոյ ։ Եւ Քի փառք յաւիտեան ։
Ամէն ։

ԳԼՈՒԽ Զ.

Վն Ապաշխարութեան:

ԱՅԺՄ ԵԿԵՍՑՈՒՔ յերրորդ մասն ճանապարհիս, որ ապաշխարութեան է՝ այսինքն հատուցումն, և այս են .գ. միլ է՝ վն զի .գ. կերպիւ կարէ ոք զհոգևոր պարտս իւր վճարել, այսինքն, պահօք, աղօթիւք, և ողորմութեամբ: և թէ ոք կատարելապէս քաւէ աստ զմեղս իւր, պահօք և աղօթիւք, և ողորմութեամբ, ոչ միայն ի դժոխոցն ազատի այլ և ի քաւարանէն, և ի նմին ժամու թռչի յերկնից արքայութիւն: բայց այս .գ. միլ ճանապարհս խիստ դժուար է՝ և քիչ մարդ գտանի որ զիւր պարտքն իսկան աստ վճարել կարէ՝ պահօք և աղօթիւք և ողորմութեամբ: և որք ոչ կարեն աստ իսկան վճարել վասնայ նորին զմնացորդն ի քաւարանն վճարեն: Կա աստ գիտելի է՝, զի խոստովանահայրն կամ մեռելի դնէ զկանոնն ապաշխարութեան ի լի խոստովանողին քան զոր պարտէր դնել, և կամ համատար ըստ

չա-

չափիւ մեղացն, և կամ փոքր քան զմե-
ղքն, և որ յանձն չառ և կատարեաց
զմեծելի ապաշխարութիւն, ամենևին
ազատեցաւ ՚ի քաւարանէն և ՚յաւելեալ
ապաշխարանքն կազմի նմա պսակ ՚յեր-
կինս: Եւ թէ հաւասար ընդ պատժոց
քաւարանին՝ կատարելապէս ազատեալ
է՛ ՚ի քաւարանէն, նա՛ թռչի ՚յերկինս:
Եւ թէ սակաւ ո՛չ ազատի ՚ի քաւարանէն
մինչև վճարեսցէ: Բայց այս սուղ
անզգամ հանդերձ որ մեծ քան զմեղքն
լինի ապաշխարանքն կամ հաւասար,
այլ սակաւ դնել զապաշխարութիւն հա-
սարակ սովորութիւն է՛, զի լաւ է փոքր ա-
պաշխարութիւն առաքել զնոսա ՚ի քա-
ւարանն, քան թէ մեծ ապաշխարութի
յուսահատ առնել և առաքել ՚ի դժոխս:
Եւ աստ՝ հարցումն լինի թէ զատ ՚յայս
երեք մի ճանապարհս, որք են պահք,
աղօթք, և ողորմութի, կայ՞ այլ ինչ՝ որ
այնու քաւեն զմեղս և փրկեն ՚ի քաւա-
րանէն: Պատասխանեմ և ասեմ այո՛ է
այլ ինչ բազում, որով քաւի պատիժ
մեղացն, և լինի օգնական վճարել զիւր
մեղաց պարտքն: և գիտելի է՛, զի թէ
այս ·գ· մի ճանապարհս որ ասացաք,
պահք, աղօթք՝, և ողորմութի թէ դժո-
ւարին է՛ ումեք, քանզի անկար է՛ կամ

 աղ-

աղքատ, կամ մի այլ ուրիշ պատճա_
ռն ։ Ուրիշ այլ . Դ. մին կայ կարճ և
հեշտ, որովք կարէ դիւրութ̅բ հաստա_
տանել զպարտս իւր և ենն պարտքին . Ա̅.
զի ջանայ ո՛չ զայլս ՚ի քարիս յորդորել ,
քանզի ասեն թէ էր ոմն յոյժ մեղաւոր
և զղջացեալ եկն առ խոստովանահայրն,
և ասէ՛ մօտէ որ ես յուսահատիմ մ̅ն
բազում մեղաց իմոց՝ և այսէ՛ պատ_
ճառն , զի ես բազում մահու չափ մեղս
եմ գործեալ և վարդապետք կու քա_
րոզեն թէ մ̅ն ամէն մին մահու չափ
մեղացն . Է. տարի ապաշխարել պարտ
է՛ , և ես երբ կարեմ վճարել զիմ ա_
պաշխարանքն ։ տայց նմա խոստովա_
նահայրն քա՛ւ լիցի քեզ ՚յուսահա_
տիլն , մի՛ յուսահատիր՝ այլ զոր տաս
ո՛չ կարես վճարել՝ ՚ի քաւարանն վճա_
րես, նմա տայց եղուկ ինձ , զի ես կար_
ծէի մխիթարիլ ՚ի քէն , և դու կրկին խռո_
վեցեր զիս, զի եթէ համարեմ զմեղս իմ ,
և մ̅ն ամենայն մեղաց իմոց . Է. տարի ՚ի
քաւարանն մնամ՝ երբ կարեմ վճարել ,
և մանաւանդ թէ նոյն հուրն է՛ ՚ի դժո_
խս , որ է՛ ՚ի քաւարանն ։ յայնժամ խոս_
տովանահայրն գթացաւ ինմա՛ և ասէ՛ ,
մի՛ երկնչիր , ես զայլ կարճ ճանապարհ
քեզ ցուցանեմ, ուրախութով կարես վճա_
րել

րել զքո պարտքն , և այսու օրինակաւ
ցուցից քեզ ։ զի թէ ոմն տանուտ͞ր , որ
ունի . ռ. բեռուին արտ հնձելոյ՝ թէ ինքն
միայն սկսանի հնձել՝ յուշ կարէ վճա-
րել , այլ թէ զբազում մշակս բերէ 'ի
հունձս իւր՝ շուտով վճարէ։ վ͞ս այս հն-
ձոցս յիշէ ա͞ւետարանն , թէ հունձք բա-
զումք են և մշակք սակաւք՝ աղաչեցէք
զՏ͞ր հնձոցն , զի հանցէ մշակս 'ի հուն-
ձս իւր։ հոգևոր հունձքեն ամենայն բա-
րի գործքն , որք աստ լինին , այսինքն , խոս-
տովանութի , և ապաշխարութի և այլքն ,
և որ յորդորէ զմեղաւորս դառնալ 'ի
մեղաց , և գործել զբարին՝ այնպիսին
զբազում մշակս բերէ 'ի հունձս իւր ։ զի
թէ զոք 'ի չարեաց դարձուցանես և 'ի
բարիս յորդորես՝ 'յամենայն բարութե
զոր առնէ նա՝ դու մասն և բաժին առ-
նուս , և 'յայնժամն է՛ կարես վճարել
զպարտս քո ։ և արդ՝ եթէ դու զբա-
զումս յորդորես 'ի բարիս 'ի խոստովա-
նութի , և 'յապաշխարութի որք հունձք
հոգևորք են նոքայ օգնականն լինին քեզ՝
և ազատեն զքեզ 'ի պարտուց ։ յայնժամ
այրն յոյժ ուրախացաւ և յոյժ ուրախու-
թե՛ն եղաց ։ ապաուրեմն 'յայսմիկ է՛ զմե-
ղաւորս դարձուցանել 'ի մեղաց՝ և յոր-
դորել 'ի բարիս յոյժ օգուտ է՛ և կարճ

ճա-

ճանապարհ ։ Եւ այս հաստատեն բազում կերպիւ, նախ զի թէ ո՛չ խնդրէ ՚ի մեծութեն և ՚ի բարձրագոյն աստիճան հասանել ; ՚յեպարքոսութեն, կամ ՚ի թագաւորութեն ո՞չ առաւել օգնական լինի նմա հասանել ՚յայն պատիւն՝ զայն առաւելագոյն սիրէ ։ Եւ Տէրն մեր Յ͞ս Ք͞ս վ͞ս փրկութե հոգւոց եկն ՚յաշխարհս, և զոր ինչ արար զամենայն վ͞ս օգտութե հոգւոց արար, վ͞նզի ասէ՛ ո՛չ եկի կոչել զարդարս այլ զմեղաւորս ։ Եւ դարձեալ ասէ՛ եկն որդի մարդոյ խնդրել զկորուսեալն, այսուրեմն որ զփրկութի հոգւոց առաւել կամի և յորդորէ զմարդիկ ՚ի մեղաց դառնալ՝ առաւել սիրեցեալ լինի ՚ի Ք͞է ։ Երկ͞դ զի թագաւոր ո՛չ առնիցէ ընծայիս, և հրամանիւս առաքեսցէ և ասասցէ, թէ ո՞վ ոք, որ զբազում մարդիկս բերէ ՚ի թագաւորն պատիւն, առաւել սիրեսցէ զնա թագաւորն ։ Իւրաքանչիւրոք ջանայ զբազում տանել ՚յընծայիս թագաւորին զի առաւել սիրեսցի ՚ի թագաւորէն ։ Այսպէս Տէրն մեր Յ͞ս Ք͞ս՝ թագաւորն թագաւորաց ընծայիւ է՛ պատրաստեալ ՚յերկնից արքայութեն և որ մեծի և բազում մարդիկ տանի ՚յընծայիս երկնից արքայութեն առաւել սիրեցեալ լինի

՚ի Ք͞է

՚ի քէ զի զբազում յորդորութեանց ՚ի կեանս, վասնզի պարտ է՝, զի իւրաքանչիւրոք Ջանասցէ զբազում յորդորել ՚ի բարիս, զի առաւել սիրեսցի ՚յա̄յ: Երրորդ զի բարութին զօրաւորագոյն է՝ քան զչարն, և Ա̄Ծ ողորմած է՝, պատրաստ է՝ վարձս բարեաց հատուցանել՝ քան թէ տանջանս և պատիժս: և ՚ի կողմանէ չարին այսպէս է՝ զի թէ ոք զայլ ոք ՚ի չարիս ընկենու զոր օրինակ ասէ՝ թէ թշնամին քո աստ է՝ վրէժ խնդիր լեր և սպան զնա և թէ վ̄ս բանի ն̄ր սպանանէ զնա, այնպիսի խրատողն խիստ մեծ մեղս առնէ, թէ-պէտ ինքն ն̄ր ձեռօքն ոչ եսպան՝ պա-տիժ առնու ՚յա̄յ, զի պատճառ եղև մեղացն: ապաուրեմն ՚ի բարութ̄ե կողմա-նէն թէ ոք յորդորէ՝ և խրատէ զայլ զայն ՚ի բարի գործս ՚ի զղջումն և ՚ի խոստովա-նութ̄ի՝ այն բարութին նմա առն, զի նմա եղև պատճառ բարեաց ն̄ր, բազում առնու վարձս ՚յա̄յ, վասնզի ասէ՝ Յակոբոս կ̄թղից. Ե. գլ̄խ: Եղբարք իմ եթէ ոք ՚ի ձէնջ մոլորեսցի ՚ի ճշմարտութ̄է և դար-ձուցանէ ոք զնա, գիտել պարտէ զի որ դարձուցանէ զմեղաւորն ՚ի մոլորութ̄ե ճանապարհէ իւրմէ փրկեսցէ զհոգի ն̄ր ՚ի մահուանէ և ծածկեսցէ զբազմութ̄ի մեղաց: Չորրորդ վ̄ս զի Ա̄Ծ սիրէ

զօր-

զորսն , որպէս Իսահակն որ ասաց ցԷ-
սաւ անդրանկին իւր ա՛ռ դու զգործիս
զաղեղն և զկապարճ և ե՛լ ՚ի դաշտ և
որսա ինձ որս և արա՛ ինձ խորտիկս որ-
պէս սիրեմ զի կերայց և օրհնեսցէ զքեզ
անձն իմ որպէս ասէ՛ ծննդոց . իէ . գլխ ։
այսպէս Ք͞Ս ասէ՛ ընդ քրիստոնեայս , որք
են որդիք իւր երթայք որսացէք զմարդիկ
՚ի կեանս և կազմեցէք ինձ խորտիկս , և
օրհնեցից զձեզ ։ Իսկ Իսահակն յոյժ բա-
զում ունէր հոտս խաշանց , այլ համեղ
թուէր նմա միս որսոյն , նոյնպէս Ք͞Ս
յոյժ փարթամէ՛ ՚յ երկինս , զի բազում
ունի հոտս զդասս հրեշտակաց և Սրբոց ,
այլ յոյժ ուրախանայ յորժամ որսա՛մ ո՛ք
զմեղաւորս ՚ի կեանս , և որ չա՛փ որսն
գեղեցիկ լինի և մեծ առաւել ուրախա-
նայ Թագաւորն Ք͞Ս ։ Պողոս յոյժ գե-
ղեցիկ և մեծ որսէր իբրև զեղն , վասն
մեծ ուրախութիւն եղև վ͞ս դարձման նո͞ր
՚յ երկինս ա՛ռ հրեշտակս և ընթանուք
ամենայն եկեղեցոյն՝ ։ Բայց վ͞ս անբան
որսոց՝ յոյժ հոգան մարդիք , զի եթէ
որս ինչ գայր առա՝ ամենեքեան ընթա-
նային փութով , և իւրաքանչիւրոք ՚ի
նոցանէ ջանայր թէ ինքն ըմբռնեսցէ
զորսն ։ Արդ՝ բազում բանականս որս
կայ առա , այսինքն , այր մեղաւոր և

ար-

արբեցող, կամ պոռնիկ, և ոչ որք որոց զնոսա բարի խրատով և բերէ ՚ի խոստովանութիւն, և ՚ի միաբանութիւն ։ Յայսմանէ լինի թէ մարդիկ ոչ լինին նման որսորդչանց, որք յորժամ նշմարեն զորսն թռչնոց զհետ, այլ լինին նման վաճառականչանց, որք ոչ կամին որսալ, այլ սիրեն զհաշտեալս, և զխաղաղեալս, այսինքն, բամբասանս և զրպարտանս զմարդիկ ։ Ապա ուրեմն երևի թէ այս ճանապարհս կարճ է՛ և բարի, զի բառնայ զպատիժ մեղացն և ազատէ զմարդն ՚ի բռնակալանէն, կս̄ նորայ, որ դարձուցանէ զմեղաւորն ՚ի չարեաց և յորդորէ ՚ի բարիս, կամ բարի խրատով, կամ օրինակ բարի տալով ։ Եւ աստ գիտելի է՛ զի թէ ոչ զբազում մեղս գործեալ է՛, և զբազումս յորդորեալ է՛ ՚ի մեղս և զբազում հոգիս կորուսեալ, կամ օրինակ չար տալով, և կամ չար խրատ, և կամ առաջնորդ գոլով ծուլացաւ յիւր գործոյն, նմա ոչ է՛ բաւական միայն զղջալ, և խոստովանիլ զմեղս իւր, այլ և ս պարտի խոստովանիլ կս̄ այնոցիկ՝ զորս ձգեալ է՛ ՚ի մեղս, և կս̄ բազում հոգւոցն զոր կորուսեալ է՛, բան զի Ած̄ խնդրէ զնոսա ՚ի ձեռաց նր̄ ։ Այլ աստ՝ հարցումն լինի թէ զի՞նչ կանոն պարտէ՛ դնել

խոս-

խոստովանահայրն ՚ի վր այնպիսոյն և
թէ քահանան է՛ նման մայոյն պահք և
աղօթք, և ողորմութիւն ։ Պատասխանեմն
վարդապետք և ասեն թէ ոչ է՛ քահա-
նան, քանզի թէ ոք ունի ՚ի գլխն ցաւ,
և զդեղն դնէ ՚ի վր ոտիցն՝ յիմար է՛
այնպիսին, վս զի պարտ է՛ ուր ցաւն է՛
անդ՝ դնել զդեղն ։ Դարձեալ որ կո-
րուսանէ զդրամս իւր և մեղաւորս ցանէ,
և խոստովանահայրն հրամայէ նմա պահք
կենալ՝ ոչ կարէ առողջացուցանել զնա,
քանզի նր հիւանդութիւն թիկանցն վր
է՛, վս զի մեղաւորոյ ՚ի հանդերձից զթի-
կունս մարդկան ։ իսկ նա զդեղն դնէ
՚ի վր կրծոյն, այսինքն, զպահքն որք
թուլացուցանեն զխիղճն ։ այլ՝ որպէս
ասացաք, ուր ցաւն է՛ անդ՝ պարտ է՛
դնել զդեղն, զի թէ մեղաւորոյ զմար-
դիկք՝ դարձեալ պարտի զգեցուցանել
զնոսա և զորինչ յափշտակեալ է՛ կամ
գողացեալ՝ պարտի յետ դարձուցանել
զնոսա ՚ի տեարս իւրեանց ։ քանզի ոչ
թողանին մեղքն մինչ յետս ոչ դարձնին
առեցեալքն ։ և գողութիւն ․ Բ․ ազգ է՛
հոգևոր և մարմնաւոր ։ հոգևորն ծան-
րագոյն է՛, և այն է՛ որ զմարդիկ ՚ի մեղս է՛
յորդորեալ, գող է՛ որ զմարդիկ յափշ-
տակեալ է՛ ՚յայ գանձատանէն, վասն ոչ է՛
նմա

նմա՛ միայն քա՛ւականն պահօք, և աղօ_
Թիւք, և ողորմուԹբ քա՛ւել զմեղս իւր,
այլ պարտ է՛ դարձեալ գտանել զկորու_
սեալ հոգին յորդորելովն ՚ի բարիս, և
դարձուցանել զնոսա ՚ի գանձն այ, վս զի
՚ի խնդրեցէքն. Ծա. զինս գրեալ է զի գի_
տասցեն Թէ որովք մեղանչէ ոք նոքիմբք,
և տանջի: դարձեալ Թէ ոք զուր ասե_
լով և վասն անուան առնէ զոք, ոչ է՛ քա_
՛ւական նմա՛ պահօք և աղօԹիւք, ա_
պաշխարել, այլ պարտի ջանալ բարի
համբա՛ւել զանուան նր, և դարձեալ ող_
ջացուցանել զոր բեկեալ կոտորեաց: վս
զի մեծ ինչ գողացաւ, այսինքն, զբարի
անուան նր որ պատո՛ւականն է՛ քան զոս_
կի: և. Թէ ոք ոչ կարէ զնոյն հոգին զոր
յափշտակեաց ՚յ այ, դարձուցանել՝ զի՞ն չ
արասցէ՛: Պտխնի Թէ պարտ է՛ զնոյն
հոգին դարձուցանել առ Քս զոր կո_
րոյս, որ չափ հնար կարէ գտանել, և
Թէ ոչ գոյ այլ հնար՝ քան զի մեռան
այն անձինքն, կամ հեռացան, նմա՛ զայլ
հոգիս պարտի դարձուցանել առ Քս:
դարձեալ գիտելի է՛ զի ոչ է՛ արժանի
երկնից արքայուԹեն այն՝ որ վս այ սի_
րոյն այնչափ ոչ կամի աշխատիլ, որ
չափ աշխատեալ է՛ վս սատանայի և
աշխարհի սիրոյն, քանզի Պօղոս զայս_
պէսն

պիտի կանոնս դնէ 'ի վ̅ր մեղաւորաց , Թէ որ չամի աշխատեցան վ̅ս սատանայի և աշխարհին նոյնպէս պարտին աշխատիլ վ̅ս ա̅յ սիրոյն , որպէս ասէ՛ Հռովմ. զ̅. գլխ. մարդկօրէն ասեմ վ̅ս տկարութե մարմնոյ ձերոյ , զի որպէս պատրաստեցիք զանդամս ձեր ծառայս պղծութե և անօրէնութե 'յանօրէնութի, նոյնպէս և այժմ պատրաստեցէք զանդամս ձեր ծառայս արդարութե 'ի սրբութի . զայս կամի ասել Պօղոս , Թէ ես փոքր ասացի , այլ այս է՛ ճշմարիտ որ առաւել աշխատիլ պարտի վ̅ս ա̅յ սիրոյն , քան վ̅ս աշխարհի և մեղաց , այլ վ̅ս ձեր տկարութեդ զայս չամի կանոնս դնել . ապաշխարեմն որպէս վ̅ս սատանայի և աշխարհին աշխատեցաք , և զբազումս խաբեցեր 'ի մեղս , և զբազումս կորուսեր հոգով և զբազումս յորդորեցեր 'ի չարիս բանիւ և գործով . այսպէս վ̅ս Ա̅յ և վ̅ս արդարութե պարտիս աշխատիլ , և փոխնակ զորս կորուսեր կամ զնոսայ , կամ զայլս պարտիս գտանել յորդորելովդ 'ի բարին . և Թէպէտ վ̅ս ուսման բազում հոյես աշխատեալ և ուսեալ զարտաքին հանճարն այսու ամենայնիւ Պետրոս ա̅ռքյն վ̅ս բազում իմաստութե քոյ զերկնից արքայութե

դուռն

դուռն այնչափ ոչ բանայ, որ թէ կա-
մենաս ասօք միայն հայիլ 'ի ներս ։ ա-
պաշուրեմն պիտոյ է' քեզ այնչափ աշխա-
տիլ վ̅ս սիրոյ երկնից արքայութեն, և
հոգևոր գիտութեն՝ մինչև բացցի քեզ
դուռն արքայութեն երկնից վերնոյն Երու-
սղէմի ։ Երկրորդ միջն է' որով բանի մե-
ղքն և ազատի 'ի քաւարանէն պահօք,
և աղօթիւք, և ողորմութբ, յորժամ ոք
տուանել հառաչմամբ հեծեծելով, և
ցանկագին սրտիւ արտասուելով աղօթէ
առ Տ̅ծ շուտով բանի մեղք նր̅ և ազա-
տի 'ի քաւարանէն ։ և այս ցուցանի ․ է̅․
օրինակաւ ։ առաջինն որպէս ասէ' Պօ-
ղոս վ̅ս Մարիամ Մագդաղենացւոյն,
որէր յոյժ մեղաւոր, այլ այնպէս ցանկա-
գին արտասուեաց, և Ք̅ս արձակեաց
զնա 'ի մեղացն և 'ի պատժոցն, որ թէ
'ի նմին ժամու մեռանէր՝ նա ոչ էր տե-
սեալ զերեսս դժոխոցն և կամ քաւա-
րանին, որպէս ասէ' Ք̅ս Թողեալ լիցին
սմ մեղք իւր բազում՝ զի յոյժ սիրեաց ։
և որպէս Ջուրն որ 'ի խորոյ վիմէ, և 'յա-
պառաժի վայրէ բղխէ գեղեցիկ լինի ։
այսպէս արտասուքն որ 'ի քարացեալ սր-
տից մեղաւորաց բղխէ, որք են 'ի խո-
րութի մեղաց, այնպիսին գեղեցիկ է'
առաջի այ̅, և շուտով հասանի առ Տ̅ծ,

 որ-

որպէս ասէ՛ Ա͞ծ իմ եղիր զամբաստանս իմ
առաջի քո ։ Նորկորդն ցուցանի դար-
ձեալ ՚ի Ղուկաս ․իդ․ գլխ աջակողմ Ա-
ւազակին , որ այնչափ ցանկեցաւ սիրոյ
ն͞ր վ͞ս մեղաց իւրոց , մինչ Ք͞ս ասաց
ցնա՝ այսօր ընդ իս իցես ՚ի յարքայութեն ,
եւ զայս բանս Ք͞ս ո՛չ էր ասացեալ ընդ-
նմա , թէ ո՛չ Աւազակն ցանկացեալ էր սր-
տով զամենայն պարտս իւր վճարեալ
էր , քանզի ասէ՛ Տ͞րն ՚ի յաւետարանին ,
թէ ո՛չ ելանիցես անտի՝ մինչեւ հա-
տուցանիցես զյետին քոդրանտն ։ եւ այս ա-
ւազակս յոյժ խոստովանէր , զի ո՛չ թէ
ինքն միայն եկն ՚ի յապաշխարութիւն , այլ
եւս քարոզէր ընկերին իւրում գալ ՚ի յա-
պաշխարութիւն , վ͞ս այն պատճառին շու-
տով քաւեաց զմեղս իւր , եւ յորժամ ե-
տես Ք͞ս ըզզղջումն , եւ զջերմութի այս
աւազակիս ասաց նմա՝ այսօր ընդ իմ
իցես ՚ի յարքայութեն ։ եւ թէ ո՛ք մեղա-
ւոր ասէ՛ թէ Ա͞ծ այսպէս որոշած է՛
յամեցից ՚ի մեղս մինչեւ ՚ի օր մահուն ,
եւ յայնժամ զղջացայց ։ պատասխանելի
է՛ նմա , թէ ո՛չ է՛ պարտ զայդ զմտա-
ծել , զի ո՛չ գիտես թէ յորժամ հա-
սանիս ՚ի օր մահուն՝ կարես զղջանալ ,
թէ անզեղջ մեռալ , որպէս ձախակողմեան
Աւազակն , որ մինչ ՚ի մահ մեռաց ՚ի մե-

ղս եւ

ղս , և այնպէս անզեղջ մեռեալ էք ՚ի
դժոխս : Նորոյդ մինչ է՛ որով կարէ քա_
ւել զմեղս իւր , զի Թողցէ զմեղս որոց
մեղան ընդ դէմ իւրն , և այսու շնոր_
հօք կարէ քաւել զմեղս իւր , զի ասէ
Մատթէի . Զ. գլուխ , եթէ Թողուցուք
մարդկան զյանցանս նց՝ Թողցէ և հայրն
ձեր երկնաւոր զյանցանս ձեր : ասէ՛ ոք
Թէ ես ոչ կարեմ Թողուլ զպատիժս պար_
տապանի իմոյ , զի նա խոցեալ է՛ զիս ,
կամ սպանեալ զորդի կամ զեղբայրիմ ,
կամ զիս վնաս անուանէ՛ արարեալ : Պա_
տասխանեմ Թէ դիւրին է՛ Թողութիւն տա_
նել՝ զոր օրինակս հաստատեցուք , այս_
պէս համարեա՛ Թէ ոմն պարտի Թագա_
ւորին , ռ . դեկան և եղեալ է՛ ՚ի բանտի ,
և ոչ ելանէ անտի մինչև զամենայն
վճարեսցէ , և ասիցէ ընա՛ Թագաւորն
ո՞վ մարդ այր ոմն պարտի քեզ . Ժ .
դեկան և Թողի Թէ քեզ ոչ կամիս
վճարել քեզ , և Թէ կամիցիս անձամբ՝
լինի Թէ ա՛ւելի խարճ առնես քան զոր
պարտի , և այսպէս կարես առնուլ , այլ
ես խնդրեմ տամ քեզ՝ զայն պարտքն ինձ
՚ի դէմ այսմ , և ես Թողում քեզ զամենայն
ինչ զոր պարտիս ինձ : այս խնդիր հեշտ
Թողուլ բանդարգելոյն : Թագաւորս
այս նշանակէ զՔՍ , և որ մահու չարչա_

 մե_

մեղանչէ պարտաւորական է՛ տյ ·ա· դեկան,
այլ թէ ո՛ք մեղուցեալ է՛ ումեք այն պար֊
տի նման ·Ժ· դեկան, քանզի մեղք որք
լինին ընդ դէմ Այ՟՝ ծանրագոյնք են քան
զմեղս, որք լինին ընդ դէմ մարդոյ, զի
անչափ մեծ է՛ Ած քան զմարդս ։ վսնզ՟
ասէ՛ Ած ընդ մեղաւորն թէ դու պար֊
տիս ինձ ·ա· դեկան և ո՛չ կարես վճա֊
րել, և որ սպանեալ է՛ զհայր քո՛ կամ զոր֊
դի և կամ զայլ մնաս հասուցեր՝ պարտի
քեզ ·ա· դեկան և լինի թէ ո՛չ կարես
առնուլ ինչ ՚ի նմանէ, զի ո՛չ կարես վրէժ
առնուլ ՚ի նմանէ զի քան զքեզ զօրեղ է՛,
և թէ առնուս վրէժ և սպանանես զնմա՛
ա՛ւելի խառն՞ անկանիս, զի մահապարտ
լինիս, կամ թէ դու սպանցիս ։ Այլ ես
խրատ տամ քեզ՝ զայն պարտքն ինձ, ՚ի
դէմ արա՛ որ ինձ միայն լինիս պարտաւորական
և ես թողում քեզ ·ա· դեկանն՝ զոր պար֊
տիս ինձ, և այս դիւրին է՛ ·զԺ· դեկանն
թողուլ և զհազարն ո՛չ վճարել, և Ած
դիւրաւ կարէ առնուլ ՚ի նմանէ զպար֊
տսն քան մարդն, զի ասէ՛ Պողոս իմ է՛
վրէժ խնդրութի և ես հատուցից ասէ՛
Տր ։ Այլ ասէ՛ ո՛ք թէ ես կու թողում
զպարտս այնոցիկ, որք մեղուցեալք են
ինձ, այս ուխտօքս որ ես վրէժ չառնում
՚ի նոցանէ, ապա՛ թէ այլ ո՛ք չար առնէ
նց

նչ ո՛չ հոգամ ես՝ այլ ուրախ լինիմ։ պա_
տասխանելի է՛ նմա՛ թէ գրեալ է՛ ՚յաւե_
տարանն, թէ որով դու չափես նովին
չափօվ և քեզ չափեսցի, և դու ՚յաւե_
նայն օր աղօթես, թո՛ղ մեզ զպարտս
մեր՝ որպէս և մեք թողումք մերոց պար_
տապանաց։ վասն կարէ ես ասել Ա՟Ծ ընդ-
քեզ, թէ և ես թողում քեզ զպարտս քո՛
այս ուխտօվս որ ՚ի քեզնէ վրէժ չառնում,
ապա՛ թէ սատանայ զքեզ տանջէ ՚ի
դժոխս՝ ես ո՛չ հոգամ, այլ ուրախ լի_
նիմ ։ Դարձեալ ասէ՛ ո՞ք թէ այնմ որ
մեղաւ ինձ նմա ո՛չ ուրախանամ, թէ
չար ինչ պատահեսցի նմա, այլ ո՛չ կա_
րեմ սիրել այնպէս որպէս յառաջն սի_
րէի։ պատասխանն առաջ պարտ է՛ այնպի_
սոյն և ասել թէ, յորժամ մեղաւ իմ և
թողութիւն արար քեզ, և դու կամի՞ս որ
այնպէս սիրէ զքեզ որպէս յառաջն։ այո՛
ո՛չ այնչափ միայն՝ այլ ևս կամիս որ ևս
առաւելել սիրէ զքեզ Ա՟Ծ, ապաուրեմն
զմեղուցեալն քո՛ որում թողեր զպարտսն
այնպէս պարտիս սիրել որպէս յառաջն ։
Դարձեալ ասէ՛ ո՞ք, թէ ես թողութիւն
առնեմ իմ մեղուցելոյն, և ո՛չ ինչ չար
առնեմ նմա, և ո՛չ ուրախանամ թէ
պատահի նմա չար և սիրեմ զնա՛ սրտով,
այլ ո՛չ կարեմ նշան սիրոյ երևեցուցա_

նել նմա, զի ոչ կարեմ ողջոյն տալ և խօսել ընդ նմ։ պատասխանելի է՝ նմ թէ նմանես դու յիմար մարդոյ որ պարտի, Ժ. դեկան և վճարէ զպարտս իւր, բայց զձեռագիրն յետ չառնու, իսկ պարտատէրն խորամանկէ, դարձեալ միւսանգամ խնդրէ զպարտսն։ Նոյնպէս յորժամ դու թողուս քո պարտապանին զպարտս վճարեցեր զպարտս քո, այլ ոչ առեր զձեռագիրն յետ, զի նշան սիրոյ ոչ ցուցանես, քանզի որպէս զձեռագիրն յետ առնուլն նշան է՝ թէ պարտքն վճարած է՝, նոյնպէս ողջոյն տալն նշան է՝ թէ քեզ թողութիւն եմ արարեալ։ Իսկ առաջնայ որ պարտատէրն է՝ յոյժ խորամանկէ՝, և ՚ի կատարածի ամուրն չարախօսէ զնմա առաջի այլ, թէ մարդս այս իմ պարտականն է՝ զի ոչ արար թողութիւն թշնամեաց իւրոց, և թէ ասես ես զիմ պարտքն վճարեալ եմ զի թողութիւն եմ արարեալ, ասէ՝ սատանայ ո՞ւր է՝ ձեռագիրն, այսինքն, նշան ինչ սիրոյ զի ոչ ողջոյն տուեր և ոչ ողջոյն առեր ՚ի նմանէ։ և հրամանէ այ որ ոչ միայն սրտով թողութիւն առնես՝ այլ և ողջունես զնմին պարտէ՝ կատարելապէս թողութիւն առնել այնմ, որ մեղուցեալ է՝ քեզ։ և այս կատարեալ թողութիւն․ Դ. աստիճան

Ճանն ունի ։ առաջինն զի ոչ առնես նմա
չար ․բ․ զի ՚ի չար նը ոչ ուրախանաս ․գ․
զի սրտօվդ սիրես զնա ․դ․ զի լեզուօվդ
սիրոյ նշան երևեցուցանես ողջոյն տալ
և առնուլ ։ և թէ այսպէս կատարեալ
թողութիւն որ ոչ առնէ մեղուցելոյն իւ-
րոյ՝ ոչ է՛ պատրաստ զնա ՚ի խոստովանութեան
արձակել կամ հաղորդել ։ և թէ ոք ա-
սիցէ թէ ես այս երկրորդ մեղ Ճանապա-
հաւս ոչ կարեմ վճարել զպարտսն և
ազատիլ ՚ի քահանայէն, զի ոչ ոք է՛ մե-
ղուցեալ ինձ որ թողում նմա , որպէս
կարացից վճարել զպարտսն, ՚յիմ քա-
հէս ոչ կարեմ վճարել , զի ոչ կարեմ
ամենչափ պահս պահել , և աղօթք , և
ողորմութիւն առնել որ ՚ի քահանայէն ազա-
տիմ , և ՚յայլոց քահանէ ոչ կարեմ հա-
տուցանել զի ոչ ոք է՛ ինձ մեղուցեալ որ
թողում նմա ։ Պատասխանի տամ և․ գ․
ազգ խրատ տամ նմա ։ Առաջինն խրատն՝
զի մուրայ հոգևորպէս , որոց պարտականն
որք մոյր առնէ և վճարէ զպարտս իւր ,
այսպէս դու մոյր արա խնդրելով ողոր-
մութիւն ՚ի մեծայ Տէառնէն և ՚յամենայն
մեծց , զի բարեխօսեն վս քո առ Տր , և
յանձն արա զքեզ աղօթողաց՝ ասելով
յիշեցէք զիս յաղօթս ձեր , զի այր մեղա-
ւորեմ ես , և զօր ինչ մուրաս տուր ՚ի

պարտքն ։ Երկրորդ խրատն այս է՛ զի
ամենայն ազգ նեղութիւն որ գայ ՚ի վերայ
մեր՝ համբերեսցուք, զի Քծ որ պար-
տաւորն է՛, զամենայն նեղութիւս զոր
կրեմք եթէ յօժարութբ յանձն առնումք
և գոհութբ համբերեմք՝ ՚ի մեր պարտքն
հաշուի զի ողորմած է՛ ։ այլ և մանաւա-
նդքն և գողքն, որք ոչ կամին մեռանին
վս իւրեանց մեղացն, թէ յօժարութբ
համբերեն՝ զայն ՚ի հատուցումն ընդու-
նի Քծ ։ Երրորդ խրատն այս է՛ թէ չիք
ոք որ զքեզ նեղէ կամ վիրաւորէ որ թո-
ղութիւն առնես, և կամ չիք այլ նեղու-
թիւն ՚ի վրն քո, որ վս նորա համբերես և
այսպէս հատուցանես զպարտս քո,
դու սկիզբն արա մէ կեանք ստանալ և
ապաշխարութիւն յանձն առնուլ, յայն-
ժամ բազում նեղութեանց հանդիպիս,
և բազումք վիրաւորեն զքեզ, զի ասէ՛
Պօղոս . բ. Տիմոթ . գ. գլխ ։ որպիսի
հալածանաց համբերեցի և ՚յամենայնէ
փրկեաց զիս Տր, և ամենեքեան որք
կամիցին Քծպաշտութբ կեալ ՚ի Քս
Յս ՚ի հալածանս կայցեն ։ զի յորժամ
սկիզբն առնես բարւոք կենցաղավարու-
թեն՝ ամենեքեան սկսանին ատել զքեզ
որպէս ասէ՛ մանաւանդ եթէ ՚յաշխա-
րհէ աստի էիք, աշխարհ զիւրն սիրէր

արդեօք, բայց զի չէք՝ յաշխարհէ՛, այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վասնզի ատեայ զձեզ աշխարհ: Եւ թէ ասէ՛ ոք յորժամ ես անմեղ լինիցիմ եւ տանջէ ոք զիս՝ ոչ կարեմ համբերել, այլ թէ վս̄ իմ մեղացն չարչարիմ կարեմ համբերել: Պատասխանեմ այսպիսոյն թէ լաւ է եւ օգտակար համբերել նեղութեացն եւ անմեղ գոլով, քան զհամբերել նեղութեացն մեղաւոր գոլով. զի յորժամ անմեղիցես՝ այն զուտ եւ մաքուր յատակ ոսկի է՛ առաջի այ̄, որպէս համբերեցին անմեղքն եւ սրբք Մ՝արտիրոսքն, որք անմեղքեին ՚ի դատելոյ, եւ ՚ի Քսէ պատկերացան: այլ յորժամ համբերես նեղութեց եւ մեղապարտիցես՝ այն ընդ այլ նիւթոյ խառնեալ ոսկի է՛: վսն̄ Պետրոս ա. կթղկց .դ. գլխ խօսի: բայց աստ մարդիկ որք նեղութի կրեն .գ. ազգեն, ոմանք նմանեն Քսի, եւ ոմանք աջակողմն աւազակին, եւ ոմանք նմանեն ձախակողմն աւազակին: Նոքա որք անմեղքեն եւ չարչարանս կրեն եւ համբերեն՝ Քսի նմանեն: եւ որք վս̄ մեղացն իւրեանց չարչարանս կրեն, բայց համբերեն՝ այնուքեն սրբեն ՚ի մեղաց, եւ նմանեն աջակողմն աւազակին որ մահուամբ խաչին եմուտ ՚յ արքայութին: եւ որք վս̄ մեղաց իւրեանց պատժին՝ եւ ոչ համբերեն, այլ

և ս չարագոյն լինին՝ նոքա նմանեն ձախակողմ աւազակին, որ խաչիւ և մահու չաւք էջ 'ի դժոխս ։ Պարձեալ գիտելի է՛ զի սատանայ բազում խաբմանութեան ածէ այս ․դ․ ա՛ւուր ճանապարհս , զի մի՛ ոք մտցէ 'յերկնից արքայութիւն ։ Աննկ գրեալ է թէ ․դ․ սատանայ երևեցան մը հօր մուլ, եհարց ցնոսա ծերն թէ ո՛վ էք դուք և զի՛նչ անուն է՛ ձեր։ Պատասխանի ետուն թէ դևքեմք և կոչի անուն մեր միոյն կապող սրտի , միւսոյն կապող բերանի , և այլ միւսոյն կապող քսակի ։ Ասաց ծերն վս՟ էր պայսպիսի անուանէք աւել՞։ Նոքա ասացին 'ի գործոց մերոց ունիմք զանուանս պայսոսիկ ։ վս՟ զի առաջնոյն գործն այն է՛ որ կապէ զսիրտ մարդոյ որ ո՛չ զղջայ 'ի մեղաց։ և թէ առաջինն ո՛չ կարէ կատարել զգործս իւր՝ երկրորդն պատրաստէ զի թէպէտ զղջանայ մարդն 'ի մեղաց իւրոց , այլ կապէ երկրորդն զբերան նր՟ որ ո՛չ խոստովանի, և թէ երկրորդն ևս ո՛չ կարէ յաղթել , երրորդն պատրաստէ զի թէպէտ զղջանայ և խոստովանի՝ սա կապէ զքսակն բերանն, որ ըզ զրկանքն և զգողացածն և զումկայ չանձն յետ ո՛չտայ զի մի՛ փրկեսցի ։ Այս ․դ․ դևքս մտաքանեալքեն ընդ-

մի-

մոմեանս , և բաղդում վնասատակս առնեն
վ͞ս դժոխոցն , զի զբաղդումս խաբեանեն
'ի զղջանալոյ , 'ի խոստովան լինելոյ , և
'ի հատուցանելոյ ։ վասն գրեալ է՝ 'ի գիրս
Ծննդոց . ԻԹ. գլխ։ և հայեցաւ Յակոբ
և ետես ջրհոր մի 'ի դաշտի անդ՝ և
էին անդ՝ . ͞գ. հօտք խաշանց մակա_
ղեալք 'ի նմա և 'ի ջրոյն յայնմանէ ար_
բուցանէին զխաշինսն , և վէմ մի մեծ
կայր 'ի վ͞ր բերանոյ ջրհորոյն ։ Հօտք
խաշանց ցուցանէ զհոյլս բարի գործոց
զորս գործեն մարդիք , և ͞գ. հօտք ասէ,
վ͞ս զի ամենայն բարի գործք՝ յ͞ածայինն
յերից առաքինութեց յառաջ գան ,
այսինքն , 'ի Ճշմարիտ հաւատոյ , 'ի յու_
սոյ , և յ͞ածայինն սիրոյ ։ Արդ յորժամ
ոք անկանի 'ի մահու չափ մեղս ջոկք
խաշանցս այսոցիկ ծարաւին և ցամա_
քին , և ոչ լինին արժանիք երկնից ար_
քայութ͞ե՛ն , և ջրհոր զսիրտ մարդոյ ցու_
ցանէ որ խորէ , յորժամ ոք բանայ զբերան
իւր , և զղջմամբ սրտի խոստովանի ար_
տասուօք՝ յայնժամ արբուցանէ զամե_
նայն հօտս խաշանց , զի կենդանանան
ամենայն գործք ն͞ր որք մեռեալք էին ,
այլ սատանայ յոյժ խորամանկէ զբերան
ջրհորոյն փակէ մեծ վիմօք , յորժամ
խոստովանութ͞ե՛ն փակէ զբերան որ ոչ

զղջա_

զղջմանայ, և ամօթով փախչէ զբերանն որ
ոչ խոստովանի, և ապաւինութիւն փախչէ
զքսակն որ ոչ առնէ զողորմութի և զըղ
զրկանս օտարաց ոչ դարձուցանէ ՚ի նմա:
Իսկ Յակոբ՝ որ թարգմանի խաբող ՚ի վեր
եառ զվէմն զայն ՚ի բերանոյ ջրհորոյն և
արբոյց զխաշինսն: մ՟ս զի Ոգին ՟սբ խա_
բէ զպիղծ Ոգին՝ զի զոր հրապէ պիղծ
ոգին, արձակէ ՟սբ Ոգին: բանալի բաց_
նայ ՚ի սրտէն զանզղջութին, ՚ի բերա_
նոյն զամօթն, և ՚ի քսակէն զագահութին,
զի մեղաւորն զղջասցի, և խոստովան_
լիցի, և հատուցումն արասցէ: զի լիցի
նմա կատարեալ ապաշխարութի, և
թողութի: և այս ՟գ. սուրբք ճանա_
պարհաւս հասանիցի ՚յ երկնից արքա_
յութին: վասնորոյ և մեք աղաչեսցուք
զՏ՟ր, զի զմեզ և զամենեսեան արժա_
նիս արասցէ ՟գ. սուրբք ճանապար_
հաւս հասանել ՚յ երկնից արքայութին
՚ի Ք՟ս Յ՟ս ՚ի Տ՟ն մեր, զոր ընդ Հօր
և Ոգւոյն ս՟բ՝ այժմ և միշտ փառաւորա_
լով փառաւորեսցուք ընդ ամենայն
Հրեշտակաց, և Մ՟եց:

Ա՟մէն:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Վ̃ է. մահու չարի մեղացն:

ԵՒ երեւեցաւ այլ նշան յերկինս՝ և ահագա_ նին, վիշապ մեծ հրե_ ղէն որոյ էին գլուխք եօթն, և եղջիւրք տասն, և ի վերայ գլխոց նորա եօթն խոյրք: և տուտ նորա քարշէր զերրորդ_ մասն աստեղաց երկնից՝ և էարկ զնոսա յերկիր: տեսիլն. Ժբ. գլխ: Սիրաք և Պօղոս ասեն՝ թէ նախանձու բանսար_ կուին եմուտ մահ յաշխարհս: Զի որպէս ի Ք̃է գայ կենդանութի̃, նոյն_ պէս ի սատանայէ մահ լինի: Եւ որ_ պէս Ք̃ս . է. արփեան շնորհօք զար_ դարէ զեկեղեցի և լուսաւորէ, նոյնպէս

սատա_

սատանայ խաւարեցուցանէ և կուրա_
ցուցանէ ․Է․ մահու չափ մեղօք ։ և
այսմ օրինակ ունիմք ՚ի բնութենս, զի ա_
մենայն աւուրք մեր ․Է․ աւուրբք չափին,
և օրն զինչ է՛ եթէ ոչ լուսաւորութի
արեգականն ։ Նոյնպէս սբ Ոգւոյն լու_
սաւորութիւնն է՛ ՚ի շնորհացն ․Է․ի որ ․
․Է․ կերպիւ բաշխէ ՚ի մարդիկ ․ ա․ է՛
շնորհք իմաստութեան ․ բ․ շնորհք իմա_
ցութե ․ գ․ խորհրդոյ ․ դ․ զօրութե ․ ե․
գիտութե ․ զ․ Ածպաշտութե ․ է․ եր_
կիւղին այ ։ Եւ այս նման է՛ ․Է․ աւուրց
որ լուսաւորէ զաշխարհս ։ Իսկ թշնա
մին սատանայ ոչ համբերեաց այսոցիկ
շնորհացս , այլ ներհակ այս ․Է․ լուսոյս
եմոյծ ՚յ աշխարհս զ ․Է․ խաւարս և զգի_
շերս , այսինքն , զ ․Է․ մահու չափ մեղսն ։
քանզի զինչ է՛ գիշեր եթէ ոչ պակա_
սութի լուսոյ արեգականն , այսպէս
մեղքն նման է՛ գիշերոյ զի է՛ պակասու_
թի լուսոյ շնորհացն ․Է․ի, որ է՛ արեգակն
արդարութե ։ և յատկութիւք գիշերոյն
են եօթն ։ Առաջին յատկութի գիշե_
րոյն այն է՛ որ հանէ ՚յ երկրէ զգոլորշիս
Ջերմութե արեգականն որ ՚ի ցերեկն
անկանի ՚յ երկիր , և որպէս Ած տա_
քե ՚ի վ͞ր խոնարհաց և հեզոց զշնորհս իւր
ներքև ՚ի վ͞ր երկրի , նոյնպէս սատանայ

բառ_

բառնայ նախանձու ըմբռնողութիւն և դնէ զհպարտութիւն 'ի տեղի ։ Է. յառակութի գինեսոյն այնէ, զի զհիւանդն ծառայացուցանէ, նոյնպէս ամենայն մեղք ծառայացուցանեն, զհոգիս մարդկան, բայց դժո՛ւարագոյն է՛ և ծանր մեղք նախանձուն, զի զբարութիւս այլոց տեսանելով ծանրանայ՝ և լոյս և պայծառութի այլոց՝ նմա խաւ՛ար և գիշեր լինի ։ Զ. յառակութի գինեսոյն է՛ զի զպատուաւոր գազանս զգօղս և զմա՛ւազակս արկս փառահս, և յաղթօղս առնէ, որ նշանակէ զբարկութէ մեղքն, զի որ չա՛փ արթունէ մարդն բանականութը ո՛չ մեղանչէ խորհրդով, բանիւ, կամ գործով բայց յորժամ բարկանայ զամենայն բանականութի իւր կորուսանէ և լինի իբրև զաւիւծ պատառող և անգութ ։ և այլն ։ Է. յառակութի գինեսոյն է՛, զի զշողմոգս երկրի կապէ ընդ յանկսն փառն ցրտութէ իւրոյ որ նշանակէ զագահութէ մեղքն, զի ագահք որպէս գիշեր զամենայն բարեպաշտութէ պտուղս կապեն ընդ բաղցրութէ մտաց իւրեանց, և ո՛չ առնեն ումեք զողորմութի ։ Ը. զի 'ի գինեսոյն սեամազն չարժի 'ի մարդն և տրտմեցուցանէ և ըմպողք տեսանէ, ցուցանէ զծուլութէ մեղքն որ զմարդիկ տրտմեցուցանէ

ցանկէ և անկոյս առնէ զհոգին 'ի փառ-
թամութէ և 'ի պայծառութէ յանխոն-
նական լուսոյն ։ Գ. զի 'ի գիշերին սատանայքն
ուժովանայ և զկերպակերպն հալէ, զի ջեր-
մութին որ 'ի ցերեկն ցրուեալ է' 'ի գիշերին
ժողովի և զկերպակերպն եփէ, նշանակէ
զորկրամոլութէ մեղքն, որում հետե-
ւողքն ընդ ոչ յագին 'յ ուտելն և 'յըմ-
պելն ։ Ե. զի 'ի գիշերին յօժարին 'յա-
ղտեղի գործն, որ նշանակէ զպոռըն-
կական մեղքն ։ արդ այսոքիկ են Է. յատ-
կութիք գիշերոյն զորս և ունին, Է.
մահու չափ մեղքն, զորս եմոյծ սա-
տանայ 'յաշխարհս ընդ դէմ . Է. շնոր-
հացն այ՝ և սոքօք ջանայ խափանել,
զէ. շնորհս Հոգւոյն սբյ հանապազ և
արգելել զհանգուցեալս 'ի պատուի-
րանապահութէ այ ։ Եւ այս է' որ
ասէ' Յոհաննէս 'ի բնաբանս, թէ ե-
րեւեցաւ այլ նշան յերկինս և ահա-
ւասիկ վիշապ մեծ հրեղէն որոյ էին,
գլուխք . Է. և եղջիւրք Ժ. և 'ի վր նր . Է.
խոյրք ։ վիշապն է' սատանայ, և հրեղէն
ասէ' զի որպէս հուրն քան զայլ տարերս
զօրաւոր է', նոյնպէս սատանայ 'ի վր
մեղաւորաց զօրաւոր և յաղթօղ է' ։ Է.
գլուխքն . Է. մահու չափ մեղքն են, որք
հիմունք և գլուխքեն ամենայն մեղաց .

Ժ. Եղջիւրքն այն նշանակեն, զի սա-տանայ ուրախանայ, ընդ յանցուածս. Ժ. պատուհասանացն։ Սա է՛ առաջին քանն Յովհաննու, որ ասէ՛ տեսի վիշապ մի՛ մեծ։ Եւ որ ասէ՛ տուտամքն քար-շէր զերրորդ մասն աստեղաց երկնից։ տուտն որ վերջն է՛ կենդանւոյն զմահն ցուցանէ, որ զմեղաւորսն մահացու-մեղօք մեռեալս խջուցանէ ՚ի դժոխքն զի վարձ մեղացն մահն է՛, որպէս ասէ՛ Պօղոս։ այսուքիկ եմ. Է. մահու չափ մեղքն զոյս ասացաք հասարակաբար։ Սոյժմ ասասցուք առանձնակի, և նախ ՚ի հպարտութէ որ է՛ առաջին գլուխ վի-ճակին, յորմէ փրկեսցէ զմեզ Քրիստոս և նման։ փառք յաւիտեանս։ Ամէն։

ԱՌ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ։

որ է՛

Առաջին գլուխ վիճակին։ Հայոց գիրն չէ՛ հպարտութիւն։ Սէն Օգոստինոս ասէ՛ թէ հպարտութիւն է՛ ցանկութիւն փառաց խոտոց։ և նման է՛ հպարտութիւն փիճի փայտին, որ թէ ՚ի հող կամ ՚ի ջուր թաղի՝ չու-տով փտի, բայց թէ զնա տան գերան ձգեն՝

ձգեն՝ ոչ փոքր բնաւ ։ Նոյնպէս են հպար-
տքն, յորժամ մարդիկ զնոսա մեծա-
րեն պատուեն և փառաւորեն սիրով,
նոքա բարձրանան, և ճոխանան մե-
ծամտութբ, իսկ յորժամ նախատեն
զնոսա և յանդիմանեն, նոքա դայթա-
կղին և խլանեն 'ի ներքոյ երկրի ։ որպէս
գրեալ է՝ յԵսթեր. Ե. Թէ էր իշխան
մի անուն նորա Համան, զնայր մե-
ծաւ ուրախութբ 'ի պատիւ Թագաւո-
րին և Թագուհւոյն, և այր մի անուն
Մարդոքէ, ոչ մեծարեաց զնա, դար-
ձաւ տրտմութեամբ 'ի տուն իւր և ասէ՝
ցընտանիս իւր, բազում մեծութին և
ստացուածս ունիմ, և Թագաւորն զայլ
ոք ոչ կոչեաց 'յընթրիսն, բայց միայն
զիս, զայս ամենայն մեծութիս ոչ ինչ
համարիմ՝ քան զի Մարդոքէ ոչ մե-
ծարեաց զիս ։ Յատկապէս այսորիկ
հպարտանայ ոք, յորժամ գովի, պա-
տուի, և փառաւորի, կամ զարդէ,
կամ զփարթամութէ, և զիշխանութէ,
կամ զիմաստութէ, և զ գեղեցկութէ ։ իսկ
սուտ են այսորիկ ամենեքեան և ընդու-
նայք, զի ոչ ոք է՝ յինքենէ գովելի և մե-
ծարելի, այլ միայն տէրողն Ած է՝, և քան
զի ամենեքեանքս 'ի մի հօրէ և 'ի մի
մօրէ եմք, յԱդամայ և յԵւայէ ։ և

Թէ ասէ՛ ոք Թագաւորեմ ես, և մե-
ծացայց՝ մի՛ Թէ ոչ իցէ որդի Դաւթայ:
Սաւուղ և Դաւիթ Թագաւորք էին
իսրայէլի, յառաջն արածէին զխաշինս
հարց իւրեանց, և զԹագաւորուԹին
ոչ ունէին յինքեանց, այլ յայ: և Թէ
այլք հպարտանան վս̄ իմաստուԹէ, կամ
փարԹամուԹէ, կամ զօրուԹէ, յոյժ
յիմարքեն այնոքիկ՝ քանզի քաղուկ են
կենդանիք, որք քան զմարդն զօրաւորք
են, որպէս Առիւծն, Ինձն, և քա-
ղուկք երբեմն բնուԹե̄ լինին իմաստունք
և գիտունք, և երբեմն ներհեղուԹե̄
յայ: և Թէ վս̄ գեղեցկուԹէ հպար-
տանայ ոք՝ ընդունայն է՛ ևս նա, որ-
պէս ասէ՛ Սողոմոն: գեղ մարդոյ է՛ շուք
ընդունայնուԹէ, և խաբէուԹէ: և վս̄
փարԹամուԹէ և մեծուԹէ ասէ՛ Պօ-
ղոս: առաջին ՏիմոԹ. զ̄. որք կամին
մեծանալ անկանին ի փորձուԹի և յորո-
գայԹ սատանայի: ապատուրեմն հպար-
տուԹիւն է՛ ցանկանալ մեծուԹէ: Նա-
Թէ զինչ է՛ հպարտուԹիւն: Ասէ՛ Գրի-
գորիոս պապն, Թէ դ̄. կերպ է՛ հպար-
տուԹիւն. ա̄. որ կարծէ ոք զմեծու-
Թիւն ունել ինքեամբ և ոչ յայ, որպէս
կարծեաց սատանայ: ընդ դէմ այսմ
Պօղոս ասէ՛ զինչ ունիս զոր ոչ առեր
յայ,

՚յ ա՟յ , և Թէ առնէր զի պարծիս ներքե-
ղչառեալ : Ե. կերպն է՝ որ զիւր բա-
րութիւն կարծէ ՚յա՟յ , բայց առեալէ
զիս իւրոյ արժանաւորութե և զայլոց
անարժան լինել այնմ : Զ. յորժամ ոք
ընդունայն պարծի ունել զոր ոչ ունի ,
և այսպիսիս նմանէ՝ ասածս համն որ-
պէս ասէ՝ Ո՟ղ իմնայ փիլիսոփայն Թէ
յորժամ մարդ համն կումն հետ իւր
ձայնին և յաղԹէ նմա , յայնժամ զինքն
ներքև զորձակ ցուցանէ բարձրացուցա-
նելով զպարանոցն : Է. կերպն է՝ Թէ ունի
ինչ շնորհք համբաւէ և գովէ զինքն որ-
պէս փարիսեցին : սպատուբեմն ոչէ՝ պարտ
հպարտանել զի հակառակէ՝ ա՟յ , որպ
ասէ՝ Յակոբոս, Տէր ամբարտաւանից հա-
կառակ կայ՝ տայ շնորհս խոնարհաց : և
Տէրն մեր ՚ի Ս՟ն ասէ՝ վա՛յ քեզ Կափառ-
նաում որ մինչև ՚յերկինս բարձրացեալ
էս՝ մինչև ՚ի դժոխս իջցես : զի պարտէր
նմա խոնարհութբ ապաշխարել : և Եսայի
ասէ՝ : վա՛յ քեզ պսակդ հպարտութե :
Պարձեալ հպարտութիւնէ՝ ընդ դէմ
բնութե , զի ամենայն բնութի հանգչի
՚ի տեղի իւր , այլ հպարտն ոչ համաձայնի
տեղոյն իւրոյ զոր ետ Ա՟ծ նմա : Ա՟յլ
մէջտ բարձրանամն և խնդրէ համառար
լինել մեծամեծաց և զհամառօտն յաղԹել

և ներքոյ իւր ձգել ։ դարձեալ ընդ դէմ
է՛ ՚իմաստութե՛ , զի ամենայն որ իմաս-
տուն է՛ գիտէ թէ փառքն և պատիւն
միայն այ է՛ , և թէ չէ գործոյ ինչ իւրոյ
մարդ զփառս խնդրէ զպատիւն այ գո-
ղանայ , այլ պարտ է՛ նմանել սիրամար-
գին զի եթէ սա հայելով ՚ի փետուրսն
իւր հպարտանայ , բայց սակայն հայելով
՚ի սևաւորսն յոտսն իւր՝ զամօթի հարու
և խոնարհի ։ նոյնպէս մարդն յորժամ
բարձրամիտ լինի վասն գեղեցկութե , կամ
իմաստութե , կամ մեծութե , որպէս
թէ հայի ՚ի փետուրսն իւր և հպարտա-
նայ , բայց պարտ է՛ նմա հայել յոտսն
իւր , այսինքն , ՚ի մեղսն իւր և ՚ի մահն ,
և այսպէս դիւրապէս խոնարհի ։ և թէ
որ բան յերկրի աստ եմք ՚ի մէջ ուղղայ-
թից եմք ։ զայսուհետև մտածելով հպարտն
խոնարհի և զղջանայ ։ և թէ ոչ զղ-
ջանայ՝ երկիր ոչ ներէ նմա այլ պատառէ
և ընկենու ՚ի դժոխս ։ որպէս զորդիսն
Կորխայ զԴաթան և զԱբիրոն , որք
հպարտացեան և հակառակք եղեն Մովսէ-
սի ։ Դարձեալ չէ հպարտութե Սա-
տանայ անկաւ ՚ի թագաւորութէ ։ Նա-
բուգոդոնոսոր անասուն եղև ։ և Քս
ասէ՛ որ բարձրացուցանէ զանձն խոնար-
հեսցի ։ Ըպարտութեան մէջ բրխատանեցս

պար-

պարտէ խոնարհիլ և այսու ջնջինել զգիրս այս անիծեալ վիշապին ։ բայց գլուխս այս խորամանկի որպէս ասէ՛ Ագին սր̅բ ՚յարարածքն ․ ե̅․ գլ̅ս ։ կինն սպասնեսցէ քում գլխոյդ, այսինքն, մ̅ե̅հի Ա̅ծածինն, որ խոնարհութ̅բ խորամանկեաց զհպարտութի̅ն ։ և ամենայն ոք յորժամ խոնարհի խորամանկէ զգլուխս զայս յայնժամ բարձրացեալ լինի ։ որպէս երգէ մ̅ե̅հի կուսին զհզօրս բանկեաց՝ և զխոնարհս բարձրացոյց ։ Եւ զբազումս ունիմք պատճառս խոնարհութե̅ զոր մտածելով դիւրապէս՛ խոնարհիմք , մանաւանդ զայսոսիկ զերիս ։ նախ յիշելով զսկիզբն մեր , թէ յոչընչէ արար զմեզ Ա̅ծ , և ըստեղծ ՚ի հողոյ, որպ̅ Ա̅ծաշունչն ասէ՛, և ըստեղծ Տ̅ր Ա̅ծ զմարդն հող ՚յերկրէ ։ և այլն ։ և թէ մեղօք ենք յղացեալք, և յաղտէ գոյացեալք , որպ̅ ասէ՛ Դաւիթ Անօրէնութ̅բ յղացայ և ՚ի մեղս ծնաւ զիս մայր իմ , և Յոբ․ Ժ․ գլ̅ս ։ որպ̅ կաթն կթեցեր զիս և իբրև զպանիր մածուցեր ։ Երկր մեջն մեր մտածելով, որք լի ենք այնքան աղտեղութ̅բք, որդամբք, գարշահոտութ̅բք , և դառնութ̅բք, մինչ զի և բղխեն ՚ի մէնջ ։ Երրորդ զՎախճանն մեր ՚ի միտ բերելով թէ որդն և կերակուր որդանց լինելոցեմք ։

և թէ հող էիր անդրէն և ՚ի հող դար_
ձիցես ։ այսուքիկ ․ գ͞․ զգածմունքս ս͞բյն
Պերճապատուի են , որ զգուշացուցանէ
զմեզ տանելով խորհեաց թէ զի՞նչ էիր ,
զի՞նչ ես , և զի՞նչ լինելոցես ։ և մեք զայ_
սոսին զմտաւ ածելով խոնարհիմք և
խոստանալեմք զայս առաջին զլուխ վերջա_
պին ։ Երկ հպարտութիւն ․ զ͞է․ դստերս
ունի զորս չարութ͞ք ծնեալ է՛ , և ամե_
նեքեանքն ունին զթոյնս մահու՝ որովք
սպանանեն զհոգիս մարդկան , որպէս
և մայրն իւրեանց ։ Առաջին դուստրն է՛
անհնազանդութիւն և սա սպան զնա_
խահայրն մեր զԱդամ ամենայն ծննդովք
իւրովք ։ իսկ դեղ սորին եղև հնազանդու_
թիւն Ք͞ի ։ բ͞․ է՛ պարծիլն՝ որ թէ
սակաւ ինչ բարութի ունի ո՛ք ցուցա_
նէ մարդկան , և թէ բնաւ ո՛չ ունի
ցուցանէ զինքն բարեգործ ։ գ͞․ է՛ կեղ_
ծաւորութիւն՝ որ ցուցանէ զինքն ա_
ռաքինի և ս͞բ , վ͞ս մարդկան և ո՛չ վ͞ս
ա͞յ ։ ընդ դէմ սորա ՚ի բազում տեղիս
ասէ՛ Ք͞ս վա՜յ ձեզ կեղծաւորաց ։ և
այլն ։ և սոքա են որդիք սատանայի և
ո՛չ Ք͞ի , զի ո՛չ ցուցանեն զխոնարհութն ,
զի այլ իրքէ՝ և այլ իրք երևի ։ դ͞․ է՛ հա_
կառակութիւն՝ որ բան ինչ խօսի ընդ_
դէմ ճշմարտութե͞ն և յետոյ ո՛չ զղջա_
նայ ։

նայ ։ ընդ դէմ սմին ասէ՛ Պօղոս որ ո՛ք հակառակող է՛, մեք ո՛չ ունիմք սովորութիւն և ո՛չ Եկեղեցին այ ։ Ե. է՛ լրբութիւն յորժամ թէ բան ինչ իմանայ ՚ի մտի իւրում մեծաբանի և բնաւ այլոց ո՛չ հաճանի, ընդ դէմ այսմ ասէ՛ Պօղոս պաշտօնեայք ածն ծառայեցուսցեն զիմացո՛ւածս ամոից իւրեանց Քի ։ Զ. է՛ անմիաբանութիւն որ հպարտացեալ թողու զճանապարհս մեց, զխաղաղասէր և զճշմարտութեանց վարդապետութիւն ընդհանրական և Հռոմէական մեր Եկեղեցւոյն Քի, և սպրդեալ մուծանէ զիւր կարծիսն, այլև այլ և այլանդակ բանս յօդէ ։ և ո՛չ կամի միաւորիլ և միաբանիլ ընդ Սր՛ միայնոյ Մօր լուսոյ Կաթուղիկէ Եկեղեցւոյ ։ Եօթն երրդն է՛ վերջապէ՛ս անպատշաճ հետաքրքրութիւն և յաւել հոգութիւն որ է՛ս հպարտութէ ո՛չ խոնարհի այլ հակաճառէ ընդ դէմ այլոց ., ո՛չ է՛ս ճշմարտութէ, այլ է՛ս փառասիրութէ ։ սոքա են դստերք հպարտութէ, որք ծնանին զորդիս դժոխոց և զհետևողսն իւրեանց առնեն ժառանգորդս յաւիտենական տանջանացն ։ ՚յորոց փրկեսցէ զմեզ՝ փրկիչն մեր Քս և արժանիս արասցէ տալ մեզ այնչափ խոնարհութի, զի նովաւ յաղթեսցեմք

յակի-

յսկիզբն հպարտութե, և եօթնագլխոյ վիշապին: և Քն յաւիտենականն Թա-գաւորին փառք յաւիտեանս յաւիտե-նից: Ամէն:

Վ̅ն ՆԱԽԱՆՁՈՒ:

որ է՛

Երկրորդ գլուխ վիշապին: Հարց զի՞նչ է՛ նախանձն, Պատաս-խանեմ, և ասեմ սէքն՝ թէ նա-խանձն է՛ տրտմութի ընդ դէմ բարութե այլոց: և սա՛ քան զամե-նայն մեղս առաւել խիթք օգտի առա-ւել վնասէ, վասն՛ յոյժ չար է՛ զի ընդ-դէմ է՛ այնմ առաքինութե՝ որ քան զա̅մ շահաւոր է՛ և զօրաւոր, այսինքն, Սի-րոյն: Եւ կոչի սա՛ յա̅ծայինն գիրսն պատառաւող գազան զի սպան զԱբէլ՝ և զՅովսէփ վաճառեաց, և յետոյ զՔ̅ն խաչեաց: և նման է՛ սատանայի, որ-պէս ասէ՛ Սողոմոն նախանձու բանսար-կուին եմուտ մահ յաշխարհս, զի նա-խանձեցաւ ստ̅նայ ընդ Ադամայ և ընդ Եւայի, և եհան զնոսա ՚ի դրախտէն ճա-շակմամբ պտղոյն: և մեղաւորն յայս մեղս յերկարելով դժուարին բժշկի՝ զի է՛ ընդ-

դէմ

դէմ Ոգւոյն սրբոյ որպէս ասէ՛ Պօ-
ղոս , ամենայն հայհոյութիւք թողցին
մարդկան , բայց որ զՈգին սբ̃ հայ-
հոյէ՝ մի՛ թողցի նմա, մի՛ յայսմ աշխարհի,
և ՚ի մի՛ ՚ի հանդերձեալն , զի Ոգին սբ̃
Տէր է՛ : Ասեն վարդապետք ոչ թէ
բնաւ ոչ թողցի մեղս այս մարդկան՝
թողցի , այլ դժուարապէ՛ս թողցի :
քանզի դժուարապէ՛ս ջնջանի մեղս այս ,
որպէս հուր ՚ի ծործումք դժուարագոյն
ջնջանի , սմա օրն գիշերէ՛ և լոյսն խա-
ւար , զի ՚ի բարեգործութէ այլոց ինքն
տրտմի և խաւարի : ասէ՛ սբ̃ն Գրի-
գոր թէ նախանձոտքն նմանեն ջղջիկանի
որ ՚ի տուընջեան ոչ կարեն թռչել :
զոր օրինակ գրեալ է՛ ՚յ առակին թագա-
ւորութեանն թէ Հեղի քահանայապետն
ոչ կարէր հայել ՚ի լապտերս վառեալս
մինչև ջնջուցանէին : Եւ նախանձն է՛ .
Է . կերպիւ . Ա . որ ուրախանայ ընդ-
ձեռս և ընդ չարս ընկերին իւրոյ և այս
յոյժ յիմարութի է՛ , որպէս հրճուանդ որք
՚ի ցաւոյ իւրում ՚ի տարմի աւեց թուզ ՚ի
ձեռն խնդրայ ընդ որ պարապտէր նմա՛ ող-
ջամ , որպէս ասէ՛ ՚յ առակսն , ամենայն
որ խնդրայ ընդ անկուածս տան այլոյ ա-
ւանց պատուհասց ոչ լիցի : Բ . տրտմի ընդ-
բարութիս ընկերին : Եւ յայս չար մօ-
լես ,

րէս , ծննանին ։ Է. դստերք չարք որպէս մայրն իւրեանց ։ Առաջինն է՛ անլսու-թիւն , որ զբարութիս այլոց ո՛չ կամի տեսանել , կամ լսել , որպէս Սաւուղ ո՛չ կամէր տեսանել զԴաւիթ՝ կամ լսել զբարութի նր ։ Բ. է՛ բանսարկութիւն , որ ՚ի մէջ բարեկամաց զատելութի և զաղմուկ սերմանէ , որպէս արար Աքի-տոփէլ ՚ի մէջ Դաւթի և Աբիսողոմայ ։ Գ. է՛ բամբասելն , և գործ նրէ՛ զբա-րութիս այլոց սևացուցանել , որպէս Դաթան և Աբիրոն տրտնջեցին ընդ-դէմ Մովսէսի և ցանկային քահանայա-պետութե անուանց կամացն իւր ։ Դ. է՛ չարախօսել զումեքէ , որպէս կինն Ա-քաբու չարախօսեաց զՆաբովթ և ետ սպանանել վ·ն այգոյն զոր ո՛չ վաճա-ռեաց ։ Ե. է՛ ծածկել զբարութիս այլոց , որպէս հրէայքն զՔսի սքանչելիսն , ա-սելով ո՛չ իւրով զօրութբ հանէ զդևս ։ այլ իշխանաւն դիւաց ։ Զ. է՛ անգոհու-թիւն , որ զայլոց բարութիս ուտէ և ե-րախտամոռաց լինի և ասէ՛ զբարութիս զայս՝ յինէն ունիմ , և ո՛չ ՚յ այլ ումեքէ ։ Է. որ պատճառաբանէ՛ զբան զամե-նայն , զի նախանձի շնորհաց ընկերին՝ որ է՛ ընդ դէմ Ոգւոյն սբյ , որպէս Բա-ղաամ որ Ոգի մարգարէութե ունէր ,

և ե-

և ետես զժողովուրդն այ̄ լցեալ Սգւոյն՝ վ̄ս նախանձու խնդրէր պատճառ կորուսեան ։ Ա. յաղէկ էն ։ Է. դատերք անխծեալ մօրն նախանձու որք հնչեան դպրուցանեն և կորուսանեն զհոգիս մարդկան ։ Բայց զի՞նչ է հնար բժշկութե ։ Ասեն վարդապետք թէ ․ Է․ կերպիւ հնարէ՝ բժշկել և փրկել յայսցանէ ․ Ա̄. է՝ սէրն սեռական, մտածելով թէ ամենեքեան եղբայրքեմք ՚ի միոյ հօրէ և ՚ի միոյ մօրէ ծնեալք, պարտիմք որպէս եղբայր եղբօր ցաւակից, տրտմակից և ուրախակից լինել, որպէս ասէ Պօղոս լալ ընդ լալօղս և խնդալ ընդ խնդալօղս ։ Բ. է՝ սէր եղբայրական հոգեւոր որպէս ասաց Քս̄ առաքելոցն՝ դուք ամենեքեան եղբարք էք ՚ի միոյ հօրէ Քի̄ է, և ՚ի միոյ մօրէ Եկեղեցւոյ յաւազ եկեալ ժառանգ միոյ հայրենեց̄ ։ Գ. է՝ զի ամենեքեան անդամքեմք միոյ գլխոյ որպէս ոչ նախանձի ոտն ընդ ձեռին կամ ձեռն ընդ ական, թէպէտ մի՛ քան զմի՛ պատուականէ՝, ձեռն, այլինքն, քան զոտն և ակն քան զձեռն ։ Նոյնպէս մեզ ոչ է՝ պարտ նախանձիլ ընդ պատուականութի և ընդ շնորհս ընկերին, այլ ուրախանալ ։ Դ. է՝ կատարեալն Քի̄ որ հրամայէ ՚յ ամենայնէ սիրել զընկերս,

և սէրն

և սէրն այն է՝ որ զամենայն ինչ համա-
բաղկաց մի՛ առնէ, ասելով այսպէս թէ
զոր ինչ իմ է քո է՝ և քոյն իմ ։ Ե. է՝ խորհիլ
թէ զինչ դառնութիւն լինի վ՟ս նախա-
նձու, զի ամենայն որ նախանձի ընդ ումեք՝
նա՛խ զինքն հարկանէ, և ա՛պա զայլոց ։
Զ. է՝ խորհիլ թէ վ՟ս նախանձու կորնչիք
և բաժանիմք ՚յեղբարց, և յորժամ մի՛
անդամն հատանի ՚ի մարմնոյն ո՛չ մնայ
կենդանի ։ Է. է՝ զմտաւ ածել թէ բա-
րութիւն այլոց օգտութիւն է՝ մեր և ո՛չ պա-
կասութիւն, աստ՝ և ՚ի հանդերձեալն, զի
աստ՝ շահիմք և ՚ի հանդերձեալն յոյժ
ուրախանամք որ չե՛մք առանձին ունի-
ցիմք զորդիս արքայութեան, քանզի ա-
մենեքեան զբարութիւնս այլոց տեսանեմք ։
Իսկ նախանձոտք նմանեն շան, զի շունն
զայլ շունս ո՛չ թողու ՚ի տուն տ՟ն իւրոյ,
մտածելով թէ զնա՛ սիրէ և զիս ատէ,
և կամ վ՟ս պատուելն ։ Դարձեալ նա-
խանձոտ է՝ շունն քանզի յորժամ հիւան-
դանայ գիտէ խոտ մի՛ որ դեղ է՝ վ՟ս իւր
՚ի ծածուկ երթայ վ՟ս նախանձու թէ
մարդ ո՛չ տեսանէ և ուտէ զայն խոտն ։

Վ՟Ն ԲԱՐԿՈՒԹԵԱՆ։

որ է՝

Երրորդ գլուխ վիշապին։ հարց. Զի՞նչ է՝ բարկութիւն։ պատասխանեմ, բարկութիւն է՝ որպէս ասէ՝ Օգոստինոս ցանկութի վրէժ խնդրութե։ և յոյժ հակառակէ Բ՟ի բազում կերպիւ, նախ զի զատուցնն զմ՟դ վրդովէ և խռովէ, որպէս ասէ՝ մ՟ծն Գրիգոր որ չափ բարկութիւն զմիտս հարկանէ զբնականութի Աստուծոյն մ՟ր բանէ և շարժէ, բանզի խաղաղութի է՝ տեղի նր, որպէս ասէ՝ Դաւիթ։ և Պօղոս եղբարք մի՛ տրտմեցուցանէք զՈգին մ՟ր։ Բ. բարկութիւն ՚ի տաճարի մ՟յ զպատկերն մ՟յ ապականէ՝ և զպատկերն սատանայի ՚ի ներքս մուծանէ, զի պատկերն մ՟յ սիրէ զհանդարտութե տեղին, զի ինքն իսկ հանդարտ է՝ և ոչ երբէք փոփոխի, բայց սատանայ որ սուտ բարկութե է՝ ոչ գոյ ՚ի նմա հանդարտութի։ Գ. բարկութիւն զտաճարն մ՟յ այրէ և պղծէ որպէս ասէ՝ Դաւիթ Սղմ. Հը. Ած մտին հեթանոսք ՚ի ժառանգութի քո պղծեցին զտաճար ս՟բ քո։ Արարին զեր-

զերծում ։ Եւ այն ։ քանզի նոքա բարկու֊
Թեան զսիրտ բարկացողին եւ ապականանէ ։
որպէս Պօղոս ասէ՛ Թէ ամենեքեան
տաճար այ էք , որ զտաճար այ ապա֊
կանէ՝ ապականեսցէ զնա ա҃ծ ։ Դարձեալ
յոյժ վիրաւորի ա҃ծ ՚ի բարկութէ , զի
բարկացօղք որք վրէժ առնուն՝ զիշխա֊
նութիւն այ խլեն ։ որպ գրեալ է՛ ՚ի հա֊
րանց վարքն ։ Թէ ոմն կրօնաւոր բար֊
կացեալ ումեմն՝ գնաց առաջի հօր վա֊
նացն որում անուանէր Փիլոն , եւ ասէ՛
հայր՝ կամիմ ես վրէժ առնուլ յումեմնէ
կրօնաւորէ , եւ Փիլոն ՚ի ծունկս եղեալ
ասէ՛ ա҃ծ՝ մեզ այլ չես ՚ի պէտք, զի ա֊
մենեքեան զիւրեանց վրէժն առնուն , եւ
դու հրամայես քերանօքն Պօղոսի Թէ
իմ է՛ վրէժ խնդրութի ։ յայնժամ չիջաւ
բարկութի կրօնաւորին ։ բայց տես Թէ
որպէս ներհակէ՛ բարկութիւն ա҃յ եւ
դիւլին սատանայի ։ որպէս ասէ՛ Սո֊
ղոմոն Թէ բարի ծառայ իմաստուն ա֊
ռաջի այ , զի որպէս բարւոք Թուի
իմաստուն մարդն առաջի այ , նոյնպէս
հոգւովն յիմարեալն եւ կուրացեալն սա֊
տանայի ։ որ նմանէ՛ սեաւ ագռաւու ,
զի յորժամ սա կամի զէշ կամ զայլ ա֊
նասուն ուտել՝ նախ զաչքն հանէ , եւ
ապա զայլ մարմինն զիշատէ ։ նոյնպէս

սատա֊

սատանայ նմին ջանայ զմարդն 'ի բար-
կութի շարժել , և յետոյ հայհոյել տալ
զծնօղսն , և հարկանել զզաւակսն , կամ
զայլ ոք սպանանել , և այնպէս լինել
որդի գեհենոյն և պատարագ սատանայի ,
որպէս ասէ՛ 'յառակսն . ԺԵ. գլխ : Թէ
բարկութիւն զողորմութի ոչ ունի : վասն
զի 'յամենայնէ վրէժ առնու 'յիւրոց և
յօտարաց : և զայս բարկութիս ցուցա-
նէ աւետարանն , որպէս ասէ՛ պատաս-
խանի ետ մինն 'ի ժողովրդենէն և
ասէ՛ վարդապետ ածից զորդի իմ առ-
քեզ զի ունի այսս համր և ուր հասանէ
զարկուցանէ զնա և փրփրէ և կրճտէ
զատամունս իւր և ցամաքի : այս է՛ դեւն
բարկութե , որ երբեմն զմարդն 'ի հայ-
հոյութի ընկենու և երբեմն 'ի սպանու-
թի և այսպէս մաշա 'ի հուրն յաւիտենից:
Դարձեալ բարկութիւն լի է՛ յիմարութե ,
վս զի յոյժ յիմարութի է՛ մարդոյ որ
մտանէ զհոգի իւր , և վտանգս ինչ բերէ
մարդկան բարկութեն իւրով՝ վս սակաւ
պատճառի , և կորուսանէ զմեծագին
գանձս իւր : և եթէ վրէժ առնու ոչ
կարէ կատարեալ վրէժ առնուլ , որպէս
ասէ՛ ումն իմաստասէր ընդ ումեմն բար-
կացողի , թէ ինչ առնես դու յիմար՝ զի
զէշս այլոց սպանանես , այսինքն , զմար-

մինն ,

մինն , և այս է՛ կատարեալ վիճակ խն_
դրութեն քո , և թէ առնիցես զայս՝ քեզ
յոյժ մեծաս առնես , զի կամ զքեզ սպա_
նանեն ընդ նմին , և թէ ոչ՝ հոգին քո եր_
թայ 'ի դժոխքն՝ յաւ_իտենականն ։ և բար_
կացողն նմանէ՛ խոզի , զի յորժամ խոզն
հարեալ լինի նետիւն՝ անկանի 'ի վերայ
փշոց և կրկին վիրաւորեալ մեռանի ։
դառնացեալ նմանէ՛ մեղուի որ խայթէ
զայլս , և ինքն մեռանի ։ դառնացեալ թէ
ոք դժուարահար լինի որ զկրակն բառնայ
'ի թիկունս ։ նոյնպէս ամենայն ոք որ
զբարկութեն պահէ 'ի սիրտ իւր՝ զհուրն
պահէ 'ի ստոտ իւրում , և յոյժ յիմարու_
թիւն է՛ այս ։ Եւ բարկութեն ունի դու_
տերս . Է. չարս ներքև զինքն որպէս ասէ՛
սբն Գրիգորիոս ։ Նախանձն է՛ վերաւոր_
ացն , զի 'ի չարութէ սրտին որ լի է՛
թունով՝ ոչ կարէ խօսել ընդ ոք բարեօք
և կամ հաշտութբ , այլ յոյժ դառնու_
թբ և մախանօք ։ և սոքա նմանեն կա_
նանց գողոտան , որ ոչ խօսի , այլ չնչէ
'յ երեսս մարդոյն՝ և սպանանէ , որպէս եր
Հերովդէս , որ սպան զՅովհաննէս մկր_
տիչն և ամենայն որ բարկանայ սպանանէ
զՅովհաննէս , որ թարգմանի շնորհք այ ։
Բ. դուստրն է՛ պարսաւ_անքն որ հայ_
հոյէ զայլ ոք , նախատէ և արհամար_
հէ ։ և

հէ ։ և այս նմանէ՛ դժնիկ ծառոյ որ հիւթ ոչ ունի զի բնութբ չորէ՛, և ՚ի ժամանակս ամառայնին յորժամ ջերմն հողմն հնչէ ՚յերկրէնէ վառի, և զամենայն մայրիս հրդեհէ ։ այնոցիկ ասէ՛ Քս որ բարկանայ եղբօր իւրում՝ պարտաւոր լիցի գեհենոյն ։ Բ. դուստրն է՛ որ ՚յա_ ուռնել բարկութբ հայհոյէ զԱծ և վրէժ առնու ՚յԱյ ։ և այսոքիկ վատ_ թարագոյնք են քան զհրէայսն, որք զՔս խաչեցին, զի հրէայքն զՔն մեծութին ոչ գիտէին ։ և վատթարք են քան զշուն, որ ընդդէմ Տն իւրոյ ոչ հաչէ, և սո_ քա հայհոյեն զարարիչն իւրեանց ։ և պատիժ սոցա մեծագոյն է՛, որպէս ասէ՛ ՚ի գիրս ղևտացւոց ։ թէ ոմն ՚ի հօրէ ե_ գիպտացի և ՚ի մօրէ եբրայեցի հայհոյ_ եաց զԱծ յայնժամ հրամայեաց Տր Մովսէսի թէ վկայք . Բ. դնեն զձեռն ՚ի վր գլխոյ նր ։ և հանէք արտաքոյ բա_ նակին և քարկոծեցէք ։ նոյնպէս այժմ պարտ է՛ առնել զհայհոյիչսն ՔՆ, որք են սուտ քրիստոնեայք, որպէս ասէ՛ ՚ի ոսկին թէ պատրաստէ հուր յաւիտե_ նականս որք հայհոյեին, և ՚ի դառնութե տանջանաց զլեզուս իւրեանց խածանեն Գ. է՛ որոշումն զի սրբելիքն որք կատարա_ ցեալք են սրով, բարկութբ բաժանեն

 ՚ի մի

՚ի միմեանց ։ և սա է՛ որ անուանէ զա_
շխարհս , որպիսի ՚ի սկզբան շինի , որպէս
ասէ՛ Պօղոս ։ և զի ո՞չ բնութիւն մար_
դոյն ապականին ՚յանմիաբանութէ տա_
րերաց՝ նոյնպէս անուանին աշխարհս ՚ի
հակառակութէ և ՚ի թշնամութէ ։ իսկ
որք ճշմարիտ զպատուիրանս ո՞չ պահեն՝
միայն անխարդախ , ո՞չ ասէ՛ ՚ի դիրս
Թագաւորութեց ։ յորժամ եօծ Սամու_
էլ զԴաւիթ Թագաւոր Իսրլի՝ յայն_
ժամ Սաւուղ թագաւոր և կամէր
սպանանել զնա՛ և ո՛չ կարաց մինչև մե_
ռաւ Սաւուղ , և տունն Սաւուղայ ո՛չ
հնազանդեցաւ Դաւթի ։ բայց Տր
նուաղեցոյց զտունն Սաւուղայ և բար_
ձրացոյց զտունն Դաւթի ։ նոյնպէս որք
միաբանին ընդ Եկեղեցւոյ բարձրանան,
իսկ որք հակառակին կործանին ՚ի խորս
անդնդոց ։ Է. դուստրն է՛ կուսն, և կուսն
է՛ համարձակութի բարկութէ կործանել
և ապականել զմիմեանս զի ՚ի սմանէ ե_
լանեն ստախօսութիւնք, չարութիւնք ։ վա_
տահամբաւութիւնք, սպանութիւնք ։ և կու_
սն բան զամենայն մեղս առաւել ընդ_
դէմ է՛ այ, զի գտանեմք ՚ի Տնային գիրս
որ բան զհաշտութիւն պատուէրական ո՛չ
ինչ է՛ առաջի այ , և ինքն որդին այ
կամեցաւ ծնանել ՚ի հաշտութէ ժա_

մանուկս, ոպ ասէ՛ Ղուկաս ․ Բ․ գլուխ ։
Ձուլեսցեն զսուսերս իւրեանց ՚ի խոփս և
զսուինս իւրեանց ՚ի մանգաղս ։ և հրեշ-
տակք երգեն փառք ՚ի բարձունս այ և
՚յերկիր խաղաղութի ։ Պարծեալ Քսն
ասէր երանի խաղաղարարաց զի նոքա
որդիք այ կոչեսցին ։ և Պօղոս ՚յեփեսց․
Բ․ ասէ՛ Քսն է՛ խաղաղութի մեր, որ ա-
րար զերկոսեանսն մի՛ ։ ապաուրեմն ոպ
հաշտութիւն զմարդն որդի այ առնէ՛,
նոյնպէս կռիւն որդի սատանայի ։ Գ․
դուստրն է՛ անժուժկալութին, և բար-
կացողն ՚յանժուժկալութեն զհամար-
ձակութի բարկութեն իւրոյ ոչ համ-
դարտեցուցանէ, և այս յոյժ յիմարու-
թի է՛ ։ քանզի եթէ տեսանէ ոք զտուն
իւր վառեալ որ իմաստունն է՛ ջանայ շի-
ջուցանել զհուրն զի ոչ աւերեսցի ժառ-
անգութի իւր ։ իսկ որ յիմարն է՛, ոչ
ջանայ շիջուցանել և ոչ ինչ փոյթ է՛
նմա ։ եթէ այրի, և կործանի տունն
իւր այսպէս բարկութին այրէ և հր-
դեհէ զհոգևոր բնակութի և ժառան-
գութի մարդոյն, զի գրեալ է՛ ՚ի սբ գիրս
թէ բարկութի մարդոյ զարդարութին
Այ ոչ գործէ ։ այլ ՚ի ժամ բարկութի
պարտ է՛ համբերել և ոչ մեղանչել,
քանզի ասէ՛ առաքեալն մարգարէին ։

բարկանայք և մի՛ մեղանչէք , այսինքն ,
կամ ընդ դէմ այ , կամ ընդ դէմ
ընկերին , կամ ընդդէմ նորա , այլ համ_
բերել , և այսպէս համբերութբ ձերով
ասէ՛ սրբն ստացջիք զոգիս ձեր ։ ապա_
ուրեմն երեւի թէ անժուժկալութիւն կո_
րուսանէ զժառանգութիւն որ է՛ հոգին ։
յաղագս այնորիկ ասէ՛ Սողոմոն ․ յառակ․
ժզ․ գլխ ։ լաւ է՛ հանդարտասիրտն խո_
նարհութբ՝ քան զայն որ բաժանէ զա_
՛ւարս ընդ թշնամանողս ։ ՚ի մեկնութի
բանին ասեն վարդապետք թէ բարի է՛
ժուժկալութի մարդոյն , քան զբազում
քաղաք և երկիր հնազանդեցուցանել , և
որք ո՛չ ունին զժուժկալութի ո՛չ ինչ
ունին նշան առաքինութե , վա զի մարդն
՚յաշխարհս ՚ի պատերազմ են զի յաղթե_
ցեն որք զժուժկալութի ո՛չ ունին ո՛չ գի_
տեն պատերազմիլ , և ո՛չ յաղթել ։ Է․
դուստրն է՛ չարախոհութիւն ։ չարախո_
հութիւն է՛ որ ունենք չար ո՛չ կարէ առնել
այլ ՚ի սիրտս իւր պահէ զչարն ներգու_
թբն ոմ ասէ՛ Դաւիթ , որպէս ա_
ծելի սուր սրեաց զնենգութի՝ սիրեաց
զչարութի քան զբարութի զանօրէնու_
թի քան զխօսս արդարութե վսնզի ՐԾ
կործանեսցէ զնա սպառ ։ որպէս Սիմոն
կախարդն որ ո՛չ կարաց յաղթել Պետ_
րոսի

րոսի և Պօղոսի , բարկացաւ նենգութե̄ն
ընդ դէմ առաքելոցն գնաց ա՛ռ Ներոն
զի սպանցէ զառաքեալսն , և նուա՛խ ինքն
կորեաւ : և քանզի վասն բարկութե̄ ,
հասանի մարդն ատել զեղբայր իւր
և զմերձաւոր իւր՝ և այսպէս լինի յոյժ
մեղապարտ , քանզի լինի մարդասպան
վնկ̄ ասէ՛ առաքեալն Յովհաննէս . ա̄.
կԹղկց̄ . գ̄. գլխ : ամենայն որ ատէ զեղ-
բայր իւր մարդասպան է՛ : Արդ՝ այսո-
քին են , է. դստերք անիծեալ մօրն բար-
կութե̄ : Ապաուրեմն որք կամին սպա-
սաւորել Այ̄ պարտ է՛ նոցա հեռանալ
՚ի բարկութէ̄ , որպէս ասէ Ք̄ս Մա̄տ-
Թէի , Ե. եԹէ մատուցանիցես զպատա-
րագն քո՛ ՚ի վ̄ր սեղանոյ , և անդ յիշես-
ցես եԹէ եղբայր քո՛ ունի ինչ զինէԹ
ղէն Թո՛ղ զպատարագն քո՛ առաջի սե-
ղանոյն և երԹ նախ հաշտեաց ընդ եղ-
բօր քում , և ապա՛ եկեալ մատուսջիր
զպատարագն քո : այսպէս արասցուք և
մեք , զի մի՛ մեղանչեսցուք բարկանա-
լով , այլ համբերելով ստասցուք զհոգիս
մեր՝ զոր տ̄րն մեր Ք̄ս շնորհեսցէ
մեզ : Ամէն :

ՎՍ̃ ԾՈՒԼՈՒԹԵԱՆ՝

որ է՝

Չորրորդ գլուխ վիշապացն : Հարց : Օ ինչ է՝ ծուլութիւն : Պատասխանեմ , ծուլութիւն է՝ հեղգութիւն ոգւոյ , որ անփոյթ առնէ սկսանիլ զբարիս գործել , կամ 'ի սկսեալ բարեգործութիւս ձանձրանայ կատարել , և այս մեծ մեղք է՝ մահու չափ , վ̃ս զի զամենայն ինչ զոր ՔՍ̃ հաստեղծ վ̃ս գործոյ ուրուք հաստեղծ զի իւրաքանչիւր ո՛ք զիւր գործն առնէ , և այս է՝ կատարելութիւն ստեղծ՛ուածոյս որ իւրաքանչիւրոք զիւր գործն կատարեսցէ , և ամենևին ո՛չ ձանձրասցի որպէս արեգակն և լուսինն և այլք զօրութիւնք երկնից ո՛չ ձանձրանան յընթացից իւրեանց և գործոյն ըստ սահմանի ՔԻ̃ , և ծառք 'ի ժամանակի իւրեանց տան զպտուղս : մեղուն և մրջիւնն ո̃ղ անդադար գործեն թռչունքն և անասո՛ւնքն և այլքն ամենայն , ունին և ճանաչեն զգործս իւրեանց : Նոյնպէս մարդն պարտ է՝ գործել միշտ զբարիս 'ի ժամանակս իւրս և ո՛չ երբեք ձան-

ձրա-

ձրամեալ, և մանաւանդ թէ մարդն ծնեալ
է՛ յաշխարհս. վասն ոչ պարտի ծու-
լանալ, եթէ ոչ Սողոմոն յանդիմանէ զնա
այսպէս ո՞վ վատ երթ առ մրջիւն, որ
յամառնայնի ժողովէ, և այլն. և ուսիր ՚ի
նմանէ և այլն. այսու վասն մարդկան ա-
մառն է՛ ժամանակս այս, յորում պարտ
է՛ զբարիս գործել. բայց բազումք են ՚ի
գործս Տ̃ն հեղգք, և յերկրային գործս
իւրեանց արիք. որ̃պ գրեալ է՛ ՚ի վերայ մե̃ց
Հարանցն, թէ ոմն ծեր ետես զկին մի՛
պոռնիկ զարդարեալ յոյժ վասն պոռն-
կութեան. և ծերն ելաց յոյժ դառնա-
պէս. եհարց զնա աշակերտն ընդէ՞ ՚ի
լաս հայր՝ ասէ՛ բարի ծերն, զիա՞րդ
ոչ լամ, քանզի ես վ̃ս սիրոյն Տ̃ն ոչ
զարդարեցի զիս, որ̃պ կինն այդ զարդա-
րեալ է՛ զինքն վ̃ս սատանայի. դարձեալ
ոչ է՛ բնաւ սովորութի̃ն իմաստնոց ասուանց
գործոյ լինել. որ̃պ գրեալ է՛ յարարածքն.
Ժը. Թէ փութացաւ Աբրահամ ՚ի խո-
րանն, և ասէ՛ ընդ Սառայ կինն իւր
փութա՛ և թրեա՛ գրիւս երիս ալեր. և
ինքն յանդեայ ընթացաւ եառ որթ և ետ
՚ի ծառայն և սաստ փութա՛ առնել ՚ի տուն.
՚ի մեկնութի̃ն բանիս ասէ՛ Որոգինէս.
ծերն վազեաց, Սառայ փութացաւ, և
ծառայն երագեաց. զի ոչ ոք է՛ ՚ի տուն

իմաս-

խոստմանց հեղգ ։ դարձեալ ասաց Տէր
Ադամայ քրտամբք երեսաց քոց՝ կերիցես
զհաց քո ։ զի պարապութիւն բազում
վնաս բերէ ոպ ասէ Եզեկիէլ այս է՝
չարութիւն Սոդոմայ՝ լիութիւն հացի, և
յղփութիւն գինւոյ, և պարապութիւն գոր-
ծոյ ։ քանզի որպէս բուրաստան որ ան-
խնամ է՝ խոպանանայ ։ նոյնպէս մարդն
որ պարապ է՝ բարի գործոց, սերմ նե
խոպանէ, և ծնանի զփուշ չարութեան մե-
ղաց ։ որպէս ասէ Սիրաք ․ Ժգ․ մի խա-
բեսցես յաւուր բարւոյ, և մասնիկ
բարւոյ տուր զքեզ մի անցցէ ։ և յետ
սակաւ ինչ բանի, ասէ՝ տուր և առ,
և արդարացո զանձն քո ։ նախ քան
զվախճանն քո գործեա զարդարութիւն ։
զի ոչ գոյ ՚ի դժոխս գտանել կերակուր ։
և Պօղոս գաղատ․ Զ․ ասէ ։ Մի զբարիս
գործել մի ձանձրասցուք, զի ՚ի ժամա-
նակի իւրում հնձեսցուք առանց լքանե-
լոյ ։ և Յոհան, ՚ի յայտն․ Գ․ ասէ, գի-
տեմ զգործս քո, զի ոչ ցուրտ ես՝ և ոչ
ջերմ, երանի էր թէ ցուրտ լինէիր կամ
ջերմ ։ այլ քանզի գաղջ ես, և ոչ ցուրտ
ոչ ջերմ, սկսեալ եմ զքեզ փսխել ՚ի բե-
րանոյ իմմէ ։ Ի մեկնութիւն բանիս ասեն
վարդապետք, թէ առաւել զյոյս ու-
նին, որք ցուրտ են, քան զայնոսիկ որք

գաղջ

գաղջ են , զի որք ցուրտեն՝ երկնչին ։ Բայց որք գաղջ են՝ անկեալ են 'ի ջերմութենէ և 'ի ցրտութենէ , և սակաւ յոյս ունին , թէ զբարի ևս ունին ։ և վ՟ս սակաւ յուսոյն ոչ յաճախեն 'ի գործս բարիս այլ հեղգ մնան ։ և այնպէս հեղգանալովն՝ Ա՟Ծ արտաքսէ զնոսա 'ի կենաց յուսոյն ։ Բան զի ո՟պ գաղջ ջուրն զստամոքսն շարժէ՝ նոյնպէս ծուլութիւն շարժէ զԱ՟Ծ 'ի բարկութիւն ։ Տրն մեր 'ի Մ՟տթէի ․ Ժբ ․ ասէ՛ Այլ յորժամ այսն պիղծ ելանէ 'ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս , խնդրէ հանգիստ՝ և ոչ գտանէ ։ Յայնժամ ասէ՛ դարձայց 'ի տուն իմ ուստի ելի , և եկեալ գտանէ զնա պարապորդ մաքրեալ և յարդարեալ ։ յայնժամ երթայ և առնու ընդ իւր եօթն այլ այսս չարագոյնս քան զինքն , և մտեալ բնակեն անդ՝ և լինի մարդոյն այնորիկ՝ յետինն չար քան զառաջինն ։ և այս ցուցանէ զհոգևոր հեղգացեալսն ։ Դարձեալ ծուլութիւն յոյժ վնասէ , նման զի բերէ մարդոյն նուաղութիւն և աղքատութիւն , ո՟պ ասէ՛ Սողոմոն , յառակս ․ Ի ․ գլ՟խ ։ վ՟ս ցրտոյ ծոյլն հերկել ոչ կամեցաւ , մուրասցի ուրեմն 'յամարայնի , և մի՛ տացի նմա ։ և Ժ ․ գլ ․ զաղքատութիւն գործեաց ձեռն ծուլեալ,

ղեալ , իսկ ձեռն հզօրաց զհաստատութիւն
պատրաստէ ։ Երկրորդ զի նախատինք
լինի մարդ՝ մեծ ծուլութե՟ ։ որպէս ասէ՛
Սիրաք ․ Իբ․ կաւօվ շաղախի ծոյլն՝ և որ
բուռն հարկանէ զնմանէ Թօթափէ զձե֊
ռս ։ այս կամի ասել Թէ ծաղր լինի
ամենեցուն և զազրելի ։ Ապաուրեմն
ծուլութիւն , ատելի է՛ ա՟յ և յոյժ հա֊
ճելի սատանայի ։ Սա՛ և ս ունի ․ Է․
դստերս վատս և անիծեալս քան զինքն ,
այսինքն ․ Է․ գործք չարութե՟ , որք կո֊
րուսանեն զմարդիկ ։ Ա՟․ է՛ հեղգութի՟
սրտի , որով զբարիս ամենևին ոչ առ֊
նէ , կամ սկսանի ։ ո՟պ ասէ՛ Երեմիայ
ընդդէմ սորա ․ Մօվաբ հանգեաւ ՚ի
գարշութիւն իւր , զի ոչ է՛ փոխեալ ՚յ անօ֊
Թէ ՚յ անօԹ ։ Մովաբ Թարգմանի ՚ի
Հօրէ , այսինքն , զտեսակն ՚ի Հօրէ ու֊
նի , քանզի ՚ի մէջս ծնեալ ՚ի մէջս մնայ ,
և քնաւ ոչ Թողու զմեղսն ։ Նմանի սա
խոպանացեալ ագարակի , կամ այգոյ որ
ոչ լինի խնամեալ , և ՚ի տեղի պտղոյ
բերէ փուշ , և տատասկ ։ ո՟պ ասէ՛ Սո֊
ղոմոն անցի ընդ ագարակս հեղգաց , և
ընդ այգիս անզգամաց , և տեսի փշալից
եղեալ զնոսա ։ Ագարակս այս նշանակէ
զսիրտս մարդկան , եԹէ ոչ լինիցի խնա֊
մատարեցեալ՝ լնանի չար խորհրդով ։ Բ․

դու֊

դուսարն է՛ ձանձրութին , զի սկսանին պահք , աղօթք բարեգործութիք , և յետոյ ձանձրանան և ո՛չ հաստուցանեն ՚յաւարտ , և այս յոյժ երկնչելի է՛ ։ զի ոպ ոք է՛ ՚ի մէջ սրնթաց դեսռի՝ եթէ ո՛չ ջանայ երանել՝ կորընչի ։ Նոյնպէս ամենայն ոք , որ կեայ ՚յ աշխարհս այս ոպ թէ ՚ի մէջ դեսռի է՛ , եթէ ո՛չ հնարի ելանել , այսինքն , զբարեգործութի առնել և աշխատիլ վս հոգւոյ իւրոյ , մնայ այնպէս ծոյլ ՚ի մէջ աշխարհիս , և ո՛չ կարէ վս հոգւոյ իւրոյ զարդիւնս ստանալ՝ զի հոգք աշխարհիս հեղձուցանեն զմարդն , վս այսորիկ անպտուղ լինի , և այսպէս անարդիւն և անպտուղ մեռանի , ոպ թէ ՚ի գետ ընկղմի իջանէ ՚ի դժոխս ։ Պարտուպեմն պարտի ամենայն ոք խնամալ թէ ծուլութին որ չարի մնաս է՛ իւրն , վն զգուշացեալ զբարիս գործիցէ և մի՛ ձանձրասցի ։ և քան զի ոպ ձեռն կամ ոտն մարդոյ և կամ համդերձն եղանուի , եթէ քաղում անգամ ո՛չ լուանայ , ո՛չ սպիտակի , և ո՛չ մաքրի, այսպէս ծուլանալով ՚ի բարեգործութէ չլանին մարդն աղտեղութբ մեղաց , պարտ է՛ նմա աշխատիլ բարեգործութբ զի լուացեալ և մաքրեցեալ լիցի Հոգին ։ դարձեալ ծոյլն ցուցանէ թէ ո՛չ ունի

զսէրն

զսէրն Այ ։ զի եթէ ունէր , զբարիս
գործէր , որպէս ասէ՛ մեր Գրիգոր թէ սէրն
Այ ոչ է՛ առանց գործոյ ։ զի որ զսէրն
Այ ունի բազում ինչ գործէ , և թէ
ոչ գործէ ոչ ունի սէր , որպէս հաստատէ
Սբն Պօղոս թէ չորրորդն այս ոչ է՛ ընդդա_
րայն ։ Դ. դժուարինէ՛ անփութութիւն ,
այսինքն , անհոգ լինել , և անփոյթ առ_
նել զբարիս գործել , զանց առնու և ոչ
զգուշանայ զանցեալ մեղս իւր լալ , ներ_
կայ մեղացն ելանել , և՛ յապառնի մե_
ղաց պահել զինքն ։ և ոչ մտածէ թէ
գնալոցէ առաջի Քի համարս տալ ,
քանզի ամենեքեանքս կալոցեմ առաջի
ատենին Քի ըստ առաքելոյն Պօղոսի ։
և բան զի ամենեցուն Աձ ըստ իւրա_
քանչ իւրոյ կարեաց զհատուցումն առնելոց
է՛ , զի նոքօք ՚յաշխարհի աստ օգտեցին
և շահաւորեցին , այսինքն զբարիս գոր_
ծեցեն և արդիւնաւոր լիցին և մի ծոյլ
մնասցէ ։ որպէս օրինակաւն այն , որ Մտ_
թէի . իե. Տրն ինքն մեզ ծանուցանէ ։
Ոմանց ետ Ե. քանքար , և ումեմն Բ.
ումեմն Ա. իւրաքանչիւր ըստ իւրում
կարի , և գնաց ։ և վսնզի ոչ է՛ անփոյթ
այսոցիկ առեցելոց տաղանդացս այլ
գոյ ծառայական յորում գալոցէ՛ Տրս այս
և համարս պահանջելոց ։ վերջկ ասէ՛ ։

Յետ

Յետ բազում ժամանակի գայ Տր ծա_
ռայիցն այնոցիկ՝ և առնէ համարս ՚ի
մէջ նոցա ։ և եթէ կարիցեն պատասխանա_
նել պարզ երես լինելն և փառաւորելն ։
և եթէ ոչ, տես զինչ հատանելի զարհու_
րելի ։ Լուէք ՚ի դատաւորէն զբանսբարդ՝ և
այլն ։ և զծառայդ անպիտան հանէք ՚ի
խաւարն արտաքին, անդ եղիցի լալ՝ և
կրճել ատամանց ։ Լուր՝ բանքային նը_
շանակէ զշնորհսն Այ, կամ զգիտու_
թիւն, կամ զիմաստութիւն կամ զայլ բա_
րութիւն, զի նոքօք շահեսցի զարքայու_
թիւն, և եթէ ոք անփոյթ առնէ զնոսա,
ծոյլ մնալովս, ամենայնին բարձի ՚ի
նմանէ ։ և եթէ ոչ անփոյթ առնէ, այլ
հոգ տանի և պտուղ ածէ զնոսա, տես
զինչ գովութիւն Ղուկս . Ժբ . Երանի իցէ
ծառային այնմիկ, զոր եկեալ Տր իւր
գտանիցէ արարեալ այն այնպէս ։ Դ. Դու_
սորն է՝ անզգուշութիւն ։ և անզգուշու_
թիւն է՝ պակասութիւն հոգևոր լուսոյ,
զոր ոչ ունելով՝ ոչ կարէ ճանաչել և
որոշել զբարին ՚ի չարէն, զոր օրինակ,
եթէ ոք կամի փախչել ՚ի մոլորութէ և
՚ի ժլատութէ, վատնէ անառակ զամենայն
ինչս իւր, որ բնաւ ոչ մնայ, այս մեղք
է՝, զի ոչ գիտէ զսահման առատա_
տութէ, որպէս Աստուածն որոշեն եւս

զբա_

զքաղցրն յընչից Հօրն իւրոյ եւ վայելեսցէ
զամենայն ։ Անզգուշութիւն եւս մեղք է՝
ընդ դէմ իմաստութեան , զի իմաստութիւնք
են նորա , որք զվախճանն իւրեանց կա-
րեն ՚ի բարին առաւարտել , եւ զզգուշանալ
յայնմանէ իրէ , որ արգելու զմարդն ՚ի
բարեգործութենէ ։ Բայց իմաստութիւն
մարմնաւոր՝ ներհակ է՝ սմին , որպէս
ասէ՝ Պօղոս . Հռովմ . ը. իմաստութիւն
մարմնոյ թշնամութիւն է՝ ՚յԱծ ։ ապաւա-
րեմն որ իմաստութիւն է՝ զներհակ առաքի-
նութեան զմեղսն գիտէ , որպ Յովսէփ ՚ի
մէջ նախանձ եղբարցն եւ ՚ի մէջ պատրա-
տեցն ընտրութեան արար , այսինքն , հնար
գտաւ ՚ի մէջ առաքինութեան եւ մեղացն ։
Թէ որպէս զերծցի ։ Է. դժուարին է՝ մեղ-
կութիւն , եւ մեղկութիւն է՝ թուլութիւն եւ
ցրտութիւն սրտի , այնմ իրի , որոյ պատ-
ճէր նմա լինել ջեռեալ ոգւով՝ որպ ասէ՝
Պօղոս ոգւով եռացէք ։ Քանզի Ճա-
ւէր հաստատացելոց ճանապարհն այս է՝
ջերմեռանդ լինել ՚ի գործս ԱՅ եւ փր-
կութեան հոգւոյ իւրոյ , եւ որ ընդ որէ
յամենելու ՚ի բարեգործութենս , այսինքն ,
միշտ ընթանալ ՚ի բարւոյն առ լինելն ,
եւ ՚ի լինելն առ պատուականն , եւ ոչ
մնալ նոյնպէս , որպ յառաջն , այլ պարտ
է՝ յառաջանալ , քանզի ասէ՝ մք Տեր-
նմանս

նմանս թէ չառաջանայն է՛ յետս դառ-
նայ ։ և այս ճշմարիտ է՛ , վ̄ս զի ամե-
նեքեան ընթանան դու մնաս , ապա-
ուրեմն նոքա գնան , դու յետս մնաս ։
որպ̄ յայտնի է՛ ՚ի վարս Սբ̄ց՝ և ՚ի կատարե-
լութիւն նոցա , զորս տեսանեմք և
յաւէտ ընթեռնումք , որք օր ըստ օրէ
միշտ մեծանան և յաւելուն ՚ի սրբու-
թիւն իւրեանց , արիանան , և հանապազ
առաւել ջերմեռանդ լինին ։ ըստ առա-
ջելոյն ՚յառակին ․ դ̄․ Ճանապարհք ար-
դարոց իբրև լոյս ծագեն , առաջնոր-
դեն՝ և լուսաւորեն , մինչև տիւն ծա-
գեսցի ։ քան զի որպ̄ Արեգակն , յոր-
ժամ բարձրանայ՝ առաւել պայծառա-
նայ և ջերմանայ՝ նոյնպէս Սբ̄քն , որ
չափ յառաջանան , այն քան ջերմանան
՚ի սէրն Ա̄յ , և պայծառանան , և որպ̄
Պօղոս ասէ՛ ․ ա̄․ կոր̄ն ․ ժգ․ մինչ տղայն
էի՝ իբրև զտղայ խօսէի՝ իբրև զտղայ
խորհէի , իբրև զտղայ համարէի ։ այլ
յորժամ եղէ այր՝ զտղայութեան ՚ի բաց
խափանեցի ։ զ̄․ դուստրն է՛ տրտմութիւն,
տրտմութի̄ւն է՛ պակասութի̄ ցնծութե̄
և ուրախութե̄ , զոր ՚ի ծառայութեն
Ա̄յ պատուէր առնել՝ որպ̄ ասէ՛ Պօղոս,
մի՛ սու հարկի և տրտմութե̄ , քան զի
զտուրս զուարթս առատս սիրէ Ա̄ծ ։

 և թէ

և թէ Ած սիրէ զծառայութիւն զուար_
թս , ապաստուրեմս զողորմութիւն առնէ ,
զի ոպ̃ լեղին զկերակուրն դառնացու_
ցանէ՝ նոյնպէս տրտմութիւն զբարի գոր_
ծսն , զի բարի գործք հաւատացելոցն
կերակուր է՝ Այ , քան զի կատարեալ
բարեգործութի ումեք այն է՝ որ առնէ
զկամս Այ , և փոխանակ տայ կերակուր Այ,
զի զհաճոյսն առաջի նորա առնէ , և
այս յայտ է՝ օրինակաւն ՚ի Սբ Աւետա_
րանին Յօհաննու , գլ. դ. յորժամ Քս
Տրն մեր էին ՚ի քաղաք մի Սամարացւոց
որում անուն էր Սուքար մերձ ՚ի գիւղն,
և այլն ։ և Յս վաստակեալ ՚ի ճանա_
պարհէն նստէր ՚ի վր աղբերն , և կամէր
շահել զհոգի սամարուհի կնոջն , մինչ
զայս բարեգործութիւս առնէր , աղա_
չէին զնա աշակերտքն և ասէին Ռաբբի
հաց կե՛ր ։ նա ասէ՝ ցնոսա , ես կերա_
կուր ունիմ ուտել , զոր դուքն ոչ գի_
տէք ։ Ասէին աշակերտքն ընդ միմեանս
մի՛ թէ եբեր ինչ ոք դմա ուտել ։
Ասէ՝ ցնոսա Յս իմ կերակուր այն է՝ ,
զի արարից զկամս այնորիկ որ առա_
քեացն զիս և կատարեցից զգործն նո_
րա ։ և քան զի սպասաւորութիւն Այ
բազում պատճառաւ ուրախութիւն է՝ ,
նմին որպէս յորդորէ մեզ Գրիգորիոս

պապն

պապն թէ ծառայեն Քի թագաւո֊
րելէ՛ ։ և Պաւղոս ասէ՛ ուրախ եղէ
ես, որ ասէին ցիս 'ի տուն Տն երթի֊
ցուք մեք ։ և միոյն 'ի բարեգործութեանց
այն է՛, որ զՔս միշտ իւրն ներկայ
ճանաչել ։ վասնզի ասէ՛ նոյն Մարգարէն
թէ տեսանէի զՏր առաջի իմ յամենայն
ժամ և է՛ ընդ յաջմէ իմմէ զի մի՛ սա֊
սանեցայց, վասնզի ուրախ եղև սիրտ իմ,
և ցնծացաւ լեզու իմ ։ և այլն ։ և որպ
քաղցր և հաճոյ է՛ Քի զբարիս գործել
ուրախութբ նոյնպէս սատանայի հաճոյ
է՛ տրտմութիւն ։ և այս ցուցանի օրինա֊
կաւ թագաւորութեանց գրոցն, զի յոր֊
ժամ առաքեցին հրեշտակս 'ի սեղանայն բե֊
րել զՏապանակն Քի 'յայլ ազգեացն,
և յորժամ եհաս առ հրեանսն Տապա֊
նակն, ընդ յառաջ եղեն զօրքն և ու֊
րախութբ ընկալան զնա ։ և զայս յոր֊
ժամ լուան զօրքն փղշտացւոց յոյժ
տրտմեցան և ասեն վա՛յ մեզ, զի ոչ
եղև մեզ որպէս յերէկն և յեռանդն ։
փղշտացիքն ցուցանէ զսատանայ, որ
յոյժ տրտմի ընդ ուրախութիւն Քի, և
պաշտօնէից նորա, որք զգործս Այ ու֊
րախութբ կատարեն ։ Պարձեալ յոյժ
վնաս է՛ տրտմութիւն, որպ ասէ՛ Սողոմոն
որդի տրտմեալ չորացուցանէ զոսկերս

Է. դուստրն է՛ անյուսութեան կամ յու_
սահատութեան, որ քան զամենայն մեղս
չարագոյն է՛, քանզի կորուսանէ զյետին
հնարն փրկութե, և յուսահատութիս
այս է՛ անբժշկելի տրտմութի քան զի
տեսա հատանի ՚ի սիրոյն Քի, որպէս
Յուդայ, որ անյոյս եղեալ խեղդեցաւ,
էջ ՚ի դժոխս։ և յուսահատութեան Յու_
դայի, ըստ Սծաքանից վարդապետաց
մեծ մեղ թուեցաւ առաջի Այ, քան
զմատնութեան Քի, վս զի առաւելէ՛
ողորմութեան Այ քան մեղքն որք լինին ՚ի
մր յերկրի, վասնզի չէ պարտ մր մեղաց
յուսահատիլ յողորմութենէն Այ, զի ոչ
ինչ մեղք կարեն յաղթել զչարչարանսն
Քի։ և զատ յուսահատութենէն և անզ_
ղջ մեռանելոյն, ոչ ինչ մեղք գտա_
նին, որոց ոչ լինի թողութի, յորժամ
կատարեալ սրտիւ զղջայ։ քանզի Դաւիթ
մեղանչեաց, Պետրոս ուրացաւ, Պօ_
ղոս զեկեղեցին հալածեաց, և կինն
պոռնիկ, զոր ածին հրէայքն առ Յս,
և կամէին քարկոծ առնել զնա։ և այլք
բազումք որքա ամենեքեան զղջացեալք
գտին զթողութի, այսպէս ուրեմն ոչ է՛
պարտ ամենեւին անյոյս լինել, և այս է՛
դուստր անխծից, որ կորուսանէ զհոգիս
մարդկան։ Եւ թէպէտ վատթար է՛

մարդն

մարդն 'յամենայն նրա ծոյլ լինելն, բայց առաւել 'ի սպասաւորութեն այ, քան զի անխելէ՛ նմա որ 'ի սեղան թագաւո-րական նստի, առաջի նոր ունելով զզա-նազան և զանուշահամ խորտիկս, ինքն քաղցած մնայ, այսպէս և ս որ զհոգևոր կերակուրս Ածաշունչ գրոց պատրաստէ այլոց, լսելով և քարոզելով զնոսա, ինք 'ի սեղան այ նստեալ, ինքն ոչ ճաշակէ, զի գործով ոչ կատարէ ։ և որպէս մեծ պականութիւն է՛ ընդ ումեք խօսել զցայգ և զցերեկ, և զնա ոչ ճանաչել ։ նոյն-պէս քահանայք միշտ խօսին ընդ այ, որք ասէ՛ սբն Գրիգոր, թէ յորժամ աղօթեմք ընդ Այ խօսիմք, և յորժամ ընթեռնումք զգիրս Ածային, Ած ընդ մեզ խօսի, և արդեօք ոչ ճանաչեմք զԱծ, և այս ընդէ՞ր եթէ ոչ 'ի ծու-լութէ ։ և ծուլութիւն նման է՛ քարակ-ցանի, որով ո՛ք որ հիւանդացեալ է՛, զինչ և ուտիցէ, առանց օգտութե ար-տաքս հանէ, նոյնպէս ծոյլքն և մա-նաւանդ ծոյլ քահանայքն, որք զամե-նայն զգործս նուիրեանց անփութութե առ-նեն, և առանց օգտութե մնան, սոյն ախտեաց պարտէ՛ կամ 'ի գործոյն հրա-ժարել, կամ զարիութե ընտանանալ, վայ մեզ աղաչեսցուք զմարդասէր փրկիչն մեր

Ք͞ի, տալ մեզ զարիութի՛, և արժա-
նիս արասցէ զմեզ միշտ զբարիս խոր-
հել, խօսել և առնել, և օրըստ օրէ ա-
ռաւելուլ յարիութիւնս և ՚ի քաջութիւն,
որով կարողք լիցուք զինել ընդդէմ չա-
րին, և յաղթել զթշնամիս մեր և Ք͞յ,
զօրութ͞բ նորին Տ͞ն մերոյ Յ͞ի Ք͞ի
որում վայելէ պատիւ և փառք յաւի-
տեանս յաւիտենից ։ Ամէն ։

Վ͞Զ ԱԳԱՀՈՒԹ͞Ն։

որ է՛

Եւթներորդ դ͞ր․ մեղացն ։ հարց, զինչ է՛ Ագահութիւն ․ Պա-
տասխանեն Ս͞բքն և Ա͞ծաբանքն
թէ Ագահութիւն է՛ անյագ և
անկարգ ցանկութի ընչից ։ այս անյագ,
զի ագահն երբէք ո՛չ յագի ընչիւք, որ
քան շատ ընտանեայ այն քան շատ փա-
փաքի ։ և այս անկարգ, վ͞ս զի ագահն
ո՛չ գիտէ թէ որ բարի նորա ընտանեալ է՛։
և որ հետևի ագահութ͞ե անկանի ՚ի
կռապաշտութի, վասնզի Պօղոս անուանէ
զնա երկրորդ կռապաշտութի ։ և հա-
կառակէ հրամանացն Ա͞յ, վ͞ս զի ա-
մենայն ո՛ք որ ագահէ ո՛չ սիրէ զԱ͞ծ,
և հե-

և հեռանայցես ՚ի ո՛չ ծառայէ Քի, այլ մամոնայի, որպէս ասէ Տէրն ՚ի Մատ֊թէոսի. զ. ո՛չ կարէք Քի ծառայել և մա֊մոնայի. զի որք զինչս սիրեն ՚յայս հրա֊ժարին, և ապաստանեն. այս է. ներ֊քուս, որպէս ծառայ ՚ի Տեառնէ, կամ իշխան ՚ի թագաւորէ, ասելով այսպէս, Թէ զհաց քո ո՛չ ուտեմք, և զհանդերձս քո ո՛չ ընդգենումք, ո՛չ ունիս իշխանութիւն ՚ի վր մեր. կամ թէ ասեն զհաց քո ու֊տեմք, և զհանդերձ քո՛ ընդգենումք ապա ո՛չ կամիմք ծառայել քեզ, և այս չա֊րագոյն է՛ քան զառաջինն. քանզի ամե֊նեքեան գիտեն, թէ զամենայն ինչ զոր ունիմք ՚յԱՅ է՛ և հայրն սահմանէ գտա֊նեն թէ անիցեն, իմէ՛ այս ամենայն զոր ունիմ, և ո՛չ ԱԾ է՛ տուեալ ինձ. քանզի յոլովքեն, որք խոստովանեն, թէ զա֊մենայն ինչ զոր ունիմք ՚ի քէն է՛ ԱԾ, և զի ո՛չ ծառայեն այն որպէս արժանն է՛, այսինքն ո՛չ առնեն զայն զոր հրամայէ Տրն. երկրորդ թէ ասեն այսպէս, այս ամենայն զոր ունիմք ՚ի քէն է՛ Տր. բայց ո՛չ կամիմք պաշտել և սպասաւորել քեզ. և Ճշմարտն ՚ի վր սոցա բանն, որով յանդիմանէ Քս զանշնորհութիւն նոցա ա֊սելով այսպէս, զի՛ կոչէք զիս Տր Տր, և զոր ասեմս ո՛չ առնէք. պատասխանեն այնո֊

քինկ որք Այ ոչ սպասաւորեն այլ ընչից
աշխարհիս , երևի Թէ զինչսն պաշտեն
և ոչ զԱծ , զի զամենայն հոգս և մտա_
ծմունս իւրեանց յայն եդեալ են ։ և
զինչ չէ՛ պաշտելն եթէ ոչ յամենայնէ
սրտէ՛ սիրելն , և զյոյս իւր դնել յայն
զոր սիրէ , այսպէս որք յինչս աշխարհիս
յուսացեալք են , զայնոսիկ սիրեն , և
հետևապէս զայնոսիկ պաշտեն և ոչ
զԱծ ։ և Սիրաք ասէ՛ ոչ ինչ է՛ վատթա_
րագոյն քան զընչասիրութի , զի այնոքիկ
զհոգիս իւրեանց վաճառեն , և նոքա ու_
նին կշեռս Թիւրութե ի ձեռս Քանա_
նու ։ Քանանամ Թարգմանի վաճա_
ռական , կամ այն որ առ և տուր առ_
նէ , և կշեռս անիրաւութե ունի , պի_
ղծ է՛ առաջի Այ , վսյ ագահութիւն
ընդդեմե՛ Այ ։ Ընդդէմ ևսէ՛ բնու_
Թե , քանզի ոչ հողն քան զամենայն
տարերս խոնարհագոյն է՛ և ցած , այն_
պէս զոր կոխեն մարդիկ , այսպէս ի
մէջ բարոյականութեց ինչքն են , որք
ոչ զհող համարելիքեն ըստ իմաստնոյն
Թէ ամենայն ոսկի և արծաթ , ոչ Թէ
են սակաւ ինչ աւազ ․ վսյ ոչ է՛ պարտ
պահել զնոսա ի վեր քան զգլուխն , այլ
արկանել ի ներքոյ ոտից , ոչ առնէին
այնոքիկ բարիք առաջին քրիստոնեայքն ,
զորս

զորս ունիմք գրեալս 'ի գործս Առաքե_
լոցն ։ գլ̄ . ը̄ . և շնորհք մեծամեծք էին
'ի վ̄ր ամենեցուն նոցա ։ և ոչ ոք կարօ_
տեալ 'ի նոսա ։ զի որք միանգամ տեարք
էին գեւղից կամ ապարանից՝ վաճառէին
և բերէին զգինս վաճառելոցն , դնէին
առ ոտս Առաքելոցն ։ այսպէս և մեք
հետեւողքս այնոցիկ բարի օրինակաց
զինչս ամենայն 'ի ներքս ոտից պահես_
ցուք , այս ինքն , մի՛ այն քան սիրես_
ցուք , որք պատճառ խրամատանց լիցուք ,
այլ զերկնայինսն պարտիմք խորհիլ , առ
յորս գնալոցեմք , մի՛ զայս որ 'յերկրի
աստ , զի ոչինչ բերաք 'յաշխարհս և
ոչ տանել ինչ կարասցուք , և քան զի
հոգի մեր բնութ̄բ նոսր է՛ և երկնային .
վ̄յ պարտէ՛ նմա միշտ բարձրագոյնն
խորհիլ և գտանել գանձս 'յերկինս , ուր
ոչ ցեց և ոչ ուտիչ ապականեն , և
գողք գողանան , և թէ միշտ զերկրայ_
ինսն խորհիմք , և 'ի հողեղէն բնակու_
թիւն հաստիմք , նախատէ զմեզ եսայի
ասելով այսպէս վա՛յ այնոցիկ , որք յա_
րեն տուն 'ի տուն և ագարակ առ ա_
գարակս մերձեցուցանեն ։ և Յոհ̄ս տե_
սղն . ը̄ . Եւ տեսի և լուայ զձայն հրեշ_
տակի թռուցելոյ 'ի մէջ երկնից զի ասէր
'ի ձայն մեծ , վա՛յ՝ վա՛յ՝ վա՛յ որ բնա_
կեալք

կեալք են յերկրի ։ արդ-արև այսոքիկ եր-
եւեան փայլս զյաւիտենական կորուսան
ցուցանեն, քանզի որք կամին յերկրի աստ
մեծանալ ընչիւք ՚ի հարկէ կորուսանեն
զերկնայինս, և ինքեանք անկանին ՚ի դժո-
խս, զի ըստ առաքելոյն Պօղոսի, մեծու-
թի և ինչք աշխարհիս ընկղմեն զմարդիկ
՚ի սատակումն և ՚ի կորուստ, զի արմատ
ամենեցուն չարեաց, ասէ՛ արծաթսի-
րութիւն է՛, որում ոմանց ցանկացեալ մոլո-
րեցան ՚ի հաւատոյն, և զանձինս ան-
կին ընդ բազում ցաւ օք ։ և պատ-
ճառն այս է՛, վն զի ագահութիւն առա-
ւել մնա՛ ՚ի սիրտս մարդկանց քան այլ
մեղքն, զի մնանուկ նմա ցանկայ ագա-
հութե առաւել քան պոռնկութե, զի
՚ի տանեն նորք զողանայ ։ դժուարապետս
և յետոյ եղանէ ՚ի սրտէն, քանզի տե-
սանեմք զի ամենայն մեղք ՚ի ծերն պա-
կասին և վերջանան, սա նկատանի, այլ
մեղքն այլևորին և հնանան ՚ի ծերսն, սա՛
տղայանայ, և նորի ։ վսյ բժիշկն երկ-
նաւոր կամելով բժշկել զայս ախտս ՚ի
մարդկանէ, քանիցս անդամ զգուշացոյց
զմեզ մանաւանդ այսու, որպ պատմէ
Ղկս, գլ. ժբ. տեսէք և զգուշ լերուք
՚յամենայն ագահութե, զի ոչ եթէ ՚ի
մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա ։

և եր-

և երբեմն պատուիրելով՝ Մի՛ գանձէք
ձեզ գանձս ՚յերկրի ։ երբեմն մի՛ ստա-
նայք ձեզ ոսկի և մի՛ արծաթ ։ երբեմն
յորդորէր ՚ի կատարելութիւն ասելով, եթէ
կամիս կատարեալ լինել՝ երթ զոր ինչ
ունիս վաճառեա՛ և տուր աղքատաց ։ և
թէ մի՛ հոգայք վ՟ս վաղվեան ։ և երբեմն
անհացուցանելով օրինակօք, թէ դիւրին
է՛ մալխոյ ընդ ծակ ասղան անցանել
քան մեծատան արքայութիւն այ՟ մտանել։
իսկ յետնոյս այս քան զամենայն անհա-
գին է՛, որ ՚ի Ղ՟կս Ժզ․ անողմ Մեծա-
տանն և աղքատն՝ Ղազարոսի օրինակաւն
խելամուտս առնէ զմեզ, թէ մեռաւ
մեծատունն և թաղեցաւ և ՚ի դժո-
խսն ամբարձ զաչս իւր ։ և այլն ։ Յու-
դա վ՟ս ագահութե՟ մատնեաց զՔ՟ս ․
և կորեաւ ։ Անանիա և Սափիրա՛ կին նր՟,
վ՟ս ագահութե՟ խորեցին ՚ի գնոց ագա-
րակին զոր վաճառեցին ։ և յորժամ յան-
դիմանեցան ՚ի ս՟բն Պետրոսէ, մի՛ յետ
միուսուն անկան և մեռան ։ ահա՛ սա
այս քան կորուստ հաստուցանէ զմարդն
այս անիծեալ չար վիշապին, հինգ եղջ՟
գլուխս ագահութե՟ ։ Եւ ՚յ այսմանէ յա-
ռաջ գան Թ․ գործք չարութե՟, որպէս
Թ․ չարագոյն դստերք ՚ի չար մօրէ ծնե-
ալք ։ Առաջինն է՛ նենգաւորանն, և սի-

մտաւականն է՝ չարահնար կամք գնելոյ
կամ վաճառելոյ զձրի պարգեւս Հոգւոյն
Սրբոյ, այսինքն, եթէ ոք գնէ և կամ վա-
ճառէ զայն ամենայն, զոր Տէրն մեր ու-
սոյց իւրոց սրբոց առաքելոցն թէ ձրի ա-
ռէք, ձրի տուք ։ և այս իմանի վս Է·
խորհրդոյ եկեղեցոյ և այլոցն ամենայնի,
որք ըստ հոգևորին պատկանեն, և կամ
ընդ հոգևոր իրն կապակցին ։ Մեծագոյն
և չարագոյն մեղքս այս զանունն եառ ՚ի
Սիմոնէ կախարդէ, որպէս պատմէ ·Ը·
Գլ· գործք առաքելոց այսպէս՝ Տեսեալ
Սիմոնի թէ զձեռն ՚ի վերայ դնելով ա-
ռաքելոցն տուեալ լինի Հոգին սբ՝ մա-
տոյց նոցա ինչս՝ և ասէ՝, տուք և ինձ
զիշխանութիւն զայս, զի յոր վերայ դնի-
ցեմ զձեռս առցէ զՀոգին սբ ։ Եւ թէ որ-
քան յանդիմանեցաւ և ՚ի բաց հերքե-
ցաւ, հետագայ բանից սբն Պետրոսի
լուիցուք · լուիցեն ամենեքեան և եր-
կիցեն, որք զայս առնեն մինչև ցայսօր ։
և Պետրոս ասէ՝ ցնա՝ Արծաթ քո ընդ-
քեզ լիցի ՚ի կորուստ, զի զպարգևսն այ
համարեցար ընչիւք ստանալ ։ ոչ գոյ
քեզ մասն և վիճակ ՚ի բանիդ յայդմիկ,
և այլն ։ և քան զի մեղքս այս ձգէ զքրիս-
տոնեայն ՚յանհաւատութիւն · վասնզի ասէ՝
Դամասոս պապն թէ ամենայն մեղք հա-

մեմա-

մեծատին սխնմական մեղաց , բայց ա-
ռնել անհամեմատութիւն , զի անգին
իրաց գին դնեն , և գին հատուցանեն , և
որպէս անհամեմատ և հեծնամածող հատուցանենն
յեկեղեցւոյն ։ Եւ զայս եցոյց Տէր յոր-
ժամ եհան 'ի տաճարէն զգնողսն և զվա-
ճառողսն ասելով՝ տուն իմ տուն աղօ-
թից կոչեսցի , և դուք արարէք զդա այր
աւազակաց , տեսէք զմեծութիւն մե-
ղացս ։ Տէր զամենայն մեղս բանիւ
բառնայր , և այս մեղացս ոչ կարաց տա-
նել , այլ բռնութեամբ եհան 'ի տաճարէն ,
և եհար խարազանաւ ։ Նմանապէս և
Պետրոս ոչ համբերեաց այլ անժամայն
յանդիմանեաց զՍիմոն ։ Սպառուրեմն է-
պիսկոպոսք , որք վաճառեն զեկեղեցիս և
զկարգս քահանայից , և քահանայք զխոր-
հուրդս եկեղեցւոյ , 'ի վեր քրիստոնէից ,
և ամենայն ոք որ այսպիսի կերպիւ մե-
ղանչեն՝ անժամայն որպէս զոթի 'ի միջոյ
ժողովրդեանն ելանեն ։ հաստատէ այս
օրինակաւն Գեհազի պատանեկին Եղի-
սէի որ 'ի չրրդ թգւց · Ե· գլ· յորժամ
սրբեաց Եղիսէ զբորոտութիւն Նէեմա-
նա , իսկ սա վես չնորհակալութեամբ մա-
տուցանէր պարգևս Եղիսէի և աղաչէր
զնա զի առցէ 'ի նմանէ ինչս ։ ասելով
այսպէս ահա գիտասցի եթէ ոչ գոյ ԱԾ

յա-

յամենայն երկրի , բայց միայն 'ի մէջ Իսրայէլի ։ և արդ առ օրհնութիւն 'ի ծառայէ քումմէ ։ և ասէ Եղիսէէ կեն_ դանի է Տր , որոյ կայցի առաջի նորա , եթէ առից ինչ , և ստիպեաց զնա առ_ նուլ և ոչ հաւանեցաւ ։ այսպէս այս սբ այրս ԼԺ Մարգարէս Եղիսէ մն հոգևոր իրաց ոչ թէ միայն ոչ եառ , այլ ևս և ոչ կամք էր առնելոյ ինչ այ_ մինքն , ամենևին իմք ոչ հաւանեցաւ ։ իսկ ծառայն իւր Գեհեզի յաղթեալ 'ի ա_ գահութէ գնաց զհետ Նեեմանա և սուտ ասելով թէ Տր իմ առաքեաց զիս առ քեզ՝ և ասէ ահա եկին առ իս երկու պատանեակք 'ի լեռնէ եփրեմի 'ի որդւոց մարգարէից տուր նոցա տաղանդ մի արծաթոյ և երկուս պատմուճանս հան_ դերձեալ ։ իսկ Նեեման ոչ միայն մի այլ զերկու տաղանդս արծաթոյ և երկուս պատմուճանս յօժարութբ ետ նմա , բայց յորժամ դարձաւ առ Եղիսէ , սբս իմացաւ , զի առեալ էր 'ի Նեեմանայ զյոլով դրամս , եհարց ց Գեհեզի ուստի գաս . սա վերստին ստեաց թէ ոչ ու_ րեք գնացի , յայնժամ սբ Մարգարէն անէծս ետ նմա այսպէս ասելով թէ և բորոտութի Նեեմանայ յարեսցի 'ի քեզ . և 'ի զաւակ քո յաւիտեան ։ ահաւա_ սիկ

մինչ ա՛յս քան չարութեն հատուցանէ ա֊
գահութիւն ։ Պարծեալ ասէ՛ սբն Օ֊
գոստինոս , թէ քան զամենայն մեղս
ագահութիւն չարէ՛ , և սա զեկեղեցին
ապականէ ։ զոր օրինակ ուրեք ո՛չ է՛
վնաս թէ զհոգի նորա ո՛չ առնուն ։ նոյ֊
պէս ո՛չ ինչ կարէ զեկեղեցի ապականել ·
Բայց միայն , որ զոգին սբ բաժանէ
՚յ եկեղեցւոյ , և մեղօքս այս բաժանի
Ոգին սբ ՚յ եկեղեցւոյ ։ օրինակ ունիմք
՚ի Սակաւքայեցւոյն հՈւրն սբ , որով
զպատարագն մատուցանէին անծանելի
մնաց ՚ի ներքոյ Ջրոյն ։ Բայց յորժամ
Ենամիոքոս զքահանայութիւն վաճառեաց
Յասոնի , յայժամ հուրն շիջաւ ։ Ասէ՛
սբն Օգոստինոս թէ վս մեղաց ագա֊
հութե շիջաւ հուրն , և մեղքս այս բա֊
ժանի ՚յերկուս , այսինքն , ՚ի գնելն , և
՚ի վաճառելն · գնելով ոմն Սիմոն կա֊
խարդն , և վաճառելով որպէս Գեեզի ։
Իսկ այսպիսի գնել և վաճառելն երբեմն
լինի դրամով , երբեմն մարդահաճութբ
և աղաչանօք , երբեմն վս ազգակա֊
նութե , և երբեմն վս ծառայութե թէ
որ կերպի յայսպէսնեաց լինի՝ սիմոնականն
է՛ , քան զի դխոստմնորութի կամ զիր
հոգևոր ուղղին , կամ առնողին վս իւր
օգտի և շահի է՛ , և ո՛չ ձրի ըստ Տ̄յ ։

վոյ

վա̄յ միշտ խոստելի է՛ , քան զի խոստեսցին
այնոքիկ , որք ընտրեալք են արծաթով և
արծաթ քո ընդ քեզ լիցի ՚ի կորուստ ։
՚յերեք Թղթերթեց . Ժգ. գլ. Յերոբոամ
զկուռս կանգնեաց , և ամենայն ոք ,
որ լնոյր զձեռն նորա ոսկով , կամ արծա_
թով , քահանայ լինէր ։ այսպէս ասէ՛
Ածաշունչն , ո՛չ դարձաւ Յերոբոամ ՚ի
չարեաց իւրոց , և դարձաւ և արար ՚ի
մասնէ ժողովրդեանն քուրմս բարձանց ,
որ կամէր լնոյր զձեռս իւր , և լինէր
քուրմ բարձանց ։ վասն այս աւերեաց
Ած զտունն նորա , և ինքն պատժեցաւ ։
որ չափ ես առաւել մեղանչէ ո՛ք ՚ի նոր
օրէնս , որ ՚ի տաճարի Այ զհոգևոր և
զարքայական սբ խորհուրդսն , կամ գնէ ,
կա՛մ վաճառէ , և զամենամեծն Ած
բարկացուցանէ ։ և ըս մարդահաճու_
թէ ասէ՛ Սղմ. իւղ մեղաւորի մի՛ օծցէ
զգլուխ իմ ։ որ նշանակէ զմարդահա_
ճոյսն , և յայսմանէ գլխա՛ւորապէս
երկնչել պարտ է՛ , քան զի ասէ՛ . Տր
ցրուէ զոսկերս մարդկան մարդահա_
ճոյից ։ ըս աղաչանացն ունիմք զօրինակն
զկին Զեբեդեայ , որ էած զիւր . բ . որ_
դիսն , այսինքն , զՅակոբոս և զՅո_
վհաննէս և եկն առ Յս և աղաչէր զնա՛
զի տացէ որդւոց իւրոց զբարձրագոյն
աթոռ_

աստիճան , այսինքն , նստիլ մի՛ ընդ ՚յաջմէ Յի և միւսն ընդ ձախմէ , յորժամ Թագաւորեսցէ : և այս խնդրուածացս ոչ հաւանելով Քս ասաց , ոչ գիտէք զինչ խնդրէք : Վս ազգականութեն ևս զօրինակն ունիմք ՚ի նոյնոյ Տէ, որ ՚ի մէջ աշակերտացն իւրոց ոչ ընտրեաց զգլուխ լինել եկեղեցւոյ ՚ի վր երկրի կամ զՅակոբոս մեծն կամ զՅովհաննէս Աւետարանիչն զորդիսն զեբեդեայ , վս զի սոքա ազգականք էին նորա , այսինքն , մօրաքվեր որդիք , Թէպէտ յոյժ սիրելիք էին նորա վս կուսութեն իւրեանց , և վս սրբութե և իմաստութե, քան զայլսն : այլ զգլխաւորութին եկեղեցւոյ իւրոյ ՚ի վերայ երկրի ետ սբն Պետրոսի , և զսբն Պետրոս միայն կարգեաց իւրն աթոռակալ և փոխանորդ ճշմարիտ , զգլուխ և հովիւ և իշխան ընդհանրականի սբյ եկեղեցւոյ : այսու ամենայնիւ իմանամք Թէ սխիսմատիկանն է՛ չարագոյն դուստր ապաւհութե , է՛ ծանրագոյն մեղք մահացու և ամենեքեան են ՚ի ներքոյ այսպիսի մեղաց , որք բռնութբ և ոչ արժանաւորութբ առնուն զբարձրագոյն աստիճան , կամ զեկեղեցի , և կամ զգործաւորութին խնս եկեղեցական և հոգևոր , այսինքն , Եպիս-

կոյրս լինին, և առաջնորդ, հովիւ, քահանայ, և այլ աստիճանաւորք, և նմանիք են այնոցիկ որք, զմ̃է պատկն տապականեն, շնան և պոռնկին ընդ ամուսնոյ այլոյ, քան զի պատուական է ամուսնութի̃ և մ̃ք անկողին: բայց զշունս և զպոռնիկս դատէ Տ̃ծ: այլ և ս նմանիք են գողոց, որք զինս այլոց գողանան, սոքա միշտ պարտք ունին, և պարտին հատուցանել առ տեարս իւրեանց, մերձապէս նմանիք են յափշտակողաց, որք կամ զկանայս և կամ զինչս այլոց բռնութե̃ յափշտակեն: վասն̃ սոքա ամենեքեան խոտան և անպիտան գտանին առաջի Տ̃յ, և վասն̃ ոչ ընդունին զՍ̃գին Տ̃յ: այլ սաստկապէս պատժին ըստ̃ ի հնին օրէնսն, յորում բազումք և գրէ թէ անհամարք մեղօք լիք քահանայք և հոգևոր բանին սպասաւորք, զի անարժանք գտան և պատժեցան, զոմանս, պատառեցաւ երկիր և եկուլ, զոմանս, հուրէջ յերկնից, և այրեաց, և զոմանս, սուրն խոխողեաց, և այլք այլ ազգ կերպիւ պատուհասեցան: վասն̃ պարտ է զի հոգևոր հարց, և աստիճանաւորաց փափաքողն, ընտրեալ լիցի և կոչեցեալ յ̃այ, որպ̃ ասէ Պօղոս յեբրայ̃ց. Ե. և ոչ եթէ անձամբ ոք առնու զպատիւ,

այլ

այլ կոչեցեալն ՚ի Բ․Ջ որպ̅ և Բ․ հարոմն ։ Բ․րդ այսպիսաբար պարտին լինել Տր̅ ագնուքն և քահանայայցուքն, և ամենեքեան որք հոգևորաց իրաց, և կամ եկեղեցւոյ պաշտօնեայք, և սպասաւորք լինին ։ Նման զի Բ․Ջ ընտրեա կամ ձայնիւ, և կամ հրաշիւք և սքանչելեօք կոչէ, որպ̅ Յեսուայ զոր Բ․Ջ կոչեաց ։ Դ․ ծերքն, որք զոգի մարգարէութե̅ ընկալան ։ Սամուէլ․ և Դաւիթ որպէս ՚յԱյ̅ ընտրեցան ։ և այլքն ։ և ՚ի նորումն, սբն Մատաթիայ վիճակաւ առաքելոյն ։ Բառնաբաս և Պօղոս ընտրութե̅ Ոգւոյն Սբյ, որպ̅ պատմէ գործք առաքելոյն․ Ժգ․ գլ․ այսպէս, Մինչ դեռ ՚ի պաշտամանն Տն̅ կային և պահէին, ասէ՛ Ոգին Սբ̅ որոշեցէք ինձ զԲառնաբաս և զՍօղոս ՚ի գործ ՚յոր կոչեալ է՛ իմ զդոսա ։ Յայնժամ պահեալ և աղօթս արարեալ եդին զձեռն ՚ի վե̅ նոցա և արձակեցին ։ և սբն Պօղոս որպ̅ ընտրեաց զՏիմոթէոս և զՏիտոս, և զայլսն ։ Նա և զերիցունսն եփեսոսի, ամենեքեան սոքայ, ընտրութե̅ և արժանաւորութե̅ կոչեցան, և ոչ արծաթով ։ սքանչելեօք, որպ̅ սիւնլուսոյ երևեալ ՚ի վե̅ սբյն Գրիգորի, որ լինէր պապ Հռոմա, և ձայն ՚ի վե̅ Նիկողայոսի, որ լինէր Եպիսկոպոս ։ Բ․Ջ

կերպ հաստատուն և մնացական, մինչև ցայսօր եկեղեցին Այ ընտրութիւն առ-նէ այսպէս, այսինքն, հարց և փորձ առնելով բազմիցս, ՚ի վ̅ր նուիրելոյն, յաղագս ս̅րբութեան նորին, և գիտութեան, և հաստատնին, և ողջանդամութեան, և քա-ղաքավարութեան և այլն; որպէս պիտոյ է, վ̅ս այսպիսի բարձրագոյն աստիճանի, որ է՛ լինել եկեղեցական, կղերիկոս, պաշտօնեայ տեառն: և սպասաւոր նո-րոյ ուխտիս: արդարև այսպիսի պարտ է՛ լինել ընտրութիւն, ըստ արժանաւո-րութեան, ըստ Այ, և ո՛չ ըստ դիպուածին, և օգտի մարմնաւորի, և կամ արծաթով, քանզի խոստեցին ամենեքեան, և այլն: Երկրորդ դուստր ագահութեան է՛ վաշխ առնուլն ՚ի փոխ տալոյն, այս ինքն, յոր-ժամ գայ մինն, և կամի փոխ առնուլ ՚ի քէն, դու ասես նմա, թէ ինձ մին շահ տաս, տամ քեզ փոխ, թէ ո՛չ տաս՝ ո՛չ տամ քեզ փոխ: և այս է՛ յոյժ ծանր մեղք մահացու, և ընդդէմ հրամա-նացն Այ, և անիրաւութիւն է: ցուցանի բանիւ Տն մերոյ, որ ՚ի Ղուկաս. զ. լ ե. հեր ասէ՛ այսպէս և տուք փոխ, ուստի ո՛չ ակն ունիցիք առնուլ: ուստի ո՛չ ակն ունիցիք առնուլ՝ նշանակէ, թէ փոխ տուեալ դրամին վարձ, կամ շահ

չառ-

չառնուք, Թէ փոխ տո՛ւն : ապաու-
րեմն 'յայս կողմանէ Քն հետեւող քրի-
ստոնեայն պարտի, որ, ով ո՛ք կամիցի
'ի նմանէ փոխ առնուլ, եԹէ ունիցի
յօժարուԹիւն տալոյ, ո՛չ ինչ յուսալով 'ի
նմանէ առնուլ, այս միօքս Թէ փոխ
ետու : իսկ եԹէ իւր դրամն իւրն պի-
տոյ էր · քանզի կամէր կամ գնորեան
առնուլ, եւ կամ զայլ ինչ պիտանացու
եւ հարկաւոր, եւ կամ Թէ զտուն իւր
պարտէր շինել եւ կամ նորոգել փոխ ետ,
վասնզի ո՛չ կարաց զայսոսիկ առնել՝ յայն-
ժամ կարէ ըստ տեղւոյն սովորուԹեան մինչ
զատ առնուլ փոխ առողէն այս միօքս
Թէ ինձ վնաս դիպեցաւ զի ետու փոխ·
բայց զայս նաեւ պարտ է՛ սակս արկա-
նել ընդ փոխ առողն, զի ամենեւին
ո՛չ ունիցի զդիտաւորուԹի Թէ միայն
վս փոխ տալոյն առնու ինչ, վս զի 'յ ա-
մենայն է՛ կողմանէ պարտական զգուշա-
նալ, զի զպատուիրանն Այ պահես-
ցուք, եւ զայս առնելով մի՛ որոշիցուք
'յԱյ եւ 'ի խորհմանէ նորա եւ 'ի լեռնէ, որ է՛
եկեղեցի Այ եւ արքայուԹի, քանզի
հարցանելով մարգարէն ԴաւիԹ զՏրն,
Թէ, Տր ո՞վ կացցէ 'ի խորանի քում
կամ ո՞վ բնակեսցի 'ի լերանն սրբ քո՛ :
պատասխանէ Տրն որ գնայ 'յանբիծ,

 զոր.

գործէ զարդարութիւն , և ընդ այլ բազում բարեգործութեան , դասէ ևս զայս՝ թէ , որ զարծաթ իւր ՚ի վարձու ոչ ետ , և կաշառս ՚ի վերայ անմեղաց ոչ առնու : այսպէս և մեք պարտիմք առնել , զի արժանիք լիցուք արքայութեան և մի՛ սասանիցուք յաւիտեան : վարդապետք ասեն թէ քան զգողութիւն չար է՛ և դառն , շահ առնուլն ՚ի փոխ տալոյն , քան զի գողն ՚ի դրուց , սա՛ ՚ի տանէ գող և յափշտակէ՛ , և առնողն առաւել ապականէ ՚ի մեծանէ քան ՚ի յափշտակաց , զի գողք և յափշտակք ոչ կարեն ՚յամենայն ժամ գողութիւն առնել , և ոչ ՚յամենայն տեղիս , իսկ շահ առնողն ՚ի փոխէն , հանապազ զցայգ , և զցերեկ , և ՚յամենայն տեղիս ՚ի մէջ մարդկան , ՚ի տան և ՚ի հրապարակի , և զամենեսեան զրկէ զթագաւոր , զիշխան, զաղքատ , զարհեստաւոր , և զամենայն ոք , ապաշաւրելով առնել անիրաւութիւն՛ և չարութիւն քան զգողութիւն : Դարձեալ շահ առնողն արիւն արբու է՛, և ոչ միայն զօտարսն ապականէ , այլ և զընտանիսն իւր և զ զանձանսն , քանզի սնուցանէ զնոսա անիրաւութեամբ , և զրկանօք , և սա նմանի այն ցաւին , որ կոչի ցեց , և կերցաւ , զի յորժամ պատահի

տաճի մարդոյն ուտէ զնա՛, նոյնպէս մեղքս այս անիրաւ շահատութէ յորժամ անկանի 'ի քաղաք մի՛ ուտէ, և հալէ զամենայն ինչս այն քաղաքին ։ ոպ̃ ասէ՛ Դա՛ւիթ քննեսցէ փոխատուն զամենայն ինչս նորա, յափշտակեսցեն օտարք զվաստակս նորա ։ և վս̃ այսպիսի գողոյս և աւազակիս ասէ՛ սբ̃ Հերոնիմոս Թէ պարտէ՛ զգուշանալ յոյժ ուտել 'ի նոցանէ, որք արտաքուօք աղքատաց են կեղծաւորք, և ասպրին, որ ո՛չ ասէ՛ զբան սաղմոսին ինձ, Թէ տեսանէիր զգողսն ընԹանայիր ընդ նոսա, և ընդ շունս դնէիր զբաժին քո ։ գրեալ է՛ 'ի վարս Փուլխերիոսի, Թէ յորժամ մեռաւ հրեշտակք, և դևք տարին զհոգի նորա 'ի դատաստան առ Քս̃ և ասէին դևքն Մր̃ Տր̃ Հոգի Փուլխերիոսի մերէ՛, զի զհանդերձս շահատուաց մաշեաց, ասէ՛ Քս̃ էր արարեր, Փուլխերիոս ասէ՛ ո՛չ գիտացի Տր̃, և կեղծաւորացոյց Տր̃ զՓուլխերիոսն, որ ապաշխարեաց զմեղսն և գնաց առ Քս̃ ։ բայց սատանայ, միայն ապտակ մի՛ եած Փուլխերիոսի, և որ չա՛փ կեղծաւորի էր սպին երևէր ։ Պարձեալ բազում պատիժս առնու շահատուաց, զի ոպ̃ ինքն զայլս յափշտակեաց, այսպէս այլք զինքն յափշտակեն,

որպէս ասէ՛ Եսայի, վա՜յ քեզ որ յա-
փշտակեիր, զի դու յափշտակեսցիս, և
Երեմիայ ասէ՛ ոմն կաքաւ, որ ժողո-
վեաց զայն որ ոչ ծնաւ, այնպէս են
որք ժողովեն զինչս թիւրութբ և զրկա-
նօք: քան զի ասեն քննութն քննիչքն
թէ կաքաւն, այնպէս ագահ է՛, որ զձուս
այլոյ հաւու, զորս գտանէ ժողովէ ՚ի
բունն իւր, իսկ յորժամ ելանեն ձագքն,
և տեսանեն, որ ոչ է՛ Ճշմարիտ ծնողն
իւրեանց, թողուն զնա, և գնան: նոյն-
պէս շահառուքն ժողովեն զբազում ինչս,
անիրաւաբար, և քան զի ոչ է՛ արդա-
րապէ՛ս հաւաքեցեալ՝ ամենայնն կորն-
չի: Երրորդ դուստր ագահութեան է՛ յափ-
շտակութին, և յափշտակութին այն է՛
որ բռնութբ զիր ինչ առնուն ՚ի յայլոց,
և կոչի ևս ա՛ւազակութի, և այս է՛ ընդ-
դէմ արդարութե, քան զի իւրաքան-
չիւրոյ իր ինչ եթէ Ճշմարտապէ՛ս և ար-
դարապէ՛ս ըստացեալ է՛, Ած նորա է՛
պատրաստեալ, և եթէ ոք առնու բռ-
նութբ զիր ինչ այլոյ, զանիրաւութի
առնէ, և հետևապէ՛ս ընդ դէմ արդա-
րութե: Արդարութին ըստ իմաստնոց
և վարդապետաց սահմանի այսպէս.
Արդարութին է՛ հատուցանել իւրա-
քանչիւրոյ զիւրն: նաև հինգ արդարու-
թե

Թէ այն է՝ որ ունեմք զխոստս ո՛չ հաստատա-
նէ կամ պատկառութի՛, Երկրորդն, որ
ընդ հանուր քարոյն սպասաւորէ, և
օգնական լինի ։ Չորրորդ դուստր ա-
գահութեէ՝ գողութիւն ։ և գողութիւն
է՝ ական հատանել, և առնուլ ծածուկ
զինչ այլոյ առանց կամաց Տն իւրոյ և
այս է՝ ներհակ հրամանացն Այ, որ
ասէ՝ ՚յԵլից . Ի. Մի՛ գողանար ։ գիտե-
լի է՝ զի գողութիւն Բ. ազգ է՝ ծածուկ
և յայտնի ։ յայտնի է՝, որ ըմբռնի ՚ի գո-
ղութեէն, և ծածուկ, որ ո՛չ իմանայ
ոք ։ յայտնի գողութեէն պատիժ կանո-
նաւ է՝, դարձուցանել միոյն . Դ. Իսկ
ծածուկ գողութեէն միոյն . Բ. և Թէ ոք
՚ի գողութեէ և կամ ՚յանառակութեէ մե-
ռանի, ո՛չ ոք կարէ առնել վն նորա
պատարագ, կամ աղօթք, վս զի ՚ի մա-
հու չափ մեղս մեռաւ ; և էջ ՚ի դժոխս։
և Թէ ոք գող մինչ կենդանի է՝, և կամի
դառնալ առ Տր՝ զամենայն զոր գողա-
ցեալ է՝ պարտ է՝ նախ դարձուցանել առ
տեարս իւրեանց, և Թէ ո՛չ ունիցի զեր
հատուցանելոյ, պարտ է՝ նախ ունել
զյօժար կամս հատուցանելոյ, և յոր-
ժամ ունիցի, հատուցանիցէ, քան զի
միշտ պարտական է՝ հատուցանել ։ և
Թէ պարզապէ՛ս միայն վս պիտոյից և

մը անձարութեն գողացաւ, կամ դրամ,
և կամ կերակուր ՚ինոցանէ, որք ու-
նէին առնելի, ոչ է՛ պարտական հատու-
ցանել ։ բայց եթէ ՚յայնցանէ գողացաւ,
որք ոչ ունէին, և կամ զգործիսն նո-
ցա, որովք զապրելոյն շատանային, զոր
օրինակ զասեղն դերձկին, զծանիչն կօշ-
կարին, զգրիչն Նօտարին ։ և այլն ։ մա-
հացորէն մեղանչէ և միշտ պարտական
է՛, որ քան զմասնաց աւելորդով հա-
տուցանել ։ և թէ կինն ՚յառնէն, որդին
՚ի ծնողացն, ծառայն ՚ի Տէրն գողանան
ինչ, առանց կամաց և հրամանաց մե-
ծաւորաց իւրեանց, պարտականք են
հատուցանելոյ, և թէ ոք այս վերասա-
ցելոց, և կամ զի այր և կին, որ կա-
միցի հատուցումն առնել, բայց ասիցէ
թէ կամ տեարք ընչիցն մեռան, և կամ
թէ ամաչեմ յետ տալն, նոցա պատաս-
խան են Ծաբանքն այսպէս, եթէ մե-
ռան նոքայ ՚յորոց զինչսն գողացար, որ
քան մերձ ազգայինն ունի, նոցա պարտ է՛
դարձուցանել, և թէ ոչ՝ մնայ աղքա-
տաց բաժանել, և թէ ասէ՛ ամաչեմ ։
պարտի այնպիսի կերպիւ տալ, որ տե-
արքն իմանան ոչ, կամ տալ ուրիշին,
որ նա տայ, կամ ընծայ և պարգև տալ,
և կամ փոքր փոքր տալ, զինչ կերպիւ

և իցէ

և իցէ միայն թէ իրն 'ի Տն հաստատեսցի ։ կարէ զայս ամենայն խոհեմ խոստովանաւոր խորհրդով կատարել և հատուցումն առնել ։ Զինչ երդ դուստր ապահութեան է՛ սուտն ։ Սուտն ո՛չ այլ ինչ է՛ եթէ ո՛չ ասել ընդ դէմ մտաց , այսինքն , յորժամ զինչ հաստատես , զոր համարիս , որ ո՛չ է ։ կամ ստես , զոր համարիս , որ է՛ ։ և այս մի խաբէլոյ ։ Իսկ սուտ ասելն պիղծ է առաջի Այ , որպ ասէ՛ 'յառակս ․ Ժբ․ Պիղծք են առաջի Տն շրթունք ստութք ։ և նա որ հանապազ սուտ խօսի 'ի կորուստ է՛ վերջ նորա , քանզի ասէ՛ Սրբն Պաւղոս , կորուսանես զամենեսեան , որք խօսին սուտ ։ Անանիայ և Սափիրա կին նորա ո՛չ մի սուտ ասելոյն անկան և մեռան ։ Իսկ քանզի ամենայն սուտ ո՛չ է՛ մեղք մահու չափ ։ վասայսորիկ պարտ է՛ զսուտն բաժանել ։ Սբն Օգոստինոս բաժանէ զսուտն 'ի վեց մասունս ։ Ա․ սուտն է յուսուցմն և 'ի կրթութեն ընդ դէմ հաւատոյն և օրինացն ։ ամենայն սուտ , որ ընդ դէմ Ոգւոյն Սբյ է՛ , այսինքն ընդ դէմ հաւատոյն և կրթութեն օրինացն վատթարագոյն մահու չափ մեղք է՛ , որպէս ստութիւն Արիոսի , և այլոց հերձուածողացն , որք սուտ խօ_

սեցան

ւեցան ընդ դէմ ՚Քնի ։ Ե. սուտն է՛, որ ոչ ումեք է՛ շահ, նաև այլոց զպատկառութի բերէ, որպէս զուր առնել ՚ի վերայ մարդոյ, որ իւրեանն ոչ է՛ բարի և զայլս գայթակ֊ղեցուցանէ ։ Զ. սուտն է՛, որ ումեք շահէ, և այլ ումեք պատկառութի, որպէս առնել սուտ ումեք, թէ ունիմ առ քեզ Ճ. դահեկան, որ յիւր կողմանէն շահ է՛, և ՚ի նորա կողմանէն վնաս և պա֊կասութի ։ Է. սուտն է՛, որ սովորութի է՛ արարեր սուտ խօսելն, և ՚ի խօսելոյ զսուտն շահ ոչ ունի, և զայլս ՚ի ցան֊կութե շարժէ խօսելոյն ։ Ը. սուտն է՛, որ այլոց ոչ է՛ վնաս, և իւրն շահէ՛, որպէս առնէ՛ անպատկաց յիմ տունս իրք չկայ ։ իւրեանն շահ է՛, և անպատկացն ոչ է՛ վնաս ։ Թ. սուտն է՛ վասն փառաւո֊րութե, զի հաճոյ լինի առաջի մարդ֊կան ։ Առաջի . Գ. սուտքն մահու չափ մեղք են, չորորդն երբեմն լինի մահու չափ, և երբեմն ոչ ։ Ե. րդն ոչ է՛ մա֊հուչափ, այլ ներելի ։ Զ. երրդնէ մա֊հու չափ մեղք, բայց երբեմն կարէ լի֊նել ներելի ։ Գիտելի է՛ զի ոչ է՛ պարտ ամենևին սուտ առնել, փոքր կամ մեծ, ոչ վասն պահպանութե մարդոյ, և ոչ վասն ընչից ։ և ոչ վասն փառաւորութե, բայց որ կարէ երբեմն զՃշմարտութիւն ծածկել

կամ

կամ լուել վս՟ քարխառնելոյ այլոց և կեն֊
դանութեց ։ Պ․ Երդ չար դուստրն ա֊
պահութե՝ է՛․ սուտ երդնուլն ։ սուտ
երդնուլն է՛ երդմնապանցութի ՚ի սուտն
հաստատելով ։ և այս է՛ ընդ դէմ եր֊
կրորդ պատուիրանին Ա՟Յ, որ ասէ՛ Մ՟Ի՛
առնուցուս զանունն Ա՟Յ քո ՚ի վ՟ր սնո֊
տեաց ։ և այսպիսիս պարտական է՛ մա֊
հու ։ ընդդէ՞ր ։ եթէ ոք զմատանի
թագաւորին առանց հրամանի թագա֊
ւորին դնէ ՚ի թղթի , որ ոչ է՛ արժան
դնել , այնպիսին մահու մեղցի , զի
զհրաման թագաւորին խոտեաց ։ դար֊
ձեալ թէ զմատանի Կաթողիկոսին առ֊
նու ոք , և զթուղթ ումեմն մատնա֊
հարէ թէ երեցէ՛ , և ոչ լինի , այն֊
պիսին ընդ կապանօք է՛ և անէծս ժա֊
ռանգէ ։ և յայնժամ ոք զթագաւո֊
րաց Թագաւորին , և զեպիսկոպոսաց
Կաթողիկոսին Ք՟Ի մատնեհարն առ֊
նու , որ ճշմարիտ երդմամբ հաս֊
տատէ զբանս ուղիղս ։ Իսկ այնոքիկ ,
որք երդմնապանցք լինին , կամ զսուտ
երդնուն ։ կամին զի ամենաբարին և ա֊
մենաճշմարիտն Ա՟Յ զիւրեանց չարու֊
թին և ստութին հաստատեսցէ ,
քանզի սուտ երդնուլն ոչ այլ ինչ է՛ և֊
թէ ոչ զԱ՟Յ վկայ բերել երդ․ չա֊

րու

րութեն։ Պիտելի է՝ զի զնոյն մեք Ե. կերպիւ զզուշացուցանեն զմեզ ՚ի բաց կալ յօժարութէ երդմանն, և զանէր երդմանն ՚ի մէնջ հեռացուցանել։ Նախ սէն Յակոբոս եղբայր Տն կամելով հեռացուցանել ՚ի մէնջ զամենայն փոփոխս և զանկութի երդմանն, այսպէս առաքելական սիրով մեզ հրամայէ։ Յառաջ քան զամենայն ինչ եղբարք իմ մի երդնուցուք, մի ՚յերկինս և մի ՚յերկիր՝ մի ՚յայլ ինչ երդուած, այլ եղիցի ձեր՝ այոն, այո։ և ոչն, ոչ։ զի մի ՚ի կեղծաւորութի ինչ անկանիցիք։ Թէ որքան զգուշանալի է՝ յերդմանէն, այս քան բանիւ առաքելոյս պարտ է՝ վերանկատել, մանաւանդ այն որ ասէ՝ յառաջ քան զամենայն։ և այլն։ Բ. զգուշութին է՝ մի ուսուցանել զբերանն իւր հանապազ ՚յերդուածս։ վս՝ Սիրաք. իգ. գլ. Թ. Համր. ասէ՝ երդման մի ընդելացուցես զբերան քո, զի բազում վրիպուածս է՝ ՚ի նմա։ Գ. զգուշութին է՝ մի երդնուլ առանց մեծի հարկաւորութե, և այն Ճշմարտապէս ամենևին իմք, և մէծ հաստատելոյ զՃշմարտութին։ և ոչ երբէք սուտ։ որպ ասէ՝ Երեմիայ. Դ. գլ. Բ. Համր. և երդնուցու եթէ կենդանի է՝ Տր Ճշմարտութբ և իրաւամբք և ար‿

դարու‿

դարութբ , օրհնեսցեն նովաւ ազգ , և նովին գովեսցեն : Դ. զգուշութիւն է՛, մի՛ վս ամենայն դատարկ բանի երդնուլ, զի անհաճոյ է՛ Այ , որպ ասէ՛ Մովսէս յերկրդ օրէն . Ժա. հմր. Մի՛ առնուցուս զանուն Տն Այ քո՛ ՚ի վր սնոտեաց , զի ոչ սրբեսցէ Տր Ած քո՛ զայն՝ որ առնուցու զանուն նորա ՚ի վր սնոտեաց : Ե. զգուշութիւն է՛ որ ամենևին պարտ է՛ պահել , քանզի Քս ինքն Տրն իւր ամենօրհնեալ ան սուտ բերանովն պատուիրեաց Մտթէի . Ե. գլ. հմր. լգ. այսպէս : Դարձեալ լուարուք զի ասացաւ առաջնոցն՝ մի՛ երդնուցուս սուտ բայց հատուսցես Տն զերդմունս քո : Այլ ես ասեմ ձեզ՝ ամենևին մի՛ երդնուլ , մի՛ յերկինս՝ զի աթոռ է՛ Այ , և մի՛ յերկիր՝ զի պատուանդան է ոտից նորա , և մի՛ յԵմ , զի քաղաք է՛ մեծի արքային : և մի՛ ՚ի գլուխ քո՛ երդնուցուս՝ զի ոչ կարես մազ մի՛ սպիտակ առնել կամ թուխ : ահա այս բան կերպիւ Տր արգելէ զմեզ յերդնլոյ , և ամբաստանէ զամենայն սուտ երդմանն , ասելով թէ ամենևին մի՛ երդնուլ . Իսկ եղ կերպ խօսելոյ մեզ պարզաբար և յստակօրէն և միամտաբար ուսուցանէ , ասելով . Այլ եղիցի ձեր բան այոն , այո՛, և ոչն ,

եւ ոչն, ոչ ։ զի աւելին քան զայն ՚ի
չարէն է՛ ։ Եւ այս քան արգելմունս երդ-
մանցն եթէ Տ՟րն եւ եթէ աշակերտքն
իւր եւ մ՟ք Հետեւողքն, վա՟սն երդմն, զի
մի՛ արհամարհեսցի պատիւ արարչին
մերոյ սուտ երդմամբն, եւ եկցէ ՚յայն-
մանէ կռապաշտութի ։ Եօթն երդ-
դուստր ապահութեէ՛ առնել զխաբէ-
ութի ՚ի գնելն եւ ՚ի վաճառելն, գնելն,
եւ վաճառելն ըստիմքեան արդարապէ՛ս
քարինէ՛, քան զի կամի Ա՟Ծ զի ամենե-
քեան բարեպէ՛ս, եւ արդարապէ՛ս ապրի-
ցին ըստ իւրաքանչ իւր պիտոյից ՚յայսմ
աշխարհիս ։ Իսկ որք զխաբէութի առ-
նեն ՚ի գնելն, եւ ՚ի վաճառելն՝ այն չարէ՛
առաջի Ա՟յ ։ քանզի արդարէ՛ Տ՟ր եւ
զարդարութի սիրէ ։ Բ. կերպիւ արատ
լինի եւ վնաս ՚ի գնելն, եւ ՚ի վաճառելն,
Ա. յորժամ ոք ջանայ յոյժ գնով վաճա-
ռել զիրն որ չափ կարէ, եւ ոչ հայի թէ
արժէ այն քան, թէ ոչ ։ Եւ տգէտ գնո-
ղի ծանրագին վաճառէ, կամ ՚ի տգէտ
վաճառողէ թեթեւ ագին առնու զիր ինչ,
որ ծանրագին է՛, եւ այսպիսի գործոյս
հեռի է՛ ուղղութի եւ արդարութի,
եւ հետեւապէս Ա՟Ծ հեռի է՛ ՚յայնպիսի
գնողէ եւ վաճառողէ ։ Բ. սուտ ասելն ։
Գ. սուտ երդնուլն ՚ի գնելն, եւ ՚ի վա-

ճառելն, որ յոյժ յիմարութիւն է՛, քանզի չէիմ պարտական թէ ասել այս քան զնեցն, որ նեղն ընկնիմ, և սուտ ասեմ, կամ սուտ երդնում, այլ պարտիմ ասել ես այսքան ծախեմ: և այլն: Դ. ՚ի չափելն և ՚ի կշռելն, որ զկանկունն պակաս դնէ, կամ զքարն: Ե. որ զիրն այլ այլ է, և փոփոխէ: զչորն, թաց առնէ, որ ծանր լինի, կամ զհինն ՚ի նորի տեղ: և զփտածն լաւի տեղ վաճառէ: Զ. որ վաճառէ պայմանաւ ածելի, որ է՛ չափ առնուլն: կամ զայլ իրք ցուցանէ, և զայլ իրք տայ գնողին: զօրինակ ոսկի ցուցանէ՝ և արծաթ տայ նմա, կամ զարծաթ ցուցանէ՝ և կլեկ տայ: կամ լաւն ցուցանէ՝ վատթարն տայ: և այլն: Է. որ զվատութիւն և զարատութիւն վաճառած զատին՝ զաղէ և ծածկէ, թէ կերակրեղէն է՛ որպէս ցորենոյ, գինոյ, ձիթոյ, իւղոյ, մսի և այլ: թէ հանդերձեղէն է՛, որպէս կտաւոյ, չուխի, տիպակի, մորթոյ և այլն: և թէ վայելելոյ է՛ որպէս ձիոյ, ագարակի, տան և այլն, և կամ այլոց իրաց զպակասութիւն թագուցանէ: Ը. որ զիւր մշտատակարս, ՚ի մութն և ՚ի խաւարի տեղ վաճառէ որ գունն ո՛չ երևի, և այս քան զամենայն չարագոյն է՛ զի որ զչար գործէ ատելոյ զլոյսն

և ո՛չ զայս ևս լուան զի մի՛ յանդգնա_
նեսցին ձեռքք նորա ։ Ութերո̃րդ դուստր
ագահութե̃ է՛ կաշառ առնուլն , և այս
է՛ մեծ անիրաւութի̃ , զի վ̃ս վաճառա_
որ շահի , կամ դրամի զճշմարտութի̃ն
ստեն , և զարդարոյ դատաստանն ծռեն ,
զորբսն և զայրիսն զրկեն , և ո՛չ առնեն
իրաւունս , զոր հրամայեալն աստուեցո_
ղութք գոչէ Ես տ̃է Եսայի Մարգա_
րէն բերանովն , ա̃ւ. դ̃լ. Ժէ. Հ̃մր ։ Խնդ_
րեցէք զիրաւունս , փրկեցէք զզրկեալն ,
դատ արարէք որբոյն , և տուք իրաւունս
այրւոյն ։ և յոյժ յիմարէ ամենայնեան , որ
վ̃ս դատաստանի և կամ վ̃ս այլ բարե_
բարութի̃ առնելոյ միոյն՝ առնէ կաշառս ,
և զրկէ զմիուսն , լու՛եցէ զինչ ասէ՛ նմա
Յոբ. Ժե. դ̃լ. լ̃դ. Հ̃մր. Հուր այրես_
ցէ զտունս կաշառ առո՛ւաց ։ և քահա_
նայքն ևս յորժամ առնուն ՚ի ժողովրդե_
նէն զողորմութի̃ թէ վ̃ս նոցա արժա_
ցեն աղօթս , և պատարագս , և ո՛չ առ_
նեն՝ այնպէս կաշառ է՛ ։ քան զի վ̃ս յ̃ն
տայ ժողովուրդն քահանայիցն , զի վ̃ս նո_
րա աղօթէ Տ̃յ խնդրեսցէ զմեղաց թո_
ղութի̃ , կամ զայլ բարերարութի̃ , և
քահանայն ո՛չ առնելով զայս , զրկեն
առնէ տո՛ւողին , զի զինչս նորա առ_
նու , և վ̃ս մեղաց նորա ո՛չ վաստուցանէ ,
կամ

կամ աղօթէ , նորա մեղքն մնայ՝ յերկրի
վերայ , և այսպէս նմին ունի , որպէս ասէ՛
Ովսեայ . դ. գլ. ը. համր. Զմեղս ժո-
ղովրդեան իմոյ կերիցեն , և անիրաւու-
թեամբ իւրեանց առցեն զանձինս իւրեանց :
և սոյնպիսի քահանայքն մինչ զհաց մե-
ղաց ուտեն , և հետևապէս զհաց ցա-
ւոց : Այլ զարթուցանէ զնոսա ՛ յայս
մահացու նիրհմանէս առաքելական մար-
գարէն ասելով այսպէս : Արդ՝ ասէ
մինչ չև էք ննջեցեալք , որք ուտէք զհաց
ցաւոց : այսինքն , արդ այժմ , արիք ելէք
արիք լերուք : մինչ չև էք ննջեցեալք ,
մինչ չև էք մեռեալք : զպատուս հատու-
ցէք , զոր պատարագս մատուցէք , զա-
ղօթս առաքէք , դուք՝ որք ուտէք զհաց
ցաւոց , այսինքն , զգին մեղաց ժողո-
վրդեան : Ննջեցող և վերջին չարագոյն
դժուար ապաշխարութեան է՛ անզգայութիւն , և
այս է՛ մին այնպիսի չար խղճ և սէր պա-
հելոյ ընչից ունոց , և արծաթոյ , որ
զմարդն բազում և ազգի ազգի փոր-
ձութեց , վշտաց և նեղութեց հասու-
ցանէ , և այս է՛ սկիզբն ամենայն չա-
րեաց , ըստ բանին Պօղոսի , որ առ Տի-
մոթէոս առաջին թղթոյն , զ. գլ. ժ.
համր. ասէ՛ այսպէս : Զի արմատ ա-
մենայն չարեաց արծաթսիրութիւն է՛ ,

որում ոմանք ցանկացեալ վրիպեցան ՚ի հաւատոյն, և զանձինս արկին ընդ բազում ցաւօք ։ Հաստատուն բանս այս օրինակին Յուդայի, որ վասն արծաթսիրութե̄ մատնեաց զՏէրն իւր, ապա յուսահատեալ խեղդեցաւ ։ Վա̄յ, որ այս քան չար է', և մնասակար չարաչանար ախտս այս ագահութե̄, հանդերձ ամենայչար դստերօվք իւրովք, պարտ է' Ածասէր քրիստոնէից, մանկապէս ատել զսա, և ամենայն արթութ̄բ և ջանիւ փախչել ՚ի սմանէ և երթալ զհետ առատասիրութե̄ և ողորմածութե̄, արդարութե̄ և Ճշմարտութե̄, և մանաւանդ զմտաւ ածել զԱծային բանին այն, զոր ՚ի նոյն գլ. Սախտադրէ սոյն սրբազան առաքեալն, ասելով այսպէս Այլ շահավաճառ մեծ Ածպաշտութի̄ է' բաւականութ̄բ հանդերձ ։ զի ո՛չ ինչ բերաք ՚յաշխարհ, և ո՛չ տանել ինչ կարասցուք ։ Այլ ունիցիմք զկերակուր և զհանդերձս, և այնու շատասցուք ։ Վայն բոլորով սրտիւ աղաչեսցուք զբարեգութ և մարդասէր փրկիչն մեր Ք̄ս զի զմեզ իւր ամենամեծ ողորմութ̄ն, և շնորհիւն ազատեսցէ ՚յայս ամենաչար ախտէ ագահութե̄, որում պատիւ և փառք յաւիտեանս ։ Ամէն ։

Ա̄ս

Վ՜ ՈՐԿՈՐԱՄՈԼՈՒԹԵ՜։

ոէ

ԱՅՍ երրորդ գլուխ վերջապէս․ որկորամոլութիւն նոյն է՝ որովայնամոլութի, և սա է՝ բերան և դուռն ամենայն մեղաց․ վասնզի ընդ դէմ սորա եդ Քս զառաջին պատուիրանն, ոչ ուտել ՚ի պտղոյն․ որպ ցուցանէ գիրքն Ծննդոց․ գլ․ բ․ համ․ ժզ․ Եւ պատուիրեաց Տր Այ Ադամայ և ասէ․ ՚յամենայն ծառոց որք են ՚ի դրախտիդ ուտելով կերիցես․ բայց ՚ի ծառոյն գիտութե բարւոյ և չարի մի՛ ուտիցէք, զի ՚յորում աւուր ուտիցէք ՚ի նմանէ՝ մահու մեռանիցիք․ բայց նախ պարտ է՝ գիտել թէ զինչ է՝ որովայնամոլութիւն․ որովայնամոլութիւն է՝ անյագաբար ուտելոյ տրփումն, այսինքն, ցանկալ լնուլ զորովայնն կերակրով անյագաբար և անկարգաբար․ և այս է՝ ընդ դէմ բնութե, քանզի բնութիւն ինք ատէ զաւելորդն։ և է՝ ընդ դէմ Այ՝ քանզի Քս կարգ և չա՛փ եդ ամենայն ըստեղծուա-

ծոց իւրոց , և ո՟պ գրէ մե՟ առաքեալն Պօղոս առ Կո՟ն․ Ժդ․ գլ․ Խ․ համր․ և ամենայն ինչ ձեր պարկեշտութ՟բ և ըստ կարգի լիցի ։ Ե՛ ևս ընդ դէմ եղբօրն և ընկերին , զի իւր անչափ ուտելովն և ըմպելովն գայթագղեցուցանէ զմերձաւոր ընկերսն իւր , և մանաւանդ է՛ ընդ դէմ իւր հոգւոյն և մարմնոյն , զի վնասէ , և ՚ի մէջ վտանգի ձգէ զինքն , և երբեմն վ՟ն անյագ ուտելոյն և ըմպելոյն , ՚ի մէջ մեծամեծ նեղութ՟եց և փորձութ՟եց ան-կանի ։ ընդ դէմ ևս է՛ բնութ՟ե , վ՟ն զի բնութիւն և Տ՟ր բնութ՟են Ա՟Ծ զբերան անբան անասնոցն , և այլոց կենդա-նեացն մեծ լայն և դէպ ՚ի վայր ըս-տեղծեաց , իսկ զմարդոյն բերանն նեղ փոքր , և դէպ ՚ի վեր ըստեղծեաց , և նոքա , որք անյագ և անչափ ուտեն և ըմպեն , ոչ զանազանին յանբան կեն-դանեաց , և հետևապէ՛ս կորուսանեն զբանականութիւն իւրեանց ։ դարձեալ է՛ ընդ դէմ Ա՟Ծյ , վասն զի որո-վայնն թողու զպատուիրանն իւր և զորովայն իւր պաշտէ , որոց վ՟ն երանելին Պօղոս լալով խօսի , առ փիլիպպեցիսն , Գ․ գլ․ ԺԸ․ համր․ (բայց արդ՝ և լալով իսկ ա-սեմ) զթշնամեաց խաչին Ք՟ի ։ որոց կատարածն կորուստ է՛ , որոց Ա՟Ծ որո-

վայնն

վայելուչ է՛ , և փառք անճառն հարեանց ։ որք զերկրպագուորս ևեթ խորհրդին ։ ՚ի վերայ այսր բանին ասէ՛ սրբն Օգոստինոս , թէ մարդիկք զայն իրքն պաշտեն , որք քան զամենայն իրս տուեալ սիրեն ։ երկրորդաբար է՛ ընդ դէմ Ա՟յ որովայնամոլութիւն , քանզի սիրտ քրիստոնէին է՛ տաճար Ա՟յ ։ որպ՟ քարոզէ Պօղոս ա՛ռ կորն. երկր. զ. ժզ. ծզ. Հմր. ապաքէն դուք տաճար Ա՟յ կենդանւոյ էք , որպ՟ և ասաց Ա՟Ծ թէ բնակեցայց ՚ի նոսա , և այլն ։ և ա՛ռ կորն. առաջին թուղթն. գ. ժզ. ծզ. Հմր. ո՛չ գիտէք՝ եթէ տաճար էք Ա՟յ , և Հոգի Ա՟յ բնակեալ է՛ ՚ի ձեզ ։ զայս ցուցանեն վկայութիւնք սրբյ թէ պարտի բարի քրիստոնէական նախկնայէ՛ս և զկնաո՛րդայէ՛ս հոգալ զայն՝ , որ Ա՟յ պատկանին , այսինքն , սրբ պահել զանձն , զաղօթս առնել , որպ՟ արժան է՛ տաճարն Ա՟յ , քանզի ասէ՛ « Ք՟ս Տ՟րն մեր տունն իմ տուն աղօթից կոչեսցի ։ իսկ որք հեռանան պարկեշտութեն՟ , և զըրովայնն խնճոյիւ և պարարեն , այսինքն , ըստ զորովայնն իւրեանց անկարգաբար ոչ կարեն երբէք աղօթել , և կամ ՚յերկար ժամանակ սրկեալ , և սրբութ՟բ պահել , պատուքեմս , աղօթս աղօթից , ա՛ռ աղաւօք

չխանի , այսինքն , աղգի աղգի յափշտա-
կութբ , և զրկանօք , և տաճարն Ա՟յ պղ-
ծի , կերպիւ կերպիւ աղտեղութբ և
անմաքրութբ , այսպէս որկորամոլութեն
ածէ զմարդն ՚ի յորովայնա պաշտութի ,
և այսպէս այնու հետև ոչ զԱ՟րարիչն
իւր , այլ զորովայնն պաշտէ , և ՚յ ամե-
նայն պահու , ՚յ որում զորովայնն լնու
անչափապէ՛ս , զոհս և մատաղս մատու-
ցանէ որովայնին իւրոյ և զոլորշիք կերա-
կրոցն և գինոյն՝ ծուխ խնկոցնէ՛ մ՟ծ
իւրոց կռոց ։ Այլ ևս ընդ դէմ է՛ ըն-
կերին իւրոյ և մերձաւորին ախտն որ-
կորամոլութե , քան զի չար օրինակ տայ
և զրկումն առնէ այլոց ։ ոպ՟ ասէ՛ Դա-
ւիթ գերեզման բացէ՛ կոկորդ նոցա ։
քանզի ոպ՟ բաց գերեզմանէն գարշելի
հոտ գայ , և զաղիր երևի մարդոյ՝ այս-
պէս , որ լիապէ՛ս յագեալ է՛ և արբեալ
գարշելի հոտ գայ , և մարդիկք զզուին
՚ի նմանէ , այսպէս չար օրինակ լինի նո-
ցա , և գայթագղեցուցանէ զնոսայ ,
որ յոյժ լաւ էր նմա , եթէ վէմ երկա-
նաքար կախէր զպարանոցէ , և անկա-
նիւր ՚ի ծով ։ քան թէ գայթագղեցուցա-
նէ զմի ՚ի փոքրկանցս յայսցանէ , որպէս
ասէ՛ Տ՟րն մեր ՚ի Ղ՟կս . ԺԷ . Բ . համր .
և տես որպէս ամենօրհնեալ և ամենատէ

վար-

վճարողապետիս հետևեալն , և համաձայնի
ամենաբարի աշակերտն Պօղոս ; որ 'ի
առաջին կորնթ . Ը. Գլ. Համր. Ժգ. ար_
տաքարշելով զմեզ 'ի գայթագղեցուցա_
նելոյ հոգւով սրբով այսպէս խօսի : Ե
թէ կերակուր գայթագղեցուցանէ զեղ_
բայրն իմ , ոչ կերից զմիս յաւիտեան :
զի մի՛ զեղբայրն իմ գայթագղեցուցից :
յայսցանէ յայտ է՛ թէ որքան ծանրագոյն
մեղք է՛ որկորամոլութիւն և մահացու ,
զի առնէ զպատկերն Ա՟յ , այսինքն ,
զեղբայրն իւր 'ի գայթագղութիւն : որ ըս_
տուգիւ պատկեր և գործ Ա՟յ է՛ , որ գայ_
թագղեցուցիչն ո՟չ թէ քանզի , վա՟յ սոյն
առաքելոյն 'ի Հռոմեց , Ժդ. Գլ. Ի. Համր.
պատուիրէ ասելով՝ մի՛ վ՟ս կերակրոյ
քակեր զգործ Ա՟յ : ապա յետ սակաւուց ,
յորդորէ այսպէս՝ բա՛ւ է՛ ոչ ուտել զմիս
և ոչ ըմպել զգինի , և ոչ՝ որով եղբայրն
քո՛ գայթագղի , կամ գթէ , կամ տկա_
րանայ : Արդ պարտ է՛ ապաշխարութեամբ ա_
մենեքեանք զգուշանալ 'յ որկորամոլութէ ,
և անկարգ ուտելոյ և ըմպելոյ զի մի՛
գայթագղեցուսցուք զեղբարս . և զըն_
կերս մեր : Արդ 'յ այսմանէ ամենաչար
և մահաբեր մօրէ որկորամոլութէ ծնանա_
նին . Է. ամենաչարք , և անհեծեալք դս_
տերք , առաջին դուստրն է՛ . յորժամ

ո՛ք նման բանի զծամանեալ հայցեմն ունէ , զայնպիսին յառաջխնամն Աստուծոյ : յԵկեղեսիաստիկեայ . Ժ. Գլ. Ժզ. Հմր. վայ քեզ քաղաք , որոյ թագաւոր քո մանուկ է՛ , և իշխանք քո ընդ առաւօտս ուտեն : Հոգևորապէ՛ս քաղաքն նշանակէ զմարդն , զի որպ՛ ՚ի քաղաքն են բազում ժողովուրդ ՚ի ներքոյ մինոյ հրամանի և դատաւորի : Նոյնպէս ՚ի մարդս են բազում յօժարութիւնք , և անդամք , բազում ըղձայութիւնք , որք պարտեն լինել ՚ի ներքոյ բանականութեան , որ է՛ գլուխ և թագաւոր ՚ի մարդս , և զամենայն կարգաւորէ , և պատժէ զայն որ մեղայ : այսպէս բանականութեան պարտ է՛ կարգաւորել զորովայնն զի պարկեշտ լիցի , և զ ժամանակն պահեսցէ և նմին աղօթս արասցէ , և զզգայութն Ե. կառավարեսցէ և այլ ՚ի պարգևացն Ե. վայելեսցէ պարկեշտութ՛ք : զի մի՛ մեղանչիցէ , օրինակ ունիմք ՚ի յայսմ ՚ի յառաջինն Թգւթց . Ժդ. Գլ. յորժամ Սաւուղ պատուիրեաց ընդ այլ պատգամն , հրամայեաց զօրացն , ո՛չ ուտել մինչև ցերեկոյն , և այսպէս ամենայն ժողովուրդն հնազանդեցաւ թագաւորական հրամանին , իսկ Յօնաթան որդին նոր , չէր լուեալ՝ եթէ երդմնեցոյց հայր նորա

զժո‿

զժողովուրդն, որպէս ասէ Ա͞Ծ աշուանքն: և
կարկառ զծայր գաւազանին իւրոյ որ ի
ձեռին իւրում, և եհար ի խորիսխ մե-
ղու, և դարձոյց զձեռն իւր ի բերան
իւր: այսինքն, սակաւ ինչ մեղր եկեր,
էառ և եկեր: և յորժամ լուաւ զայս
հայրն իւր: որ յետ բազում բանից ի
նոյն գլուխն: հետևի այսպէս: Եւ
ասէ Սաւուղ ցՅօնաթան: պատմեա
ինձ` զինչ արարեր: և պատմեաց նմա
Յօնաթան և ասէ, Ճաշակելով ճաշա-
կեցի ծայրիւ գաւազանին, որ ի ձեռին
իմում կայր սակաւ մի մեղր: և ահա մեռա-
նիցի՛մ ես: Եւ ասէ Սաւուղ օն և օն
արասցէ ինձ Ա͞Ծ և օն և օն յաւելցէ,
եթէ ո՛չ մահու մեռանիցիս այսօր: յայ-
սմանէ յայտէ, թէ որ բան պատճառ է՛
Ճաշակելն առանց կատարելոյ նախ զգոր-
ծն Ա͞Յ: և այսմ ուտել: Երկր դուս-
տր որկորամոլութե՛, որ զփափկու-
թի կերակրոցն խնդրէ ի վեր քան զկար
իւր, և յորժամ չկարէ գտանել տարա-
ջայ, որպէս որդւոցն Իսրայէլի յանապա-
տին, յորում զմանանայն ուտէին, տա-
ռանջէին, թէ ո՛չ կարեմք կեալ այս կե-
րակրովս, եւ նոցա Ա͞Ծ լորամարգ, և
կերան յագ: բայց բարկութիւն Ա͞Յ եկն
ի վերայ նոցա, և սպան զբազումս ի
նոցա

նոցանէ ։ Նոյնպէս այժմ բաղդատեմք ոչ համեմատեմն հասարակ կերակրոց ընդունել զքաղցս իւրեանց, այլ խնդրեմն զքաղցրահամ խորտիկս, որ ՚ի վեր է՛ քան զպահանջելն իւրեանց, նոքա մեղանչեն ։ Եւ եթէ քան զչափն առնուլ տամք մարմնոյ մերոյ, մեզ թշնամութիւն առնէ եւ զինու ընդդէմ հոգւոյս մեր, այլ պարտիմք տալ այն քան կերակուր, որ ոչ տկարանայ, եւ ոչ ուժովանայ ։ Եւ վասն փափկութեան կերակրոյն ասէ՛ սուրբն Պէրնարտոս, բաւական է՛ թէ լինի կերակուր ինչ՝ եւ ոչ է՛ պարտ, թէ լինի յոյժ համով ։ Եւ յորժամ բառնամք զմարմինս մեր զանազան եւ ազնիւ կերակրովք սովորի, եւ հանապազ խնդրէ, որպ ձի, շուն, եւ կամ այլ անասուն ումեմն, որ յորժամ սովորի ՚ի մսոյ, եւ ՚ի վատթարութիւն ինչ, յոյժ դժուարին է, դարձուցանել զայն ՚յայն չար սովորութենէն, այսպէս եւ մարմինն մեր, յորժամ պարարտացեալ եւ բառեալ անկանի ՚յաղտս եւ ՚ի չարաչար սովորութիւնս, եւ ապա գրեա՛ թէ անհընարէ բերել զնա՛ առ սովորութիւնն բարի ։ Վասնորոյ պարտ է՛ զգուշանալ ՚ի փափկութենէ կերակրոցն ։ Երրորդ դուստր որովայնամոլութեան է՛ յորով ուտելն եւ ըմպելն ։ Եւ այս յոյժ ներհակ է՛ բնութե,

թէ, զի ո՛չ հանդարտ անձրեւն շահա-
կանէ՛ անդոց, եւ սերմանց, բայց յոյժ
սաստկին վնասէ, եւ կորուսանէ զսեր-
մն եւ ապականէ զերկիրն ։ այսպէս
չափաւորապէ՛ս ուտելն եւ ըմպելն, բարի է՛
զի պահէ անբողջ զմարմինն ։ իսկ ան-
չափ ուտելն եւ ըմպելն վնասէ եւ ապա-
կանէ զմարմինն ։ Նախ զի ածէ զնա ՚ի
ներքոյ ազգի ազգի ցաւոց եւ հիւանդու-
թեց ։ Երկրորդ կարճէ զժամանակն եւ զկե-
անս իւր, որպէս ասէ՛ Սենեքայ իմաս-
տասէր, սակաւ՛ք ՚ի մարդկանէ հասա-
նեն ՚ի թիւս ժամանակաց իւրեանց, զոր
բնութիւն յաջողէ, վասն անյագ ուտե-
լոյն ։ Եւ ասէ՛ թէ ո՛չ կամի յերկարա-
կեաց լինել՝ զգուշասցի ՚ի յոլով կերակրոց ։
Զորոր դուստր որովայնամոլութեան է՛
Ջանք եւ հոգք ամենայն զբաղում խորտիկս
պատրաստել եւ ՚ի յայս հոգս զժամա-
նակն կորուսանել, զոր մեզ տուեալ է՛
Աստուած, զի զբարիս գործեսցուք, եւ սր-
բութեամբ ապրեսցուք, եւ իմաստութեան
հետեւեսցուք ։ Յայսպիսի մեղքս էին որ-
դիքն Հեղեայ, որք հանապազ հոգս
առնէին կերակրոցն եւ մսոյ եւ, ՚ի զոհելոցն
աւելի առնէին, եւ ո՛չ հաւանէին, զոր
Աստուած պարգեւեալ էր նոցա, բաժնութեամբ եւ
ուժգին առնէին զմիս ՚ի ժողովրդենէն

զայ.

փայլացուցանէին զնոսա , բայց առա-
ւել բարկացուցանէին զԱծ , վասն որոյ
ասէ՝ առաքեալն Թգրթց · Գլ· Ե· Հռմ·
Իբ· Թէ կամելով կամէր Տր եղծանել
զնոսա : որպ և պատմեցան յԱյ : ուս-
տի յայտնէ Թէ , ծանր մեղքէ՝ բանց չա-
փն առաւել վն ուտելոյ հոգս առնելն :
և այսպիսիքս նմանք են անասնոց , որք
ոչ ցանկան իմաստութե , այլ զտիւ և
զգիշերի ցանկան կերակրոց , և անմտե-
նմք զծառայելն Այ Թողուն , և բան-
զի Ած սահմանեալ է՝ պատշաճաւոր
ժամանակ , յորում մարդ զիւր կարևոր
պէտսն ուտելոյ և ըմպելոյ հոգասցէ , և
զմնացեալ ժամանակն տացէ ի սպա-
սաւորութիւն Այ , և ի խնդրել զի-
մաստութի : Ե· Երդ դուստրն որկորա-
մոլութե է՝ , անկարգ և անխտիր ուտելն ,
և որպ դայլ յափշտակելն , երևելով Թէ
քնաւ ոչ յագի , այսու մեղաւ և վաճա-
ռեաց Եսաւ զանդրանկութիւն Յակո-
բայ , զի ոչ ժուժկալեաց սակաւ սովոյն ,
և այսու Ճանաչի անյագ ուտելն , զի յոր-
ժամ որկորամոլն տեսանէ զկերակուրն , և
զըմպելիսն դողոյ ձեռն , որպէս Ջերմա-
տի , և զինքն վստահ ընկենու ի սեղան ,
որպէս կատու , և այն չափ անյագապէս
ուտէ , որ ոչ կարէ ծամել և մարսել :

ընդ դէմ ապաքինեաց ասէ՝ որպէս Պետ-
նաքրատոս եւ դնէ կանոնս այսպէս , թէ
՚յամենայն արտաքուստ մեզ մինն տացէ Սաղ-
մոս ասէ՝ , կամ ողջոյն Սարկաւագ , մին-
չեւ ՚ի տաւնսմանն եւ ՚ի չափս : եւ որպէս Օգոս-
տինոս ասէ՝ , ոչ է՝ պարտ զանկանալն խօսել
եւ ՚ի կայր ուսանել , այլ սիրել զանկանալն ՚ի
լսել զբանսն Տ[եառն] : վասն յինքն սովորութիւն
կատարմանութեան տեղեաց յորժամ ՚ի սե-
ղան նստին , մինն զգիրս հոգեւորս ,
կամ զպատմութիւն եւ զվարս որոց հարց
ընթեռնու եւ այլքն լսեն : եւ թէ գիրք ոչ
լինին սաղմոսասացեն ասէ՝ , կամ ողջոյն
Սարկաւագ : եւ թէպետեւ՝ այս կարգ եւ
կանոն կրօնաւորաց : Նոքայ որք ՚ի մէջ
աշխարհի են , եւ բազում քրիստոնեայք ,
թէ այսպէս ոչ կարեն առնել , պարտին
յորժամ ուտեն զբան ինչ հոգեւոր քաղ-
ցրութեան եւ հանդարտապէս ընդ միմեանս
խօսակցիլ , եւ թէ գիտուն լինի ՚ի միջի
նոցա խօսեսցի այլքն ունկն դիցեն : եւ
թէ ոչ գ[իտ]ենն ամենաբարին այն բան
բարեաց պարգեւողն օրհնեսցեն գովես-
ցեն , եւ շնորհակալ լիցին , եւ զփառս
վեր առաքեսցեն որպ ասէ՝ որպէս Պօղոս ,
Տրդ՝ եթէ ուտիցէք , եւ եթէ ըմպիցէք ,
եթէ զինչ եւ առնիցէք զամենայն ինչ ՚ի
փառս Տ[եառ]ն արասջիք : Մեծերորդ դուստր-

ուր

որովայնամոլութիւն է՛ բազում անգամ ՚յագուրդն ուտելն , և այս թշնամի է՛ բնութեան , քան զի ամեն բժիշկք թէ կե-րակուր ՚ի վեր կերակրոյ ապականէ զբնու-թիւն , վասն զի ՚ի բազում անգամ ՚յագուրդն ուտելոյն , ստամոքսն տկարանայ և ո՛չ կարէ բարեպէս մարսել զկերեալն , վասն այն փութով ապականի , և կարծի բնու-թիւն : իսկ եթէ մարդ , որ կարգաւո-րեալ ունի իւր բնութիւն , նմա պարտ է՛ , որ ՚յագուրդն միանգամ , կամ եր-կիցս զհաց , և զկերակուր ճաշակել զի առողջ և ամբողջ մնասցէ : իսկ եթէ ՚յագուրդն բազմիցս ուտիցէ , զատ նորա բնութեան ապականութիւն , այնպիսի մար-դն նմանէ անասնոյ , և այս ծննանի ՚ի պարապորդութենէ և ՚ի դատարկութենէ , որպէս ասէ՛ Սողոմոն ՚յառակսն , ցանկու-թիւնք սպանանեն զվատս (այսինքն զպարա-պորդսն) զի ո՛չ յօժարին ձեռք նորա գործել ինչ : և այսպէս զօրն ամենայն դատարկութենէ , և պարապութենէ շրջի , և յամենայն ՚յոչինչ ցանկութիւնս , ամե-նայն զգայարանօքն , ականջն ՚ի լսել զայ-լև այլ համբաւս աշխարհիս : աչքն ՚ի տե-սանել զխայտապատանս , և զունայնութիւնս , բերանն ՚ի զանազան կերակուրս : և այլն : և սոյնպիսեացն , ո՛չ զերանելին , այլ

զվա՛յն

զկամ՟յին ընդ-ունել ՚ի Քրիէ , քանզի ասէ՛
Քրիս , Ղուկս . Զ. ԻԵ. համր. վայ ձեզ,
որք յագեցեալքդ էք այժմ, զի քաղցիցիք ։
նաև զերանելին եւս նախ ՚ի սոյն գլ. Իա.
համր. այսպէս երանի՝ որք քաղցեալք էք
այժմ, զի յագեսջիք ։ Նոյնն Եբր դ-ուս_
տր որկրամոլութենէ՛, յորժամ ոք ոչ
հաւանի , եւ ոչ բաւականանայ մի՛ ազգ
կերակրոյ , այլ զզանազան , եւ զանու_
շահամ կերակուրս ջանայ ։ ՚յ այս մե_
ղքս էր մեծատունն այն , որ՟ պատմէ
Ղուկս գլ. ԺԶ. համր. ԺԹ. որոյ դրանն՝
կայր աղքատ ոմն անուն Ղազարոս ,
եւ սա ցանկայր յագել ՚ի փշրանացն՝ որք
անկանէին ՚ի սեղանոյ մեծատանն ։ բայց
ոչ ոք տայր նմա ։ եւ այս մեղքս է՛ ընդ-
դէմ Այ , եւ ընդ-դէմ բնութե , քանզի
զանազան կերակուրքն ծանրացուցանեն
զմիտս մարդկանց , եւ թուլացուցանեն
զնոսա եւ յամրս ծոյլս առնեն , ՚ի պա_
տա՛խրանապարհութիւն Այ ։ եւ ՚ի մտա_
ծելոյ զօր մահուանն եւ դատաստանին,
վասն որոյ հրամայէ մեզ Քրիս ՚յ իւր սբ աւե_
տարանին ըստ Ղուկասու , գլ. ԻԱ.
համր. ԼԴ. այսպէս, ՚Օ զգոյշ լերուք ան_
ձանց , գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր
շռայլութեք եւ արբեցութեք , եւ հոգօք
աշխարհականօք , եւ յանկարծակի հա_

սանիցէ

տանիցի ՚ի վերջ ձեր օրն այն ։ այսինքն, որ
մահուան եւ դատաստանին ։ ընդ դէմ
է՛ բնութեան, քան զի ամէն բժիշկք թէ
զանազան կերակուրն տկարացուցանէ
զկազմուած մարդոյն ։ զոր օրինակ եւ_
թէ որ ՚ի մի՛ ժամու ուտէ ձուկն, կաթն,
միսն, եւ այլ զանազան իրք, իւր ստա_
մոքսին յոլով վնաս հասուցանէ քան զի
այս զանազան կերակուրքս՝ զզանազան
ծանրութիւն, եւ մարսել խնդրեն ։ վնաս
տայ ինքն իւր բնութեան խոտէ եւ ապա_
կանէ ։ Իսկ Մխիթարել ասէ՛ թէ բնու_
թեան մասին ՚ի նմանութի կերակրոյ ։
ապաւուրեամբ զզանազան կերակուրս ու_
տելն ոչ է՛ ՚ի բնութէ, այլ Ախորժանա_
մոլութէ, եւ յորժամ այս մեղօք մեռանի
որ, նորա գերեզմանն դժոխքն է՛, ուր
թաղեցաւ մեծատունն, յորում փրկե_
ացէ զմեզ Ք՟ս իւր ամենատես ողոր_
մութե՟ն, եւ արժանիս արասցէ, մեզ
փախչել ՚յայս չար ախտէ որովայնամո_
լութէ եւ ամենայն մեղաց հեշտութէ,
եւ տացէ մեզ իւր ս՟բ ժուժկալութեան եւ
պահեցողութեան ։ զի անքիծ վայելք եւ
պարկեշտութէ կերով արժանիք լինուք
յաւիտենական կենացն, եւ նմա փառք
՚յաւիտեանս յաւիտենից ։ Ամէն ։

ԿԷ ԲՂՁԱԽՈՀՈՒԹԻՒՆ ։

որ է՛

ԵՕԹՆ եր̃ո գլուխ մեղացն ։ Բղջախոհութիւն սահմանի յՐՋաքանից այսպէս ։ Բղջախոհութիւն է՛ անկարգ ցանկութի մարմնական որ հեշտութեաց, կամ փափկութեաց ։ է՛ մեղ մահացու ։ Եւ այս ան̃ի-ծից գլխովս սատանայ առնել պատերազմն, եւ ըմբռնէ զմարդիկ, քան այլովք վերոյ ասացելով մեղօքն, քան զի մեղքս այս ունի զամենեցողական բնութի ։ զազիր եւ զարշելի է՛ քան զամենայն մեղս ։ պղծ̃ եւ յոյժ ատելի է՛, եւ հեռանալի ։ քան զի զբազում մեղսս բերէ մարդոյն ։ Դ̃· պատճառաւ ցուցանի ։ Նախ որ̃ն Օգոստինոս ասէ՛ թէ սատանայ նման է՛ հաւորսի, զի որ̃պ հաւորսն խայծ դնէ եւ որոգայթ լարէ, ըմբռնէ զթռչունս, նոյնպէս սատանայ, զբղջախոհութիւն առնել խայծ դնէ, եւ չար որոգայթ լարէ եւ զբազումս որք թռչին յերկիրս եղծուցանէ ի դժոխս ։ որ̃պ ասէ՛ յառակց Է· Գլ· Իզ· հմր· զի այս ան-

տես այսպէս ։ Զի զբազում տապաստ
արկեալ է՛ նորա խնդրտելով , եւ անթիւք
են սպանեալքն 'ի նմանէ ։ մի՛ թէ ո՞չ
մեք այս մեղացս եմք Զրհեղեղին , եւ կո-
րոյս համանգամայն զաշխարհս ամենայն,
մի՛ թէ , ո՞չ մեք այս մեղացս եմք հուր
'յերկնից եւ հրդեհեալ զհինգ քաղաքսն
Սոդոմացւոց եւ Գոմորացւոց ։ ո՞հ
թէ որ քան սպաննութիւք , եւ զմեծամեծ
մխաւս եբեր որդւոց Դաւթայ մեղքս այս
անիծեալ ։ եւ ատելի ։ ո՞վ իմաստուն
քան զՍողոմոն , որ պատրեցաւ յիմա-
րութեք 'ի կնոջէն , եւ անկաւ 'ի կռապաշ-
տութիւն ։ ո՞վ զօրաւոր քան զՍամսոն ,
որ կապեցաւ 'ի կնոջէն , եւ եղաւ 'ի
ձեռս թշնամոյն ։ ո՞վ սբ քան զԴաւիթ
որ ըմբռնեցաւ 'ի կնոջէն Ուրիայ ։ Դայլ
մեղքն սատանայի կարթք են , բայց սա՛
ցանցէ՛ , եւ վարմ , որպ ասէ՛ Ամբակում.
գլ. ա. համ. ժէ. մեք այնորիկ ուռուեաց
ցցանց իւր՝ եւ միշտ կոտորել զազգս ո՛չ
խնայեսցէ ։ Երկդ մխաս բղջախոհութե
է՛ , զի յոյժ զօրաւոր է՛ պոռնկութիւն , մեք
ըմբռնելոյ , քան զի նմանէ հաստ քան-
ակի , 'յորմէ ո՛չ ոք կարէ փախչել , եւ որպ
խորխորատ խորին է՛ , եթէ ո՛ք անկանի
'ի նա , 'յինքնին ո՛չ կարէ ելանել անտի
ամենեւին , որպ գրեալ է՛ ոգւով սրբով
'յեկլէ

՚յԵկլեսիաստիկեայ, Գլ. Թ. համ. Գ. Մ՚ի՛
հայեսցիս ՚ի կին բազմակամ, մի՛ գուցէ
անկանիցիս ՚ի պարս նորա։ զի ոպ̃ ան-
կանի որ ՚ի մեծ խորխորատ, կամ ՚ի գուբ,
ոչ կարէ ելանել ՚ի նմանէ հեշտութբ̃,
նոյնպէս որք ըմբռնին ՚ի գեղս կանանց
դժուարին ազատին ՚ի նմանէ, և այսպէս
կորուսանեն զհոգիս իւրեանց, և զար-
քայութիւն յաւիտենական։ ոպ̃ պարզա-
պէ՛ս ՚ի սոյն գլուխ. Գ. համ. Նմանապէ՛ս
ասէ՛ Ոգին սբ̃։ Մ՚ի՛ տայցես պոռնկու-
թեց զանձն քո ներ միում ումեք, զի
մի՛ կորուսցես զանձն քո և զժառանգու-
թի։ Լրբ վնաս բղջախոհութեան է՛
զազրութիւն, քան զի մեղքս այս, քան
զայլ ամենայն մեղք գարշելի է՛ և զազիր։
ոպ̃ ասէ՛ Յովէլ. ա. Գլ. Ժէ. համ. Նե-
խեցան անասունք ՚յաղբս իւրեանց։
՚ի մեկնութի բանիս ասէ՛ սբ̃ն Գրիգոր
պոռնիկքն հոտին ՚յաղբս իւրեանց,
յորժամ մեռանին ՚ի հոտս պոռնկութե։
ասէ՛ Մշ̃իս սատակեցան նոքա յականս
դժոխոյ, և եղեն ոպ̃ զաղբ երկրի։ սա-
տակեն նոքա որք ՚ի պոռնկութե են և
լինին ոպ̃ զաղբ։ մանաւանդ ոպ̃ ասէ՛
Ոգին սբ̃ բերանովն Սողոմոնի, ՚յԵկլեսն
Գլ. Թ. համ. Ժ. Ամենայն կին՝ որ է՛
պոռնկացեալ իբրև զաղբ ներ Ճանա-

պարհաւմ կոխան լինի ։ Վս՞յ այսպիսի
գարշութէ , և զազրութէ հեռանալ
պարտ է՝ ամենևին խմբ նմա, որ կամի ոչ կո_
խան լինել , և ոչ սատանայի ։ չորրդ միայն
բղխահոսութենէ՝ ծառայ լինելն. մեղաց ,
զի ամենայն որ գործէ զպոռնկութիւն
ծառայ առնէ զինքն մարմնոյն , և բո_
զին ։ և լինի բոլորովին մարմին ։ ասէ՝
Թուլիոս իմաստասէրն , վայ ասեմ, կին՝
որ այր ոչ ունի , և ոչ ոք ունի իշխա_
նութի ՚ի վր նորա , որ խրատէ՝ զնա ՚ի
գնալ և ՚ի գալ , ՚ի տալ և ՚յ առնուլ , և
՚յ այլ ամենայն կենցաղավարութիւն իւր՝
զի ազատ լինի ՚ի մեղաց՝ զայնպիսին ոչ
ասեմ մնայն ծառայ , այլ զազիր և գար_
շելի ծառայ , քան զի ոչ ինչ է՝ այլ ա_
նարգ և արհամարհելի քան զնա , որ
յաղթի ՚ի մարմնոյն ։ զի որով իւիք յաղթի_
ցի ոք՝ նորին և ծառայ է՝ ասէ՝ սբ Պե_
տրոս ։ և ոչ ինչ է՝ պատուականագոյն
քան զայն՝ որ յաղթէ ախտից մարմնոյն
և ցանկութեանց ։ Եդ՝ որպէս վերոյ ա_
սացաք սահման բղխահոսութէ ։ Ըստ
սբն Պետրոսի , բղխահոսութիւն է՝
ծուփումն փափկութէ անձանց ։ և ս է՝ մեղ
մահացու և այս մեղքս յոյժ ատելի է՝ ա_
ռաջի Այ քան զամենայն մեղս ։ քան զի
գրէ սբն Պետրոս ՚յ երկրն կթղից . բ·

գլ·

գլ. Թ. համր. գիտէ Տր զբարեպաշտս փր-
կել 'ի փորձութէ, և զանօրէնս պահել
'ի տանջանս յաւուրն դատաստանին :
մանաւանդ՝ որք զհետ մարմնոյ պղծա-
լից ցանկութեց իւրեանց երթեալք : ար-
համարհողք Տէրութեն՝ ժպիրհք յանդու-
գունք չզանգիտեն զփառսն հայհոյել :
և յայտնապէս յայտ է թէ որ քան ատէ
Տրն զմեղս զայս, քան զի ուր ուրեք,
եթէ իւրքն առն, և եթէ իւր մէ Ք՞չա-
կերպքն խօսին զայսմանէ զազիր յաղ-
տեղութէս, համայնապատեայն իւրն հետ
ապականեան զպատուհասն և զտանջանսն:
որպէս 'ի բազում տեղիս 'յաւետարա-
նին գտանեմք այսպէս, երթալ 'ի գե-
հենն՝ 'ի հուրն անշէջ : ուր որդն ոչ
մեռանի՝ և հուրն ոչ շիջանի : քան զի
բորբոքեալ մարդն ապականի և պղծի
այսու մեղօքս, զբորբոքեալ մարդն ա-
նէծ ; զոր Ք՞Ճ ատեցեալ է՝ միայն չէ
իւր : քան զի հաճի առ՚ յորդիս մարդ-
կան եթէ են մէք և անբիծք, և այսպէս
սրբութք, ամբծութք սարկոցն : չէ զի
այսէ՝ կամք Ա՞յ սրբութի ձեր, որպէս
պատգամէ՛ս առէ՝ երանելին Պօղոս : 'ի
բաց կալ ձեզ 'ի պոռնկութէ : և յորժամ
ոչ պահէ և զպատուէրս կամս մարմնոյ
իւրոյ կատարէ, և կամ թէ միայն կամք

տայ , և հաւանի , արդարև նոյնժամայն պղծի և ապականի մարմին նորա և հոգին , որ է՛ գեղեցիկ տաճար Այ : առք̄ յանդիմանէ նոյն սբ̄ Ոգւոյն առաքելայն , ա̄. կորն̄ : գլ. գ. համր. ժզ. Ոչ գիտէք՝ եթէ տաճար էք Այ , և Ոգի Այ բնակեալ է՛ ՚ի ձեզ : ընդ նմին ևս առք̄ սպառնայ սաստկապէ՛ս , ասելով : եթէ ո՛ք զտաճար Այ ապականէ՝ ապականեսցէ զնա Ած , զի տաճար Այ սբ̄ է՛ , որք էք դուք : և ՚ի զ. գլ. ժթ. համր. զսոյն բանն հաստատէ այսպէս : եթէ ո՛չ գիտէք՝ զի մարմինք ձեր տաճարքն Ոգւոյն սբ̄յ՝ որ է՛ ՚ի ձեզ՝ զոր ունիք ՚ի յԱյ , և չէք անձանց ձր̄ : Վասն զի գնոց գնեցայք փառաւոր արարէք զԱծ ՚ի մարմինս ձեր և ՚ի յոգիս , որ է՛ ՚յԱյ : և ՚ի յերկրորդ կորն̄ . զ, գլ. ժզ. համր. Ապաքէն դուք տաճար Այ կենդանւոյ էք : ապաքուրեմն , որ պոռնիկն , կամ զոր ինչ և լիցի կերպիւ չս մարմնաւոր հեշտութեան և փափկութեան , մեղս գործէ , կամ հաւանի կամաւ , զայս մաքուր և սբ̄ տաճարն Այ պղծէ և դիւաց բնակարան առնէ , քան զի եթէ զինչ և լիցի մարմնաւոր մեղքն , որք են հասարակօրէն այսոքիկ , զոր սբ̄ն Պօղոս ՚ի գղտց̄ . ե. գլ. ժթ. համր. ցուցանելով զմեղս մարմնաւորս

մնաւորս

ծնաւորս ասէ՛ այսպէս ։ Օ՛ի յայտնի են
գործք մարմնոյ ։ այսինքն են ։ շնութիւն ։
պոռնկութիւն ։ պղծութիւն ։ գիջութիւն ։ և
այլն ։ և մարդ զայսպիսիս կատարելով, կամ
միայն կամելով առժամայն ընկնի ՚ի նա
սատանայ ։ քանզի դա մահացու մեղք են ։
Եւ ամենայն ոք որ ունի մեղք մահացու,
բաւական է՛ թէ կամեցեալ լինի՝ ինքն
սատանայ է՛ ։ Եւ զայս Քրիստոս մեր եցոյց,
յորժամ վասն Յուդայի, որ մատնելոց էր
զամենասուրբ վարդապետն իւր Քրիստոս, ոչ
թէ մատնեալ էր՛, և զմատնութեան մեղն
մահացու՝ կատարեալ ։ այլ եղեալ էր
՚ի սիրտն իւր՝ թէ մատնեսցէ, այ-
սինքն, գործով կատարեսցէ, որպէս
պարզապէս, սուրբ Յովհաննէս Աւե-
տարանիչն, ժգ. գլ. բ. համր. պատմէ
այսպէս ։ Եւ ՚ի լինել ընթրեացն, սա-
տանայի իսկ արկեալ էր ՚ի սիրտ, զի
մատնեսցէ զնա, Յուդայ Սիմօնի Իսկա-
րիովտացւոյ ։ Տէր՝ վասն այսորիկ, ցու-
ցանելով մեզ թէ այն չար արարմունքն
որ միայն սրտով կամեցեալ է՛ մեղ մա-
հացու է՛, վասնորոյ ասաց Յովհաննու ․
զ. գլ. հա. համր. ոչ ես զձեզ զերկո-
տասանսդ ընտրեցի՛, և մինն ՚ի ձէնջ
սատանայ է՛ ։ Տէր՝ այսպէս յորժամ
մինն՝ որ ունի զինն չ և լինի մեղ մահա-
ցու,

ցու , նորա հոգւոյն և մարմնոյն , որ տա֊
ճար էր ա՜մ՝ մահացու մեղօքն պղծեալ է՛ :
վս՜յ ասէ՛ Ա՜ծ ՔՏ եկին հեթանոսք
՚ի ժառանգութի՜ն քո պղծեցին զտաճար
ս՜բ քո : և այլն : եդին զդիականունս ծա֊
ռայից քոց՝ կերս թռչնոց երկնից , զմսս
սրբոց քոց , գազանաց երկրի : և ո՜չ ոք
քան զայս մեծ անարգանս չկարէ առնել
Թագաւորի , կամ իշխանի ումեմն յոր֊
ժամ զհամեստութի՜ն , և զպարկեշտութի՜ն
դստերն կամ հարսն նորա աղտեղացու֊
ցանէ , և բռնի ապականէ : այսպէս ,
որ զիւր հոգին այս դառն և աղտեղի մե֊
ղօք բղջախոհութե՜ն խառնակէ և ան մա֊
քուր առնէ , ո՜չ թէ զպատուական , և
զհարսն որ զդուստրն Ա՜յ և զամենամա֊
քուր զհարսն նորին՝ բռնի ապականէ
և աղտեղացուցանէ : վս՜յ յանդգնի և
զխորանն Ա՜յ կողոպտէ և զպատիւ նո֊
րին ընդ ոտս կոխէ : քան զի ազնուականն
առեալ զանդամսն Ք՜ի՝ առնէ անդամ
պոռնկի , և զիւր ս՜բ և մաքուր պղծէ ,
և ապականէ : վս՜յ քան զայս մեծ անի֊
րաւութի՜ն , և անարգանք ո՜չ կարէ գտա֊
նել : Պոռնկեալ եթէ ոք զպատիւ և
զխորանն Ա՜յ թողու վ՜ն փափկութե՜ն
մարմնոյն , զՔՍ փոքրացուցանէ և ար֊
համարհելի առնէ առաջի աչաց իւրոց , զի

յան֊

յանցանէ զյաւիտենականն օրէնսն նո-
րին , և զայս առնելով անարգէ զԱծ
և անպատիւ առնէ զնա ։ ոպ ասէ՛ սբն
պօղոս ՚ի հռոմց · բ· գլ· իգ· համր· յան-
ցանելով զօրէնսն՝ զԱծ անպատուես ։
նոյնէ՛ թէ յանցանել ընդ օրէնսն զԱծ
անարգել ։ Իսկ անձին մեծ վնաս և յոյժ
ամօթ բերէ , զոր այս օրինակաւս իմա-
ցուք ։ զի դնեալ է՛ թէ կոյս աղջիկ ոմն
կարծելով թէ փախկանայ ՚ի մեղքն , և
մին հանգստութի կամ հեշտութի գտա-
նէ՝ ցանկայր պոռնկութե , և յորժամ
պոռնկեցաւ և ապականեցաւ զիւր սբ
կուսութին՝ ետես զի ոչ էր այնպէս ,
ոպ խորքն կարծէր , այնքան զղջացեալ
փոշիմանեցաւ և զամօթի հարաւ՝ մինչ
եւ սպանանել զինքն ։ բ· մեծ ամօթ և
պակասութիւնէ՛ ՚ի մէջ ընկերաց իւրոց մե-
ղքս այս բղջախոհութե բազում կեր-
պիւ ։ Նախ զի չնացողն ոչ միայն զիւրանք
և անխոհեմութի , և յանխշտանկութի ա-
նէ ընկերին , Այլ ևս առնել իւր
յատուկ անձին ։ քանզի զԱծ աշունսն ՚ի
բազում տեղիս հուր անուանէ զայս
մեղքս , և այսպէս ՚յեկլեսիաստ· գլ· թ·
համր· թ· ասէ՛ ։ կն ատեալի կնոջ յորմէ
կորեան , և յայսմանէ ցանկութի խորհ-
զհուր առկիզցէ ։ և ՚յառակս , զ· գլ·
իէ·

Ի. Հմր. Հարցողական կերպիւ մի՛ թէ կարէ՞ ոք այսպէս առնել, այսինքն, ծրարիցէ՞ ոք զհուր ՚ի գոգ՝ և զհանդերձս ո՛չ այրիցէ։ Կամ գնայցէ՞ ոք ՚ի վր կայծականց հրոյ, և զոտս իւր ո՛չ խարշիցէ։ զայսոսիկ օրինակս տայ մեզ սբ Սողոմոն, զի իմասցուք զչարութիւն և զարշելութիւն, և զամենամեծ վնասն, զոր հասուցանէ զայս մեղքս կատարողաց՝ այս ամենաչար բղջախոհութիւն։ Այլ հետևի սոյն գլուխս բանիցս Հմրն. ԻԹ. և ասէ՛ այսպէս, ՙՍոյնպէս և որ մտանէ առ առնակին ո՛չ լինի առանց պատժոց։ և ո՛չ արդարասցի՝ ամենայն որ մերձենայ ՚ի նա։ Ո՛չ ինչ են զարմանք եթէ ըմբռնեսցի ոք ՚ի գողութեան, գողանայ՝ զի լցուսցէ զանձն իւր քաղցեալ։ Ապա եթէ ըմբռնեսցի՝ եօթն պատիկ տուժեսցի, և զամենայն ինչս իւր տուեալ փրկեսցէ զանձն իւր։ Իսկ որ շնայ՝ առ պակասութեան մտաց՝ զկորուստ անձին իւրում ստանայ։ Մն զի յոյժ պականամիտ և վատթարաբարոյ է՛ նա, որ յաղթի յումեմնէ անզօրէ, քան զի յոյժ անզօր է՛, և տկար մարմնոյ ախտոն, Մն զի նա, որ զայս առնէ ո՛չ ունի զԱծն սբ, և ո՛վ ոք ո՛չ ունի զԱծն սբ անկանի ՚յ այսպիսի գարշելի ախտս, և

՚ի մեծ-

՚ի պէսպէս մոլորութիւնս ոմն Յոյնքն որք սխալեալք են և անկեալք ՚ի յայլ և այլ մոլորութիւնս, զի ընդ դէմ Ոգւոյն սբյ զինէին ։ և ո՛չ ունէին զՈգին սբ, և որք ո՛չ ունէին զՈգին սբ՝ յոյժ անզօրք են և վատասիրտք ։ քանզի գրեալ է՛ թէ յոյն ումն զինուոր երթայր ՚ի ճանապարհ լաւ ձիով և զինուք, ետես զումն հետևակ թուրք առանց զինու, և թուրքս այս կամեցաւ հարցանել զզինուորն ։ իսկ նա երկուցեալ էջ ՚ի ձիոյն, և անկաւ ՚ի ծունկս՝ և ասէ՛ ցառաջինն՝ աղաչեմ զքեզ մի՛ սպանաներ զիս, և նորա առ-նեալ զպատրաստութի զինուորին, եղ ՚ի ձին, և առեալ զսուրն սպան զնա, և յետոյ եկեալ ումն լաթին՝ սպան զառա-ջինն ։ այսպէս ո՛վ ո՛ք որ ո՛չ ունի զՈգին սբ անզօր է, և վատասիրտ, քանզի զի Ոգին սբ հզօր է և ամենազօր, և որպէս կարող զինուոր՝ ունի զզէնս բա-զումս զհոգևորս, այսինքն, զպէսպէս առաքինութիւնս և զզօրութիւնս զշնորհս և զպարգևս, և զայնոսիկ պարգևէ, և տայ խնդրողաց իւրոց, որք են Ի-մաստութի Իմացումն, Խորհուրդ, Զօրութի, Գիտութի, Բարեպաշ-տութի, և Երկիւղ Տն, և այլ ան-համար քաղցրութիւնս և անթիւ շնորհս,

և որք

և որք ո՛չ ունին , գտանեն զմի՛ շնորհս Ոգւոյն սրբոյ , նոքա յոյժ անզօրք են և վատասիրք , և յաղթին փաղփաղանօք 'ի հոտեալ և 'ի գարշելի մարմնոյ մեղացն , և զպատուական հոգին նորեանց հատանեն 'ի գլխոյն մերմէ , որ է՛ ՔՍ : Ր.ուաջին տեսանի պտղնկութե այն է՛ որ 'ի սրտէն ելանէ , և մահու չափ մեղք է՛ նա այն՝ յորժամ հաւանի կամքն՝ տուանց գործոյն , որպ ասաց ՔՍ , որ հայի 'ի կին ա՛ռ 'ի ցանկանալոյ նմա՝ անդէն շնացաւ 'ի սրտի իւրում : ապաւորեմս ո՛չ է՛ պարտ հայել 'ի կին , զի յոյժ վնասակար է՛ , որպէս ասէ՛ , յեկղեսիաստիկեայ . Գլ. Թ. համր. Է. ընդ կոյս մի՛ պշնուր՝ մի՛ գուցէ գայթագղեսցիս 'ի գեղ նորա : և 'ի վերին . Գ. համր. Մի՛ հայեսցիս 'ի կին բազմակամ, մի՛ գուցէ անկանիցի 'ի գուբ նորա : 'ի. Ժը. համր. Դարձո՛ զերեսս քո 'ի կնոջէ պճնելոյ , և մի՛ շուրջ հայեսցիս 'ի տեսակ օտար : վս տեսանելի կնոջ յոլովք կորեան : և այլն : այսպէս տեսանելով զգեղ Դինա դստերն Յակոբայ յափշտակեցաւ սիրտ Սիւքեմայ որդւոյ Եմմորայ զոր էառ և պղծեաց զնա : որպ պատմի 'ի ծննդոց . Լդ. Գլ. այսպէս և Դաւիթ հայելով 'ի Բերսաբէէ անկա-

ընդ

ընդ նմա 'ի շնուԹն եւ եւս սպանանել զայր նորա զՈւրիա : այսպէս եւ Հոլոփեռնէս հայելով զՅուդիԹ, ըզչարախոհուԹբ հարաւ 'ի նմա , պատառեցաւ , եւ մեռաւ : այսպէս եւ այնոցիկ չարք ծերոցն Ողջախոհութբ հայեցան 'յ ողջախոհութիւն Շուշան եւ պատուհասեցան , այսպէս եւ այլք անԹիւք , հայելով 'ի կին անկան , եւ մեռան : վա՜յ ասէ՛ 'յ աչկաց · Է· մի՛ հայիր ընդ կին չար : Զի մեղր կաԹէ 'ի շրԹանց կնոջ պոռնկի , որ առ ժամանակմի պարարէ զքիմս քո : Բայց յետոյ դառնագոյն եւս գտցես քան զլեղի , եւ սրեալ առաւել քան զսուր երկսայրի : Վ̄ս զի ոտք անզգամուԹէ իջուցանեն զմերձաւորս մահու հանդերձ 'ի դժոխս : եւ այլն : եւ 'ի Է· գլ· մանաւանդ խօսի վ̄ս այս գարշելի մեղաց պոռնկուԹէ այսպէս : Եւ ահա կին ընդ առաջ լինեցի նմա պոռնկուԹէ դիմօք , որ յիմարեցուցանէ զմիտս երիտասարդաց , որ արբեալ , եւ այլն : 'ի ցածն Էա· Հնք· Եւ մոլորեցոյց զնա բազում խօսիւք , եւ խեղդիւք շրԹանց իւրոց վարանեցոյց զնա : եւ գնայ զկնի նորա յիմարեալ` իբրեւ զարջառ 'ի սպանումն եւ իբրեւ զշուն առուանք : Կամ իբրեւ զեղջերու հարեալ նետիւ ընդ լեարդակողմն ,

կողմն, և փութայ երբև զհաւ 'ի ծողակս,
ոչ գիտէ՝ թէ վս անձին կորստեան ըն-
թանայ ։ զայս ամենայն յորժամ առաց
ա́պա Ոգւով սրբով զգուշացուցանէ 'ի
բաց կալ յայսպիսի ամենաչար ախտէ և
'յանխծեալ մոլութե̃ ըղձախտհութե̃ս,
այսպէս ։ Արդ՝ որդեակ լուր ինձ, և
անսա́ բանից բերանոյ իմոյ ։ Մի՛ խո-
տորեսցի սիրտ քո 'ի ճանապարհս նորա,
և մի՛ մոլորեսցիս 'ի շաւիղս նորա ։ Զի
զբազումս տապաստ արկեալ է՝ նորա խո-
ցոտելով, և անթիւք են սպանեալքն 'ի
նմանէ ։ Ճանապարհք դժոխոց են տուն
նորա, որք իջուցեն 'ի շտեմարանս մա-
հու ։ այսպէս հեռանալ պարտէ՝ 'ի նմա-
նէ բոլորով սրտիւ, և փութով փութով
փախչիլ ըստ խրատոյ Ոգւոյն սբյ 'յեկ-
ղեսիկ̃ . իա̃ . գլ̃ . բ̃ . հմր ։ Իբրև 'յերեսաց
օձի փախիր 'ի մեղաց, և թէ մերձեսցիս
առ նոսա, ըմբռնեսցեն զքեզ ։ Ատա-
մունք Առիւծու ատամունք նորա՝ մի-
ջատողք զոգիս մարդկան ։ ոպ̃ աշտէն
երկիցս սրեալ ամենայն անիրաւութի̃,
հարուածոյ նորա ոչ գոյ բժշկութիւն ։
Վս̃ բազում պատճառի ապաուրեմն
պարտէ՝ երկնչիլ և փախչիլ 'ի տեսութե̃
կանանց ։ Նախ զի աչքն յոյժ սուրք
են 'ի հայիլն և 'ի մէտս հոգւոյն փութան,
և ունին

և ունելն իմն կերպիւ զնմանութիւն աւա-զականաց , քան զի Աւազականքն և գողքն սուրք և փոյթք են ՚ի գողանալ և ՚ի յա-փշտակել զիրս այլոց : Այսպէս և աչքն մարդոյ սուրք են և փոյթք մեղօք յափշ-տակել զհոգիս իւրեանց և մատնել ՚ի ձեռս սատանայի : որպէս ասէ ՚ի գիրս սրբոց Աչք իմ նեղեցին զանձն իմ : սբն Թո-մայ Ակուինացին մտածելով զամենամեծ վնասսն զորս աչքն պատճառեն , ան-ուանեաց զնոսա դռնապան սատանայի , այսպէս , աչք՝ են դռնապանք սատանայի : և եթէ մարդն ամենայն կենդանեաց , զոր սբն Հերոնիմոս , անուանէ ՚ի մանրն յաշխարհական , այսինքն , ՚ի մեղք մահա-ցու , վն ոչ սանձահարելոյ զտեսութիւն , որքան առաւել մեք պարտիմք զգուշա-նալ ՚ի տեսութենէ արգելեցելոյ : Այ-սուհետև առաջարկեմ մտածելոյ՝ , թէ որքան պարտիմք պահել չուրջ արգելե-ցելոց զտեսութիւն , համարելով զմեզ , մեք՝ որք մահկանացու կենդանիքս եմք , եթէ , և մարդն կենդանեաց վն աչաց եկն ՚ի մահն : վամ սբ Գրիգոր պապն ասէ՝ , պարտ է՝ խփել զաչս մերս ՚ի տե-սութենէ փափկութեան , զի Եւայ մայրն մեր՝ ոչ էր մեղանչեալ , եթէ զգուշու-թեամբ էր հայեցեալ ՚ի պտուղ ծառոյն : Եր-

կրօնաւորն պարտ է՛ երկնչել ՚ի ձեռա-
կայ և արգիլեցեալ տեսութէ, քան զի
այս տեսութե զգայարանն ՚ի հեռա-
ւորնէ հարկանէ, զոր այլք զգայութիւն
՚ի մօտոյ հարկանեն։ Առաջաւորեմս պարտ
է՛ երկնչել ոչ ՚ի նենգէ, զի պատերազ-
մողք առաւել երկնչին ՚ի նենգէ քան
՚յայլոց զինուց։ Այսպէս և մեք պարտիմք
զգուշանալ ՚յաչաց մերոց քան ՚յայլոց
զգայարանաց։ Դ. ՚ի հնգեւոր պատե-
րազմի, աչքն առնելի զենունն ընդ դէմ
մեր՝ քան այլ զգայութիւնք։ Զի ձայ-
նելիքն միայն պատերազմին ընդ մեզ հա-
մոյ կերակրոյն։ Նոյնպէս և այլքն։ Բայց
աչքն փորձութիւն տան մեզ՝ հպարտութե,
նախանձու, բարկութե, տրտմութե, ա-
գահութե, ոխակալութե, բղջախո-
հութե՝, և այլ ամենայն մեղաց։ Ոչ
ասէ՛ ոմն Փիլոսոփոս, կատարեալ առա-
տութիւն է՛ կորուսանել զաչսն, զի աչքն
են, որք ոչ թողուն խոնարհել մեզ,
կամ սիրել զեղջերայն մն նախանձու։ և
ոչ թողու, զի ողջամտ լինիմք։ և ոչ
տայ թոյլ հոգոյ հանգչել ՚ի փորձանաց։
և ամենայն չնութի ՚յաչացն յառաջ գայ։
Դ. պարտ է՛ երկնչել ՚ի վտանգաւորէ և
ձեռնտուակարէ տեսութէ աչաց, զի գործ-
ոցս և արարմունքն մեղաց լինին և փոյթ,
և թէ

և թէպէտ լեզուն ևս մասն է՛, թէ է՛
չար , և լի թունով ձգէ զմարդիկն 'ի մեղս ,
բայց զնա սանձահարելն այլ հանգիստ է՛
քան զաչացն : քան զի լեզուն երբեմն
խօսի , և երբեմն լռէ , իսկ աչքն ո՛չ
այնպէս՝ այլ հանապազ տեսանեն : և
տեսութիւն է՛ զօրութիւն իմն անդադար ,
որ թէ չար է՛ , անդադարապէ՛ս մե_
ղանչէ , որպ ասէ՛ սբն Պետրոս 'ի երկր·
կթուղկէց · բ· գլ· ժդ· համ· Աչս ունին
համբոյրս պոռնկաց , անդադարս 'ի
մեղաց : Ե· պատճառ է՛ երկնչիլ յաչացն ,
զի աչքն մարդոյն , որպ թէ բ· դրունք
են քաղաքի ուրուեմն , և որպէս յորժամ
թշնամի քաղաքին տիրեաց դրունս ,
իշխանութի առնու 'ի վրա ամենայն քա_
ղաքին : այսպէս և ամենամեծ թշնա_
մին մեր սատանայ , յորժամ տիրէ զաչս
'ի վտանգաւոր իրս հայելով , յայնժամ
առնու իշխանութի 'ի վր բոլոր մարմնոյն
և հոգոյն : վսյ ասէ՛ Յոբ , լա· գլ· ա·
համ· Ուխտ եդի ընդ աչս իմ , և ո՛չ
հայեցայ 'ի կոյս : և զայս ասէ՛ զի զսիրտ
իւր յստակ և մաքուր պահեսցէ յամե_
նայնէ արատոյ և մեղաց , ըստ առա_
կողին որ ասէ՛ , որ պահէ զսիրտ իւր՝
պահէ յամենայն անօրէնութէ զհոգի իւր:
քանզի յորժամ ոք բղջախոութբ հայի 'ի

կոյս , կամ ՚ի կնին , և ցանկայ նմա , այ-սինքն , յորժամ կամի իւր հաւանի ընդ-նմա չնալ՝ և ՚ի յայն հեշտանայ , և մնայ ՚ի վերայ այն չար մտածութեան ։ յայն-ժամ մահացու մեղ է՛ ։ Առաջին տե-սակն ապաստուրեամբ բղջախոհութեան է՛ պոռն-կութիւն , յորժամ մարդ ազատ ընդ կնի ազատ պղծուի ։ Երկրորդն է՛ շնութիւն , յորժամ պսակած , ընդ պսակածուհւոյ պղծուի ։ և շնութիւն է՛ ևս յորժամ պսա-կած ընդ կնի ազատ պղծուի , և հա-կառադարձապէս ։ Երրորդ տեսակն է՛ բռնութիւն և ուժով զկին , և կամ զկու-սար ումեմն յափշտակելն , և զկուսու-թիւն նորա ապականելն ։ Չորրորդ տե-սակն է՛ ազգապղծութիւն և որբապղծու-թիւն ։ Հինգերորդ տեսակն է՛ մեղք ընդդէմ բնութեան , որոց ՚վասն եկն հուր երկ-նից , այրեաց և հրդեհեաց , զհինգ քաղաքսն ։ և այսոքիկ ամենեքեան մեղք են մահացուք , որք զգործողս իւրեանց տանին ՚ի դժոխս , և հրդեհեն , և այրեն հրով ՚յաւիտենականաւ , ՚ի գեհենին ՚ի հուրն անշէջ , ուր որդն ոչ մեռանի և հուրն ոչ շիջանի ։ Մի հայելոյ ՚ի կին և ցանկալոյ նմա՝ արգելէ զմեզ Քս Տր մեր չհայել ընդ կին՝ չար ակամբք մի՛ գուցէ ցանկանայցեմք նմա կամօք , և մա-

մահուացօրէն մեղանչիցեմք ։ վսն առաջնոյ
տեսանելին բղխախոհութէ հրամայեալ է՝ Քս
՚յ երկրորդ օրէնքն , Եզ. գլ. ԺԷ. համ. Մի՛
լինիցի բող ՚ի դստերացն Իսրայէլի , և մի՛
պոռնիկ ՚ի ուստերաց Իսրայէլի ։ և ամենայն
որք , որ զհրամանսն Այ ոչ պահեն ՚ի դժո-
խսն է՝ , և մանաւանդ առաւելապէս
քրիստոնէից , որ յատուկ և խոհեմապէս
Իսրայէլ է՝ , այսինքն զՔս տեսանող , քան
զի Ճշմարիտ ուղղափառ քրիստոնեան
միայն՝ որ քան ՚յ աշխարհիս է՝ համա-
րոյ աչօք զՔս տեսանէ , և յետ որոյ
սրբութեամբ և բարեգործութեամբ ել ՚յ այսմ
աշխարհէս գնայ ՚յ Արքայութիւն , և տե-
սանէ զպատուական և զանգին երեսն
Այ ստեղծողին իւրոյ , որ ցանկալի է՝
նոյ քան զոսկի և քան զականս պատուա-
կանս և այլն ։ և ամենայն ինչ պատուա-
կան չարժէ զնա ։ քանզի ՚ի նա ամ բարու-
թիւն գտանի , և նոքա միայն յարգի սերտ
մարդոյն , և ոչ այլոյք իրօք աշխարհի-
ով երգէ Արքայական Մարգարէն , և
յադեցայց երևել փառաց քոց ։ վսյ ՚յ այս
պատուական երանութեան և երջանկապար
տեսութէս զրկի այն կինն՝ որ բողանայ ,
և կամ այն մարդն՝ որ պոռնկի ։ և այս
յայտնի է՝ ըստ ասացն Պօղոսի ա. կորն. զ.
գլ. Թ. և Ժ. համ. մի՛ խաբիք՝ ոչ պոռնիկք ։

ո՛չ կռապաշտք ։ ո՛չ շունք ։ ո՛չ իգա-
ցեալք ։ ո՛չ արուագէտք ։ ո՛չ գողք ։ ո՛չ
ագահք ։ ո՛չ արբեցողք ։ ո՛չ բամբասողք ։
և ո՛չ յափշտակողք ։ զԱ.րքայութի Ա.յ
ժառանգեսցեն ։ և վասնզի հրամայէ Ա.ծ ո՛չ
լինել անօրէն մերձաւորութի և պոռն-
կութի քան զի պոռնկութք ո՛չ լինէր
բարեպէ՛ս , և օրինաւոր համաներութեան
՚ի մէջ աշխարհի , և ծնեալք զաւակքն
ո՛չ կարէին բարեպէ՛ս սնանել և օրինա-
ւորք ժառանգք լինել ծնողաց իւրեանց ։
վ՟ս որոյ հաստատեաց Ա.ծ զամուսնու-
թիւն ո՛չ միայն վ՟ս որդեծնութե՟ և ա-
ճեցողութե՟ այլ և ս մանաւանդ վասն
բարեպէս սնուցանելոյ զզաւակսն եթէ
տացէ Ա.ծ , և եթէ ո՛չ՝ գոնեա՛ ինքեանք ,
այսինքն , այր և կինն ապրին ողջախո-
հութեամբ և պահեսցեն զմիմեանս , և
հրամանն է՛ ո՛չ միայն ծնանել զաւակ՝ այլ
և սնուցանել ։ և թէ պոռնկութիւն հա-
լալ լինէր , մարդ պսակով կին չէր առ-
նէր , այլ առանց պսակի մերձենայր ՚ի կին ,
և կինն որ զաւակ ծնանէր , ո՛չ սնու-
ցանէր զնա , քանզի կինն միայն՝ ո՛չ կարէ
սնուցանել զնս բազում աշխատութե՟ և
ծախուցն ։ այլ օգնելով և առնն ։ և
զաւակքն ո՛չ կարէին օրինաւորք և բա-
րիք ժառանգք լինել ծնողաց իւրեանց ։

վ՟ս ,

վս՟յ , բանզի կամի Ա՟Ծ զի զմեծամեծս բա-
րեպէ՛ս մտանիցեն , և օրինօք ժառան-
գորդք լինիցին ծնողաց իւրեանց՝ առդելք
անապակ մերձաւորութիւն , այսինքն ,
պոռնկութիւն , և հրամայէ ըստ օրինօք
պսակիցն , զի յորժամ զմեծաւն լինի՝ կա-
րասցեն երկրպագեանն , այսինքն , այրն և կինն
բարեպէ՛ս մտուցանել զնա ։ վս՟յև հրա-
մայէ պսակաւ օրինաւոր ամուսնութիւն՝
և մերժէ և ոչ հրամայէ անօրէն մերձա-
ւորութիւն , որ է՛ պոռնկութի ։ վս՟յ ա՟է
Առաքեալն Պօղոս նոյն զ. գլ. ա. կորն. ժը.
հմի ասէ՛ փախերուք ՚ի պոռնկութէ , զա-
մենայն մեղս՝ զոր և գործէ մարդ՝ ար-
տաքոյ մարմնոյ իւրոյ է՛ ։ իսկ որ պոռնկի՝
՚յիւր մարմին մեղանչէ ։ Երկրորդ տեսակն
է՛ շնութիւն , և այս է՛ յորժամ կանամբի
ընդ արամբի մեղանչէ , այսինքն , յորժամ
մարդ որ ընդ իւրն պսակելոյ կնոջ ունի
Թողու՝ և զնայ ընդ այլում պսակելու-
հոյ պղծոնի , և զմեծութի մեղացս այս՝
բացում կերպիւ յայտ առնեմ ։ Նախ
զի հակառակ է՛ Ա՟Ծոյ իւր հրամանին , զոր
կարգեաց Ա՟Ծ ՚ի դրախտն Ադամայ և
Եւայի ՚յ ամուսնութիւն ։ ապատուբեամ
ընդ դէմ Ա՟յ է՛ զառաջին խորհուրդն
ապականանել ։ զոր օրինակ Եթէ ապա-
կանէ ոք զնկարեալ պատկեր Թագաւո-

րն, կամ զայլ հրամանս նորա՝ մահա-
պարտ է: Նոյնպէս և որ զպատուէր եր-
կնաւոր Թագաւորին [.], այս է՝ զհոգի
մարդոյն ապականանէ այսու մեղօք, և
արհամարհէ զհրամանսն [.]: Ը. Ներհակէ
բնութեան, քանզի այս է՝ օրէնք բնութեան:
Ո՛ որ դու ոչ կամիս, Թէ արասցեն քեզ
մարդիկ, մի՛ արասցես և դու նոցա: ոչ
ոք մարդ կամի, Թէ այլ ոք շնայ ընդ-
կնոջ իւրում, նոյնպէ՛ս ոչ է՝ պարտ Թէ
ոք շնայ ընդ կնոջ այլում: զայս և ան-
բան կենդանիքն ոչ կամին, զի շուն
զշուն, և գայլ զգայլ սպանանէ ի մէջ
իւրեանց, նոյնպէս և այլք կենդանիքն ան-
նման: Թ. արգելուածս մեղացս այս՝ մի՛ է՝
ի Ժ. պատուիրանացն [.], յորում
ասէ՝ Թէ մի՛ շնար: ի մէջ այսմ բանին ասէ՝
Ս̄բն Կլեմենթոս Պապն՝ ո̄պ ոք, որ զմարդ-
սպանանէ մահու չափ մեղանչէ և մա-
հապարտ է՝, այր և կին մի մարմին են,
որ շնայ ընդ կնոջ ուրեմն՝ սպանանէ
զմարմին նորա, և ապականանեաց զխոր-
հուրդ պսակին: Ժ. զի այս մեղքս ունի
զպատիժ մահու: ո̄պ ասէ՝, Ղևտ̄ց. Ի.
Գլ̄. Ժ. համ̄ր. Եւ այր ոք եթէ՝ շնասցի
ընդ առնականոջ, կամ շնայցէ ընդ ըն-
կերին իւրոյ՝ մահու մեռցին, և շնացողն,
և շնացեալն: և ո̄պ մեռանին մարմնով՝

նոյնպէ՛ս հոգւով ։ Ե․ զի բազում պատիժ
տայ Տ՟ր մի՟ այս մեղացս , որպէս ասէ՛
՚յերկրորդ Թագաւորութեանց ․ Ժբ․ գլ․ Ժ․ համ․
յորժամ առաքեաց Տ՟ր զ՚Նաթան մար-
գարէ առ Դաւիթ , որ շնացաւ ընդ
կնոջն Ուրիայ ։ այսպէս ասելով ։ Եւ
արդ մի՛ հեռասցի սուր ՚ի տանէ քումմէ
մինչև յաւիտեան՝ փոխանակ զի անար-
գեցեր զիս , և առեր զկին Ուրիայ Քե-
տացւոյ լինել քեզ կնութե ։ և մն̅ այս
մեղացս բազում վիշտս և նեղութիւ
կրեաց Դաւիթ , զի Աբիսողոմ որդի
իւր՝ պղծեաց զկանայս հօր իւրոյ , և
զինքն ամ̅ զօրօքն հալածեաց յԵրուսա-
ղեմէ , և ըստ ումանց վարդապետաց՝ մն̅
այս մեղացս ՚ի հրեշտակէն սպանան Հռ․
հազարք ։ Զ․ զի մն̅ այս մեղացս բազում
չարիք գան ՚ի վ՟ր մարդոյ , զի բազում
անգամ հանդիպի , որ սպանանէ այր
զկինն , և կին զայրն ։ Մեծամեծ Թշնա-
մութի , ատելութի և նախանձ անկանին
՚ի մէջ առն և կնոջ ։ և այլք նման սո-
ցին ։ Նոյնպէս տեսանեմք՛ , որ ՚ի պատճառ ՚ի
դուրս առնու զխոստութի ուրուք աղչը-
կան , և այս մեծ մեղք է՛ մն̅ Է․ պատ-
ճառի ։ Նաև զի բառնայ զպատուին
կուսին , որ ունի զհարսնութեան ատեն-
ճան , որպէս ասաց Ք՟ս , Թէ ոմն Լ․ ոմն

Կ․ և

Գ. և տես Ծ. որ է՛ փորձ և պսակ կուսիցն:
Երկր, զի յորժամ ապականի կուսութիւն
առողջանալն մտոյ, զինքն այլ ոչ խնայէ, այլ
ընդ քաղցումս պոռնկին, զոր օրինակ
փայլելուչ այգին մի, որ՝ որ չափ առնուր
փականած է՛ ցանկով և պարսպով, ոչ ոք
մտանէ 'ի նա: Իսկ յորժամ պատառի
ցանկն՝ կամ քլի պարսպն՝ կոխան լինի ա֊
մենեցուն: այսպէս և քաղցումն անգամ
Հանդերձեալ, որ զմաներեալ կոյսն ոչ ոք
առնու կին՝ և ոչ նստի 'ի պոռնկատունն,
և այն քան հոգոց կորստեան պատճառ
լինի: Երր, զի յորժամ ապականի կու֊
սութիւն, այլ ոչ կարէ կոյս լինել, զի է֊
թէ ոք 'յայլոց առաքինութեաց կամ զօ֊
րութեանց կորուսանէ, զոր օրինակ զհա֊
ւատն, կամ զՅոյսն, և կամ զՍէրն,
և այլ նման սոցին, կարէ դարձեալ վեր֊
ստին ընդունել զնոսա: բայց կոյսն ա֊
պականեալ՝ ոչ է՛ հնար դարձեալ վերստին
կոյս լինել: Ասէ՛ սրբն Թովմաս թէ որ
քան բարի է՛ կուսութիւն: Կոյսն քոյր է՛
Հրեշտակաց, Թագուհի առաքինութե,
ժառանգութի ամենայն բարութե, յաղ֊
թութի պոռնկութե, փառք հաւատոյ,
գովութի Արքայութե: Նախ ասաց թէ
կոյսն քոյր է՛ Հրեշտակաց, զի 'ի մարմնի
կեալ՝ առանց մարմնոյ ցանկութե, վասն

Հրեշ֊

Հրեշտակաց է՛, և ո՛չ մարդկան ։ Երկրորդ Թագուհի Առաքինութե՟, զի ՚ի վ՟ր ամենայնի առաքինութեան ունի զպսակ քաջն, և ամենայն զօրութիւք և առաքինութիւք պատուեն զկուսութիւն, և ցանկան նմա, զի հոտ անուշ և պսակ փառաց է՛ ամենեցուն ։ Վասորոյ և Ք՟ս կամեցաւ ծնանիլ ՚ի կուսէ, որ ս՟բ էր սրբոց ։ Գ. Ժառանգ է՛ ամենայն բարեաց, զի ո՛չ ցանկայ և կարօտի այլում մեծութե՟ ։ Դ. յաղթութիւն է՛ պոռնկութե՟, որպէս թէ ոք գնայ ՚ի պատերազմ երբեմն յաղթէ, և երբեմն յաղթի, երբեմն անկանի, և երբեմն ՚ի յառնէ, այս ընթհանուր է՛ ։ Բայց թէ ոք զամենայն հարկանէ և յաղթէ՝ և ինքն բնաւ ո՛չ յաղթի, յոյժ զարմանք է՛, նոյնպէս և կուսութիւն ։ Ե. փառք է՛ Հաւատոյ, զի ամենայն ոք գովէ զնա, բայց ո՛չ կարեն հասանել նմա, զի այլ ոք զմի՛ գեղեցկութի միայն ունի, կամ զբազումս, այսինքն, զայլ և այլ զօրութիս և զառաքինութիս, որք իրանի գեղեցկութիք են հոգւոյն, իսկ եթէ ոք զկուսութի ո՛չ ունի՛ զայս գեղեցկութիս ո՛չ ունի ։ Նա զմի՛ չ ասեմք վասն կուսութե՟, զի վարդ անուշ է՛ և շուշան քաղցր՝ փառք շնորհացն Ա՟յ, ցնծութե՟

զա-

զմտաւ, զորս կատարեալ, պատկեր ոգւոյն Քի, նոր երգ առաջի Քի, զոր այլ ոք՝ ոչ կարէ երգել ։ ոպ̄ ասէ՛ սբ̄ն Յովհաննէս Տեսլ. գլ. Ժդ. Եւ տեսի՝ և ահա գառն կայր ՚ի վր̄ լերին Սիօնի, և ընդ նմա հարիւր քառասուն և չորք հազարք, որք ունէին զանուն նորա՝ և զանուն Հօր նորա գրեալ ՚ի վր̄ ճակատուց նոցա ։ Եւ լուայ զձայն ՚յերկնից՝ իբրև զձայն ջուրց բազմաց՝, և զձայն որոտման մեծի, և լուայ զձայն իբրև զքնարահարաց, զի հարկանէին զքնարս իւրեանց ։ Եւ երգէին զերգս նոր, առաջի աթոռոյն Քի՝ և առաջի չորից կենդանեացն՝ և առաջի երիցանցն ։ և ոչ ոք կարէ գիտել զերգս նոցա՝ բայց միայն ճխ. և դ. ռ̄ քն, որ գնեալք են ՚յերկրէ ։ Սոքա են՝ որք ընդ կանայս ոչ խառնակեցան, և են կուսանք ։ սոքա զկնի երթան գառինն, ուր և երթայցէ ։ սոքա ընտրեցան ՚ի մարդկանէ առաջի Քի և գառինն ։ Եւ ՚ի բերանս նոցա ոչ գտաւ սուտ՝ զի անբիծք են առաջի աթոռոյն Քի ։ դ. երդ կուսութիւն զովութիւն՛ արքայութէ, զի կուսանքն հանապազ երգակիցք են Այի ։ Երդ՝ որդի է՛ սատանայի, և ժառանգորդ գեհենոյն, ատելի Քի և Հրեշտակաց,

այն-

այնպէս մարդն՝ որ խառնման զայսպիսի
բարութիւն, և ապականման զկուսութիւն։
որպէս և գրեալ է՝ թէ Երիտասարդ ումն
՚յաւուր շաբաթին ապականեաց զկոյս
ումն, և յաւուր. զատկին էր անխթոյ գնաց
՚յեկեղեցին առանց խոստովանութե,
ընդ մտանելն եմուտ ՚ի նա դևն, և
ապականեալ խեղդեաց զնա՝ և գնաց ՚ի
դժոխքն։ Եւ ՚ի յայս տեսակիս՝ յոյժ
վատթարագոյն է՝ և ծանրագոյն քան զա_
ռաջինն այն, որ ուժով և բռնութբ ա_
պականէ զկուսութիւն, որպ Սիւքէմ որ_
դին Եմովրայ՝ բռնութբ ապականեաց
զկուսութի Դինայ դստերն Յակոբայ,
վասն որոյ և կոտորեալ ընձեցան ամե_
նեքին ամենայն արգասիքն նորա որպ
պատմեցաք ՚ի վերոյ։ Երրդ տեսակ պոռ_
նկութե է՝ ազգապղծութիւն, և չարագոյն
է՝ քան զառաջեալսն, ծանրութի և մե_
ծութի մեղացս այս յայտնի է՝ վս բա_
զում պատճառաց։ Նախ էր պատժոյն,
Եւ զոր եդ վս այս մեղացս, որպէս
ասէ՝ Ղևտց ժը. Մարդ ոք՝ մարդ առ
ամենայն ընտանութի մարմնոյ իւրոյ մի՛
մերձեսցի։ յետորոյ զայս ասաց՝ զբա_
զում այլ բանս և պատճառս տայ,
ապա ՚ի սոյն գլ. Ի՞թ. հմր։ ասէ՝ այս_
պէս։ Ո ի ամենայն մարդ՝ որ արասցէ
յամե_

յամենայն պղծութեցն այնոցիկ , սատակեսցեն անձինքն՝ որք առնիցեն զայն՝ 'ի մէջոյ ժողովրդեան իւրեանց ։ և 'ի Ի․ գլ․ Ղև․ հմր․ ասէ ։ Այր ոք՝ որ ննջիցէ ընդ կնոջ հօր իւրոյ , զառաւակամս հօր իւրոյ յայտնեաց , մահու մեռցին երկոքեանն ։ զի ամպարշտեցան և մահապարտք են ։ Այլ եթէ ննջեսցէ ոք ընդ նուոյ իւրում , մահու մեռցին երկոքին , զի ամպարշտեցան մահապարտք են ։ և Պօղոս ա․ կոր․ Ե․ գլ․ այսպէս․ Բնաւ և անուանի իսկ 'ի ձեզ ընդ եր պոռնկութի՝ և այնպիսի պոռնկութի՝ որ ոչ և 'ի հեթանոսս՝ ոմն թէ զկին հօր իւրոյ ոք ունիցի ։ պատիժն այսորիկ մինչ այն է՝ որ ասէ՝ , և դուք հպարտացեալք էք՝ և այլն։ մուսն այն՝ որ ասէ՝ ։ մատնել զայնպիսին սատանայի 'ի սատակումն մարմնոյ ։ և այլն ։ Այլ 'ի յայս Ա, զգաստութէ տեսակես են պոռնկութէ մեղքն եկեղեցականաց , և որ չափ նիւթեանք մեծք են 'ի յաստիճանս եկեղեցւոյ , այնչափ ևս մեղքն իւրեանց մեծամեծքն։ առաջի Ա̅յ և մեծամեծաց պատժոց արժանիք, ․Քանզի եկեղեցականքն են մանաւանդ որք և յատուկ ծառայք Ա̅յ և սպասաւորք նորին տեառնագրեալք և ուխտեալք , և հետևաբար նոքին խնկապէս պարտին

գիտել

գիտել զկամ Ա͞յ , որ ո՛չ այլ ինչ է՛ եթէ
ո՛չ սրբութի անձանց, և եթէ ո՛չ պահի-
ցեն զանձինս իւրեանց մէս և անարա-
տս , զի պաշտիցեն զԱ͞Ծ սրբութեամբ և
արդարութե͞ : պատահի նոցա այն որ
ասէ՛ : և որ գիտիցէ զկամս Տ͞ն իւրոյ և
ո՛չ պատրաստիցէ ըստ կամաց նորա արբ-
ցէ գան բազում , և այլն : ամենայնի
որում շատ տուաւ շատ խնդրեսցի ՚ի
նմանէ , և այլն : և սուրբն Գրիգորիոս
Փառին ասէ՛ , որ առաւել ունի մասն
շնորհաց և իմաստութե՝ ՚ի նմանէ խն-
դրեսցի առաւել պատիժ իս մեղաց :
Զինչ երբ տեսանի բղջախոհութե մե-
ղացն է՛ արուականն, որ է՛ յոյժ յոյժ ընդ-
դեմ բնութե : ընդ տեսակաւսեն ևս
ամենայն անասնական պղծութիք և ա-
մենայն անօրէն և կամաւոր սերմնահե-
ղութիք , որք իս հեշտախտութեց , և
մարմնաւոր դիւրութե գործին : բանզի
այնոքիկ ամենաչարեան են և կոչին ընդ-
դեմ բնութե : զորս ո՛չ ևս անբանքն ,
և անասունքն առնեն , վա͞յ յայտ է՛ թէ
բնութիւն խակ ևս խոտոտէ և անարգէ : և
ո՛չ կամի և ո՛չ գործէ : այլ է՛ ամենևին
չար և սատանայական : վա͞յ խորտոտէ ըզ-
մեզ սէ͞ն Սրբոյս շնորհալին առաջոյ
այսպէս :

Սէր

Մեր աշխարհիս այս տխրաշարժ,
տանել խրատն զաղտեղն զարշ,
և թէ մեղաց մի՛ լինիր քաժ,
տխրից տուժանք ձգելով 'ի քարշ:
Ո՜ ի թէ մարմինդ տառապէ մաշ,
հոգիդ հիւանդ լինի և հաշ
թէ տառ ուրախ տանէ և հրաշ,
այլ յետոյ տայ քեզ մահուճաշ:

Ո ազգութի և ամենամեծութի անտա-նելի մեղաց այսոցիկ յայտ լինի, քաղուած կերպիւ: Նախ յարր̄ծոց Ժը. Գլ. Ի. հմր. Ասաց ապաւրենն Տր: աղաղակ Սոդոմայեցւոց և Գոմորայեցւոց բազմացեալ են, և մեղ նոցա ծանրացեալ են յոյժ, իջից և տեսից՝ եթէ զաղաղակն, որ գայ առ իս, գործով համալցեալ իցեն թէ ո՛չ է՛ այսպէս, զի գիտացից: Վս յկ սանն ԱԾաբանքն թէ նորութիւն զարշութե մեղացն, որ ո՛չ ոքէ՛ լուեալ՝ զԱԾ զարմացուցանէ և 'ի նմանութիւն կարծեաց դնէ, ասելով թէ՝ իջից և տեսից, այսինքն, տեսից թէ ստուգիւ այնպէս է՛ որպ լսեմ: գիտէր ԱԾ զմեղս նոցա: այլ ցուցանէ թէ ո՛չ է՛ պարտ այնպիսի ծանր մեղացն փութով հաւա-տալ դատաստան տանել: Վս մեծութե մեղացս այս՝ ասէ՛ սքն Ոգոստինոս, վատթարէ՛ սրբընկնութի և վատթարա-

գոյն է՛

գոյն է՛ չնութի, ևս վատթարագոյն ագ-
գասպրծութի, և այս մեղքս վատթարա-
գոյն է՛, որ մերձենայ 'ի մայր իւր, բայց
քան զամենայն չարագոյն է՛ արուագի-
տութիւնն ։ Արուանի ամենաչար է՛ այս
գործն՝ վա՜յ և Մծաչունչն 'ի մէջն Հերո-
նիմոսէ Թրգմանեցեալ, ասէ՛ 'ի գիրն
ծննդոց գլ· ԼԷ· համր Բ· այսպէս՝ Թէ
Յովսէփ մինչ էր ԺԷ· ամաց և այլն ։
զամբաստանեաց զեղբարց իւրոց առ հայրն
մեղէ ամենաչարէ ։ ոմանք 'ի մէջն ասեն
Թէ ընդ անասնոց պղծեցան կամ ընդ-
արուս ։ Բ· ամենամեծութի մեղացս
երևի 'ի մս ամենամեծաց պատժոցն, որք
եկին, եթէ ջրհեղեղն, որ եկն և կորոյս
զամենեսին, եթէ իջումն հրոյն, որ
այրեաց զհինգ քաղաքսն Սոդոմայեցոց,
ամենայն կենդանեօք բուսօք և տնկօք,
և դարձոյց զերկիրն 'ի դառն և 'ի հոտած
ծով այնպէս՝ յորում ոչ ապրին կենդա-
նիք լողականք, կամ Թռչուն, և Թէ մոմ
լուցեալ դնեն 'ի վր ջրոյն՝ կանգնի և
ոչ շիջանի, և Թէ շիջեալ մոմ դնեն՝ ըն-
կղմի 'ի յատակս ծովուն ։ այնպէս ամե-
նածանր է՛ մեղքս այս, զի ոչ միայն
գործն՝ այլ և մտածելն ամենաչար է՛ ։
ոպ կինն Պօղոս, որ յետս հայեցաւ և
եղև արձան աղի ։ և եթէ ոք հարցանէ,

Թէ տղայքն և անսաստունքն Սողոմոնայ՝ որք ոչ էին մեղուցեալք՝ ընդ էր կորեան ։ Նշեմ Թէ նախատեսութիւն Տ՟ն այնպէս պատշաճ համարեցաւ, զի տղայքն մեռանէին մարմնով և ոչ հոգւով, զի Թէ մեծացեալք էին՝ գնացեալք էին ըստ չարութեանց հարցն իւրեանց, և անսաստունքն զնս պատժոցն կորեան ։ Պատճեալ պատիժ ընդ դէմ քնութե՟ մեղացս երևի առաւել այսպէս այսու, զի յորժամ Օնան որդին Յուդայ ՚ի Նահապետին էառ զկին առաջին եղբօր իւրոյ Էրայ, որ չար եղև առաջի Տ՟ն, և սպան զնա, զոր պատմի ՚ի Ծննդոց լը. գլ. է. համ այսպէս ։ Եւ եղև Էր՝ անդրանիկն Յուդայ չար առաջի Տն, և սպան զնա Տր։ Եւ ասէ Յուդայ ցՕնան, մուտ առ կին եղբօր քո, և ամուսնասցիս ընդ նմա, և յարուսցես զաւակ եղբօր քում։ Եւ իբրև գիտաց Օնան՝, եթէ ոչ լինի նմա զաւակ, լինէր յորժամ մտանէր առ կին եղբօր իւրոյ հեղոյր զսերմն ՚յերկիր, չտալ զաւակ եղբօր իւրում ։ Եւ չար Թուեցաւ առաջի Տն գործըն՝ զոր արար, սպան և զնա ևս ։ գ. ծանրութի և պատիժ մեղացս երևի, որպ ասէ՛ Ղևտց. ի. գլ. ժգ. համ. Եւ այր որ եթէ ննջեսցէ ընդ արուի զգործ կանա_

ցի,

ցի , պղծութ̅ի գործեցին , մահու մեռ_
ցին երկոքեանն՝ զի մահապարտք են ։ Եւ
՚ի սոյն գ̅լ. ԺԵ. համր. Եւ այր որ՝ որ տա_
ցէ զպառութ̅ի իւր ՚յանասուն՝ մահու մեռ_
ցի , և զանասունն սպանանիցէք ։ Եւ պա_
տիժ անասնոյն ցուցանէ զանհուն ծան_
րութի մեղացս , քանզի այս մեղքս ներ_
հակ գոլով բնութե̅ այնպէս՝ մինչ զի և
ոչ ինքեանք անասունք զնոյնն առնեն ։
սպասուրեմն յայտնի լինի , թէ մեղքս
այս՝ բաժանէ զուխտն Ա̅յ ՚ի մարդկանէ
զոր անասունքն պահեն ։ քանզի այլովք
պոռնկականօք մեղօք՝ մարդիք նմանին
անասնոց ։ բայց արուականօք՝ և այլով
ամենայն ընդ դէմ բնութե̅ մեղօք՝
մարդիք վատթարագոյնք լինին քան զա_
նասունս , և քան զամենայն ինչ արհա_
մարհելի ։ Ո՞հ որ քան ատելի է՛ իրս
այս՝ եթէ որ մտածիցէ , թէ մարդ բա_
նաւոր ստեղծեալ ՚ի կերպարան և ՚ի
պատկեր Ա̅յ , զի առնելով զկամս նո_
րա , այսինքն , պահելով սրբութ̅բ զպա_
տուիրանսն ՚ի նմանէ եղեալս արժանա_
ւոր լիցի յաւիտենականն կենացն և պա_
տուական տեսութե̅ ստեղծողին իւրոյ
ծայրագոյն բարւոյն ։ անկանի յայսպիսի
ամենաչար ախտս , և անասնելի գործս ,
որ լինի վատթարագոյն և արհամարհելի

քան զամենայն աղտեղի անասնոտունն ։ Ասացաք ըզզանազան տեսակաց բղջախոհութեան մեղացն ։ այժմ ասեմք զպատճառս նոցին, որովք անկանին մարդիք, զի զգուշասցին, և մի՛ երբեք անկանիցին յանմաքրական գարշութիւնս և ՚ի յաղտեղի տիղմսն ։ Առաջին պատճառ ապաուրեմն բղջախոհութեան է՝ ծուլութիւն և պարապութիւն, յորմէ խօսեցաք ՚ի գլուխն ծուլութեան ։ Երկրորդն է՝ առաւելորդ ուտել և ըմպելն, քանզի որպէս թէ ՚ի կրակն փայտ շատ դնես, բոցն շատ յորդ և աւելի եռանէ ։ Նմանապէս եթէ ոք յաճախ և առաւելորդ ուտէ և ըմպէ՝ իւր բղջախոհութեան և աղտեղի փափաքմանց բոցն յորդ, և աւելի եռանէ, և վասն այս ասացաւ, ՚ի գլուխն որկորամոլութեան ։ Երրորդ պատճառ անկանելոյն ՚ի բղջախոհութիւն է՝ հայեցուածն ՚ի կանայս ։ Չորրորդն է՝ առ և տուր՝ զրոյց և խօսակցութիւն ընդ կանայս ։ Ե. Երդ ձայնք աղտեղի երգոց և բարբառք կանանց, որք զմիտս մարդկանց թուլացուցանեն ՚ի պոռնկութիւն ։ Զ. Երդ նստել և յառնել ընդ կանայս, և համարձակ ուտել ընդ նոսա ։ Է. Երդ միջնորդ լինել պոռնկութեան, որպէս առնեն անամօթ պառաւունք ։ ըստ սատանայի, զի սա ոչ կարէ գործել զպոռնկութիւն ։

բայց

բայց զխաւրհին բորբոքէ ։ Ը. Երրորդ-
պատճառ պտղնկութեան է՝ վասն օրինակի
տալոյն ։ Եւ թէ ՚ի յամենայն մեղս զվասն
օրինակ տալոյն՝ չար է՛, բայց առաւելա-
պէս ՚ի յայս մեղս ։ քանզի յորժամ ոք
զայլ մեղսն տեսանէ՝ կարէ զերծանել կամ
՚ի խորհրդոյ մեղաց, կամ ՚ի գործոյ մե-
ղաց, այլ ՚ի պտղնկութեան յոյժ դժուա-
րաւ զերծանի ։ Եւ քանզի ըստ սբն Յո-
բայ, պատերազմ է՛ կեանս մարդոյ ՚ի
վերայ երկրի, այսպէս այն բան փորձու-
թիւք, վտանգք, գայթակղութիւք հեշ-
տախտութիւք, ախիթք, և պատճառք
գտանէին ՚ի մէջ աշխարհիս են մեղաց, զի
ճշմարտապէ՛ս և սուրբք հազիւ հազիւ
մարդ զերծանիլ կարող է՛ ՚ի մեղաց ։

Իսկ եթէ յուսամք ՚ի Տ. դիւրութբ և
հեշտութբ խուզով սէրվ չարհեան լինինք
կարողք զերծանիլ ՚ի յամենայն ապատ-
ղութեց և մեղաց և մանաւանդ ՚յ այսմանէ
ամենաչարէ ախտէ բղջախոհութէ ։ Ար-
գիտելի է՛ մեզ՝ թէպէտ բազումք են
պատճառք պտղնկութեան ՚ի մէջ աշխար-
հիս, ևս բազումք են հնարք և ճարակք
զերծանիլ ՚ի նոցանէ ։

Առաջինն է՛ կտրել զպատճառն,
և վերացուցանել յինքենէ զամենայն
ախիթ մեղացն ։ որպէս որ կամիցի թէ

'ի պատուիրանն իւրում , ոչ եւս այլ բուսա_ նեցի խոտ վատ՝ կամ զարմանն նորա բաղհանելով , զի մի՛ այլ բուսցի ։ այսպէս եւս որ փափաքի մաքրութե հոգւոյն՝ պարտ է՛ նմա զի բարձցէ զամենայն չար արմատ , այսինքն , զամենայն պատճառս մեղացն յինքենէ 'ի բաց հերքեսցէ ։

Երկրորդ հնարն է՛ փախչելն յայնպիսեաց յաղտեղի մեղաց շուտով ։ եւ այն քան լաւ է՛ որ քան կանուխ եւ շուտով փախչիս ։ եւ զի այս յորդորէ զմեզ իմաստունն Սիրաք 'յերեսաց օձի փախիր 'ի մեղաց , եւ թէ մերձեսցիս առ նմա ըմբռնեսցէ զքեզ ։ եւ սբն Պօղոս ասէ՛ փախերուք 'ի պոռնկու_ թէ ։ եւ այս արժանապէս քանզի 'ի բազում տեղիս 'ի գիրս սբս հուր անու_ անէ զմեղս , եւ վասնզի հուր պատիժ ունի ։ եւ ով որ 'ի բորբոքեալ բոցոյ եւ հրոյ՝ փախչի արագ արագ զի մի՛ այրեսցի ։ այսպէս եւ 'ի մեղաց պարտ է՛ փախչել զի մի՛ կիզցի հրով յաւիտենականաւ , Եւ որ_ մարդիկ գ. կերպիւ կարեն փախչել , եւ զերծանել 'ի հրոյ ։ Նոյնպէս երիւք հնա_ րիւք կարեն զերծանել 'ի պոռնկութէ , Նախ յորժամ մարդիկ կամին զերծանել 'ի հրոյն , կամ զջուր ածեն 'ի վր հրոյն ։ կամ զայրելին պակասեցուցանեն ։ կամ հեռանան եւ փախչեն ։ Նմանապէս եւ հո_

գեւորն

դևոյն յորժամ փորձութիւն պատրուճակութէ.
վասն ՚ի քեզ՝ ըն՛ց ՚ի վր̄ դժուար զգլխան և
արտասուաց , և քանզի լնուլն դժուարին ՚ի
վր̄ բարբառեալ բոցոյն , ո՛չ այլ ինչ է եթէ
ո՛չ զմին ձևոր և հնար գտանել այն փոր_
ձութեան , այսպէս զամենայն ձևս և
հնարս պարտ է՛ առնել մ̄ս հոգւոյ զի
մի՛ վտանգեսցի և պատժեսցի ։ ո՛ս որ_
պէս ասէր սր̄ն Պենետիքթոս յորժամ
միանգամ կալաւ զնա փորձութիւն կա_
նանց՝ ընկեց զինքն ՚ի մէջ փշոց՝ և այնչափ
թաւալեցաւ , որ մարմինն արիւնաշա_
ղախ եղև , և գնաց ՚ի նմանէ փորձու_
թիւն ։ և սր̄ն Ֆրանչիսկոս մեծն յորժամ
վաղվաշոտ ցանկութե̄ փորձեցաւ ձգեաց
զինքն ՚ի վր̄ սառն ձիւնի , և այսպէս ան_
ցաւ ՚ի նմանէ աղտեղի փափաքն ։ և որ_
պէս գրեալ է՛ նս վասն սր̄յն Մար_
տինոսի , զի յորժամ յարոյց ՚ի վր̄ նո_
րայ սատանայ կին մի ՚ի փորձութիւն նմա՝
ընկեց զինքն ՚ի բորբոքեալ հուր և այ_
րեաց զմարմինն , և շիջաւ փորձութիւն ։
Նոյնպէս ամենայն ոք որ նեղի ՚ի պոռն_
կական խորհրդոց , պարտ է՛ նմա զի ՚ի
միտ ածիցէ զանշիջանելի հուրն դժո_
խոց , և այսպէս մեծ հրովն շիջուցանէ
զփոքր հուրն , ո՜պ ասաց այս սր̄ հայրն ։ Է̄.
հնար շիջուցանելոյ զհուրն՝ է՛ զայրեալքն

պակասեցուցանել ։ Մայրեղէք պոռնկու-
թե էն յոլով ուտելն և ըմպելն , և մա-
նաւանդ գիշերս ուտելիքն ։ և յորժամ նե-
ղի որք 'ի պոռնկականն կամ գինւոյ և իցէ
յայլոց աղտեղի խորհրդոց՝ հարկաւոր է՛
նմա զի զկերն փոքրացնէ , և մանաւանդ
զայնպիսի կերակուրն և զայնպիսի ըմ-
պելին , որ պատճառ է՛ նմա պոռնկու-
թե ։ և ո՞վ նա յիմար է՛ և անխելք , որ
մին անցնելոյ զկրակն լնու 'ի մէջ եղ՝ կամ
ձէթ ։ այսպէս յոյժ յիմար է՛ նա , որ
վասն խորհրդով աղտեղի ցանկութեց ,
և ինքն առաւելապէս , զաւելորդ կե-
րակուր և զգէրն , և զանբարեխառն գի-
նին 'ի մէջ լնու , իւրաւն վասն , և բոր-
բոքի հրոյ տունն նորա ։ իսկ որ կամի
պարկեշտ լինել , և ողջախոհութե ա-
պրել՝ զգուշասցի 'ի ծանր գինւոյ , և
'յաւելորդ ուտելոյ , և մանաւանդ երի-
տասարդքն , զի ինքեանք իսկ ջերմք են
բնութե ։ դ. և վերջին հնարն չիջուցանե-
լոյ զհուրն վառեալ՝ է՛ հեռանալն և փախ-
չելն 'ի նմանէ , զի մի՛ ինքն այրեսցի ։ այս-
պէս և որ կամի չայրել 'ի պղծալից խոր-
հրդոց՝ պարտ է՛ նմա փութով հեռանալ
և փախչել , ըստ խրատու սրբյն Պօղոսի
Առաքելոյն , որ ասէ՛ փախերուք 'ի պո-
ռնկութե ։ 'ի մեկնութե բանիս ասէ՛

սբն

սբ̃ն Ամբրոսիոս, ընդ ամենայն մեղաց
կարեմք պատերազմիլ՝ բայց գեղեցիկ
հնար պոռնկութեան՝ է՛ փախչիլն, զի
այնպէս կարեմք յաղթել զնա ։ որպէս
գրեալ է՛ ՚յ ծ̃նդց ԼԹ․ գլ․ զի Յովսէփ,
յորժամ ըմբռնեցաւ ՚ի կնոջէն Փետա–
փրեա, եթող զհանդերձն և փախեաւ ։
նոյնպէս փախչիլն ՚յ ամենայն մեղաց և ս
առաւել ՚ի պոռնկական խորհրդոց մեզ
յոյժ հարկաւոր է ։ զի և մեք նմանապէս
ըստ սբ̃յն ողջախոհին Յովսեփայ յաղ–
թեսցուք՝ քանզի այս է՛ որ յաղթէ աշխա–
րհի հաւատն մեր ։ հարկաւոր մեզ ա–
պաուրեմն փախչիլ ՚ի պոռնկութէ̃ն ։
Գ․ պատճառաւ ։ Նախ զի պոռնկութիւն է՛
ոմ̃ հուր, և մեք ոմ̃ խոտ՝ որպէս ասէ՛
Եսայի Խ̃ մարմին խոտ է՛ ։ և ոմ̃ խոտն,
կամ այլ այրելիք, ո՛չ կարէ մնալ ամբողջ
ընդ հրոյ, նոյնպէս և մեք, կամ աղտեղի
խորհրդոցն ընդ մեզ ո՛չ կարեմք ժուժ–
կալել ։ երկրորդ զի պոռնկական մեղքն
յոյժ աղտեղի է՛ և զազիր ։ և քան զամե–
նայն մեղս առաւել կպչի, վս̃ յ յոյժ եր–
կնչիլ պարտ է՛ ՚ի նմանէ և փախչիլ, քան–
զի ասէ՛ իմաստունն ՚ի գիրսն Եկղեսիաս–
տիկեայ գլուխ Ժգ․ Որ շօշափէ զձիւթ՝
պղծեսցի ՚ի նմանէ, և որ կցորդի ամ–
բարտաւանին նմանի զամբարտաւանա–
նու–

նութեն ։ ասել կամի իմաստունս թէ որ ըմբռնէ զձիւթ , կամ զայլ ինչ նիւթս աղտեղիս , այնու աղտեղութեամբ շաղախեն ձեռք նորա ։ այսպէս որ հետևի և հեշտանայ ՚ի մեղս պոռնկութեան ։ և կամ զխաժամուժսն անմաքուրս ոչ փախուցանէ յինքենէ՝ Ճշմարտապէ՛ս աղտեղանայ և շաղախի հոգի նորա ։ զի յ հարկմանութէ նմա , զի կամաւ փախչիցի ՚ի նոցանէ ։ Եւ է՛ զի յորժամ ոք յայժ մերձենայ առ իւր Թշնամին , և հուպ ընդ հուպ ընդ նմա պատերազմի , յայնժամ Թշնամին այլ առաւել զօրանայ , և քաջաձրանայ ՚ի վերայ նորա ։ Նոյնպէս եթէ ոք որչափ մերձ լինի պոռնկութեան , սա քաջաձրանայ և զօրանայ ՚ի վերայ նորա , և յաղթահարէ զնա ։

Զորոց հնար զերծանել ՚ի պոռնկութեան աղօթքն է՛ ։ որպէս ասէ՛ Սողոմոն գիտացի զի այլ հնարիւք ոչ կարեմ ողջախոհ լինել , Թէ Տր ոչ տայ ։ վասն պատարագս յԱյ խնդրել աղօթիւք և պահօք ըստ Տն քանզի՝ Թէ այս դև ոչ ելանէ ՚ի մարդոյն եթէ ոչ պահօք և աղօթիւք ։ Իսկ զայս աղօթս պատարագս առնել հանապազ բայց մանաւանդ յորժամ նեղինք ՚յայլ և այլ և աղտեղի մորձութեց՝ խոնարհապէս պատարագս զնայ

մա

առ Ած և աղաղակել առ նա բողոքով ձայնիւ, ասելով ջերմեռանդապէս Մ՛ի տանիր զմեզ ՚ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ՚ի չարէ : և մանաւանդ մտածելով զայն՝ յորժամ Քս՟ և Առաքեալքն եւս ՚ի նաւին էին և եղ հողմն սաստիկ մինչ զի համարէին թէ ընկղմելին ՚ի ծովն ամէհի : յայնժամ աղաղակեցին առ Քս՟ բողոքով ձայնիւ ասելով այսպէս՝ Տր՟ փրկեա՛ զմեզ զի կորնչիմք առհասարակ : այսպէս և քրիստոնեայն փորձեցեալ պարտ է՛ ասել ՚ի ժամանակի նեղութեան իւրոյ, ըստ սրբոյ Մարգարէին Դաւ՛իթի՝ Յա՛ւուր նեղութեան իմոյ՝ զԱծ խնդրեցի ձեռօք իմովք : ՚Ի նեղութեան իմում էս առ Տր՟ կարդացի, և լուաւ ինձ : և այլն : և բազումք այլք ըստ սոյն կերպի : Ընթերցող և հնարին է՛ գտանել առ ամենասրբուհի Ածածին՝ և հայցել ՚ի նմանէ զօգնութիւն ՚յամենայն ժամ և մանաւանդ յա՛ւուր նեղութեան և փորձութեան : որպէս յորդորէ զմեզ սբ՟ն Պէռնարտոս ասելով այսպէս : ՚Ի փորձութիւնս ՚ի նեղութիւնս ՚ի իրս երկբայս, զՄարիամ մտածեա՛, զՄարիամ կոչեա՛ : և այլ ուրեք : եթէ եղանեն հողմք փորձութեանց, եթէ հարկանիցիս ՚ի կարծրութիւն նեղութեանց, հայեա՛ց յաստղն՝ կոչեա՛ զՄարիամ :

րիամ ։ եթէ ձգիս հպարտութե՛ ալեօք, եթէ ամբարտաւանութե՛, եթէ քամբասանաց , եթէ նախանձու , հայեցայ ՚յաստղն՝ կոչեմ զՄարիամ ։ եթէ բարկութիւն , եթէ ագահութիւն , եթէ մարմնոյ անօրէնութիւն զնաւակդ մտաց հարկանիցէ՝ հայեաց ՚ի Մարիամ ։ և այլք նմանք սոցին ։ և զայս ասէ՛ քանզի ինքն և ամ՛ հաւաստացեալքն զփորձ առեալք են օգնութե՛ նր՛ , և ձեռնտուութեն , քանզի նա է՛ Ապաստան մեղաւորաց ՚։ Օգնական քրիստոնէից ։ Առաջնորդուհի մեր ։ Մայր շնորհի ։ և ամենայն բարիք և շնորհք ձեռամբ նորա առ մեզ հասանեն ըստ նոյնոյ Բեռնարդոսի ։ զամենայն մեզ ունել կամեցաւ ՚ի ձ՛ Մարիամու ։ Եւ յորժամ ջերմեռանդապէս և բոլորով սրտիւ դիմեմք առ ամենասրբուհի կարող կոյսն , օգնէ մեզ առանց կարծեաց ։ ոչ՛ օրինակս համառօտ ։ գրեալ է՛ ՚ի վարս սրբ՛ց Թէ ոմն կրօնաւոր տռփացեալ ումեմն կնոջ իշխանի , և կինն էր ցանկացեալ կրօնաւորին , և երկոքեանն խորհեցան գնալ ՚ի միասին , և առեալ կրօնաւորին զսպաս եկեղեցւոյն , և կինն զինչ գտաւ ՚ի տանն , և գնացին ։ զայս գիտացեալ այր կնոջն՝ գնաց զկնի նոցա՝ ըմբռնեալ զնոսա եդ ՚ի բանտի ։ և գնաց ՚ի վանքն գան-

գա-

դատել հօր վանացն ։ Իսկ կրօնաւորսն
նախ սիրելի էր սրբուհւոյ Ր՟Ծամնենն ,
քանզի էր նմա յոյժ աղօթասէր և ուխ-
տաւոր ։ և երկրպագեալն ՚ի քանդակին ասեն
ա՛ռ սրբուհի Ր՟Ծամնին , ուխտեմք քեզ
Ա՝նար Տ͞ն այլ ո՛չ մեղանչել յաւիտեան
եթէ զերծուցանես զմեզ ։ և սրբուհի
կոյսն երևեալ նմ͞ց , երկու դիւաւ, և բա-
ցեալ զդուռն քանդակին առաքեաց զկրօ-
նաւորսն ՚ի վանքն նախ քան զգնալն իշխա-
նին՝ և զկինն ՚ի տունն ։ և հրամայեաց դե-
ւացն նստել ՚ի քանդակին ։ և յորժամ եհաս
իշխանն ՚ի վանքն դանդատել զկրօնաւորսն
ա՛ռ հայրն և ա՛ռ այլ կրօնաւորսն , նոքա
ասեն սուտ ասես , ահա կրօնաւորն ա-
ղօթէ ընդ մեզ՝ և գնացեալ տեսին զկրօ-
նաւորսն ։ դարձաւ իշխանն ՚ի տունն՝ ետես
զկինն իւր նստեալ ՚ի տանն ։ և գնացեալ
եբաց զդուռն քանդակին , տեսաւ նստեալ
բ͞ . ՚ի կերպարանս կնոջն և կրօնաւորին ։
և ա՛ռ ժամայն անյայտ եղեն ։ և ասէ՛
իշխանն , վա՛յ ինձ զի սատանայ խաբեաց
զիս ։ և այսպէս ծածկեցաւ խայտառա-
կութիւն նոցա ։ և ա՛յլ ոք , որ ուղիղ հա-
ւատով ապաւինի ՚ի սր͞բհի կոյսն՝ փրկի ՚ի
մեղաց ։ Ե՟ . Երդ հնարն ազատել՝ յաղտեղի
մեղաց՝ է՛ հանապազորդ բարեգործութիւն,
ո՟պ ասէ՛ ս͞րն Յերոնիմոս ՚ի բարեգործու-
թիւն

թիս միշտ լե՛ր, որ սատանայ ոչ գտանէ զքեզ պարապորդ, և ընկղմեսցէ զքեզ 'ի մեղաց ծովն: Գ. Երրորդ հնարն է՛ կարդալ կամ լսել զԱստուածային գիրս: աղօթել և մտածել և այլն: Դ. Երրորդ և վերջին հնարն է՛ խորհել հանապազ զօր մահուն և դատաստանին, որպէս ասէ՛ սուրբն Գրիգոր, թէ ոչ ինչ է՛ որ 'ի բաց մերժէ զխնդրուածս մարմնոյ և զցանկութիւն՝ որպէս խորհելն զօր մահուն և դատաստանին: Այլ աղաչեսցուք քաղցրով սրտիւ զմարդասէրն Աստուած զի և մեզ տացէ յիւրոց սրբոց շնորհացն, զի կարիցուք փախչել 'ի մեղաց և յաղթել չարին, սրբութեամբ և արդարութեամբ ծառայեսցուք Աստուծոյ յայսմ աշխարհիս պահելով զպատուիրանս նորա (որք տանին զմեզ 'ի յԱրքայութիւն) քանզի ինքն Տէրն ասէ՛ եթէ կամիս 'ի կեանս մտանել պահեա՛ զպատուիրանս, որոց արժանացուսցէ զմեզ Քրիստոս: և նմա փառք յաւիտեանս:

Ամէն:

ՎԵՐՋ:

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ ԽՐԱՏԱ-ԿԱՆ ԳՐՈՑՍ·

Գիրքն առաջին պարունակէ յինքեան գլխոց·

1 Քարոզս, որոց առաջինն է՛ քարոզ ա-
ռաջի չորեք շաբթի աւուր քառասնոր-
դաց պահոց, յորում յորդորէ՛ ՚ի խոս-
տովանիլ զմեղս ։ 9
2 Երկրորդ քարոզն Թէ որպ է՛ խոստո-
վանութիւն ։ 22
3 Երրորդ քարոզն է՛ Թէ ՚ի յերիս բաժանի
խոստովանութիւն, այսինքն, ՚ի Զղջումն,
՚ի Խոստովանութիւն, և ՚ի Ապաշխարու-
թիւն, այսինքն, հատուցումն ։ և ՚ի յայս
քարոզիս վերջն խօսի յաղագս ըղ-
զղջման, որ է՛ ։ 53
4 Չորրորդ Քարոզն · 67
5 Հինգերորդ քարոզն խօսի զբերանով
խոստովան լինելն ։ 78
6 Վեցերորդ քարոզն խօսի զապաշխա-
րութէ, այսինքն, զհատուցմանէ · 118

ԳԻՐՔՆ ԵՐԿՐՈՐԴ,

Պարունակէ զեօթն քարոզս ՚ի վր է.
մահու չափ մեղաց ։

1 Առաջինն է՛ քարոզ վս Հպարտութէ ։
142

2 Երկր

2 Երկ՟րդն վ՟ս Նախանձու։ 154
3 Երր՟դն վ՟ս Բարկութեան։ 159
4 Չորր՟դն վ՟ս Ծուլութեան։ 168
5 Հինգ երր՟դ վ՟ս Ագահութեան. 182
6 Վեց երր՟դն վ՟ս Որկորամոլութեան. 213
7 Եօթն երր՟դն վ՟ս Բղջախոհութեան,
որ կարծէ լինիլ Ը. քարոզ։ 227

Յայտնի լիցի բարեսէր ընթերցողացդ գիտելս զայս, յաղագս սխալագրութեց Իծաչնչի վկայութեց համարացն, որք 'ի տեղիս տեղիս չեն ուղղապէս եդեալք, և մեղն օրինակին է՛։ իսկ սրբագրողն սորա ոչ ունելով զհամաքարբառն զի ուղղիցէր, վ՟սնկ խնդրէ զի անմեղադրելի լիցի ի ձէնջ ըստ այնմ մասին, և ըստ այլոցն յիշելի յաղօթսն ձեր ՟սբս, զի յոյժ աշխատեցաւ։ ողջ լերուք 'ի Տ՟ր։

Արթեաց 'ի գիրս որ է՛ հոգւոյ խրախճան
և մտածեմ զայն՝ որոյ չէք վախճան.

- 28 1965